

Դավիթ Գյուրջինյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԻ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱԿԱՏԱԳՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ.
ՀԱՅ ԲԱՂԱԴԻՐԻՉՈՎ ԲԱՌԵՐԸ



ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՁԻՆՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ՃԱԿԱՏԱԳՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ.
ՀԱՅ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ
ԲԱՌԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ԼԻՆԳՎԱ
2025

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

Գ 697

*Երաշխավորվել է տպագրության Վ. Բրյուսովի անվան
պետական համալսարանի գիտական խորհրդի 12.09.2025 թ.
№ 1 նիստի որոշմամբ:*

Գյուրջինյան Դ. Ս.

Գ 697

Հայ ժողովրդի պատմական ճակատագրի
արտացոլումը հայերենի բառապաշարում. **հայ**
բաղադրիչով բառերը / Դ. Ս. Գյուրջինյան.- Եր.:
«Լինգվա» հրատ., 2025.- 192 էջ:

Ուսումնասիրվել են **հայ** բաղադրիչով հանգուցային
այն բառերը, որոնք առնչվում են հայոց պատմությանը,
հայության պատմական ընթացքին և կարևորագույն իրա-
դարձություններին:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-56-154-7

© Լինգվա, 2025

© Գյուրջինյան Դ., 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՂ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ	6
ՀԱՅԱՀԱՎԱՔ. ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՌԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ	46
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ. ԲԱՌԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	73
<i>ՀԱՅԱՍՏԵՐ ԵՎ ՀԱՅԱՏՅԱՅ ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ</i>	<i>99</i>
ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԿԱՍ ՆՐԱՆՑ ՄԱՍԵՐՆ ԱՆՎԱՆՈՂ ԲԱՌԵՐԸ	126
<i>ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՌԻ ՊԱՏՄԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ</i>	<i>159</i>
<i>ՀԱՅ ԲԱՌԻ ՀԱԿԱԲԵՎԵՌԸ</i>	<i>178</i>

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Յուրաքանչյուր լեզու յուրատեսակ մի կուտակիչ է, շտեմարան, որն ամփոփում է լեզվակիր ժողովրդի աշխարհընկալումն ու ժամանակի ընթացքում ձեռք բերած փորձը, կենցաղը, մշակույթը, սովորույթներն ու ավանդույթները, հավատալիքները, պատմությունն ու հոգեբանությունը, հարաբերություններն այլ ժողովուրդների հետ, նույնիսկ ազգի կենսունակությունն ու գալիքին ուղղված նրա հայացքը: Այդպիսին է նաև հայոց լեզուն, որը հազարամյակների ընթացքում ամբարել է հայ ժողովրդի հազարամյա կենսափորձն ու պատմությունը:

Հայերենի բառապաշարում արտացոլված են հայոց պատմության բազում իրողություններ, հայերեն բազմաթիվ բառերում կան հայ ժողովրդի պատմական ճակատագրի անմիջական արձագանքներ:

Այս գիրքը պատկանում է հատվածային մենագրության ժանրին: Ուսումնասիրության նյութ են դարձել հատուկ ընտրված մի շարք բառեր, մասնավորապես **հայ** բաղադրիչով հանգուցային այն բառերը, որոնք առնչվում են հայոց պատմությանը, հայության պատմական ընթացքին և կարևորագույն իրադարձություններին: Այդ բառերի հետ ըստ անհրաժեշտության հետազոտվում են հարաբերակից բառային ուրիշ միավորներ ևս:

Գիրքը պարունակում է յոթ հետազոտություն, որոնք մեկ միասնական շղթայի մասեր են, բայց և առանձին միավորներ, որոնք ունեն մուտք / ներածություն, հետազոտական հիմնական մաս(եր), եզրակացություններ:

Յուրաքանչյուր բառի պարագայում բացահայտվում են ստեղծման ժամանակաշրջանը, առաջին կամ մեզ հայտնի ամենավաղ գործածողը և գործածություն(ներ)ը, բառի հիմնական և երկրորդական իմաստները, խոսքիմասային,

ոճական արժեքները, բառային միավորների գործածության ընդգրկումը և յուրահատկությունները, բառարանային մշակումը և այլն: Յուրաքանչյուր դեպքում՝ յուրովի, այլ բառերի հետ կապերի և առնչությունների հաշվառմամբ:

Գրքում ընդգրկված նյութը տարբեր տարիների լույս է տեսել «Էջմիածին» (Մայր Աթոռ Ս. Էջմիածին) և «Վեմ» (Երևան) հանդեսներում, «Կամուրջ» տարեգրքում (Թբիլիսի):

Մենագրության շրջանակում դրանք վերամշակվել են և դրվել ընդհանուր հյուսվածքի մեջ՝ մեկ խորագրի ներքո (ի դեպ, գրքի վերնագիրը ժամանակին եղել է մի հոդվածի վերնագրի մաս):

Մենք այս գրքով թեման լիովին սպառված չենք համարում, ուստի կշարունակենք մեր ուսումնասիրությունները:

Դ. Գ.

ՀԱՅ ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՂ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

*Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը
քո հավաքական ուժի մեջ է:*

Ե. Չարենց, «Պատգամ»

Ներածություն

Հավաքականությունը հասկացական կարգ է: Իմացական տեսանկյունից հավաքական անունը¹ (գոյականը) ներկայացնում է միասեռ, որոշակի հատկանիշով միավորվող՝ միատեսակ առարկաների (անձ և իր) բազմություն՝ որպես միասնական ամբողջություն²: Բայց դա ներկայացվում է «առանց քանակային բնութագրման»³:

Հավաքական ամբողջության (կամ բազմության, խմբի) «մեջ մտնող միավորների բաժանական ընկալումը ետին պլան է մղված, իշխում է դրանց ամբողջության, միասնության, միավորվածության գաղափարը»⁴: Ավելին, անգամ

¹ **Հավաքական** (անուն) եզրույթն առաջին անգամ գործածել է Հովհ. Կոստանդնուպոլսեցին (տե՛ս **Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարազյույան Թ. Ա.**, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 172): Քերականը տարբերակում է անվան երեք տեսակ՝ հատուկ, հասարակ և հավաքական: Հավաքականների մասին գրում է, որ դրանք «եզականալ թուով զբազմություն ինչ ժողովապես նշանակեն» (տե՛ս **Յովհաննէս վրդ. Կոստանդնուպոլսեցի**, Զոտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հռոմ, 1674, էջ 126): Մենք կգործածենք ինչպես **հավաքական գոյական**, այնպես էլ **հավաքական անուն** եզրույթները կամ էլ ուղղակի **հավաքական** կարճ տարբերակը:

² Հմմտ. **Պետրոսյան Հ. Զ.**, Գոյականի թվի կարգը հայերէնում, Երևան, 1972, էջ 70, **Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարազյույան Թ. Ա.**, նշվ. բառարանը, էջ 172:

³ **Աղայան Է. Բ.**, ժամանակակից հայերէնի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 249:

⁴ **Պետրոսյան Հ. Զ.**, Հայերէնագիտական բառարան, Երևան, 1987, էջ 158:

ասվում է, որ հավաքական գոյականները «ցույց են տալիս միատեսակ առարկաների անբաժանելի ամբողջություն»⁵ (ընդգծումները մերն են – Դ. Գ.):

Քերականական տեսանկյունից հավաքականությունը ենթակարգ է, որ գտնվում է թվի կարգի տիրույթում: Այլ կերպ ասած՝ հավաքական գոյականներն այդ խոսքի մասի շրջանակում իմաստային-քերականական խմբերից են⁶: Նաև կարծիք կա, թե եզակի և հոգնակի (երկակի և այլն) թվերից բացի «գոյություն ունի նաև թվի մի այլ արտահայտություն՝ այսպես կոչված հավաքական թիվ, և կան բազմաթիվ բառեր, որոնք արտահայտում են առարկաների քանակը ոչ թե որպես եզակի (մեկ) կամ հոգնակի (մեկից ավելի), այլ որպես մի հավաքական ամբողջություն»⁷, ինչպես՝ **ուսանողություն, տեսականի**: Երբեմն դա անվանում են «հավաքական հոգնակի» (**պապոնք, Գրիգորենք, Մաճկալանք, Վեդունք**)⁸:

Իմաստային տեսանկյունից հավաքական բառը միասնություն է ցույց տալիս, հասկացական տեսանկյունից՝ բազմություն: Ի տարբերություն թվի կարգի՝ հավաքականությունը դրսևորում է հավաքականության ոչ թե քանակային, այլ ավելի շուտ որակական կողմը՝ առարկաների հավաքականության միասնությունը. հմմտ. **հայ – հայեր – հայություն, մորթի – մորթիներ – մորթեղեն**:

Հավաքականության իմաստը դրսևորվում է ինչպես պարզ (արմատական) բառերի միջոցով (**ամբոխ, ազգ, բանակ** և այլն), այնպես էլ ձևավորվում է հավաքականակերտ

⁵ **Ասատրյան Մ. Ե.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970, էջ 119:

⁶ **Մարգարյան Ա.**, Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Երևան, 2004, էջ 66: Հետագա շարադրանքում լեզվաբանը, հակասելով իր գրածին, հավաքական գոյականների մասին խոսելիս դրանք համարում է «իմաստային քերականական կարգ» (էջ 73):

⁷ **Աղայան Է. Բ.**, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 362:

⁸ **Պետրոսյան Հ. Զ.**, նշվ. բառարանը, էջ 158:

ածանցների (-եղեն, -ություն, -անի, -ստան և այլն) օգնությամբ:

Արդեն V դարում հայերենն ուներ հավաքականակերտ այս մասնիկները՝ **-ական (գօրական), -ան (ձիան), -անի (աւագանի), -եան (բերդեան), -եար / -որեար (բանեար «խոսքեր, բանավեճ, բանակոծիվ», ազատորեար «ազատանի, ազնվականներ, իշխաններ»), -նեար (նաւկնեար «նավակներ»), -որեայ / որայ (արտորեայ, վանորայ), -տի / -ոտի (մանկտի, ոսկրոտի «ոսկորների ամբողջությունը»)**⁹:

Կան եզակիաձև հավաքական և հոգնակիաձև հավաքական գոյականներ, որոնք «դուրս են եզակի-հոգնակի համարժեքային հակադրության ոլորտից»¹⁰:

Արդի հայերենում հավաքական գոյականը քերականական ձևավորմամբ մի դեպքում եզակի է, որ կարող է հոգնակի թվով գործածվել (**ժողովուրդ - ժողովուրդներ, երամակ-երամակներ**), մյուս դեպքում, հատկապես երբ բաղադրյալ կազմություն է (**սայիտակեղեն, մտավորականություն, նամականի**), անհոգնական:

Հավաքականության իմաստ ունեցող բառերի մեջ տարբերակում են բուն հավաքական գոյականներ, որոնք «եզակի ձևով արտահայտում են հոգնակի թվի իմաստ և հենց հոգնակի ձևով էլ կարող են փոխարինվել»¹¹, ինչպես՝ **ուսանողություն – ուսանողներ, հոգևորականություն – հոգևորականներ**: Իրականում սրանք սերտորեն առնչվող, բայց իմաստաբանորեն և քերականորեն տարբեր իրողություններ են: Հավաքական գոյականն ամբողջություն և միասնություն է

⁹ Հմմտ. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957, էջ 529, Աբրահամյան Ա. Ա., Գրաբարի ձեռնարկ, 4-րդ հրատ., Երևան, 1976, էջ 20: Այդ մասնիկների մասին ասվում է, որ գործածվում էին «հավաքական կազմելու համար» (Հր. Աճառյան), «մեծ մասամբ արտահայտում են հավաքականության իմաստ» (Ա. Աբրահամյան):

¹⁰ Հմմտ. Պետրոսյան Հ. Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, էջ 72:

¹¹ Ասատրյան Մ. Ե., նշվ. աշխ., էջ 120:

արտահայտում, իսկ գոյականի հոգնակին քերականական կարգ է, որը ցույց է տալիս մեկից ավելի նույն առարկաներ (չէշտելով, իհարկե, միասնության կամ ամբողջականության գաղափարը): Սրանց քերականական տարբերակվածությունը երևում է նաև նախադասության մեջ, ենթակայի և ստորոգյալի համաձայնության միջոցով:

Հայերեն հավաքական գոյականների մեջ առանձնացրել ենք բառախմաստային մի խումբ, որի միավորները նշանակում են «հայերի հավաքական ամբողջություն», այլ կերպ ասած՝ դրանք հայ հավաքականության նշանակիչներն են: Կքննենք այն բառերը, որոնք ունեն **հայ** բաղադրիչը: «Հայեր», «հայ հավաքականություն» են նշանակում նաև գրաբարյան բառակապակցություններ, ինչպես՝ **տուն Թորգոմայ, ցեղ Թորգոմայ, տոհմ թորգոմեան, ազգ արամեան** և այլն, բառային միավորներ՝ **հայկազունք, հայկեայք, թորգոմեանք, արամեանք, ասքանազեանք** և այլն, սակայն դա այլ քննության նյութ է:

Ուշագրավ և գրավիչ է բացահայտել, թե բառային մակարդակում հայության առնչությամբ ինչպե՛ս է դրսևորվում արդեն հիշատակված «ամբողջության, միասնության, միավորվածության գաղափարը»: Կպարզենք, թե որո՛նք են այդ բառերը, ե՛րբ են ստեղծվել (կամ որո՛նք են մեզ հասած գրավոր առաջին վկայությունները), ի՛նչ կազմություն և իմաստ(ներ) ունեն, ի՛նչ բառերի հիմք են դարձել, կուրվագծենք դրանց բառարանային մշակման պատմությունը, կմատնանշենք հայերենի բառային ուրիշ միավորների հետ նրանց ունեցած բառախմաստային առնչությունները:

Առանձին-առանձին անդրադառնանք հայ հավաքականություն նշանակող բառային միավորներին:

Հայք

Նոր հայկազյան բառարանում **հայ**-ը բացատրվում է «ազգ արամեան, որ ի Հայկայ թորգումեան յաբեթեանց»¹², համանման է Ջախջախյանի բացատրությունը՝ «ազգ արամեան, սերեալն ի Հայկայ»¹³: Գրաբարի նորոյա բառարանը երրորդ՝ գոյականի իմաստով նշում է «հայ ազգը, հայ ժողովուրդը»¹⁴:

Հայ բառի գրաբարյան հոգնակին է **հայք**՝ կազմված **-ք** հոգնակերտ մասնիկի օգնությամբ: Սակայն լեզվի զարգացման ընթացքում **հայք**-ը սոսկ բառածն չի ընկալվել: Խոսքաշարում հոգնակիի իմաստի հետ մեկտեղ քերականական ձևը ժամանակի ընթացքում որոշակիորեն կայունացել է, մասամբ վերաիմաստավորվել, և բառածնն արտահայտում է նաև հավաքականության գաղափար՝ «հայություն, հայ ազգ»: Իմաստագործառական այս հատկանիշները հաշվի առնելով՝ **հայք**-ը մեր կարծիքով պետք է այս բառախմբի մեջ զետեղել¹⁵:

Ասվածի օգտին է վկայում հետևյալ իրողությունը. 1960-70-ական թվականներին ակադ. Ա. Ս. Ղարիբյանի, այնուհետև Ա. Ա. Աբրահամյանի ղեկավարությամբ կազմված բնագրային համաբարբառներում, որոնք արտացոլում են V դարի հայ պատմագրությունը, **հայք**-ը ներկայացվել է առանձին բառահոդվածով՝ իբրև բառույթ: Այսինքն՝ գրաբարի շրջանակներում քերականական ձևն ընկալվել է բառի արժե-

¹² **Հ. Գաբրիել Աւետիքեան, հ. Խաչատուր Միրսէլեան, հ. Մկրտիչ Ազգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 29 (այսուհետև՝ ՆՀԲ):

¹³ Տե՛ս **հ. Մանուէլ վրդ. Ջախջախեան**, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, 1837, էջ 829:

¹⁴ **Ղազարյան Ռ. Ս.**, Գրաբարի բառարան, հ. Բ, Երևան, 2000, էջ 29:

¹⁵ Հետաքրքրական է, որ Հր. Աճառյանը հավաքականակերտ մասնիկների մեջ է դնում նաև հոգնակերտ **-իկ**-ը՝ **մարդիկ** (տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957, էջ 529), թեև ակնհայտ է, որ այն հոգնակիի սկզբնաձևն է:

քով: Հմմտ. «Ամենայն **հայք** զկնի իւր միաբանեցին» (Եղիշե), «**Հայք** սերտիւ մեր լինին» (Փարպեցի) և այլն¹⁶:

Հիշյալ համաբարբառներում փորձ է արվել զատելու **հայք** ժողովրդանունը և **Հայք** երկրանունը, թեև դա ոչ միշտ է հաջողվել, քանի որ նույն բառահոդվածի ներքո տրվել են թե՛ մեկի, թե՛ մյուսի բնագրային օրինակներ: Իսկ Փարպեցու համաբարբառում **հայք** գլխաբառի կողքին՝ փակագծերում, լրացուցիչ նշում կա՝ ժող., այսինքն՝ «ժողովուրդ», որ հայերի հավաքական ամբողջությունն պիտի հասկանալ:

Համանման մոտեցում են դրսևորել արևմտահայերենի բացատրական բառարանները՝ գլխաբառ դարձնելով **Հայք** / **հայք**-ը (մի բառարանում **Հայք** է, մյուսներում՝ մեծատառերով՝ **ՀԱՅՔ**): Առաջին անգամ բացատրվել է «Հայաստան, հայեր»¹⁷, այնուհետև իմաստները սահմանազատվել են՝ «1. Հայաստան, 2. հայեր (գրաբար)»¹⁸, իսկ երկհատոր բացատրական բառարանում իմաստների դիրքը (մասամբ նաև ձևակերպումը) փոխվել է՝ «1. (գրաբար) Հայեր, 2. Հայերու

¹⁶ Տե՛ս **Հայկական համաբարբառ 3**, Փաստոսի Բուզանդացու Պատմություն Հայոց, գիրք 2-րդ, կազմեց Վ. Մ. Գևորգյան, էջ 320, **Հայկական համաբարբառ 4/II**, Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, կազմեցին Հ. Վ. Սարգսյան, Բ. Ա. Եզանյան, Երևան, 1973, էջ 16, **Հայկական համաբարբառ 5**. Եղիշեի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, գիրք Բ, կազմեց Լ. Ա. Գուլգազարյան, Երևան, 1978, էջ 57, **Հայկական համաբարբառ 6**. Ղազարայ Փարպեցու Պատմություն Հայոց, գիրք 2-րդ, կազմեց Ալ. Մ. Սարգսյան, Երևան, 1978, էջ 269, **Հայկական համաբարբառ 7**. Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, գիրք 2-րդ, կազմեցին Օ. Մ. Խաչատրյան, Ա. Գ. Բաղդասարյան, Երևան, 1976, էջ 196:

¹⁷ **Պետրոս Վրդ. Ճիզմեճեան**, Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 2, Հալեպ, 1957, էջ 799:

¹⁸ **Տեր Խաչատուրեան Արտ., Գանգրունի Հր., Տոնիկեան Փ. Կ.**, Հայոց լեզուի նոր բառարան, Բեյրութ, 1968, էջ 411: Ակադեմիական բացատրական բառարանը տալիս է «պատմ.» ոճական նշումը և բացատրում՝ «Հայոց երկրի անունը» (տե՛ս **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 3, Երևան, 1974, էջ 288):

բնական երկիրը, Հայաստան»¹⁹: Բառարանային այս վկայակոչումները հավաստում են, որ նոր ժամանակներում **հայք** բառաձևն ընկալվում է նաև բառի արժեքով: Հոգնակիի **հայք** ձևն արդի հայերենին բնորոշ չէ, սակայն խիստ հազվադեպ պատահում է պատմագեղարվեստական ստեղծագործություններում: Հմմտ. «Եվ կայսրը կամենում է, որ **հայք** իզուր, իրենից դուրս, ուրիշ բարեկամներ չփնտրեն» (Ստ. Ջորյան, «Վարազդատ»), «Եվ մի թե ճշմարիտ է, թե անուսումնասեր են **հայք**» (Գ. Դևրիկյան, «Վիրավոր կոունկ»)՝²⁰: Սրանք արդի գրական հայերենում հնաբանություններ են:

Հայեար

Հայեար գլխաբառ ՆՀԲ-ն չունի, կա Առձեռն բառարանում, որտեղ նշվում է ձևաբանական արժեքը՝ գոյական, իմաստը՝ «հայեր»²¹:

Հայերենի զարգացման հնագույն շրջանում **-ք** հոգնակերտի գործածությունը սահմանափակվում է հավաքական-հոգնակերտ մասնիկների²² տարածմամբ, ինչպես՝ **-ունք**, **-եար**, **-ուի**, **-(ո)տի**, **-անի**, **-ստան**, **-որ(ե)այ(ք)**: Դրանցից **-եար** հավաքական-հոգնակերտը նախագրային փուլի համար

¹⁹ **Ճերեճեան Գնել արք., Տօնիկեան Փ. Կ.**, Հայոց լեզուի նոր բառարան, Բեյրութ, 1992, հ. 1, էջ 1147: Ի դեպ, **Հայք** երկրանվան **և հայք** հասարակական դեպքում գործ ունենք ոչ թե բազմիմաստության, այլ համաձայնության հետ: Արևելահայերենի բացատրական ընդարձակ բառարաններից ակադեմիական ունի **ՀԱՅՔ** գլխաբառը, սակայն միայն «հայոց երկրի անունը» բացատրությամբ (հ. 3, էջ 288):

²⁰ Արևելահայերենի ազգային կորպուս (www.eanc.net):

²¹ [**Հ. Մկրտիչ Աւգերեան, հ. Գրիգոր Ճլալեան**], Առձեռն բառարան հայկազենան լեզուի, Բ տպագր., Վենետիկ, 1865, էջ 468:

²² **Հավաքական-հոգնակերտ մասնիկ** եզրույթը Գ. Ջահուկյանին է (տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 375-376): Հարադրական գիտաբառի միջոցով դրսևորվում է հավաքականակերտ մասնիկների երկակի բնույթը. մի կողմից նրանք հավաքականներ են կազմում, մյուս կողմից՝ հոգնակի թվի գաղափար արտահայտում:

բնութագրվում էր տարածքային սահմանափակումներով. թեև հնարավոր չէ նշել սրա գործողության հնագույն տարածքները, բայց կարելի է ասել, որ այն ընդգրկել է կենտրոնական շրջանները՝ V դարի դասական հայերենի հուշարձաններում արդեն ունենալով **եա > ե** փոփոխությամբ պայմանավորված **-եր** տարբերակը²³, ինչպես **բանեար - բաներ**: Այդպես էլ **հայեար - հայեր**, որ ունի Փարպեցին. «.... տեսեալ Նիխորոյ **զՀայերն** ուրախացաւ», «Եւ ընդ Վահանայ և ընդ այլ **Հայերդ** ոչ եթէ նետիւ կոռւիմ, այլ»²⁴:

ՆՀԲ-ի **հայ** բառահոդվածում գետեղվել է նաև **հայեր** «հայ մարդիկ» միավորը, որը ծագել է **հայեար**-ից: Այսօր արդեն հայության ներկայացուցիչներին հոգնակիով անվանում են բացառապես այդ նույն **հայեր** ձևով:

Հայորեար

Հայորեար բառը ՆՀԲ-ն բացատրում է «հայ մարդիկ. արք ազնուականք ի հայոց», սեռ. հոլ.՝ **հայորերոյ**²⁵ (հ. Բ, էջ 32): Առձեռն բառարանը բառիմաստը հակիրճ ձևակերպում է այսպես՝ «հայ մարդիկ. գլխաւորները» (էջ 469): Հմմտ. **որեար** «այն մարդիկ», **ազատորեար** «ազնվականներ, իշխաններ»:

Հայորեար բառը կազմված է **հայ** և **որ** (ղերանուն) արմատներից, հավաքականանիշ **-եար** մասնիկից: Գործածվել է Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ում. «Եւ ժողովեալ ամենայն **Հայորերոյն** առ Մամիկոնեանն Վահան», «Եւ տուեալ լսել Մամիկոնենին ամենայն **հայորե-րոյն** միահամուռ զպատգամն Նիխորոյ»²⁶:

²³ Զահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 375:

²⁴ **Հայկական համաբարբառ 6**. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, գիրք 2-րդ, էջ 263:

²⁵ Հր. Աճառյանը նկատում է, որ **-եար** մասնիկը կրճատվելով դարձավ **-եր** (անշուշտ **-երոյ**, **-երով** հոլովված ձևերի ազդեցությամբ, որոնց մեջ **ա**-ի կորուստն օրինաչափական է) (տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 534):

²⁶ **Հայկական համաբարբառ 6**. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, գիրք 2-րդ, էջ 266:

Տակավին V դարում հավաքականության ենթակարգը զգալապես ծավալվեց: Հիմնական խթանը սա էր. Հավաքականը վերացնում էր այն շփոթությունը, որ սկսել էր նկատվել անեզական բառերի գործածության մեջ, ինչպես՝ **վանք**՝ եզակի կամ հոգնակի, բայց **վանեաք**՝ «իբր՝ հավաքական հոգնակի»²⁷: Այդպես էլ **հայորեաք**-ը՝ իբրև իմաստային-քերականական տարբերակման միջոց:

Հայաստան

Հայաստան-ը ՆՀԲ-ում ներկայացված է երկու արժեքով: Գոյականի արժեքով այն նշանակում է Հայք (հղում է արվում հատուկ անունների բառացանկին), իսկ իբրև ածական՝ «հայկական, արամեան, թորգունեան». «Գիրս նշանագրոց **հայաստան ազգիս**» (Կորյուն)²⁸ (ՆՀԲ, հ. Բ, էջ 30): Կազմում է բաղադրյալ անուններ՝ **Հայաստան աշխարհ** և **Հայաստան երկիր**: Ուշագրավ են հատկապես **հայաստան ազգ** և **հայաստան ազինք**²⁹ բառակապակցությունները (կան բառահոդվածի տրված բնագրային նմուշներում), որոնք «հայեր» են նշանակում:

Հայաստան բառը Ղազար Փարպեցին այս արժեքով (և իմաստով) գործածել է մեկ անգամ. «.... պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրող ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս **Հայաստան ժողովրդոց**»³⁰: Այստեղ **Հայաստան**-ը

²⁷ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 531:

²⁸ Հմմտ. «.... ի գիւտ նշանագրաց **Հայաստան ազգին հասանել**» (տե՛ս **Հայկական համաբարբառ 2**, Կորին «Վարք Մաշտոցի», կազմեց Է. Դեմիրճյան, Երևան, 1972, էջ 133): Նույն իմաստի համար հմմտ. նաև «Եւ յաղթահարէր զգօրսն Պարսից գունդն **հայաստան**» (տե՛ս **Հայկական համաբարբառ 3**. Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, գիրք 2-րդ, էջ 310):

²⁹ Նաև **հայաստան տուն** (տե՛ս **հ. Մանուէլ վրդ. Զախջախեան**, նշվ. բառարանը, էջ 829):

³⁰ **Հայկական համաբարբառ 6**. Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, գիրք 2-րդ, էջ 264:

երկիր չի նշանակում, այլ ուղղակի հայ³¹, այսինքն՝ «հայերի եկեղեցիներում և վանքերում»:

Պատմահայր Մովսես Խորենացին ևս կիրառել է մեկ անգամ՝ «Իսկ թագաւորն Տրդատ ամենայն **Հայաստանօր** իջեալ ի դաշտն Գարգարացոց՝ պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի»³², որ թարգմանվել է «Հայաստանի բոլոր գորքերով»³³: Վ. Առաքելյանը այս կապակցությամբ գրում է, որ «պետք է փոքրատառ գրվեր և թարգմանվեր **հայերով**: Ուրեմն **Հայաստան** միավորն այստեղ էլ երկիր չի նշանակում»³⁴:

V դարի բերված օրինակներում տեսնում ենք, որ «հայ+աստան» կազմությամբ բառը որոշ դեպքերում ոչ թե երկրանուն է նշանակել, այլ պարզապես «հայեր՝ հայ հավաքականություն՝ հայություն»: Միննույն ժամանակ հարկ է արձանագրել, որ սա տարածված կիրառություն չէր:

Պարզաբանենք հավաքականության իմաստը՝ դիտարկելով բառի մասնիկային –**ստան** բաղադրիչը:

Հր. Աճառյանը մասնիկի մասին գրում է որ այն հին հայերենի –**աստան** տեղանիշ մասնիկն է, որը վերածվել է հոգնակերտի (հղելով գերմանացի հայագետ Յ. Կարստին)³⁵: Անցումը կատարվել է **այգեստան**, **ձիթաստան**, **ծառաստան** և նման բառերի միջոցով, «որոնց մեջ առարկաների բազմությամբ գտնվելու տեղը նույնիսկ բազմության մտքով է առնված, որով և հավաքականի է վերածված», իսկ «հավաքական և հոգնակի –**ստան** մասնիկի հարաբերակցությունը

³¹ **Առաքելյան Վ. Դ.**, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981, էջ 104:

³² **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, 1991, էջ 230:

³³ **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 221:

³⁴ **Առաքելյան Վ. Դ.**, նշվ. աշխ., էջ 104:

³⁵ **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 713:

կարելի էր տեսնել հատկապես **Հայք – Հայաստան, Մարք – Մարաստան, Վիրք – Վրաստան, Պարսք – Պարսկաստան, Հնդկկք – Հնդկաստան** և նման բառերի մեջ, որոնցից կարելի էր հետևանքով, թե ստան=ք»³⁶:

Ուշագրավ է, անշուշտ, Յ. Կարստի մոտեցումը, ըստ որի՝ հին հայերենում **-ստան**-ը կազմում է «բաղադրյալ բառեր, որոնք նշանակում են առարկաների հավաքման կամ գտնվելու տեղը». «տեղի իմաստը հեշտությամբ դառնում է հավաքական», և «վերջավորությունն սկսում է նշանակել առարկաների բազմություն, որոնք հավաքված են մի տեղում»³⁷:

Գ. Ջահուկյանը **-ստան** մասնիկի մասին գրում է, որ իրանյան ծագում ունեցող այս ածանցը «հավանաբար դեռ հնագույն հայերենի նախագրաբարյան փուլում պիտի բավական տարածված լիներ հավաքական-տեղանիշի արժեքով՝ **այգեստան, անդաստան, ձիթաստան** «ձիթենիների տեղ. ձիթենիներ» և այլն»³⁸: Ածանցն աստիճանաբար դուրս է մղում նաև երկրներն ըստ ժողովուրդների կոչելու (**Հայք** «հայեր. Հայաստան») հին սովորույթը և առաջ բերում տարբերակում՝ **Հայաստան, Մարաստան** (հմմտ. նաև **Մարաց աշխարհ**) և այլն³⁹:

Այս ածանցի մասին եղել են այլ կարծիքներ ևս⁴⁰:

Հավաքականության իմաստ արտահայտող **Հայաստան (հայաստան) ազգ / ժողովուրդ** կապակցությունները, որ

³⁶ Նույն տեղում:

³⁷ Տե՛ս **Կարստ Յ.**, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, գերմ. թարգմ. Դմ. Ալիվկյակ, Երևան, 2002, էջ 191:

³⁸ Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, նշվ. աշխ., էջ 376:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Ա. Ղարիբյանը, օրինակ, կարծում է, որ կապ չկա տեղանիշ **-ստան**-ի հետ. նրա կարծիքով **ս**-ն հայցականի մասնիկն է (առաջացել է հոգն. ուղղականի **ք**-ից), որին ավելանում են **-տ** և **-ան** մասնիկները, ինչպես՝ **բաղնիք – բաղնիս – բաղնեստան = բաղնիքներ** (տե՛ս **Ղարիբյան Ա. Ս.**, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 138):

գրաբարում իսկ սահմանափակ կիրառություն ունեին, չփոխանցվեցին հայերենի զարգացման հաջորդ փուլերին:

Հայաստանեայք

Հայաստանեայք բառը ՆՀԲ-ն ներկայացնում է գոյակա-
նի արժեքով՝ «բնակիչք կամ ազգ Հայաստան աշխարհի.
հայք»⁴¹ (հ. Բ, էջ 30): Առձեռն բառարանը, ի տարբերություն
ՆՀԲ-ի, բացատրում է բացառապես հոգնակիի ձևերի միջո-
ցով՝ «հայաստանցիք, ազգք և բնակիչք Հայոց աշխարհին» (էջ
468):

Մալխասյանցի բառարանում տրված բացատրությունը
հայկազյան բառարանների նյութի համադրումը կարծեք
լինի՝ «Հայաստանի բնակիչներ, հայ ժողովուրդ, հայ ազգ»⁴²:
Ստ. Մալխասյանցը գոյականից բացի բառին վերագրել է նաև
ածականի արժեք: Ամենայն հավանականությամբ բառարա-
նագիրն այս որոշումն ընդունելու համար նկատի է ունեցել
հատկապես **Հայաստանայց Առաքելական Եկեղեցի**
անվանումը, որ կենսունակ է դարեր ի վեր: Համարժեք **Հայ**
(կամ **Հայոց**) **առաքելական եկեղեցի** անվանումները հուշում
են, որ առաջին **Հայաստանայց** բաղադրիչը կարող է
ածականի արժեքով ընկալվել: Հմմտ. «.... ի մայր եկեղեցեացն
ամենայն **հայաստանեաց**» (Բուզ.)⁴³, «Ողորմիմ քեզ, եկեղեցի
հայաստանեայց, խրթնացեալ ի բարեզարդութենէ բեմին...»
(Խոբ.)⁴⁴:

⁴¹ Ջախջախյանն ավելացնում է «հայաստանցի», իբր ռամկորեն (տե՛ս նշվ.
բառ., էջ 829):

⁴² **Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944,
էջ 37: Ռ. Ղազարյանը նույնությամբ կրկնում է Մալխասյանցին (տե՛ս
Ղազարյան Ռ. Ս., նշվ. բառարանը, էջ 29):

⁴³ **Հայկական համաբարբառ 3.** Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն
Հայոց, գիրք 2-րդ, էջ 311:

⁴⁴ **Հայկական համաբարբառ 7.** Մովսիսի Խոբենացոյ Պատմութիւն Հայոց,
գիրք 2-րդ, էջ 181:

Հայաստանեայք բառին ձևախմբաստային և գործառական առումով համեմատելի են **Հայաստանեաց աշխարհ / երկիր** և **Հայաստան աշխարհ / երկիր** բառակապակցությունները:

Գործածվել է V դարի հայերենում: Սեռական հոլովը լինում է **Հայաստանեայց** կամ **Հայաստանեաց**, հայցականը՝ **զՀայաստանեայս**, գործիականը՝ **Հայաստանեօք** (կոչականը՝ **ո՛վ Հայաստանեայք**)⁴⁵: Հմմտ. «Մուշեղ զօրավարն **հայաստանեաց** շրջեր ընդ երկիրն» և «.... բանի Շապիոյ արքայի գայր հասանէր տալ պատերազմ ընդ **հայաստանեայսն**» (Բուզանդ)⁴⁶, «Այս Հայկ որդի Թորգոմայ նախնի **Հայաստանեայց**» և «Որոց պատահեալ քաջին Արշարի Կամսարականի հանդերձ ամենայն **Հայաստանեայցս** զօրու...» (Խորենացի)⁴⁷:

Հայաստանեայք բառի կազմությունը՝ **Հայաստան** երկրանուն+բաղադրյալ -**եայք** մասնիկը (-եայք). մասնիկի համար հմմտ. **աղախն(ե)այք**, **միջերկր(ե)այք**, **արուարձան(ե)այք**: Ձևախմբաստային առումով **հայաստանեայք**-ը համեմատելի է գրաբարյան **հրեաստանեայք** «հրեաներ» և **ասորեստանեայք** «ասորեստանցիներ» բառերին:

Հայակոյտ

Հայակոյտ բառը ՆՀԲ-ն ներկայացնում է ածականի արժեքով՝ «կուտեալ ի հայազանց. ժողովեալ ի հայոց ազգէն» և ներկայացնում V դարից միակ վկայությունը՝ «Նախարարք **հայակոյտ** զօրացն» (Ագաթ.)⁴⁸ (հ. Բ, էջ 30): Նույն արժեքով և

⁴⁵ Մխիթար Աբգահայր, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 33:

⁴⁶ **Հայկական համաբարբառ 3**. Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, գիրք 2-րդ, էջ 311:

⁴⁷ **Հայկական համաբարբառ 7**. Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, գիրք 2-րդ, էջ 181-182:

⁴⁸ **Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց, Երևան, 1983, էջ 30:

«հայոցմէ խումբ եղած» իմաստով տրված է նաև Առձեռն բառարանում (էջ 468): Ս. Ղազարյանի բառարանը «հայերից խմբուած՝ կազմված» բացատրությանն ավելացնում է **հայախումբ** հոմանիշը (հ. Բ, էջ 29):

Ամենայն հավանականությամբ բառն ստեղծել է Ագաթանգեղոսը կամ էլ նրա միջոցով է փոխանցվել մեզ⁴⁹: Գրաբար խոսքում գործածել են ուրիշներ ևս, միջնադարում և նոր շրջանում, ինչպես՝ «Եւ յայնմ պատերազմի ոչ փոքր ինչ քաջութիւն գործեալ **հայակոյտ** զաւրացն...»⁵⁰ (Սեբեոս, VII դար) և «.... խօսեցցին զինքեանց առ անաչառատես միտս և առ վեհագունիցն **հայակոյտ** քերթողական որերոյն....»⁵¹ (Արսեն Բագրատունի, XIX դար): Նաև աշխարհաբար՝ «.... դառնանք եղածին, եւ դիմացնիս կեցած մեր **հայակոյտ** բանակին» (Ղ. Ալիշան)⁵²: Կրկին ածականական կիրառություններ են:

⁴⁹ Հմմտ. **Առաքելյան Վ. Դ.**, նշվ. աշխ., էջ 153-154: Այստեղ լեզվաբանը գրում է, որ Ագաթանգեղոսը «մեր գրական լեզուն հարստացրեց առտնին, մեր առօրյա գործածելի բազմաթիվ բառերով, որոնց կյանքը հարատևում է մինչև այսօր» և բերում **համբերատար, հայրական, հանգստարան, հաստատական, հեղձուցիչ** և բազմաթիվ այլ օրինակներ: Այդտեղ **հայակոյտ**-ի ընդգրկումն ճիշտ չենք համարում:

⁵⁰ **Պատմութիւն Սեբեոսի**, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 95: Հետաքրքրական է, որ Սեբեոսի գործածած **հայակոյտ**-ը արևելահայերեն թարգմանության մեջ չի պահպանվել: Հմմտ. «*Այդ պատերազմում հայկական զորքերը քիչ քաջություն չգործեցին*» (տե՛ս **Սեբեոս**, Պատմություն, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Գ. Խաչատրյանի** և **Վ. Եղիազարյանի**, Երևան, 2005, էջ 394): Ագաթանգեղոսի երկի պարագայում այդպես չէ. հմմտ. «**Հայակոյտ** զորքի մեծամեծները...» (տե՛ս **Ագաթանգեղոս**, «Հայոց պատմություն», աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ս. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 31):

⁵¹ **Պոփխոսի Վիրգիլիայ Մարովնի** Մշակականք, Վենետիկ, 1847, էջ 32 (հայր Արսեն Բագրատունու «Յառաջաբանը»):

⁵² **Ղևոնդ Ալիշան**, «Յուշիկք հայրենյաց Հայոց», հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 245:

Ստ. Մալխասյանցի բառարանում **հայակոյտ**-ից հղում է արվում **հայախումբ**-ին (հ. 3, էջ 36), որը ներկայացված է երկու արժեքով՝ գոյականի և ածականի: Գոյականի իմաստը հիմք է տալիս **հայակոյտ**-ը ևս ընդգրկելու հայ հավաքականությունն նշանակող բառերի խմբում:

Նշեք, որ արևելահայերենի և արևմտահայերենի բացատրական բառարաններում **հայակույտ** / **հայակոյտ**-ը գլխաբառ չի դարձել առհասարակ⁵³: Հովհ. Բարսեղյանի ուղղագրական բառարանը **հայակույտ**-ն արձանագրել է հնց. նշումով⁵⁴:

Հայախումբ

Հայախումբ բառը գրաբարի և միջին հայերենի բառարաններում վկայված չէ: Աշխարհաբարյան կազմությունն է, սկզբնապես գործածվել է ածականի արժեքով: Օրինակներ՝ «.... շատ **հայախումբ** քաղաքներ, գիւղեր եւ աւաններ կդատարկուին»⁵⁵, «.... լսվեցավ հանկարծ **հայախումբ** զորքերի որոտագին աղաղակը»⁵⁶:

Բառն ընդգրկել ենք «հայ հավաքականություն» բառամաստային խմբում, քանի որ այն ձեռք է բերել նաև գոյականի արժեք (այդ են վկայում հայերենի բառարանները): Ստ. Մալխասյանցի բառարանում **հայախումբ**-ը ներկայացվել է երկու արժեքով՝ 1. գոյականի՝ «հայերից կամ հայ մարտիկներից կազմված խումբ», և 2. ածականի՝ «որտեղ խմբված են հայեր», **հայախումբ բազմութիւն** ցուցադրական նմուշով (հ. 3, էջ 36): «Ժամանակակից հայոց լեզվի բառարանը» ևս նշում է

⁵³ Եվ դա թերևս արդարացված է, քանի որ աշխարհաբարում բառը չի գործածվել: Արևելահայերենի ազգային կորպուսում (110 միլիոն բառագործածությամբ) բնագրային ոչ մի օրինակ չկա (տե՛ս www.eanc.net):

⁵⁴ **Բարսեղյան Հ. Խ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Երևան, 1973, էջ 538:

⁵⁵ «Արաբատ» ամսագիր, 1877, թ. Ը, էջ 285

⁵⁶ **Մուրացան**, «Գևորգ Մարգարետունի», Երևան, 1982, էջ 338:

երկու արժեք, սակայն առաջին՝ գոյականական իմաստը ներկայացնում է առանց «հայ մարտիկներից» բառակապակցությամբ, այսինքն՝ «հայերից կազմված խումբ», երկրորդ իմաստը՝ «հայերից կազմված, հայերից բաղկացած»՝ Մալխասյանցից վերցված բառակապակցությամբ՝ **հայախումբ բազմություն** (հ. 3, էջ 281):

Բառը կա նաև Էդ. Աղայանի բառարանում, որտեղ նշվում են քերականական ձևեր՝ հայախմբի, հայախմբեր⁵⁷, թեև դրանց գործածությունը, ըստ մեր որոնումների, փաստված չէ գրական վկայություններով⁵⁸:

Գոյականի և ածականի արժեքների նշումով **հայախումբ** գլխաբառ ունի Սուքիասյանի հոմանիշների բառարանը, որտեղ տրված են հենաբառի **հայակույտ** և **հայաժողով** հոմանիշները⁵⁹: **Հայախումբ**-ն այստեղ դիտվել է հնացած (հնգ.): Իր հաջորդ բառարանում Սուքիասյանը կրկին նշում է բառի երկարժեքությունը, սակայն բառն արդեն համարում է հազվադեպ (հզվդ.)՝ տալով ընդամենը մեկ հոմանիշ՝ **հայակույտ**⁶⁰: Իրականում այն թե՛ հնացած է և թե՛ հազվադեպ:

Արևմտահայերենի բացատրական բառարաններում **հայախումբ**-ը չի արձանագրվել արդի փուլում անգործածական լինելու պատճառով:

Հայագունդ

Հայագունդ բառն արձանագրված չէ գրաբարի և միջին հայերենի բառարաններում: Ամենայն հավանականությամբ

⁵⁷ **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 810:

⁵⁸ Տե՛ս eanc.net (Արևելահայերենի ազգային կորպուս):

⁵⁹ **Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 361:

⁶⁰ **Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009, էջ 581:

XVIII դարի առաջին կեսի կազմությունն է. «Եւ դէպ եղել յաւուրսն յայնոսիկ Յոհաննէս պետն Գուգարացոց գալ ի կողմանս յայնոսիկ յիսուն եւ վեց հազար **հայագունդ** զօրօք»⁶¹: Ընդհանուր հայերեն բառ է:

Բառն սկզբնապես գործածվել է ածականի արժեքով, հետագայում ձեռք է բերել նաև գոյականի արժեք, դրա համար էլ ընդգրկել ենք հայ հավաքականություն նշանակող բառերի խմբում: Ահավասիկ գոյականական արժեքով կիրառվելու արևմտահայերեն և արևելահայերեն մեկական օրինակ՝ «Նոյն ատեն հարաւային **հայագունդ** մ'ալ հեռուն երկինքն խրկուած կ'երեւար»⁶², «Հայոց աշխարհի խաղաղության համար մարտնչող նախարարների ու «աշխարհագոր» **հայագնդի** կողքին....»⁶³:

Միանգամայն ճիշտ է վարվել Ստ. Մալխասյանցը՝ իր բառարանում **հայագունդ**-ը ներկայացնելով խոսքիմասային երկու արժեքով: Իմաստից՝ «գունդ՝ հայ զինուորներից բաղկացած», առաջնային է ընկալվում գոյականական արժեքը (հ. 3, էջ 36): Ակադեմիական բացատրական բառարանը բառի երկարժեքությունն ավելի ճկուն է ներկայացրել՝ «հայերից կազմված» (գունդ՝ զորք)⁶⁴, տալով նաև բնագրային մեկ օրինակ՝ «Ինքը մնաց այն **հայագունդ** այրուծիի թվում, որ պահված էր Տիգրբնում» (ԲաժՖի) (հ. 3, էջ 281): Հայ-ռուսերեն բառարանում **հայագունդ** բառի դիմաց ձևաբանական որևէ արժեք չի նշել, այլ տվել է միայն սեռական հոլովի ձևը՝ գնդի,

⁶¹ **Ստեփաննոս Շահումեան**, «Դաւիթ Բեգ», Վաղարշապատ, 1871 և **Ղուկաս Մեքաստացի**, «Դաւիթ Բեկ կամ Պատմութիւն Ղափանցոց», աշխատասիրեց հ. Սամուէլ վրդ. Արամեան, Վենետիկ, 1978, գլ. Զ: 1736-37-ին Ստ. Շահումեանը պատմում է 1722 թ. ապստամբության մասին, իսկ Ղուկաս Մեքաստացին գրի է առել:

⁶² «**Եւրոպա**» (Վիեննա), 1852, թիվ 18, էջ 71:

⁶³ «**Էջմիածին**», 1974, Գ, էջ 13:

⁶⁴ Էդ. Աղայանը կրկնում է ակադեմիական բառարանին (գ. 1, էջ 810), սակայն փակագծերը հանում է, ըստ որի ածականական արժեքը չի ներկայացվում:

բացատրությունն էլ ներկայացնում է միայն գոյականի արժեքը՝ Армянский полк:

Արևմտահայերենի բացատրական բառարանները չեն արձանագրել **հայագունդ** բառը, սակայն այն կա թարգմանական մի բառարանում՝ «Armenian bodyguard, composed of Armenians» թարգմանությամբ և «գոյական» նշումով⁶⁵:

Բացատրական բառարանները ոճական որևէ նշում չեն տվել, Հովհ. Բարսեղյանն իրավամբ նշել է, որ հնացած է:

Հայություն

Հայութիւն բառը ՆՀԲ-ն բացատրում է այսպես՝ «հայոց ազգէ կամ արամեան գոլն. հայք. արամեանք» և բնագրային երկու օրինակ ներկայացնում (Ստեփանոս Ասողիկից և Զաքարիա Ծործորեցոյց)՝ «Թողու զհաւատս հայրենի **հայութեան**» և «Մի հաւատ և մի օրէնք ունէին **հայութիւն**» (հ. Բ, էջ 32): Առձեռն բառարանը փոքր-ինչ պարզեցրել է բացատրությունը՝ «հայ ըլլալը ազգով, Հայք, Արամեանք» (էջ 469): Բառի կազմության ժամանակը հաշվի առնելով և հիշյալ հղումներին ավելացնելով Գրիգոր Տղային՝ Նորայր Բյուզանդացին **հայութիւն**-ը գետեղել է հին հայերենին հաջորդող շրջափուլի՝ միջին հայերենի բառարանում⁶⁶:

Գրաբարի ժամանակակից բառարանը Առձեռնին նման բացատրություն է տալիս՝ «հայ լինելը, հայ ազգին պատկանելը» և *հալաքական* «հայեր»⁶⁷

Ածանցավոր կազմություն է, բաղադրիչներն են հայերի **հայ** ինքնանվանումը և հայերենի ամենակենսունակ վերջածանցը՝ **-ութիւն**, որով հիմնականում վերացական գոյական-

⁶⁵ **Գույումճեան Մ. Կ.**, Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Բեյրութ, 1970, էջ 398:

⁶⁶ **Բիւզանդացի Նորայր Ն.**, Բառագիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց, հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնև, 2000, էջ 410:

⁶⁷ **Ղազարյան Ռ. Ս.**, նշվ. բառարանը, հ. Բ, Երևան, 2000, էջ 30:

ներ են կազմվում: Ածանցի գործառույթներից մեկն էլ ածական և գոյական հիմքերից հավաքական գոյականներ կազմելն է. ածական հիմքերից, որոնք «անվանական իմաստ կամ կիրառություն են ստացել» (**բուսականություն, զինվորականություն**), և գոյական հիմքերից (**ուսուցչություն, ուսանողություն, հայություն**)⁶⁸: Հաճախ բառակազմական հիմքի երկու (գոյ. և ած.) արժեք կարելի է նշել, ինչպես՝ **ազնվականություն** (< **ազնվական**), **հոգևորականություն** (< **հոգևորական**), նաև **հայ** և **այլն**:

Տեսակետ կա, որ արդի հայերենի բուն հավաքական գոյականները **-ություն** վերջածանցով կազմվածներն են, որոնք հավասարազոր են հոգնակիի ձևերին⁶⁹, հմմտ. **ազնվականություն** - **ազնվականներ**: Թեպետ նույն ձևով կարող ենք հակադրել այնպիսի հավաքականներ, որոնք **-ություն** ածանցով չեն կազմվել, ինչպես՝ **նամականի** - **նամակներ**, **ավագանի** - **ավագներ**, **դեղորայք** - **դեղեր** և այլն:

Դասական գրաբարում **-ություն** վերջածանցով հավաքականներ չեն կազմվել. բառակազմական այդ նշանակությունը և կիրառությունը հետագա շրջանների իրողություն է⁷⁰: Օրինակ՝ **երիտասարդություն**, որն այսօր նաև հավաքականության իմաստ է արտահայտում, V դարի հայերենում նշանակում էր միայն «երիտասարդական վիճակ և հասակ. կտրիճ հասակ» (ՆՀԲ, հ. Ա, էջ 684):

-Ություն ածանցով ազգերի անուններից հավաքականներ սովորաբար չեն կազմվում: Բացառություն են բառա-

⁶⁸ **Գալստյան Մ. Ա.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 169, 171: Սա լեզվաբանական թերևս միակ աշխատությունն է, որտեղ **-ություն** ածանցով կազմված հավաքական գոյականների շարքում բերվում է **հայություն** բառի օրինակը:

⁶⁹ **Ասատրյան Մ. Ե.**, նշվ. աշխ., էջ 121:

⁷⁰ Հայերենում հավաքական կազմելու գործառույթով **-ություն** ածանցի կիրառման տարածումը տեղի է ունեցել եվրոպական լեզուների հետևողությամբ (տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 529):

րանային գրանցում ունեցող **հրեություն** «հրեա ժողովուրդը», **թրքություն** «թուրքերի հավաքական ամբողջությունը» և **տաճկություն** «տաճիկ ժողովուրդն իբրև ամբողջություն, թրքություն», ինչպես նաև խիստ հազվադեպ **ռուսություն** «ռուս ժողովուրդը»⁷¹ և **վրացություն** «վրաց ժողովրդի ամբողջությունը» հավաքականանիշները, որոնք **հայություն** բառի համեմատությամբ շատ ավելի ուշ կազմություններ են⁷²: Այս գործառույթի սահմանափակ իրացումը մեր կարծիքով բացատրվում է տվյալ իմաստը դրսևորելու հասարակական պահանջի բացակայությամբ, ինչպես նաև կազմվելիք բառերի անբարեհնչությամբ:

Հայերենի բացատրական բառարաններում **հայություն** բառի բովանդակային կողմը տարբեր կերպ է ներկայացվում.

ա) միայն «ազգությամբ հայ լինելը» իմաստով (Ս. Գաբամաճյան)⁷³,

բ) երկու իմաստով՝ «հայ լինելը, հայ ազգին պատկանելը» և «բովանդակ հայ ազգությւնը, ամբողջ հայ ժողովուրդը» (Ստ. Մալխասյանց և ուրիշներ)⁷⁴,

գ) միայն «հայ ազգը» իմաստով (Պետրոս վրդ. Ճիզմեճյան)⁷⁵,

⁷¹ Հմմտ. «.... ազրբեջանցիներն ու վրացիները անվերապահ կռիվ էին հայտարարել հյուսիսին՝ խորհրդային թե՛ կամավորական Ռուսաստանին, առհասարակ, **ռուսության**» (տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 366):

⁷² Կա եզակի գործածությամբ հայտնի **պարսկությւն**, որը, սակայն, հավաքականություն չի նշանակում, այլ «պարսիկ լինելը, պարսից հավատի կրողը»:

⁷³ **Գաբամաճյան Ս.**, Նոր բառագիրք հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910, էջ 774:

⁷⁴ **Մալխասյանց Ստ.**, նշվ. բառարանը, հ. 3, էջ 39, նույնը՝ **Ճիզմեճյան Գնել արք.**, **Տոնիկեան Փ. Կ.**, նշվ. բառարանը, հ. 1, էջ 1142: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» գրեթե նույնն է ասում՝ «ամբողջ հայ ազգը, ամբողջ հայ ժողովուրդը» (հ. 3, էջ 288):

⁷⁵ **Պետրոս վրդ. Ճիզմեճյան**, նշվ. բառարանը, հ. 2, էջ 797:

դ) չորս իմաստով՝ 1. «հայ լինելը», 2. «հային հատուկ սովորությունների՝ հատկությունների ամբողջությունը, հայի բնավորություն», 3. «հայեր», 4. «հայ ազգը» (վերջին երկու իմաստները՝ հավաքական նշումով) (Էդ. Աղայան)⁷⁶:

Ինչպե՞ս զանազանել Էդ. Աղայանի տարբերակած 3-րդ և 4-րդ իմաստները: Բառարանագիրը հավանաբար նկատի է ունեցել, որ երկուսն էլ հավաքականություն են արտահայտում, սակայն ընդգրկման տարբեր չափերով. մեկը՝ հայերի ինչ-որ քանակ (կարևոր չէ՝ շատ թե քիչ), մյուսը՝ ամբողջ հայ ազգը:

Այս առումով ուշագրավ է Անդրանիկ վրդ. Կոսնյանի բառարանի «հայերու ամբողջութիւն» բացատրությունը⁷⁷: Այդ «ամբողջություն» ասվածը հենց հայ հավաքականությունն է՝ մեծ կամ փոքր, ինչպես և ամբողջ՝ համազգային ընդգրկումով:

Այսպիսին է բացատրական բառարաններում **հայություն** բառի բառարանագրման պատմությունը: Այդ պատմությանը հարկ է ավելացնել այն, որ **հայություն** բառը չի արձանագրվել հայերենի բացատրական որոշ բառարաններում⁷⁸:

Հայություն հավաքականանիշը բառակազմական մեծ ներուժ ունի և մեծաթիվ հավաքականների կազմության հիմք է դարձել: Բառերի առաջացման երկու ուղի կարող ենք նշել:

ա) Հատկացուցիչ-հատկացյալի կապակցությունների տևական գործածությունից հետո իրականացվել է բառակազմական քայլ, ինչպես՝ **գավառ(ներ)ի հայություն - գավառա-**

⁷⁶ Աղայան Է. Բ., նշվ. բառարանը, էջ 815:

⁷⁷ Անդրանիկ վրդ. Կոսնյան, Գործնական բառարան հայերեն լեզուի, Բեյրութ, 1970, էջ 247:

⁷⁸ [Հիւրմիզեան Ե.], Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, Վենետիկ, 1869, Տէր Խաչատուրեան Արտ., Գանգրունի Հր., Տոնիկեան Փ. Կ., նշվ. բառարանը, Քերովբեան Գ., Հայերեն բառգիրք աշխարհաբար լեզուի, Ստամբուլ, 2011 և այլն:

հայություն, սփյուռքի հայություն - սփյուռքահայություն, Բրազիլիայի հայություն - բրազիլահայություն և այլն:

բ) Կամ էլ **-ություն** հավաքականակերտոն ավելացել է **հայ** վերջնաբաղադրիչով երկարժեք (ած./գոյ.) բառին, ինչպես՝ **արևելահայ - արևելահայություն, գաղութահայ - գաղութահայություն, ռումինահայ - ռումինահայություն** և այլն:

գ) Հազվադեպ բառերն առաջացել են որոշիչ-որոշյալի կապակցություններից, ինչպես՝ **խալամաց(վ)ած հայություն - իսլամահայություն** և այլն:

Բառերի ստեղծման հիմքում գերազանցապես ընկել են հայ ժողովրդի պատմության հայտնի իրողություններ: Այդ բառերը ցույց են տալիս հայության ողջ բազմազանությունը՝ պատմական, աշխարհագրական, հասարակական, կրոնական:

1. Հայաստանը դարեր շարունակ բաժանված է եղել երկու մասի⁷⁹, ձևավորվել են աշխարհագրական, վարչատարածքային և քաղաքական միավորներ՝ Արևմտյան Հայաստան և Արևելյան Հայաստան: 1828-ին Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, իսկ Արևմտյան Հայաստանը մնաց կրկին Օսմանյան Թուրքիայի կազմում, որտեղ իրականացվեց ցեղասպանություն հայության այդ հատվածի նկատմամբ: Դարերով բաժանված վիճակի հետևանքով հայությունը ներկայանում էր երկու մեծ հատվածով: Սկզբնապես գործածության մեջ էին արևմտյան հայեր և արևելյան հայեր բառակապակցությունները, որոնցից հետագայում կազմվեցին (XIX դարի վերջերին) **արևմտահայություն** և **արևելահայություն** բառերը:

⁷⁹ Առաջին բաժանումն տեղի ունեցել է Ք. հ. 387-ին Պարսկաստանի և Հռոմի միջև, երկրորդը՝ 591-ին, երբ Հայաստանի մեծ մասն անցնում է Բյուզանդիային, ապա երկու անգամ Թուրքիայի և Պարսկաստանի միջև, 1555 և 1639 թվականներին:

Արևմտահայություն-ը հոմանիշ է տիրապետող երկրի անվամբ կազմված **տաճկահայություն** և **թ(ու)րքահայություն** բառերին: **Արևելահայություն** բառին մինչև Հայաստանի անկախացումը հոմանիշ էր **ռուսահայություն**-ը, մասամբ նաև **պարսկահայություն**-ը և **կովկասահայություն**-ը:

Արևմտահայություն և **արևելահայություն** բառերը գրանցված են հայերենի միալեզվյան և թարգմանական բառարաններում, ընդհանուր գործածություն ունեն:

2. Անցյալում արևմտահայ իրականության մեջ՝ մամուլում և հանրային մտածողության մեջ, տարբերակում էին (երբեմն նաև հակադրում) հայ ազգային կյանքի կարևորագույն կենտրոն Կ. Պոլսի և գավառների հայությունը: Այս տարբերակման հիմունքով ստեղծվել է **գավառահայություն** բառը⁸⁰, որ նշանակում է «գավառում ապրող՝ գավառաբնակ հայություն»:

Արևելահայության դեպքում տարբերակման մի կողմում հայ մշակույթի կենտրոնների (կրկին Հայաստանից դուրս գտնվող Թիֆլիսի, Մոսկվայի կամ Պետերբուրգի), իսկ մյուս կողմում՝ բնաշխարհի գավառների հայությունն էր:

Գավառահայություն-ը կազմվել է XIX դարի վերջերին, ավելի վաղ գործածության մեջ էր **գավառահայ**-ը⁸¹:

⁸⁰ Ունեն ակադեմիական և Ադայանի բացատրական բառարանները, իսկ Մալխասյանցի բառարանը և արևմտահայերենի բացատրական բառարանները ոչ: Նրանք չունեն նաև այս կամ այն երկրի հայությունը նշանակող հավաքականները:

⁸¹ Հայտնի է «**Գավառահայ** հարստահարությունների տեղեկագիրը» (1872), որը Խրիմյան Հայրիկի հանձնարարությամբ և աջակցությամբ կազմել է Ստ. Փափագյանը, և ներկայացվել Ազգային ժողովին: Այս փաստաթղթի մասին գրելիս երբեմն առաջին բաղադրիչ է դառնում **գավառահայություն**-ը: Հմմտ. «Նրա նախաձեռնությամբ Ազգային ժողովում քննվել է **գավառահայության** հարստահարությունների խնդիրը և 1872-ի ապրիլին թուրք. կառավարության ներկայացվել բողոքագիր-տեղեկագիր» (**Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 7, Երևան, 1981, էջ 641, «Մկրտիչ Ա Վանեցի» բառահոդովածը):

3. 1080-1375 թթ. հայության բնօրրանից դուրս՝ Կիլիկիայում, հայկական պետականություն է հաստատված եղել, հայերն այստեղ ապրել են մինչև 1922 թ., երբ Ֆրանսիայի նահանջից հետո թուրքերը վերջնականապես հայաթափեցին երկրամասը: Կիլիկիայում հազարամյակից ավելի ապրող հայերը գիտական գրականության մեջ և մամուլում անվանվել են **կիլիկեցիներ, կիլիկյան հայեր, Կիլիկիայի հայեր / հայություն:**

Կիլիկիահայություն հավաքական անունը բավական ուշ է կազմվել⁸². երկրանուն բաղադրիչն առանց հոդակապի՝ անփոփոխ միացել է **հայություն** բառին: Օրինակ՝ «Ահավոր մղձավանջ ապրեց **կիլիկիահայությունը** (ավելի քան 200 հզ. հայ)»⁸³:

4. Հայրենիքից դեռևս վաղ միջնադարում սկիզբ առած արտագաղթի և երկիրն ամայացնող բռնազաղթերի հետևանքով հեռավոր և մոտիկ երկրներում գոյացան հայկական գաղութներ (համայնքներ), որոնք երբեմն դարեր շարունակ պահպանել են իրենց ազգային դիմագիծը: Գաղութների հայությունը կարևոր դերակատարում ուներ ողջ ազգի կյանքում: Այս իրողությունը ծնունդ տվեց **գաղութահայություն** բառին՝ ի տարբերություն հայրենիքում ապրող հայության. ըստ ակադեմիական բացատրական բառարանի՝ «գաղութում՝ գաղութներում ապրող հայությունը, գաղութահայերի ամբողջությունը, սփյուռքահայություն», ըստ Աղայանի՝ «Սփյուռքի հայկական գաղութների հայությունը, սփյուռքահայություն»⁸⁴:

Գաղութահայություն բառին հանդիպադրվում են **Հայաստանի հայրենիքի հայաստանաբնակ** կամ **հայրենաբնակ**

⁸² Բառարանային միավոր է դարձել միայն վերջերս (տե՛ս **Գալստյան Ա. Ս.** և ուրիշներ, Նոր բառեր, Բ պրակ, Երևան, 2016, էջ 72), թեև բառը նոր չէ:

⁸³ **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 7, էջ 428:

⁸⁴ **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 1, Երևան, 1969, էջ 366, **Աղայան Է. Բ.** նշվ. բառարանը, էջ 217:

հայություն բառակապակցությունները, նաև քիչ գործածական նորակազմ **հայրենահայություն** «հայրենիքի հայությունը, հայրենիքում ապրող հայերը» բառը⁸⁵: Արևմտահայերենի երկհատոր բացատրական բառարանը **գաղթահայ** և **գաղութահայ** տարբերակների բառահոդվածներում դնում է նրանց հավաքականները: Այսպես՝ **գաղթահայ** 1. «սփիւռքահայ, հայրենիքէն դուրս ապրող հայ». գոյականը **գաղթահայութիւն** և **գաղութահայ – գաղութահայութիւն**⁸⁶: Այս բառն արևելահայերենում տարբերակայնություն չի դրսևորում, սահմանափակ գործածություն ունի, իմաստի հիմնական «բեռը» կրում է **սփյուռքահայություն** բառը:

5. **Սփյուռքահայություն** հավաքականն առաջացավ **սփյուռքահայ** ածականից կամ **սփյուռքի հայություն** բառակապակցությունից, երբ 1915-1923 թթ. հայոց ցեղասպանությունից հետո ձևավորվեց սփյուռքը՝ իբրև պատմական նոր իրողություն: Գործածական բառ է, արձանագրված է բացատրական (ակադեմիական, էդ. Աղայանի), ուղղագրական և թարգմանական տարբեր բառարաններում:

5.1 **Հայություն** բառով ձևավորվել է բառակազմական մասնակադասար՝ «երկրանուն+ա+ **հայություն**» (նաև առանց հոդակապի՝ «երկրանուն+**հայություն**»): Բառակազմական հիմք են դառնում աշխարհի անցյալի և ներկայիս տարբեր երկրների անունները, այն երկրների, որոնցում հայկական համայնքներ են եղել ու այժմ էլ կան, կամ նորերն են ձևավորվում հայերի անընդհատ տեղաշարժի հետևանքով: Կազմված բառերը «սփյուռքի հայություն» հասկացության մասնակի դրսևորումներն են, ուստի դրանց և **սփյուռքահա-**

⁸⁵ **Էլոյան Ս.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002, էջ 278:

⁸⁶ **Ճերեճեան Գնել արք., Տոնիկեան Փ. Կ.**, նշվ. բառարանը, հ. 1, էջ 361-362:

յություն բառի նշանակյալները գտնվում են ընդհանուրի և մասնավորի հարաբերության մեջ:

XIX-XXI դդ. կազմվել են «երկրանուն+**հայություն**» կառուցվածքն ունեցող հիսունից ավելի (ներառյալ տարբերակները) հավաքական անուններ, ինչպես՝ **ամերիկահայություն, բրազիլահայություն, եթովպահայություն, լեհահայություն, լիբանանահայություն, պարսկահայություն:**

Առաջին բաղադրիչ երկրանունները բառի կազմում հանդես են գալիս՝

1. ամբողջական, անփոփոխ ձևով, ինչպես՝ **իրանահայություն, իրաքահայություն, լիբանանահայություն, հորդանանահայություն.**

2. երկրանվան վերջածանցների և այլ վերջնաբաղադրիչների գեղջմամբ՝

ա) –ստան՝ **հնդկահայություն** (< Հնդկաստան), **լեհահայություն** (< Լեհաստան), **տաճկահայություն** (< Տաճկաստան), **հունահայություն** (< Հունաստան).

բ) –իա՝ **ավստրալահայություն** (< Ավստրալիա), **բուլղարահայություն** (< Բուլղարիա), **գերմանահայություն** (< Գերմանիա) (կան նաև բացառություններ, ինչպես՝ **սիրիահայություն, լատվիահայություն).**

գ) –ոս՝ **եգիպտահայություն** (< Եգիպտոս), **կիպրահայություն** (< Կիպրոս).

դ) –ք՝ **վիրահայություն** (< Վիրք «Վրաստան»).

ե) լանդ («հող»)՝ **ֆիննահայություն** (< Ֆինլանդիա):

Բառերի բաղադրիչները սովորաբար կապվում են ա հոդակապով: Քիչ դեպքերում, երբ երկրանունն անփոփոխ է միանում **հայություն** բաղադրիչին, երկրանվան վերջնահնչյուն ա-ի առկայությամբ հոդակապի կարիք չի զգացվում, ինչպես՝ **արգենտինահայություն, կանադահայություն, մեքսիկահայություն:**

Երկրանուններից կազմված այդ բառերի մեջ կան ավանդաբար հայաշատ (և հիմնականում հայախոս) հա-

մայնքների հայությունն անվանող հավաքական գոյականներ, ինչպես՝ **ամերիկահայություն, բուլղարահայություն, եգիպտահայություն, թուրքահայություն / տաճկահայություն** (նաև «արևմտահայություն» են նշանակում), **լիբանանահայություն, ռումինահայություն, ռուսահայություն** (վերջերս շրջանառության մեջ է մտել սրա տարբերակը՝ **ռուսաստանահայություն**), **պարսկահայություն** (այժմ ավելի ու ավելի հաճախ է գործածվում երկրի ներկայիս պաշտոնական անվամբ կազմված տարբերակը՝ **իրանահայություն**), **սիրիահայություն, վիրահայություն, ֆրանսահայություն**:

Մի շարք բառեր թերևս ավելի շատ պատմական արժեք ունեն, ինչպես՝ **երթվպահայություն, լեհահայություն, հնդկահայություն, հունգարահայություն**:

Այս կարգի բառերի մի մասը վերջին ժամանակներս է կազմվել (որոշ դեպքերում՝ ուղղակի ակտիվացել), հատկապես հետխորհրդային երկրների հայությունն անվանող հավաքական անունները՝ **ադրբեջանահայություն, բելառուսահայություն, էստոնահայություն, թուրքմենահայություն, լատվիահայություն, լիտվահայություն, մոլդովահայություն, ուկրաինահայություն**:

Հայաստանից ծայր առած արտագաղթը, սփյուռքում անդադար տեղի ունեցող տեղաշարժերը պատճառ դարձան արդեն գոյություն ունեցող համայնքների ստվարացման և զորացման, որի հետևանքով էլ հավաքական անուններ ստեղծվեցին (կամ ակտիվացան), ինչպես՝ **ավստրալահայություն, գերմանահայություն, կանադահայություն**:

Մի շարք բառեր անվանում են փոքրաթիվ կամ նորակազմ համայնքների հայությունը, ինչպես՝ **բելգիահայություն, դանիահայություն, իսպանահայություն, մեքսիկահայություն, շվեդահայություն, քուվեյթահայություն, ֆիննահայություն**:

Բառերից մի քանիսն ունեն արևմտահայերեն տարբերակներ՝ **թրքահայութիւն, պուլկարահայութիւն, ռումանահայութիւն** (անցյալում ընդհանուր հայերեն էր), **սուրիահայու-**

թին, գոլիցերիահայություն (արևելահայ. **Շվեյցարահայություն**):

Տարբերակներ կան գրական մի տարբերակի շրջանակում: Այսպես, օրինակ, արևելահայերենում՝ **անգլիահայություն – բրիտանահայություն, հոլանդահայություն – նիդերլանդահայություն** և այլն:

Այս հավաքականները հատկանշվում են խիստ տարբեր հաճախականությամբ. հմմտ. մի կողմից՝ **հաճախադեպ պարսկահայություն, ամերիկահայություն, լիբանանահայություն** և մյուս կողմից՝ **հազվադեպ պորտուգալահայություն, մեքսիկահայություն, ուրուգվայահայություն**: Դրանց հաճախականությունը նույնը չէ նաև ժամանակային տարբեր կտրվածքներում, օրինակ՝ **եգիպտահայություն**-ն անցյալում և ներկայում՝ հաշվի առնելով պատմական տարբեր շրջաններում Եգիպտոսի հայ հավաքականության դերն ու կշիռը հայության կյանքում:

Հայերենի (արևելահայերենի և արևմտահայերենի) տարբեր բառարաններում գրանցված են այս բառերի բառակազմական հիմքերը՝ «արտերկրի հայ» նշանակող 31 բառեր, կան նաև նույնպիսի 50-ը ևս, որոնք տակավին գրանցված չեն⁸⁷: Փաստորեն բոլոր դեպքերում չէ, որ այս կամ այն երկրի հայությունը ներկայացնելու համար հավաքական գոյական է կազմվում: Եվ դա բնական է, քանի որ որոշ երկրներում հայերը խիստ սակավաթիվ են, երբեմն համայնքային կյանք չունեն (ազգային, կրթական, եկեղեցական և մշակութային կառույցներ չկան) կամ էլ համայնքներն ուղղակի մարել են:

«Երկրանուն+ա+**հայություն**» կաղապարով կազմված և հայ հավաքականություն նշանակող այս բառերն անհետև-

⁸⁷ Տե՛ս **Գյուրջինյան Դ.**, «Արտերկրի հայ» իմաստային խմբի բառարանային գրանցում չունեցող բառային միավորների քննություն», «Էջմիածին», 2018, Ա, էջ 57-77:

ղական և ոչ ամբողջական արձանագրվել են հայերենի տարբեր բառարաններում:

Ակադեմիական բացատրական բառարանում գրանցվել է այսպիսի կառուցվածք ունեցող ընդամենը երեք բառ՝ **լեհահայություն** «լեհահայերի ամբողջությունը», **ռուսահայություն** «ռուսահայերի ամբողջականություն, ռուսահայեր», **ֆրանսահայություն** «Ֆրանսիայում ապրող հայերի ամբողջությունը» բառերը (վերջին երկուսը՝ հիքսն. [հավաքական] նշումով): Բառարանի **ամերիկահայ, անգլիահայ, արգենտինահայ, եգիպտահայ, թ(ու)րքահայ, հնդկահայ, հունահայ, հունգարահայ, պարսկահայ, ռումինահայ**⁸⁸ բառերից կազմված հավաքականները, որոնք կան հայերենում (դրանք կային նաև բառարանը կազմելու ժամանակ), չեն ներառվել բառացանկ:

Էդ. Աղայանի բառարանում բառակազմը փոքր-ինչ ընդլայնվել է և փոխվել: Գրանցվել է ընդամենը հինգ բառ՝ **ամերիկահայություն, եգիպտահայություն, հունգարահայություն, ռուսահայություն, ֆրանսահայություն** (տրվել է **ֆրանսիահայություն** տարբերակը ևս): Բառիմաստները (մեկ բացառությամբ) ձևակերպվել են նույն կաղապարով՝ «ամերիկահայ (եգիպտահայ / հունգարահայ / ֆրանսահայ) գաղութի հայությունը»: Ակնհայտ է, որ **հայ** բաղադրիչն անհարկի կրկնվում է: Միայն **ռուսահայություն** բառի իմաստն է տարբեր (և ընդունելի ձևով) տրվել՝ «ռուսահայերի հավաքական ամբողջությունը, արևելահայեր», որտեղ դրսևորվել է թե՛ հավաքականության իմաստը, թե՛ հոգնակիի գաղափարը: Բառարանում գրանցված **թ(ու)րքահայ, լեհահայ, հնդկահայ, ռումինահայ** բառերի հավաքականները չկան, և դրանց բացակայությունը դժվար է հիմնավորել:

⁸⁸ Հմմտ. **Գյուրջինյան Դ.**, «Արտերկրի հայ» իմաստային խմբի բառերի բառարանագրական վերլուծությունը / «Էջմիածին», 2017, Ժ, էջ 74-105:

Հովհ. Բարսեղյանի ուղղագրական ծավալուն բառա-
րանն արձանագրել է հիշյալ կառուցվածքն ունեցող 14 բառ՝
ամերիկահայություն, անգլիահայություն, արգենտինահայու-
թյուն, եգիպտահայություն, թուրքահայություն, լեհահայու-
թյուն, լիբանանահայություն, հնդկահայություն, հունգա-
րահայություն, պարսկահայություն, ռումինահայություն,
ռուսահայություն, տաճկահայություն և ֆրանսահայություն⁸⁹:

5.2 Բառերի առաջին բաղադրիչ դառնում են նաև հայա-
բնակ տարածաշրջանների, երկրամասերի անուններ, ինչ-
պես՝ կովկասահայություն, համշենահայություն⁹⁰, դրիմահա-
յություն⁹¹, չերքեզահայություն⁹², աբխազահայություն⁹³, աջա-
րահայություն⁹⁴, փերիահայություն⁹⁵:

⁸⁹ Բարսեղյան Հ. Խ., նշվ. բառարանը:

⁹⁰ Համշենահայերը մինչև XIX դարի 90-ական թվականները հավաք ապրել են հիմնականում Թուրքիայի Սամսուն քաղաքից մինչև Բաթում ընկած ծովափնյա ընդարձակ տարածքներում, քրիստոնյա համշենահայերը նախանցյալ դարի 60-70-ականներին գաղթել են ռուսական կայսրության սևծովյան ափի տարածքներ՝ Աբխազիա, Եկատերինոդար (այժմ՝ Կրասնոդար), ավելի ուշ՝ ցեղասպանությունից հետո՝ նաև Հայաստան (Ալվրցյան Հ., Համշենը և համշենահայությունը. արդի հիմնախնդիրները, Երևան, 2016, էջ 32-120):

⁹¹ Ղրիմը թերակղզի է Սև ծովի հյուսիսային մասում: Հայերն այստեղ այնքան շատ են եղել, որ XV դարում թերակղզու հարավարևելյան հատվածն անվանել են Armenia maritima («Ծովային Հայաստան»): Այսօր Ղրիմում ապրում է շուրջ 20 հազար հայ:

⁹² Չերքեզիան տարածաշրջան է Ռուսաստանում՝ Հյուսիսային Կովկասում, Սև ծովի արևելյան ափի երկայնքով, ներկայիս Ադրդեայի Հանրապետությունում: Հայերն այստեղ են տեղափոխվել Ղրիմից, երբ թուրքերը գրավեցին այն: Հարյուրամյակներ շարունակ այստեղ ապրելով, յուրացնելով չերքեզների սովորույթներն ու ավանդույթները՝ տեղի հայերը հայության յուրահատուկ խումբ են կազմել:

⁹³ Աբխազիան ինքնավար հանրապետություն էր Վրաստանի կազմում, այժմ չճանաչված երկիր (Ռուսաստանից հարավ): Այստեղ ապրում է մի քանի տասնյակ հազար հայեր, որոնք ունեն դպրոցներ և այլն:

⁹⁴ Աջարիան հանրապետություն է Վրաստանի կազմում: Այստեղ ապրում է մինչև 30 հազար հայ:

⁹⁵ Փերիան գավառ է Իրանի Սպահանի նահանգում, որտեղ կային 17 հայաբնակ գյուղեր: Փերիահայերի մեծ մասը ներգաղթել է Հայաստան:

Այդ տարածաշրջանները վարչականորեն ենթակա են (կամ էին) Հայաստանի անմիջական հարևան երկրներին (Թուրքիա, Իրան, Վրաստան) կամ էլ տարածաշրջանում կարևոր դերակատարում ունեցող Ռուսաստանին, որի կազմում է եղել Հայաստանը 1828-1918 թթ., ապա միննույն երկրի սահմաններում 1920-1991 թթ.:

Ժամանակագրական առումով թվարկվածներից ամենահինը **կովկասահայություն**-ն է: Ահա մեկ գործածություն XX դ. առաջին տասնամյակներից. «Ամբողջական Հայաստանի գաղափարի մեջ, դժբախտաբար, շատերը միայն Տաճկահայութիւն, **Կովկասահայութիւն** և Պարսկահայութիւն կը հասկնան»⁹⁶: Մյուսներն ուշ կազմություններ են: Գործածության օրինակներ՝ «Սուրխաթում, որը **դրիմահայության** բնակատեղիներից էր, հայերը զանգվածաբար սկսել են հաստատվել XIV դ. սկզբից», «Նա մտահոգություն է հայտնում Վեհափառին **չերքեզահայության** շրջանում եկեղեցու բացակայության առիթով», «Հետագայում **աբխազահայությունը** համալրվել է Մեծ եղեռնից փրկվածներով, Ջավախքից և այլ վայրերից տեղափոխված հայերով», «Շատ չնչին գործ է կատարել Փերիան եւ **փերիահայութիւնը** ծանօթացնելու եւ ներկայացնելու համայն հայութեան»⁹⁷:

XX դարի 90-ականներին Հայաստանից ծայր առած արտագաղթի հետևանքով ավելացավ հեռավոր Սիբիրի հայությունը, որն այնտեղ անգամ եկեղեցիներ է կառուցել: Օրինաչափորեն կազմվել է **սիբիրահայություն** բառը. «Գիրք **սիբիրահայության մասին**»⁹⁸:

⁹⁶ Միքայելեան Ա., Քաղաքական դեպքեր Հայոց պատմութեան մեջ, հ. Ա, Բոստոն, 1919, էջ 243:

⁹⁷ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 110, «Հայ զինվոր», 8-15.06.2011, «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 557, «Ալիք» օրաթերթի (Թեհրան) հավելված, հուլիս, 2014:

⁹⁸ Տե՛ս <https://armenpress.am/arm/news/370615>:

Թվարկված բառերը գործածական են գիտական գրականության մեջ և մամուլի լեզվում, բառարանային գրանցում ունի միայն **կովկասահայություն**-ը (կա ակադեմիական և Աղայանի բացատրական բառարաններում և այլուր):

5.3 Բառերի առաջին բաղադրիչ դառնում են հայաբնակ քաղաքների անունները: Բառակազմական հիմք դարձած քաղաքները՝

ա) սովորաբար հայ մշակույթի և ազգային կյանքի նշանակալից կենտրոններ են եղել և այժմ էլ հիմնականում այդպիսիք են, ինչպես **պոլսահայություն, թիֆլիսահայություն / թբիլիսահայություն, փարիզահայություն, բեյրութահայություն,**

բ) միայն հայ բնակչություն ունեն, հայաքաղաքի բնակչությունն են անվանում, ինչպես՝ **ջուղահայություն** (բառային տարբերակն է **սպահանահայություն**),

գ) հատկանշվում են մեծաթիվ հայ բնակչությամբ (**լոսանջլեսահայություն, գլենդեյլահայություն, հալեպահայություն, թեհրանահայություն**),

դ) հայաբնակ են եղել և կազմակերպված համայնքներ են ունեցել պատմական այս կամ այն ժամանակաշրջանում, բայց այժմ հայ հավաքական բնակչություն չունեն, ինչպես՝ **լվովահայություն, մադրասահայություն:**

Բնագրային մի քանի օրինակներ՝ «.... պետք է մտածենք: Այնպես, ինչպես **բեյրութահայության, սպահանահայության, Մոսկվայի հայության, Կրասնոդարի և Լոս Անջելեսի հայության մասին**», «Իմ այցը սահմանափակվել է **լոսանջլեսահայության** հետ հանդիպումներով», «**Գլենդեյլահայությունը** բազմիցս ապացուցել է, որ միասնականությամբ հնարավոր է հասնել հաջողության», «.... իր «Արարատ» մարզաւանով շարունակում է մնալի **թեհրանահայութեան** բարախող սիրտը», «.... ընդգծեց **լվովահայության** ունեցած

պատմական ավանդը», «Մեծապես լուսաբանվել է **մադրասահայության առօրյան**»⁹⁹:

Այս բառերը բնութագրվում են տարբեր հաճախականությամբ. մի կողմից՝ հաճախադեպ **պոլսահայություն, հալեպահայություն, թիֆլիսահայություն**, մյուս կողմից՝ հազվադեպ **մոսկվահայություն, պետերբուրգահայություն, դամասկոսահայություն**: Հարկ է նշել, որ բառեր կազմվել են նմանականության հիման վրա, ինչպես՝ **շիրազահայություն**¹⁰⁰, **ռոստովահայություն**¹⁰¹, բայց դրանք քիչ գործածական են:

«Քաղաքանուն+ա+**հայություն**» մասնակաղապարով կազմված բառերը բացատրական բառարաններում հիմնականում չեն արձանագրվել, սակայն եզակի դեպքեր եղել են: Բոլորովին անհասկանալի է, որ ակադեմիական բացատրական բառարանում արձանագրվել է **թիֆլիսահայություն** «թիֆլիսահայերի ամբողջություն» բառը¹⁰², իսկ **պոլսահայություն**-ը՝ ոչ: Նորաբանությունների բառարանում կա միայն **պետերբուրգահայություն**-ը՝ «Պետերբուրգում ապրող հայություն»¹⁰³:

5.4 Մի քանի բառերում տեսնում ենք պատմական Հայաստանի նահանգների, գավառների, քաղաքների անունները: Քանի որ օտար տիրապետության անցնելուց հետո դրանց բնակչության ազգային կազմը զգալապես փոխվել էր,

⁹⁹ «Հայկական ժամանակ» (29.03.2014), «Չորրորդ իշխանություն» (9.09.2009), www.mindiaspora.am/am/Congratulations/5168 (ՀՀ Միյությունի նախարարության կայքն է), «Ալիք» (Թեհրան, 13.01.2014), «Էջմիածին» (1998, Բ-Գ, էջ 235, 2007, Ը, էջ 91):

¹⁰⁰ **Գյուրջինյան Դ.**, «Պարսկաստանում ապրող հայ» նշանակող բառերը. իմաստակառուցվածքային և բառարանագրական քննություն, «Վեմ», 2018, թ. 1, էջ 75-90:

¹⁰¹ Ռուսաստանի եվրոպական մասի հարավում գտնվող Դոնի Ռոստով քաղաքն իր մեջ է առել երբեմն Նոր Նախիջևան հայաքաղաքը:

¹⁰² **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 2, Երևան, 1972, էջ 205:

¹⁰³ **Էլոյան Ս.**, նշվ. բառարանը, էջ 430:

բառերի միջոցով հայությունը գատվում-առանձնացվում է ոչ հայ բնակչությունից: Այդ հիմունքով են կազմվել **աղձնիքահայություն** (Աղձնիքն ըստ «Աշխարհացույցի» Մեծ Հայքի երրորդ նահանգն էր), **սեբաստահայություն** (Սեբաստիան կամ Սվազը քաղաք էր Փոքր Հայքում), **գարդմանահայություն** (Գարդմանքը գավառ էր Մեծ Հայքի Ուտիք աշխարհում) և այլն: Բնագրային օրինակներ՝ «Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները **աղձնիքահայության** մեջ», «**Սեբաստահայության** մոտավոր անցյալի ուսումնասիրման տեսակետից կարևոր արժեք էին ներկայացնում....», «.... **գարդմանահայության**՝ իր նախնիների շիրիմներին այցելելու խնդիրը»¹⁰⁴: Այս բառերը հայերենի բառարաններում արձանագրված չեն:

Ի դեպ, հիշյալ բառերն ստեղծվել են, երբ դրանց նշանակյալ նահանգները, գավառները, քաղաքներն արդեն պարպված էին հայությունից:

5.5 Վերջին շրջանում են կազմվել **Նախիջևանահայություն, արցախահայություն և ջավախահայություն / ջավախքահայություն** բառերը¹⁰⁵: Սրանց առաջին բաղադրիչներն անվանում են պատմականորեն հայրենի տարածքներ¹⁰⁶: Նախիջևանը լիովին հայաթափվեց 1988 թվականին: Արցախը մինչև վերջին շրջանի աղետալի իրադարձություն-

¹⁰⁴ «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, թ. 1 (վերնագիր), «Էջմիածին», 1967, 2, էջ 54, «Հայաստանի Հանրապետություն», 29.02.2008:

¹⁰⁵ Առաջին բառի համար տե՛ս **Վարդանյան Ա.**, Ազնաբերդ: Նախիջևանահայության վերջին ամրոցը, Երևան, 2000: Հաջորդ երկու բառերը տե՛ս **Էլոյան Ս.**, նշվ. բառարանը, էջ 74, 403 (գրանցվել է միայն **ջավախքահայություն** տարբերակը):

¹⁰⁶ Նախիջևանը Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի գավառներից էր, 1921-ից Ադրբեջանի կազմում է, Լեռնային Ղարաբաղը կամ Արցախը 1921-ից մինչև 1988-ը վարչականորեն Ադրբեջանի կազմում էր, այժմ՝ Արցախի Հանրապետություն, պատմական Զավաքը Վրաստանի Հանրապետության կազմում է:

ները գուտ հայաբնակ էր: Ջավախքն այժմ գերակշիռ մեծամասնությամբ հայաբնակ է:

Հայաստանյան ներկայիս մարզերի կամ վարչատարածքային այլ միավորների անուններից (Տավուշ, Շիրակ, Լոռի, Տաշիր և այլն) առհասարակ նման հավաքականներ չեն կազմվել¹⁰⁷, մի բան, որ լիովին տրամաբանական է և ընդունելի:

5.6 Գյուղանուն հիմքով են կազմվել **այնճարահայություն** և **քեսաբահայություն** բառերը. «... նորահաս սերունդներում ջամբաժ դաստիարակությամբ հարստացուցին **այնճարահայության** կեանքը», «Հայոց Եկեղեցին օգնության ձեռք է մեկնում **քեսաբահայությանը**»¹⁰⁸: Առաջին բաղադրիչները հայաբնակ հայտնի գյուղերի անուններ են:

Այս կարգի բառերը քիչ են, քանի որ այժմյան սփյուռքում ամբողջովին (կամ մասամբ) հայաբնակ գյուղերը հատուկենտ են¹⁰⁹, դրանցից շատերի անունները ծանոթ չեն հայությանը, քանի որ հիշյալ գյուղերը նշանակալից դերակատարում չունեն, հայկական լրատվամիջոցներում և գրականության մեջ նրանց մասին հազվադեպ է խոսվում, ուստի և այս կարգի բառերի կազմության հիմք չեն դարձել:

6. **Հայություն** վերջնաբաղադրիչով բառերի մեջ կան նաև կրոնով և դավանությամբ տարբերակվող հայերի ամբողջությունն նշանակող հավաքական անուններ: Դրանցից **կաթոլիկահայություն**-ը, որ նշանակում է «կաթոլիկ դավանանքին պատկանող հայերի ամբողջություն»,

¹⁰⁷ Եզակի է **սյունահայ**-ը, որ մեզ հայտնի է մեկ գործածությամբ. «**Սյունահայ** աշխարհի Բղեն գավառը» («**Պատմա-բանասիրական հանդես**», 1978, թ. 1 (վերնագիր)):

¹⁰⁸ «**Ազդակ**», 27.02.2017, «**Առավոտ**», 15.04.2014: Հայաբնակ Այնճարը Լիբանանում է, Քեսաբ/Քեսապը՝ Սիրիայում:

¹⁰⁹ Բացառություններից են հայկական ՎազքՖ գյուղը Թուրքիայում, հայաբնակ գյուղեր Աբխազիայում, Ռուսաստանում, մինչև վերջին տասնամյակները նաև Իրանում (Փերիայի Բոլորան գյուղում, օրինակ, այժմ մի քանի ընտանիք հայ է ապրում), ավելի վաղ Սիրիայում և Իրաքում:

բառարանային գրանցում ունի¹¹⁰: Բառակազմական հիմքն է **կաթոլիկահայ** (գրանցված է մի շարք բառարաններում):

Վերջին շրջանում **իսլամացած հայեր** բառակապակցությանը զուգահեռ, թեև հազվադեպ, սկսել են գործածել **իսլամահայություն** բառը: Օրինակ՝ «.... թույլատրվեց արտահայտվել, գործածել ցեղասպանություն բառը, խոսվեց **իսլամահայության** մասին»¹¹¹: Բառը կազմվեց, երբ բռնի (կամ հարկադրված կամովին) իսլամացած հայերի սերունդները ազգային ինքնության կանչով սկսեցին կազմակերպվել և որոշակի միասնականություն դրսևորել:

Կրոնով կամ դավանանքով տարբերակված հայություն նշանակող այլ հավաքական գոյականներ չկան, գործածվում են բառերի և բառակապակցությունների հոգնակիի ձևեր, ինչպես՝ **հայ քրիստոնյաներ**, **լուսավորչականներ**, **հայադավաններ**, **հայ կաթոլիկներ**, **ավետարանականներ**:

7. Կան նաև դիպվածային կազմություններ, օրինակ՝ **ֆեյսբուքահայություն** «Ֆեյսբուք սոցցանցում գրանցված հայերը՝ իբրև հավաքական ամբողջություն», որ բավական գործածական է համացանցային խոսույթում, նաև **պաթոսահայություն** «կեղծ հայրենասիրական պաթոսով համակված հայերի ամբողջությունը» (գործածական են սրանց բառակազմական հիմքերը ևս՝ **ֆեյսբուքահայ** և **պաթոսահայ**):

Հայաժողով

Հայաժողով-ը միջինհայերենյան կազմություն է: Ն. Բյուզանդացին բերում է ԺԴ դարի հիշատակարանից այս օրինակը՝ «Եղև սկիզբն եւ կատարումն սորա ի մեծահոշակ, բազմամարդ, յովվածողով, գանձունակ, բարելի քաղաքս Սուլիսաթ, կոչեցեալ Ղրիմ, ի վերնաբնակ **հայաժողով** թաղս

¹¹⁰ Տե՛ս **Բարսեղյան Հ. Խ.**, նշվ. բառարանը, էջ 457:

¹¹¹ Տե՛ս www.1in.am/245420.html?setoption=mobile&lang=arm:

հողայարկեայ....» և նշում խոսքիմասային արժեքը՝ ածական, առանց իմաստ նշելու¹¹²: Բնագրային նույն օրինակով և «հայաբնակ» իմաստով գրանցված է միջին հայերենի բառարանում¹¹³:

Հայախումբ և **հայակոյտ** բառերի նման սա էլ հետագայում՝ XIX դարի երկրորդ կեսին, գործածվել է գոյականի արժեքով: Օրինակ՝ «Կոստանտինուպոլիս մայրաքաղաքումը այնքան է Հայոց բազմութիւնը, որ կարծենք թէ ոչ Անի և ոչ Կաֆա իրանց բազաւաճ ժամանակը ունեցել են այնպիսի **Հայածողով**»¹¹⁴:

Աշխարհաբարի բացատրական բառարաններում բառը գրանցված չէ, բայց կա Հովհ. Բարսեղյանի ուղղագրական բառարանում¹¹⁵, իսկ Ա. Սուքիասյանի հոմանիշների բառարանում թեև գլխաբառ չէ, սակայն, ինչպես տեսանք, զետեղվել է **հայախումբ** բառի հոմանիշների շարքում:

Հայաբնակություն

Հայ հավաքականություն նշանակող բառային մյուս միավորների համեմատ **հայաբնակություն**-ը նոր է, XIX դարի վերջին քառորդի կազմություն: Ստ. Մալխասյանցի բառարանում ներկայացված է «հայ բնակչություն, հայ բնակիչներ» իմաստով¹¹⁶, համարժեք է **հայ բնակչություն** բառակապակցությանը: Ակադեմիական բառարանը բառի բացատրությունից (Մալխասյանցի համեմատությամբ) իրավացիորեն զեղչել է «հայ բնակիչներ»-ը¹¹⁷: Էդ. Աղայանը նշել է երկու իմաստ: Առաջինը կրկնում է Մալխասյանցին, երկրորդը՝

¹¹² Բիւզանդացի Նորայր Ն., նշվ. բառագիրքը, էջ 409:

¹¹³ Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ., Միջին հայերենի բառարան, Երևան, 2009, էջ 402:

¹¹⁴ «Հիւսիս» (Ս. Պետերբուրգ), 1863, հ. 12:

¹¹⁵ Բարսեղյան Հ. Խ., նշվ. բառարանը, էջ 538:

¹¹⁶ Մալխասեանց Ստ., նշվ. բառարանը, հ. 3, էջ 36:

¹¹⁷ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, էջ 280:

«հայաբնակ լինելը», բառարանագիրն է ճշտորեն ավելացրել¹¹⁸:

Բառակազմական հիմքը **հայաբնակ** «հայերով բնակեցված, որտեղ հայեր են ապրում, հայ բնակչություն ունեցող» ածականն է: Ձևախմաստային առումով համեմատելի է **ազգաբնակչություն**¹¹⁹ բառին, որն ընդհանուր իմաստ ունի:

Ընդհանուր հայերեն բառ է. հանդիպում է թե՛ արևմտահայերենում և թե՛ արևելահայերենում. «Կոստանդնուպոլսոյ մէջ **հայաբնակութեան** մը գոյութիւնը պատմութենէն ակներեւ է» (Օրմանյան պատրիարք)¹²⁰ և «Անիրավ Ջալալեդդինը **հայաբնակության** մեծագույն մասը սրի քաշեց» (Պ. Պոռշյան)¹²¹:

Հավաքականության իմաստով գործածությունից ներկայում դուրս է մղվել, փոխարենը գործածվում են **հայություն** բառը կամ **հայ բնակչություն** բառակապակցությունը:

Եզրակացություններ

1. Հայ հավաքականություն նշանակող հայերեն մի շարք բառային միավորներ կան, որոնք ունեն **հայ** բաղադրիչը՝ **հայք**, **հայեար**, **հայորեար**, **հայաստան** (ազգ), **հայաստանեայք**, **հայակոյտ**, **հայախումբ**, **հայագունդ**, **հայություն**, **հայաժողով**, **հայաբնակություն**:

¹¹⁸ Տե՛ս Աղայան Է. Բ., նշվ. բառարանը, էջ 810: Երկրորդ իմաստի համար հմմտ. «....առնչվում է Արցախի և հարևան անդրկուրյան տարածքների **հայաբնակության** պատմության խնդիրներին» («Պատմաբանասիրական հանդես», 2008, թ. 2, էջ 288):

¹¹⁹ Այժմ գործածական է **ազգաբնակչություն** բառը: Հմմտ. Արասխանեանց Ա., Ազգաբնակչությունը եւ ազգաբնակչական շարժումները, Թիֆլիս, 1883:

¹²⁰ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, Անթիլիաս, 2001, էջ 2147-2148:

¹²¹ Պոռշյան Պ., «Սկիզբն երկանց» / Երկերի ժողովածու 7 հատորով, հ. 4, Երևան, 1963, էջ 408 (Երկը առաջին անգամ տպագրվել է 1892-ին): Նաև սա՝ «.... ծրագրի մի մասը Վարազա շրջակա **հայաբնակության** մեջ արդեն ի կատար է ածված» (էջ 379):

2. Հայ հավաքականությունն նշանակող բառային միավորներն առաջացել են հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում՝ նախագրաբարյան (**հայք**), գրաբարյան, V դար (**հայորեար, հայաստան (ազգ), հայակոյտ**), XI դար (**հայություն**), աշխարհաբար, XVIII դար (**հայագունդ**), XIX դարի երկրորդ կես (**հայախումբ, հայաժողով, հայաբնակություն**):

3. Հայ հավաքականությունն նշանակող բառային միավորները հիմնականում բառակազմության արգասիք են, ինչպես նաև առաջ են եկել քերականական ձևի քարացման և խոսքիմասային փոխանցման հետևանքով:

4. Հայ հավաքականությունն նշանակող բառային միավորները ցույց են տալիս հայերի ամբողջությունը՝ ա) առանց որևէ տարբերական, բ) ըստ հայրենիքում և հայրենիքից դուրս ապրելու հանգամանքի, գ) հայերի գլխավորների, իշխանների համախումբը, դ) մարտիկների և այլն:

5. Արդի հայերենում հաճախադեպ է **հայություն**-ը, խիստ հազվադեպ՝ **հայաբնակություն**-ը, **հայաստանեայք**-ը քերականական ձևափոխությամբ պահպանվել է **Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի** բաղադրյալ անվանման մեջ, որտեղ նրա հավաքականության իմաստը մթազնել է: Աշխարհաբարում **հայք**-ը հնաբանության արժեք է ձեռք բերել, մնացածը գործածությունից դուրս են եկել:

6. Քննարկված բառամիավորներից բառակազմական արժեք ունի **հայություն**-ը, որով բազմաթիվ են բառեր կազմվել Արևմտյան և Արևելյան Հայաստանի նահանգների / աշխարհների, երկրամասերի, ինչպես նաև հայ համայնքներ ունեցող երկրների, տարածաշրջանների, քաղաքների և գյուղերի անուններից: Կան դիպվածային կազմություններ:

7. **Հայություն** սերող հիմքով բառերը չհամակարգված և թերի գրանցվել են արևելահայերենի բացատրական, ուղղագրական և ուրիշ բառարաններում: Արևմտահայերենի միալեզվյան բառարաններն այդպիսիք չեն արձանագրել:

8. **Հայություն** հավաքականը և նրանով բաղադրվածները (**արևելահայություն, արևմտահայություն, պարսկահայություն, սփյուռքահայություն, պոլսահայություն, արցախահայություն** և այլն) ընդհանուրի և մասնավորի հարաբերության մեջ են՝ հավաքականության և հատվածականության յուրատեսակ հակադրամիասնությամբ:

9. Հայ հավաքականությունն նշանակող բառերը գործածվում են հիմնականում մամուլի և հրապարակախոսության լեզվում, գիտական գրականության մեջ, ինչպես նաև պաշտոնական խոսքում, մի քանիսը համագործակցական են:

Տե՛ս նաև **Դ. Գյուրջինյան, Հայ հավաքականությունն նշանակող հայերեն բառային միավորները, «Վէմ», 2018, N 2, էջ 105-130:**

ՀԱՅԱՆԱՎԱՔ. ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՌԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Մուտք

Դարեր շարունակ հայության ազգային երազանքներից մեկն այս է՝ թողնել օտար ափերը և վերադառնալ հայրենի տուն, Հայոց աշխարհ՝ Հայաստան: Հայոց պատմության ընթացքում շատ քիչ են այն ժամանակաշրջանները, երբ հայրենիքից հեռացած հայերը կարողացել են վերադառնալ (մեծ և փոքր խմբերով կամ զանգվածաբար) հայրենի երկիր: Հայրենիքը տևաբար չի ունեցել այդ զորությունը, և հայրենի հողում հայության հավաքվելը դարձել է հայոց նվիրական իդձերից ու կարևորագույն նպատակներից մեկը: Այն այժմեական է առ այսօր, և այդպես կլինի այնքան ժամանակ, քանի դեռ հայությունը չի համախմբվել իր բնօրրանում:

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր հանգամանքների թելադրանքով ազգային այս երազանքից՝ հայրենիք վերադառնալու գաղափարից են ծնունդ առել մի շարք բառեր, ինչպես՝ **տունդարձ, հայրենադարձություն, ազգահավաք / ազգահավաքում, հայահավաք / հայահավաքում**: Այս հետազոտությամբ կանդրադառնանք մասնավորապես վերջիններին՝ **հայահավաք / հայահավաքում** բառերին, որոնք արտահայտիչն են ազգի կենսունակության, զորացման, ինչպես նաև երկրի ապագայի հարցում էական նշանակություն ունեցող մի նպատակի՝ հայերին համախմբելուն և իրենց հայրենիքում հավաքելուն:

Հասկացության ծագումը

«Հայահավաք / հայահավաքում»-ը սովորաբար ընկալվում է իբրև նոր ժամանակների հասկացություն: Այն սովորաբար կապում են XX դարի նշանակալից իրադարձություններին, մասնավորապես որբահավաքին (հայոց Մեծ եղեռնից

հետո) և հայրենադարձությանը Խորհրդային Հայաստան (հատկապես 20-ական և 1946-48 թվականներին): Հասկացության նոր լինելու ընկալում կա նաև այն պատճառով, որ **հայահավաք**-ը, որ լայնորեն գործածվող բառ չէ, երբեմն երևում է հայկական տարբեր կուսակցությունների և կազմակերպությունների, միավորումների ծրագրային և այլ փաստաթղթերում¹:

Սակայն այս ընկալումը թվացյալ է. հայահավաքման գաղափարի սկզբնավորումն ու ձևավորումը գիտնականներն առնչում են շատ ավելի վաղ ժամանակների: Այդ մասին խոսվում է նախ առանց **հայահավաքում** կամ **հայահավաք** բառերը գործածելու, ինչպես՝ «Եվ ահա ծնվում է ցրված հայ ժողովրդին ի մի հավաքելու և փրկելու ձգտումը որոշ գաղափարախոսությամբ, որի առաջին արտահայտիչը գրականության մեջ՝ է մեծիմաստ Սարկավազ Վարդապետը»²: Խոսքը վերաբերում է XI դարի երկրորդ կեսին:

Միայն շատ դարեր անց այս նույն գաղափարին առնչվող խոսույթ է ներմուծվում **հայահավաքում** բառը. «Հայահավաքման հայրենասիրական ըղձանքը մեր մատենագրութեան մեջ առաջին անգամ երեւաց Անիական Հայաստանում, Անիում»³:

Մի բան, սակայն, անվիճելի է. անկախ **հայահավաքում** կամ **հայահավաք** բառերի գործածությունից XI դարի երկրորդ կեսին հայահավաքման գաղափարը հրապարակայնացնողը իմաստասեր և բանաստեղծ Հովհաննես Սար-

¹ Հմմտ. «Համաշխարհային **հայահավաքը** նախնյաց հողում՝ մնում է յուրաքանչյուրիս սրբազան երազանքը» («Ժառանգություն» կուսակցության ծրագրի 10-րդ՝ «Հայաստան-Սփյուռք հարաբերությունները» գլխից (www.heritage.am/hy/home/12?start=10)):

² **Աբեղյան Մ.**, Հայոց հին գրականության պատմություն / Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 71:

³ **Խեչումյան Վ.**, «Վասն բարի ժամանակաց» / «Յառաջ» օրաթերթ (Փարիզ), 05.11.1967:

կավագն է (վախճ. 1129 թ.): Նշանավոր վարդապետի ապրած ժամանակաշրջանում սելջուկների արշավանքների հետևանքով բազում հայեր հեռացել էին հայրենի երկրից և հայրենիքի կարոտը սրտներում՝ անուրախ կյանքով ապրում էին օտար հողի վրա:

Ղևոնդյանց նվիրված շարականում, դիմելով Աստծուն, Հովհաննես Սարկավագը խնդրում է, որ Ամենակալը հայ եկեղեցու ցրված մանուկներին՝ երկրից քշվածներին ու հեռացածներին, ուրախությամբ ժողովի և փրկի⁴:

Քաղցրութեամբ քո, Տէ՛ր, խնայեա՛ի մեզ:

Հեղմամբ արեան սրբոց քոց հօտապետաց

Զեկեղեցոյ քոյ ցրուեալ մանկունս ժողովեա՛յ ուրախութիւն՝
Զվարատեալս տրտմութեամբ

Եւ արտասուաց յորդահոս բխմամբ.

Փրկութեան մերոյ պարգևաց բաշխող⁵:

Սա է «հայահավաքման հայրենասիրական ըղձանքի»⁶ առաջին մատենական վկայությունը: Մեկ այլ բնութագրմամբ՝ «այստեղ է, որ առաջին անգամ արտահայտվում են **ազգահավաքման** (ընդգծումը մերն է – Դ.Գ.) և իսկական հայրենասիրության մոտիվներ»⁷, որտեղ խնդրո առարկա երևույթի մասին խոսելիս գործածվում է մեկ այլ բառ՝ **ազգահավաքում**: Ակնհայտ է, որ **հայահավաքում** և **ազգա-**

⁴ Հմմտ. «Հովհաննես Սարկավագն իր գրած աղոթքով, ինչպես վերևում տեսանք, խնդրում է աստծուն, որ արտասվահոս տրտմությամբ վտարված ու ցրված ժողովուրդը ժողովվի ուրախությամբ և փրկվի» (Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն / նշվ. տեղում, էջ 145):

⁵ **Հովհաննես Սարկավագ**, Շարական Ղեւոնդեանց / Գանձարան հայ հին բանաստեղծութեան, աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի, Երևան, 2000, էջ 225-226:

⁶ **Խնչումյան Վ.**, «Վասն բարի ժամանակաց», նշվ. տեղում:

⁷ **Հակոբյան Գ. Ա.**, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.), Երևան, 1980, էջ 217:

հավաքում բառերը, գործածված լինելով միևնույն իրողության մասին, նույն հասկացությունն են արտահայտում և համարժեք են (բառերի երկրորդ բաղադրիչները նույնն են, առաջիններն են՝ **ազգ** և **հայ**, որոնք «հայություն, հայեր» են ընկալվում):

Դիպուկ է նկատել Մ. Աբեղյանը. «Ցրված հայ ժողովրդին հավաքելու այս տենչն ու ձգտումն ահա դառնում է մի նվիրական իղձ ու աղոթք և շատ վաղ, Լաստիվերտցու կրտսեր ժամանակակցի՝ Սարկավազ Վարդապետի ձեռով մտնում մեր ժամերգության մեջ»⁸: Մեծանուն հայագետը պատկերավոր է ներկայացնում «Պայծառացան այսօր» շարականը. «.... իր բովանդակությամբ մեծ ու վսեմ է և անկեղծորեն բխած լինելով իրականությունից, խորն ազդու է, մանավանդ երբ իր «քաղցր եղանակով» երգվում էր եկեղեցում տառապյալ հավատացյալներից, առանձնապես նրանցից, որ դեռ երկար դարեր զգում էին իրենց վարատված (նշանակում է «տեղահան եղած, մի տեղից քշված, ցիրուցան արված / եղած»⁹) լինելը և աչքերը կարոտով դարձնում էին դեպի իրենց բնիկ երկիրը՝ Հայաստան¹⁰»: Եվ միանգամայն ճիշտ է այն դատողությունը, որ եկեղեցին հաստատուն պահելն իմաստավորվում և արժևորվում է այն ժամանակ, երբ հավատացյալ ժողովուրդն ազատ է բնությունից և ապրում է հայրենի հողի վրա, ոչ թե որպես պանդուխտ՝ օտարության մեջ:

⁸ **Աբեղյան Մ.**, Հայոց հին գրականության պատմություն, էջ 71: Հայագետը շարունակում է. «Այդտեղ դեռ չկա քաղաքական անկախության խնդիր, այլ միայն տառապանքից ազատվելու և Հայաստանում մնալու մի իղձ է այդ»: Մեր կարծիքով ոչ թե Հայաստանում մնալու, այլ հայրենիք վերադառնալու, այնտեղ հավաքվելու իղձն է դա:

⁹ Հմմտ. **Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ. Դ, Երևան, 1945, էջ 308:

¹⁰ **Մ. Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, էջ 71:

Այս շարականի հայտնի տունն «իր աշխարհիկ բովանդակությամբ և հայրենասիրական ոգով նոր շունչ բերեց»¹¹ մեր շարականագրություն և հայրենասիրական երգի հիմք դարձավ հեղինակի կրտսեր ժամանակակցի՝ Ներսես Շնորհալու շարականների համար: Այնտեղ այդ մոտիվը զարգացավ, խորացավ, ապա ծավալվեց հետագա շարականագիրների ստեղծագործություններում:

Այդ նույն դարում Անիում, Շիրակում, Անիական Հայաստանում ձևավորվում էր «Վասն բարի ժամանակաց» անունով ժողովրդական մի նոր վիպասանություն, որտեղ ցրված հայերին հավաքելն այստեղ գլխավոր հարցերից մեկն էր: Հառիճավանքում 1219 թվականին վիպասանությունը գրի առնվեց, սակայն շատ բան աղճատվեց: Բարեբախտաբար «ահագին բան մնաց, եւ մեզ հասավ նաև այն հատուածի մասունքը, որ վերաբերում է **հայսահաւաքմանը**: «Վասն բարի ժամանակաց» ժողովրդական նոր վիպանքը մի քայլ էլ առաջ տարաւ Յովհաննէս Սարկաւագի միտքը, **հայսահաւաքման** խնդիրը կապելով զօրեղ պետականութիւն հիմնելու կարեւորութիւնը¹²:

Երբ ժողովուրդը ոչնչացնի թշնամիներին ու ստեղծի ուժեղ պետականություն, այդ ժամանակ էլ Հայաստան կվերադառնան պանդխտացած հայերը.

Եւ եկեսցեն իւրաքանչիւր տեղաց

Ուր ցրուեալ են ի պիղծ եւ անաւրէն ազգէն նետողաց:

Ժողովրդական այս ստեղծագործության գոյությունը վկայում է, որ ազգահավաքման գաղափարը փաստորեն համակել էր նաև ժողովրդի տարբեր շրջանակների:

Գրեթե նույն ժամանակներում (Հովհաննէս Սարկավագից հետո և «Վասն բարի ժամանակաց»-ի ձևավորման

¹¹ Գ. Ա. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 217:

¹² Վ. Խեչումյան, «Վասն բարի ժամանակաց», նշվ. տեղում: Հայսահավաքում բառի ընդգծումները մերն են:

շրջանում), «հայահալաքման միեւնոյն ըղձանքի»¹³ մասին Կիլիկիայում իր խոսքն ասաց Ներսէս Շնորհալին (մոտ 1100-1173): 1166 թ. ապրիլի 17-ին Հռոմկլայում գումարված ազգային-եկեղեցական ժողովում իր կաթողիկոսական ձեռնադրության և օծման առթիվ արտասանած ատենաբանություն-ճառի մեջ նա հիշեցրեց, որ հայ ժողովուրդը, ինչպես մյուս ժողովուրդները, չի բնակվում մի երկրում. մեր ազգը ցրված է աշխարհով մեկ, տարբեր ազգերի մեջ. «ոչ ի միում աշխարհի բնակեն՝ որպէս այլոց ազգաց, զի դիւրին էր շրջել առ նոսա առաջնորդացն և սերմանել զբանն, այլ ըստ մեղաց մերոց ցրուեալ են ազգ մեր և ժողովուրդք ընդ ոլորտս տիեզերաց ի մէջ օտարասեռ ազանց»¹⁴: Հայության կյանքի դժվարին պայմանների պատճառով աստանդական էր նաև կաթողիկոսական աթոռը, և դա նորընտիր կաթողիկոսի մտահոգություններից մեկն էր:

Ատենաբանության վերջում Շնորհալին հայցում է Աստծուց «հալածել զյարուցեալսն ի վերայ, և փրկել զմեզ ի բերանոյ առիծոց, ազատել զգերեալսն ի տանէ կապանաց և դարձուցանել զամենեսեան յաշխարհն հայրենի»¹⁵: Այսպես է ձևակերպում ազգահալաքման իր իղձը հայոց հայրապետը:

Այս գաղափարը Շնորհալին հետագայում արտացոլեց «Ողբ Եդեսիոյ» վիպասանության մեջ: Ներքոքերյալ տողերը համահունչ են «Վասն բարի ժամանակաց»-ին.

Գան ժողովին յամեն կողմանց,
Ուր հալածեալ են եւ ցրուած:

¹³ Վ. Խեչումյան, «Վասն բարի ժամանակաց», նշվ. տեղում:

¹⁴ Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 422:

¹⁵ Նույն տեղում, էջ 425-426: Այս առիթով հայագիտության մեջ սովորաբար գործածվում է **ազգահալաքում** բառը: Այսպես, օրինակ. «Հայրենադարձության, ազգահալաքման գաղափարը նույնպես կարևոր է Շնորհալու ստեղծագործության մեջ» (Մադոյան Ա., Ներսէս Շնորհալի / Հայ մշակույթի գործիչները (V-XVIII դարեր), Երևան, 1976, էջ 253):

Չորեքձագեան տիեզերաց.
Ի գաւառաց հեթանոսաց,
Եւ յաշխարհաց Պարսից, Թուրքաց¹⁶:

Առաջին հայահավաքը

Հայ պատմագիտության մեջ ընդունված մոտեցում չկա, թե ո՞րն է առաջին հայահավաքը և այն ե՞րբ է տեղի ունեցել: Մինչև նոր ժամանակներ հայրենիքում հայությանը հավաքելու իրական գործընթաց տեղի չի ունեցել, ընդհակառակը՝ տարբեր դարաշրջաններում հայերը հաճախ զանգվածաբար մշտապես հեռացել են հայրենի երկրից (ինչպես կամովին, այնպես էլ բռնագաղթերի հետևանքով): Հայահավաքը տավալին երազանք էր:

Պատմական փաստերը վկայում են, որ առաջին հայահավաքը տեղի է ունեցել XIX դարի առաջին տասնամյակներին: Հայտնի է, որ 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո կնքված Թուրքմենչայի պայմանագրի համաձայն Պարսկաստանի հայերը կարող էին վերադառնալ իրենց նախնիների բնօրրանը՝ Արևելյան Հայաստան, Ռուսական կայսրությանն անցած տարածքներ: 1828-29 թթ. հայրենի երկիր վերադարձան շուրջ 45 հազար հայեր:

Խորհրդային հայ պատմագիտության մեջ, հանրագիտարաններում և տարբեր դասագրքերում այս առիթով ցարդ գործածվել են առավելապես **հայրենադարձություն, ազգահավաք, ազգահավաքում**¹⁷, **ներգաղթ**¹⁸ բառերը և **ազգի համա-**

¹⁶ Հարկ է նշել, որ Մ. Աբեղյանն այս տողերում տեսնում է Շնորհալու «քաղաքական լավատեսությունը և լավ օրերի երազը» (**Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Դ, էջ 143)՝ այն կապելով Արևմուտքից խաչակիրների սպասելի երկրորդ արշավանքներին. դրանց շնորհիվ արևելյան քրիստոնյաները պիտի փրկվեին մահմեդականների ձեռքից: Հայահավաքման մասին, սակայն, Մ. Աբեղյանն ակնարկ չի անում:

¹⁷ Հմմտ., օրինակ, **Մելիքսեթյան Հ. Ու.**, «Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը» աշխատությունը (Երևան, 1985), որտեղ

խմբում (կամ **կոնսուլիդացիա**) բառակապակցությունը, այնինչ մեզ հետաքրքրող **հայահավաք** / **հայահավաքում** բառերը հազվադեպ են¹⁹:

Մեր օրերում պատմական այս կարևոր իրադարձությունն անվանվում է ոչ միայն վերը թվարկված բառերով, այլ նաև **հայահավաք**-ով: Այսպես, օրինակ. «1828-1830 թվականներին տեղի ունեցած իրանահայության գաղթը նշանավոր է նրանով, որ դա հայ ժողովրդի պատմության մեջ առաջին ներգաղթն էր և առաջին **հայահավաքը**»²⁰: Առհասարակ պիտի արձանագրենք, որ **հայահավաքում** և **հայահավաք** բառերի գործածությունն արևելահայերենում, մասնավորապես Հայաստանում, ակտիվացել է առավելաբար վերջին տարիներին՝ անկախությունից հետո ընկած ժամանակահատվածում:

քանիցս գործածվել է **ազգահավաքում** բառը (էջք 8, 9, 24, 83, 107 և այլն), բայց ոչ մի անգամ՝ **հայահավաք** կամ **հայահավաքում**:

¹⁸ **Ներգաղթ**-ի հականիշն է **արտագաղթ**-ը, որն էլ որոշակի խոսքաշարում **հայահավաք**-ի խոսքային կամ համատեքստային հականիշ է դառնում (այս տեսակի հականիշների մասին հանգամանալից տե՛ս **Էլոյան Ս. Ա.**, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1989, էջ 138-143): Այսպես. «Դրա համար եկեք այնպիսի երկիր կառուցենք, որ **հայահավաք** տեղի ունենա, այլ ոչ **արտագաղթ**» (Հ. Հովհաննիսյան. www.haynews.am/hy/1369831443): «Ցանկանում ենք հայրենիքը տեսնել հզոր, տեսնել մեր անմահ նահատակների տեսլականների իրականացումը, տեսնել ո՛չ արտագաղթ, այլ **հայահաւաք եւ հողահաւաք**» (Ռ. Կոթյուն. <http://asbarez.com/arm/186220/>)

¹⁹ Ըստ Արևելահայերենի ազգային կորպուսի տվյալների՝ Հայկական սովետական հանրագիտարանում **հայահավաք** բառը չի գործածվել, իսկ **հայահավաքում**-ը՝ ընդամենը մեկ անգամ: Այսպես, 1925-27 թթ. Թեհրանում լույս տեսած «Գաղափար» թերթի մասին հոդվածում գրված է. «Զգուշ եմ սփյուռքը կապել մայր հայրենիքին, ջատագովել **հայահավաքման** գաղափարը՝ աջակցելով Սովետական Հայաստանի կառավարության միջոցառումներին» (www.eanc.net կամ ՀՍՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 665):

²⁰ **Քայքայողական Վ.**, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 7:

Հայահավաք/հայահավաքում բառերի ստեղծման ժամանակը, կազմությունը, ձևաբանական արժեքը

Հայերին մեկտեղելու, հայրենիքում հավաքելու գաղափարն իր բառային դրսևորումը ստացավ **հայ** բաղադրիչով երկու բառերում՝ **հայահավաքում** և **հայահավաք**: Զուտ ձևային առումով տարբերությունը բայանուն գոյականներ կերտող **ում** վերջածանցն է, որն ավելի ցայտուն է արտահայտում գործողության, ընթացայնության գաղափարը:

Բառի ձևավորումը կապվում է հետեղեռնյան շրջանին՝ 1920-ական թվականներին: Ըստ մեր ունեցած բնագրային վկայումների, նախ շրջանառության մեջ է մտել **հայահավաքում**-ը: Վաղ գործածություններից դիտարկենք այս մեկը, որտեղ կա ընդամենը երեք նախադասություն և բառի նույնքան գործածություն. «**Հայահավաքումը** հայ ազգային քաղաքականութեան առաջին խնդիրն է: Առանց **հայահավաքման** չկայ ոչ մշակութային եւ տնտեսական ուժերի, ոչ էլ հայկական ուժերի կենդրոնացում: Մի զգալի չափով **հայահավաքումը** հնարաւոր է անգամ ներկայ Հայաստանում»²¹:

Հայահավաք (**հայ+հավաք/ել/**) բառը «գոյական+հոդակապ+բայարմատ» բառակազմական կաղապարի իրացում է: Կազմվել է արդեն գոյություն ունեցող հայերեն այլ բառերի համաբանությամբ, նմանակության օրենքի հիման վրա: Նախօրինակներ կան V դարից սկսած. հին հայերենում **հաւաք** վերջնաբաղադրիչով կազմվել են բառակազմական տարբեր ենթակաղապարներ ներկայացնող այսպիսի բառեր՝ **դժուարահաւաք**, **բազմահաւաք**, **ծաղկահաւաք**, **զանազանահաւաք**²²: Դրանցից ոչ մեկի առաջին բաղադրիչն անձ-

²¹ Աբեղեան Արտ., Հայաստան եւ արտաքին հարեւաններ (Ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք» ամսագիր (Բոստոն), հ. 2, դեկտեմբեր, 1929):

²² Հ. Գաբրիել Աւետիքեան, հ. Խաչատուր Միսրմէլեան, հ. Մկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837, Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 71:

նանիշ կամ հավաքական գոյական չէ (ինչպես **հայահավաք**-ի դեպքում է):

Հայերենի զարգացման նոր և նորագույն շրջանում են կազմվել **գորահավաք, զինահավաք, բանահավաք, գրահավաք, քարահավաք, մրգահավաք, լրահավաք, բերքահավաք, մանկահավաք, ազգահավաք, որբահավաք, մարդահավաք, ջրահավաք, հողահավաք, փաստահավաք, բառահավաք, բառարանահավաք** և նման ուրիշ բառեր (մի քանիսն առ այսօր բառարանային գրանցում չունեն): **Հայահավաք**-ը դրանցից մեկն է, աշխարհաբարյան կազմություն:

Ուշադրություն դարձնենք, որ թվարկված կազմություններում գոյական առաջին բաղադրիչները հիմնականում իրանիշ են: Իմաստային-բառակազմական տեսանկյունից մեզ հետաքրքրող բառային միավորը համեմատելի է **որբահավաք, մարդահավաք, ազգահավաք** բառերին: Այս վերջինի հետ աղերսելով՝ **հայ** բաղադրիչը կարելի է մեկնաբանել նաև իբրև **հայություն**, այսինքն՝ «հայերին կամ հայությանը հավաքող՝ միավորող»:

Հետաքրքրական է **հայ ազգահավաք** բառակապակցությունը, որը համարժեք է **հայահավաք** բառին: 1947 թ. ապրիլի վերջերին Նյու Յորքում բացված Հայկական համաշխարհային կոնգրեսին հղած ողջույնի խոսքում գործածել է Ամենայն Հայոց Գևորգ Զ կաթողիկոսը. «Հոգեզմայլ է սփյուռքի պատմական հայրենադարձը, հոգեզմայլ հարությունն է հայ տարագրության, խոշորագույն կովանը **հայ ազգահավաքի** և հարահոս աղբյուրը հայ ժողովրդի հոգևոր միաձուլման և հայ հայրենիքի, հայրենական պետության հզորացման»²³:

Հավաք վերջնաբաղադրիչով բառերն առհասարակ կա՛մ ածականներ են (**փաստահավաք**), կա՛մ գոյականներ (**գորահավաք, բերքահավաք, բանահավաք**) և կամ թե՛ ածա-

²³ Տե՛ս Մելիքսեթյան Հ. Ու., նշվ. աշխ., էջ 344):

կան, թե՛ գոյական միաժամանակ (**ջրահավաք**), այսինքն՝ ձևաբանորեն երկարժեք են: **Հայահավաք**-ը երկարժեք է:

Ուշագրավ է այս խոսքաշարը, որտեղ կից պարբերություններում **հայահավաք**-ը հանդես է եկել նախ գոյականի, ապա՝ ածականի նշանակությամբ. «Երզնկայի գրավումից անմիջապես հետո **հայահավաքի** առաքելությամբ Երզնկա հաստատվեց ազգային-ազատագրական հայտնի գործիչ Մեբաստացի Մուրադը:

Մասնավորապես, **հայահավաք** որոնող խմբի կին անդամները մանր կտորեղեն վաճառողների դիմակի տակ մտնում էին թուրքերի տները, զրույցի մտնում, կաշառում էին թուրք կանանց, իմանում հարեմների մեջ պահվող հայերի տեղերը և լուր տալիս Մուրադին, որն այնուհետև իր խմբով մտնում էր այդ տները ու ազատագրում այնտեղ պահվող հայ կանանց ու երեխաներին»²⁴:

Ածականի արժեքով բառը նշանակում է «հայերին կամ հայությանը հավաքող՝ ի մի բերող՝ միավորող» ու ստանում **գործունեություն, համակարգ, առաքելություն, դեր, ծրագրեր, համաժողով / խորհրդաժողով** և մի շարք այլ լրացյալներ: Օրինակ՝ «Շուրջ երեք դար Կիլիկիայի Հայոց պետության հարկի ներքո հանգրվանած կաթողիկոսարանն իր **հայահավաք** դերը կրկին շարունակում է Մայր Հայրենիքում»²⁵:

Բառի իմաստային կառուցվածքում կարելի է նշել նաև «հայերին կամ հայությանը համախմբող» իմաստային բաղադրիչը: Հմմտ. «ՀՀ սփյուռքի նախարարության բոլոր ծրագրերն էլ կյանքի են կոչվում և միշտ ունեն **հայահավաք**, հայապահպան առաքելություն», «Հայաստանի Հանրապե-

²⁴ Թաթոյան Ռ., Հայոց ցեղասպանության վերապրածների և փախստականների համար օգնության կազմակերպումը Երզնկայում քաղաքի ռուսական վերահսկողության տակ գտնվելու շրջանում (1916 թ. հուլիս - 1917թ. վերջ), էջ 1 (տե՛ս www.academia.edu/7348604/):

²⁵ Արարատյան Հայրապետական թեմի պատմություն. www.qahana.am/am/history:

տություն» թերթի ճակատին գրված է. «Երեկ ավարտվեց Հայաստան-Սփյուռք **հայահավաք** երկրորդ խորհրդածո-ղովը»²⁶:

Գոյականի արժեքով նշանակում է «հայերին կամ հայությանը հավաքելը՝ ի մի բերելը՝ միավորելը. հայահավաքում»: Օրինակ՝ «Հարյուրապետ, ճիշտ է, որ **հայահավաք** է սկսվել, - հարցրեց Ջոնին»²⁷:

Ժամանակի ընթացքում, ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը, **հայահավաքում** և **հայահավաք** բառերից առավել գործածական դարձավ երկրորդը:

Հայահավաքի (հայահավաքման) ընկալումները

«**Հայահավաք(ում)**» հասկացությունը որոշ դեպքերում, պատմական որոշակի ժամանակաշրջանի վերաբերելով, սերտորեն առնչվում է **որբահավաք** հասկացությանը, հաճախ այդ բառերը միասին են գործածվում: Այսպես, օրինակ՝ «Ցեղասպան թուրքի ճիրաններեն ճողոպրած աշխարհացրի հայեր լծուեցան **որբահավաքի, հայահավաքի** կազմակերպչական հսկայական աշխատանքին՝ համախմբելով որբերը, խնամելով ու դարմանելով հիւանդները, ծերերն ու անկարները»²⁸:

Հետաքրքրական է, որ մի շարք համատեքստերում **հայահավաք**-ը հասկացվում է հայ ազգին պատկանող կանանց և երեխաներին (որբերին) հավաքելը և հայությանը վերադարձնելը: Սա **հայահավաք** բառի իմաստային ընդգրկման մեջ ուշագրավ մի դրսևորում է, ընդհանուրի և մասնավորի հարաբերակցություն ներկայացնող իրողություն: Եթե բառի իմաստն այս է՝ «հայերին հավաքող՝ ի մի բերող՝ միավորող», և «հայահավաքում», ապա տվյալ դեպ-

²⁶ www.old1.hayernaysor.am/1312273835, www.azatutyun.mobi/a/1569754.html:

²⁷ **Վերդյան Բ.**, Ծաղիկներս մնացին հեռվում, Երևան, 1990, էջ 212 (առաջին հրատ.՝ 1969):

²⁸ www.diarioarmenia.org.ar/lugares:

քում հայեր ասելով ըմբռնվում են սեռային և տարիքային հետևյալ խմբերը՝ կանայք և երեխաներ (ընկերային՝ որբեր):

1916-17 թթ. Արևմտյան Հայաստանում բարեսիրական կազմակերպությունների առջև ծառացած խնդիրների մասին այս խոսքաշարը հստակորեն ներկայացնում է **հայահավաք** բառի իմաստային մի դրսևորումը. «....կազմակերպել **հայահավաք՝ որոնել և ազատագրել** թուրքական հարեմներում ու քրդերի մոտ պահվող՝ **ցեղասպանությունը վերապրած հայ կանանց ու որբերին....**»²⁹:

Եվս մեկ օրինակ: Հայտնի է, որ դանիացի միսիոներ օրիորդ Քարեն Եփփեն 1921 թ. նշանակվում է թուրքերի, քրդերի և այլոց կողմից առևանգված հայ կանանց և որբերին ազատելու նպատակով Ազգերի լիգայի ստեղծած հանձնախմբի լիազոր-կոմիսար: Հետևյալ խոսքաշարում հստակ սահմանված է, թե «հայահավաք» ասելով ինչ է հասկացվում. «**Հայահավաք գործունեությունը** կոչվում էր «Փրկության առաքելություն» կամ «Ազատարար առաքելություն», իսկ պաշտոնապես՝ «Մերձավոր Արևելքում Ազգերի լիգայի՝ **կանանց և մանուկների պաշտպանության գործ**»³⁰:

Հետաքրքրական է, որ հայերենում ստեղծվել է **որբահավաք** բառը, իսկ գերեվարված հայուհիների առնչությամբ հատուկ բառ չի ստեղծվել: Թե ինչու, կարելի է միայն ենթադրություններ անել. ա) լեզվական. կարևոր հանգամանք է բառակազմական հիմքի բաղադրելիությունը (**որբ**-ի բառակազմական արժեքը ցածր չէ, հմմտ. **որբախնամ, որբանալ, որբանոց, որբուկ, որբուհի, որբություն**), բ) ոչ

²⁹ Թաթոյան Ռ., նշվ. տեղում:

³⁰ www.genocide-museum.am/arm/23.05.2015-100photos.php: Այստեղ արժե հատուկ նշել, որ Ք. Եփփեն հավատում էր, որ հայ եկեղեցին կարևոր դեր ունի այլազգիների հետ ապրած և վարքուբարքով, ըմբռնումներով ու կրոնական հավատալիքներով արմատներից հեռացած (անգամ օտարացած) հայերի մեջ անցյալի հիշատակն արթնացնելու և նրանց հայ ինքնությունը վերադարձնելու գործում:

լեզվական. ազգի ապագայի համար փրկված հայ մանուկների դերի առավել կարևորումը:

Հայահավաք(ում)ը հաճախ ուղղակիորեն կապվում է «հայրենադարձություն» հասկացությանը (ոմանք այս հասկացությունները երբեմն նույնացնում են, որ ճիշտ չէ): Հայրենադարձությունը և հայահավաքը, իբրև հասկացություններ, բովանդակային տարբեր ընդգրկումներ ունեն, մտային տարբեր գույքորոշումներ են առաջացնում և այլն: Բայց որ նրանք սերտորեն առնչվում են, և հայրենադարձությունը հայահավաքի մի դրսևորում է, վկայում են նաև բնագրային օրինակները՝ ««Դարձ դեպի Հայրենիք», «**Հայահավաք** Ցեղի բնօրրանում» կարգախոսները պիտի ամրագրվեն իբրև սփյուռքահայության գոյության նպատակներ» (Մ. Լալայան)³¹: «Պատմական այս ժամանակահատվածում այդ խնդիրներից են Հայաստանի պետության կայացումն ու ամրապնդումը, հայրենադարձությունը (**«հայահավաքը»**)» («Ազգ», 23.12.2006):

Բառարանային մշակումը

Հայահավաք և հայահավաքում բառերը բառարանային մշակման հարուստ պատմություն չունեն: Աշխարհաբարյան կազմություններ են, ուստի բացակայում են հայերենի զարգացման նախորդ շրջանների բառապաշարն ամփոփող բառարաններից: Չկա նաև Ս. Գաբամաճյանի բառարանում³², քանի որ, ինչպես ասացինք, բառի ստեղծման ժամանակը հետեղեռնյան շրջանն է:

Ակնկալելի էր **հայահավաք /հայահավաքում**-ը տեսնել Ստ. Մալխասյանցի բառարանում³³, սակայն կոթողային այդ աշխատությունից այն բացակայում է: Զարմանալի է, որ այս

³¹ www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6424:

³² **Գաբամաճյան Ս.**, Նոր բառագիրք հայերեն լեզուի, Կ.Պոլիս, 1910:

³³ **Մալխասյանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ.հ. Ա-Դ, Երևան, 1944-45:

բառերը չեն ընդգրկվել արևմտահայերենի բառարաններում³⁴, որոնք լույս են տեսել շատ ավելի ուշ, երբ բառն արդեն հանրաձանոթ էր: Այդ բացակայությունը կարող ենք բացատրել մասամբ նաև Մալխասյանցի բառարանի ազդեցությամբ:

Հայահավաք և **հայահավաքում** բառերն առաջին անգամ բառարանային գրանցում են ստացել ժամանակակից հայերենի ակադեմիական բացատրական բառարանում: **Հայահավաք**-ն այսպիսի բացատրությամբ՝ «1. ած. Հայերին հավաքող՝ ի մի բերող՝ միավորող, 2. գ. Հայահավաքում», իսկ **հայահավաքում**-ն այսպիսի՝ «գ. Հայերին հավաքելը՝ մի տեղ ժողովելը»³⁵: Ի դեպ, երկու բառի դեպքում էլ բնագրային օրինակներ չեն բերվում, որ թերություն է և նահանջ այդ բառարանի որդեգրած սկզբունքից:

Այնուհետև այդ բառերը տեսնում ենք Էդ. Աղայանի բառարանում՝ գրեթե նույն ներկայացմամբ: Տարբերությունն կա միայն **հայահավաքում** բառի բացատրության մեջ՝ «Հայերին հավաքելը՝ մի տեղ միավորելը»³⁶:

Հայահավաք / **հայահավաքում**-ը չենք գտնում հայերենի հոմանիշների բառարաններում:

Հետաքրքրական պատկեր ենք նկատում Ա. Սուքիասյանի զույգ բառարաններում: Առաջին բառարանում փոխադարձ հոլոմներով կան **ազգահավաք** – **ժողովրդահավաք** հոմանիշները³⁷: Երկրորդ բառարանում բացակայում **ազգա-**

³⁴ Պետրոս վրդ. Ճիզմեճեան, Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Հալեպ, 1957, **Տէր Խաչատուրեան Արտ., Գանգրունի Հ., Տօնիկեան Փ. Կ.**, Հայոց լեզուի նոր բառարան, Բեյրութ, 1968, **Ճերեճեան Գնէլ արք., Տօնիկեան Փ. Կ.**, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Բեյրութ, 1992:

³⁵ **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 3, Երևան, 1974, էջ 281:

³⁶ **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 810:

³⁷ **Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 16, 232:

հավաք-ը. սա վրիպման հետևանք է, քանի որ **ժողովրդահավաք**-ից հղում է արվում **ազգահավաք**-ին³⁸: Հոմանիշների բացատրական բառարանը լույս է տեսել այն ժամանակ (2003-ին), երբ **հայահավաք**-ն արդեն ընդգրկված էր ակադեմիական և Աղայանի բացատրական բառարաններում, սակայն բառը կրկին չի ներմուծվել բառացանկ: Այս բառի հարցում փաստորեն պահպանվել է 1967-ի բառարանի վիճակը (դեռ մի բան էլ վատացել է. բառացանկից «թռել է» հոմանիշ **ազգահավաք**-ը):

Մյուս կողմից էլ, սակայն, արձանագրենք, որ տարբերակներից միայն **հայահավաք**-ը ներմուծվել է նույն բառարանագրի համահեղինակությամբ լույս ընծայված այլ տեսակի մի բառարան³⁹, թեպետ բառի գրությունն ու սեռականի կազմությունն առհասարակ դժվարություն չեն ներկայացնում:

Հայահավաք-ը դիպվածային մի հականիշ ունի՝ **հայացք**ում: Մենք արձանագրել ենք այդ բառի միայն մեկ գործածություն, այն էլ հականիշները միևնույն խոսքաշարում. «Եվ ի՞նչ կարիք կա բարձրագույն խոսել **հայահավաքի** մասին, երբ **հայացքումը** կանխելն անհնար է»⁴⁰: Թերևս զարմանալի չէ, որ եզակի գործածությամբ հայտնի **հայահավաք-հայացք**ում հականշային գույգը չի զետեղվել հայերենի հականիշների բառարաններում:

Հայերեն լեզվաբանական տպագիր բառարանների մեջ բառարանակով ամենաընդգրկունը համարվող ուղղագրա-

³⁸ **Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, էջ 360:

³⁹ **Սուքիասյան Ա. Մ., Սուքիասյան Ք. Ա.**, Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Երևան, 2002, էջ 191:

⁴⁰ **Իշխանյան Ռ.**, «Երրորդ ուժի բացառման օրենքը», Հոդվածներ, Երևան, 1991, էջ 43:

կան բառարանում⁴¹ կա միայն **ազգահավաք**-ը, սակայն չկան ազգային ամենամեծ իդձերից մեկը նշանակող բառերից ո՛չ **հայահավաք**-ը, ո՛չ էլ **հայահավաքում**-ը (նաև **ազգահավաքում**-ը): Այն դեպքում, երբ հիշյալ բառարանի հրատարակումից մի քանի տարի առաջ, ինչպես նշեցինք, հիշյալ բառերը գրանցվել էին ակադեմիական բացատրական բառարանում: Բառի գրանցումն այստեղ անշուշտ ավելի շուտ բառապաշարի ամբողջականությունը պահպանելու նպատակ պիտի հետապնդեր: Չմոռանանք, որ հիշատակված բառարանը նաև տերմինաբանական ուղղվածություն ունի. իսկ **հայահավաք**-ը հայագիտական տերմինի արժեք ունի:

Հայահավաք և **հայահավաքում** բառերը (նաև **ազգահավաք**-ը) ներկայացվել են նաև թարգմանական մի բառարանում⁴²: Գովելի է բառարանագիրների մոտեցումը, քանի որ այս բառերը հայոց պատմության՝ անցյալի, ներկայի և առավելաբար ապագայի կարևոր մի երևույթ են նշանակում:

Հայ-ռուսերեն ակադեմիական բառարանում **հայահավաք** բառը բացատրված է այսպես՝ *объединяющий армян*, որն ամբողջությամբ չի բացահայտում հայերեն բառի իմաստը. բացակայում է շատ կարևոր՝ «հայերին հավաքող» իմաստային բաղադրիչը: Այնինչ **հայահավաքում** բառը բացատրված է միանգամայն ընդունելի ձևով՝ *сбор, собрание армян в одном месте*: Իրականում այս բացատրությունը ևս պետք է լիներ **հայահավաք** բառահոդվածի շրջանակներում, իբրև իմաստային մեկ այլ դրսևորում:

Հայահավաք և **հայահավաքում** բառերը չեն հանդիպում թարգմանական հայտնի մյուս բառարաններում: Շատ դեպքերում դա կարող է բացատրվել միայն բառացանկի սահմանափակությամբ: Նկատելի է նաև, որ բառարանից

⁴¹ **Բարսեղյան Հ. Խ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երևան, 1973:

⁴² **Հայ-ռուսերեն բառարան** (գլխ. խմբ.՝ Ե. Հ. Գալստյան), Երևան, 1987, էջ 187:

բառարան կազմողները գրեթե կրկնում են բառային նույն կազմը՝ էապես չթարմացնելով այն:

Մեր կարծիքով որոշ դեպքերում **հայահավաք** և **հայահավաքում** բառերի բացակայությունն արդարացված չէ: Ծավալուն (և արժեքավոր) մի բառարանում⁴³, օրինակ, **հայ** բաղադրիչով բառերի շարքում ներկայացված են **հայագունդ**, **հայալից**, **հայախառն**, **հայախումբ**, **հայանման** և այլն, սակայն **հայահավաք**-ը և կամ **հայահավաքում**-ը, որոնք ազգային-պատմական կարևոր նշանակություն ունեն, չեն գետեղվել:

Պատկերը գրեթե նույնն է մեկ այլ բառարանում⁴⁴, որտեղ գրանցված են **հայագունդ**, **հայադրօշ**, **հայախումբ**, **հայակոյտ** և այլն, սակայն չկան **հայահավաք**-**հայահավաքում**-ը:

Հաճախականությունը

Հայահավաք և **հայահավաքում** բառերը չեն ընդգրկվել հայոց լեզվի հաճախականության բառարանում⁴⁵: Դա ընդհանրապես հնարավոր էր, սակայն ուշագրավ է, որ հիշյալ բառարանի հիմնական ցանկում **հայ** սկզբնաբաղադրիչով բառերից տեղ են գտել միայն **հայաբնակ**, **հայագետ** (նաև **հայագիտություն**), **հայերեն**, **հայորդի**, **հայություն**, **հայունի** բառերը, 2-1 հաճախականություն ունեցող բառերի ցանկում՝ **հայագիտական**, **հայահառաչ**, **հայանուն**, **հայաշխարհիկ**, **հայաստանցի**, նույնիսկ **Հայպետնախագիծ**⁴⁶: Այս բաշխումը մեզ հավաստի չի թվում թեկուզ այն պարզ պատճառով, որ, օրինակ, **հայագիտական**-ը հայտնվել է 2-1

⁴³ **Գույումճեան Մ. Կ.**, Ընդարձակ բառարան հայերենէ անգլիերէն, Բեյրութ, 1970, էջ 398:

⁴⁴ **Յովհաննիսեան Մ.**, Հայերէն-ֆրանսերէն բառարան (Բ տպագր.), Բեյրութ, 1971, էջ 451-452:

⁴⁵ **Ղազարյան Բ. Կ.**, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Երևան, 1982:

⁴⁶ Անդ, էջք 280, 565-567:

հաճախականություն ունեցողների շարքում, կամ էլ բառարան չեն մտել **հայ** սկզբնաբաղադրիչով այնպիսի հաճախական բառեր, ինչպիսիք են, ասենք, **հայասեր**-ը և **հայասոյաց**-ը⁴⁷, ինչպես նաև **Հայ** (< Հայաստանի, Հայկական) բաղադրիչով հապավական բազմաթիվ բաղադրություններ:

Հայահավաք և **հայահավաքում** բառերն առհասարակ մեծ հաճախականություն չունեն: Արևելահայերենի ազգային կորպուսում **հայահավաք** բառը ներկայացված է ընդամենը 12 համատեքստում (9 տեքստ, որոնցից մեկը Բ. Վերդյանի «Ծաղիկներս մնացին հեռվում» վեպն է՝ 3 գործածությամբ, մեկ վկայություն նույն հեղինակի «Արտակարգ դեսպաններ»-ից է, մեկը՝ Ա. Այվազյանի «Եղած-չեղածը՝ մի կյանք»-ից, վեցը՝ «Ազգ» օրաթերթից, մեկն էլ «Հայրենիք» պարբերականից), **հայահավաքում** բառը՝ ավելի սահմանափակ՝ ընդամենը 9 համատեքստում (4 տեքստ, որոնցից մեկը Վ. Խեչումյանի՝ «Յառաջ»-ում տպագրած հոդվածն է՝ 6 գործածությամբ, մեկ վկայություն Հայկական սովետական հանրագիտարանից է, երկուսը՝ «Ազգ» թերթից)⁴⁸:

Հարկ է հաշվի առնել, որ հայերենագիտական, հրապարակախոսական մեծածավալ նյութ կա, որտեղ գործածված են **հայահավաք** և **հայահավաքում** բառերը, սակայն այդ նյութը տակավին չի ներառվել այս հսկա՝ 110 բառագործածություն ամփոփող շտեմարանի մեջ: Այդ դեպքում պատկերը հաստատապես կփոխվի:

Եթե արևելահայերենի գործածություններին գումարենք արևմտահայերեն նյութը, ապա համահայերենյան ընդգրկմամբ **հայահավաք**-ը և **հայահավաքում**-ը պետք է տեղ ունենան հայերեն բառերի հաճախականությունը ներկայացնող ցանկերում: Դա կնշանակի, որ այս բառերը հետագայում

⁴⁷ Այս բառերի մասին տե՛ս **Գյուրջինյան Դ.**, «**Հայասեր** և **հայասոյաց** բառերի քննություն», «Էջմիածին» հանդես, 2015, Ը, էջ 82-101:

⁴⁸ www.eanc.net:

ավելի հաճախ կներառվեն հայերեն տարատեսակ բառա-
րանների բառացանկերում (օրինակ՝ պատմագիտական կամ
հայագիտական տերմինների), ինչպես նաև կընդգրկվեն
ուսումնական (մասնավորապես համալսարանական) նյու-
թերում, դասագրքերում⁴⁹:

Հայահավաք և հողահավաք

Հատկապես հրապարակախոսության մեջ հաճա-
խադեպ է **հայահավաք** բառի հետ համանման կառուցվածք
ունեցող **հողահավաք**-ի գործածությունը: Սա բնական է և
լիովին հասկանալի. երկուսն էլ ազգային կարևորագույն՝
միմյանցով փոխադամանավորված իդէերի նշանակիչներ են:
Հայահավաք և **հողահավաք** բառերի համատեղ գործա-
ծությունը բնորոշ է արդի հայերենի գրական երկու տար-
բերակներին էլ, առավելաբար՝ արևմտահայերենին: Օրի-
նակներ՝ «Ուրեմն տակաւին երկար ճանբայ կայ **հայա-
հաւաքի եւ հողահաւաքի** ճամբուն վրայ» (Ժ. Հակոբյան), «...
հայ ժողովուրդը հետեւեցաւ իր ազատագրական գաղա-
փարախօսութեան – **հայահաւաք եւ հողահաւաք** կարգա-
խօսին եւ առաջին յաղթանակով ազատագրեց Արցախը» (Ա.
Տոնոյան), «Էականը՝ **հողահաւաք եւ հայահաւաք**, որպէսզի
տոկանք եւ տեւենք» (Հ. Պալյան), «Նոյն տրամաբանութեամբ
կ'ընկալուէին **հողահաւաք եւ հայահաւաք** հասկա-
ցողութիւնները» (Խ. Տէր-Ղուկասյան)⁵⁰:

Առնչակից այս բառերը համատեղ գործածվում են
առավելաբար և շաղկապով: Ավելի քիչ միանում են ու-ով,

⁴⁹ Այսօր, ինչպես ցույց են տալիս մեր բանավոր հարցումները, հայախոս
ավագ դպրոցականները, շատ ուսանողներ, անգամ մտավորականներ չեն
ըմբռնում **հայահավաք** կամ **հայահավաքում** բառերը և, բնականաբար, չեն
գործածում իրենց գրավոր և բանավոր խոսքում:

⁵⁰ Տե՛ս www.yerakouyn.com/?p=57507, «Ազդարար», 27.03.2009,
<http://hairenikweekly.com/2015/02/26/20990>,
www.horizonweekly.ca/article/details/135:

ինչպես՝ «.... մշտառկա պատգամ է հայ սերունդներին՝ Հայկական լեռնաշխարհում համահայկական **հողահավաքն ու հայահավաքը** ավարտին հասցնելուն ուղղված», նաև առանց շաղկապի՝ «Հայկական կողմը պետք է մնայ պահանջատեր իր դատին, որուն սահմանումը յստակ է՝ **հայահավաք, հողահավաք**» (Մ. Մանուկյան) կամ էլ հարակցությամբ՝ «....Հայ Դատի քաղաքական լուծում ու **հողահավաք-հայահավաք**» (Ե. Գույումճյան)⁵¹: Եվ, բնականաբար, նրանք գործածվում են թեև ոչ կից, բայց իմաստային հանդիպադրմամբ. «Ինչպես պետականորեն չի գիտակցում **Հայահավաքի** կարեւորությունը, նոյնպես չի գիտակցում նրա հետ սերտորեն կապուած **Հողահավաքի** հարցը» (Ա. Այվազյան)⁵²:

Վերոբերյալ և բնագրային այլ վկայություններից կարող ենք եզրակացնել, թե **հողահավաք** և **հայահավաք** բառերի համատեղ գործածության ժամանակ հեղինակները դրանցից ո՛րն են առաջնային համարում: Ըստ մեր ունեցած նյութերի՝ **հայահավաք**-ին:

Որքան էլ զարմանալի է, այս բառերը, համատեղ գործածվելով, երբեմն նաև հեզնական նշանակություն են ստանում: Մի խոսքաշարում համազգային նշանակություն ունեցող երևույթները մեկ գործարարի առնչելով և տեղայնացնելով՝ հեղինակը փորձել է զավեշտի հասնել. «Այսպիսով՝ **«հայահավաք, հողահավաք»** իր ձեռնարկն իրականացնելու համար գործարարն, ըստ իրեն, «գտել» է մի առանցք, որով «շրջելու է աշխարհը» (Կ. Դավթյան)⁵³: Բառերը չակերտների մեջ առնելը թեև հուշում է, որ դրանք անսովոր

⁵¹ Տե՛ս <http://jurnal.am/news/2011-08-11-1187>, www.armenews.com, www.azadk.hosk.com/ (թիվ 40, հոկտեմբեր, 2014):

⁵² Տե՛ս <http://asbarez.com/arm/149220/>: Ուշագրավ է, որ մեզ հետաքրքրող բառերը, որպես նշանակալից հասկացություններ արտահայտող միավորներ, այստեղ գլխագիր են գրվել:

⁵³ www.zhamanak.com/article/2157/:

(հակառակ կամ սխալ) նշանակությամբ են գործածվել, սակայն սա, համենայն դեպս, ազգային իդձեր նշանակող բառերի անհաջող կիրառությունն պիտի համարել:

Նման գործածություն է նաև սա՝ «Սովետական Միությունը պետք է ազատագրի Թուրքիայում, Վրաստանում և Ադրբեջանում գտնվող մեր հողերը և կցի Սովետական Հայաստանին (Այդ փուլը «Ծովից-ծովի» ժարգոնով կոչված է **«հողահավաք»**: Կա նաև **«հայահավաք»**)» (Հ. Մանուկյան. «Հայկական ժամանակ», 25.11.2000): Նկատելի է, որ նման գործածությունների հանդիպում ենք հատկապես արևելահայերեն գրավոր խոսքում: Պատճառներից մեկը թերևս այն է, որ **հայահավաք**-ը և **հողահավաք**-ն ամուր «նստած չեն» (այսինքն՝ լիարժեք չեն յուրացվել) արևելահայերեն քաղաքական և գիտական խոսույթում, հաճախ չկա դրանց կարևորության գիտակցումը:

Արևմտահայերենում այս բառերը եթե անգամ հանդիպում են երգիծական բնույթ ունեցող բնագրերում, ապա երգիծական շեշտադրումները հիշյալ բառերի վրա չեն. նրանք սովորաբար գործածվում են իրենց բուն նշանակությամբ: Այսպես.

– Պետք է մոռնանք անցեալը՝ մեծ պետութիւնները այդպէս կ'ուզեն...

– Պետք է... պետք է... (երբեմն կը լսուի նաև պետք է **հողահաւաք, հայահաւաք...**) (Հ. Սահակյան)⁵⁴:

Այստեղ, անշուշտ, հոգեբանական ազդակներ էլ կան: Թվում է, թե բնօրրանից զրկված հայը ազգային ամենավեհ գաղափարների վերաբերյալ չի կարող հեգնական երանգով խոսել. դա բավական զգայուն թեմա է: Իսկ եթե նման բան է անում հայաստանցին, ապա կարելի է ենթադրել, որ որոշակի դեր է խաղացել խորհրդային գաղափարախոսու-

⁵⁴ www.baronhagop.com/articles.php?op=details&id=21:

թյունը, ըստ որի **հողահավաք**-ը և **հայահավաք**-ը դաշնակցական գաղափարներ էին: Ասվածի արձագանքը կարող ենք տեսնել այստեղ. «Ո՞ւր է **հայահավաք** և **հողահավաք** ՀՅԴ-ն...» (Տ. Գամաղելյան. «Ազգ», 03.05.2006):

Հայահավաք Բառի գործածության ոլորտը և ոճական արժեքը

Հայահավաք-ը ոճականորեն միարժեք չէ: Հանդիպում է տարբեր ոճերի բնագրերում:

ա) Գիտական. «Համոզիչ փաստարկներով ներկայացված են ռուսական տիրապետության շրջանում (1828-1917 թթ.) զանազան ներգաղթերի, անհամեմատ նպաստավոր սոցիալ-քաղաքական ու տնտեսական լծակների ազդեցությամբ Արևելյան Հայաստանում տեղի ունեցած **հայահավաք** գործընթացները»⁵⁵, «Հայ-թուրքական հակամարտության այս բոլոր մակարդակների հիմքում ընկած են Հայաստանի վերականգնված պետականության կենսունակությունը, պաշտպանունակությունը, տնտեսական զարգացումը, հետագայում նաև ժողովրդագրական աճը (**հայահավաքը**) ապահովող հողային խնդիրը՝ Հայկական հարցը»⁵⁶: Այս վերջինում հայահավաքը դիտվում է ժողովրդագրական աճի հիմնական գործոն:

Հայահավաք բառը զուտ հայագիտական եզրույթի նշանակություն ունի:

բ) Հրապարակախոսական (ներառյալ եկեղեցական հոետորությունը). «Աշտարակեցի մեծագործ Հայրապետը բախտորոշ գործոն, հզոր ուժ հանդիսացավ իբրև Արևելահա-

⁵⁵ Մելքոնյան Ա., գրախոսություն Վ. Խոջաբեկյանի «Բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002 / «Պատմա-բանասիրական հանդես», 2002, թ. 3, էջ 293-94:

⁵⁶ Այվազյան Ա., «Հայ Դատն այսօր» 6-րդ խորհրդաժողովում կարդացված գեկուցումից, Թեհրան, 2008, 13-14 նոյեմբեր:

յաստանի ազգային հիմքերը ամրացնող **հայահավաք** առաքյալ»⁵⁷:

զ) Գեղարվեստական. «Ուրիշ բան չէր լսում, միայն երեխաների լացը և դալուկ դեմքերի ու կկոցած աչքերի ճիչը՝ ո՞ւր էք մեզ տանում: Մեկիկ-մեկիկ հավաքեցին քրդերից, թուրքերից, **հայահավաք** եղավ որ ի՞նչ»⁵⁸: «Եկան, **հայահավաք** կայան դարձրին կայսրության ամենանշանավոր հյուրանոցն ու հացադուլ հայտարարեցին»⁵⁹: Նկատելի է, որ առաջին խոսքաշարում **հայահավաք**-ը պատմական ազդակներ է հաղորդում՝ հստակորեն հուշելով որոշակի ժամանակաշրջանի և իրադարձության, երևույթի (հայերին օտարների գերությունից ազատելու) մասին, երկրորդում ուղղակի նշանակում է «հայերին ի մի բերող»:

Հանդիպում է նաև հրապարակախոսական շեշտադրումներ ունեցող չափածո խոսքում: Օրինակ՝

Համայնք, դո՛ւ եղար այդ ձեռքը հզոր,

Օջախը եղար դու **հայահավաք** ... (Ս. Մոսիսյան)⁶⁰:

Այսուհանդերձ, բառը բոլորովին չի ընկալվում իբրև գեղարվեստական:

Մի շարք խոսքաշարերում **հայահավաք** բառը ոճականորեն չեզոք է: Այդպես է, օրինակ, այստեղ, թեպետ գործածվել է արվեստագիտական աշխատության մեջ. «Ինչպես արևելյան հատվածում հայ մշակույթի խոշոր կենտրոնը

⁵⁷ Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում, 1978 թ., հունվարի 6, «Էջմիածին» հանդես, 1978, Ա, էջ 5:

⁵⁸ Վերդյան Բ., Ծաղիկներս մնացին հեռվում, Երևան, 1990 (ըստ ԱՐԵՎԱԿԻ):

⁵⁹ Բեգլարյան Հ., Հրապարակ, Երևան, 2011, էջ 200:

⁶⁰ www.armsib.ru/page24.html:

Թիֆլիսն էր, այնպես էլ արտասահմանում հայ մշակույթի **հայահավաք** կարևոր կենտրոնը Փարիզն էր»⁶¹:

Եվ, վերջապես, **հայահավաք** և **հայահավաքում** բառեր պարունակող տեքստերը հաճախ պատկերացում են տալիս ազգի ապագայի համար առանցքային նշանակություն ունեցող այդ գաղափարը հղացողների, կրողների և իրականացնողների մասին: Դրանք են Հայաստան պետությունը, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին⁶², ազգային կուսակցությունները, հայկական տարբեր միություններ, կազմակերպություններ և հզոր անհատներ:

Եզրակացություններ

1. Ազգահավաքման (այսինքն՝ հայահավաքման) գաղափարը ծագել է միջնադարում. մատենական առաջին վկայությունը Հովհաննես Սարկավազի «Պայծառացան այսօր» շարականն է:

2. Հայերին միավորելու և հայրենիքում հավաքելու գաղափարն իր հստակ ձևակերպումն ստացել Ս. Ներսես Շնորհալու «Ատենաբանություն» ճառում:

3. Միջնադարյան Հայաստանում ազգահավաքման գաղափարը համակել էր ոչ միայն անհատներին, այլ նաև ժողովրդին՝ ծնունդ տալով նոր վիպասանության՝ «Վասն բարի ժամանակաց»:

4. **Հայահավաք**-ը հայոց ազգային իդեերի արտահայտիչ բառային միավորներից են: Սրանք համահայերենյան բնույթ ունեն, գործածվում են արդի գրական հայերենի երկու տարբերակներում էլ, արևմտահայերենում՝ ավելի շատ:

⁶¹ **Մարտիկյան Ե.**, Հայկական կերպարվեստի պատմություն, Երևան, 1987, էջ 6:

⁶² Հմմտ., օրինակի համար, «**Հայահավաքն** ու հայության կյանքը կազմակերպելը դարձավ Հայ եկեղեցու հիմնական առաքելությունը» (Ս. Նազարյան. www.shoghakat.am/am/telecasts/161):

5. **Հայահավաք** և **հայահավաքում** բառերն ստեղծվել են XX դարի մեծագույն ոճրից՝ հայերի նկատմամբ Օսմանյան Թուրքիայի իրականացրած ցեղասպանությունից և Արևելյան Հայաստանում անկախության հաստատումից հետո:

6. **Հայահավաք** և **հայահավաքում** բառերն ստեղծվել են հայոց պատմության առանցքային իրադարձությունների հետևանքով: Տարբեր դարաշրջաններում այս բառերը տարբեր իրակությունների են հարաբերել: Այսպես, հատկապես **հայահավաք** բառը գործածվել է, երբ անհրաժեշտ է եղել՝

ա) հավաքել թուրքերի, քրդերի և այլոց մոտ գերված հայ կանանց և երեխաներին (որբերին) (հետեղեռնյան շրջան, XX դարի 20-ական թվականներ),

բ) հայրենի հողերի վրա հավաքել-կենտրոնացնել ցրված հայությանը (XX դարի ողջ ընթացքում),

գ) հայրենիք վերադարձնել աշխարհով մեկ սփռված հայերին (հայրենադարձության տարբեր փուլեր, ինչպես՝ 1946-48 թվականներ),

դ) տարբեր թելերով (գործնական, մշակութային, անձնական և այլն) հայրենիքին կապել սփյուռքահայությանը (արդի փուլում):

7. Հայահավաք(ում)ն ընկալվել է որպես՝

ա) ազգահավաք, ազգի համախմբում,

բ) որբահավաք,

գ) գերեվարված հայուհիների ազատագրում և վերադարձ հայությանը,

դ) հայրենադարձություն (ներգաղթ):

8. Հայ ազգային կարևորագույն նպատակների արտահայտիչ **հայահավաք** և **հողահավաք** բառերը հաճախ միասին են գործածվում, քանի որ փոխկապակցված են հասկացությունները. հողահավաքը ենթադրում է հայահավաք, և հայահավաքի շնորհիվ հզորացած երկիրն ի գործու կլինի հողահավաք իրականացնելու:

9. **Հայահավաք**-ը և **հայահավաքում**-ն հայագիտական եզրույթի արժեք ունեն, սակայն գործածվում են նաև որպես ոճականորեն չեզոք բառեր: Այս բառերը գրքային են, բնորոշ գիտական, հրապարակախոսական և գեղարվեստական ոճերին:

Տե՛ս նաև **Դ. Գյուրջինյան**, *Հայահավաք(ում). հասկացությունը և բառային դրսևորումները*, «Էջմիածին», 2016, Բ, էջ 38-56:

**ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ.
ԲԱՌԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Մուտք

Քերթողահայրը գրել է. «... զազգիս մերոյ կարգել զպատմութիւնն ճշդիւ՝ զթագաւորացն և զնախարարականաց ազգաց և տոհմից, թէ ո՛վ յումմէ, և զի՛նչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց, և ո՛վ ոք ի ցեղիցս որոշելոց ընտանի և մերազնեայ, և ո՛յք ոմանք եկք ընտանեցեալք և **մերազնացեալք**»¹: Հատվածը աշխարհաբարի վերածվել է այսպես. «... ճշտությամբ հորինել մեր ազգի պատմությունը, թագավորների և նախարարական ցեղերի և տոհմերի մասին, թե ո՛վ ումի՛ց է ծագել, ի՛նչ է գործել նրանցից յուրաքանչյուրը, և ո՛րն այս բաժանված ցեղերից բնիկ մեր ազգից է և որոնք եկվորներ են և **հայացել**՝ բնիկ են դարձել»²: Ըստ այս հատվածի՝ թագավորական և նախարարական որոշ տներ օտար են եղել, բայց ժամանակի ընթացքում ձուլվել են հայերին (**մերազնացեալ** նշանակում է «ի մերազն վերածեալ. ի համարի ազգիս մերոյ գտեալ»³, այսինքն՝ «հայ դարձած, հայացած»):

¹ **Սովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 12:

² **Սովսես Խորենացի**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխայանցի, հրատարակության է պատրաստել Գ. Գ. Անանյանը, Երևան, 1981, էջ 13: Պատմահոր գրքի արևելահայերեն մեկ այլ հրատարակության մեջ **հայացել** չէ, այլ **հայացած** (տե՛ս **Սովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս **Ստ. Մալխասյանցի**, թարգմանությունը բնագրի հետ համեմատեցին ու խմբագրեցին Վ. Դ. Առաքելյանը և Ա. Ա. Աբրահամյանը, Երևան, 1968, էջ 71):

³ Տե՛ս **հ. Գաբրիել Աւետիքեան, հ. Խաչատուր Միսմիկեան, հ. Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 253 (այսուհետև՝ ՆՀԲ):

Արդի լեզվամտածողությամբ՝ խոսքն ազգային ինքնության փոփոխության մասին է:

Իսկ ի՞նչ է ազգային ինքնությունն առհասարակ: Ազգի կամ ազգային ինքնությունը կարելի է սահմանել որպես պատմական, մշակութային կամ հոգեբանական գործոնների գումարման և համադրման արդյունք է⁴: Ինքնության հասկացությունը կարելի է բնորոշել իբրև հակաբևեռը այլության⁵:

Ինքնությունը կարող է ընկալվել միայն ուրիշի, այլի, օտարի հետ հարաբերվելու միջոցով. «մենք»-ի ընկալման անհրաժեշտ տարրերից են «նրանք»-ը կամ «ուրիշ»-ը, ըստ այդմ էլ սերտորեն առնչվում են մի կողմից՝ նույնության և ուրիշության կամ այլության, մյուս կողմից՝ ինքնության խնդիրները: «Այլ», «ուրիշ» և «օտար» հասկացությունները մերձիմաստ են, սակայն դրանց միջև այլության որոշակի տարբերակում կա: «Այլ»-ը կարող է անգամ սեփական անձի այլը լինել կամ ինքնափոխակերպման մի տարր, որ ամենամոտն է նույնությանը: «Ուրիշ»-ը նկատելիորեն սահմանազատված է. այն կարող է ձգտել ընդունման և հարազատացման, սակայն լիովին չի կարող նույնանալ: Իսկ «օտար»-ն այն ուրիշն է, որին մերձենալու, այն ընդունելու մղում չկա, ընդհակառակը՝ կա հստակ սահմանազատում, նույնիսկ պաշտպանվելու դիրքորոշում, իսկ երբեմն էլ՝ ուղղակի մերժում⁶:

Ընդունելի է այն տեսակետը, որ «ինքնութիւնը մէկ անգամ ընդմիշտ տրուած, իրագործուած, սպառած եւ լրա-

⁴ Աբրահամյան Լ. Հ., Ազգային ինքնության հաստատման չորս հարացույցները / Ինքնության հարցեր: Տարեգիրք, Երևան, 2002, էջ 43:

⁵ Զեփեան Պողոս Լեւոն, Հայ ինքնութիւն / Ինքնության հարցեր: Տարեգիրք, Երևան, 2002, էջ 33:

⁶ Հմմտ. Պետրոսյան Ս. Ս., «Մենք»-ի ինքնանույնության կառուցման որոշ տարրերի փիլիսոփայական վերլուծության փորձ / Հայոց ինքնության հարցեր, պրակ 2, Երևան, 2014, էջ 44, 46:

ցած, կատարեալ իրողութիւն մը չէ, այլ ենթակայ է յարատեւ զարգացման, յեղաշրջումի, յետ եւ յառաջընթացներու, բարուքման ու կատարելագործման»⁷:

Մարդկության պատմությանը հայտնի են դեպքեր, երբ կամովին կամ բռնությամբ, զանգվածաբար կամ անհատապես տեղի է ունեցել ազգային ինքնության փոփոխություն, անցում այլ ինքնության:

Հայության պատմությունից էլ բազում այդպիսի դեպքեր կարելի է հիշատակել: Դիտարկենք լեհահայերի օրինակը: XVII դարի առաջին կեսին կաթոլիկ եկեղեցին կատաղի գրոհներ սկսեց Լեհաստանի հայ եկեղեցու դեմ՝ այդ պայքարում օգտագործելով հայ բարձրաստիճան հոգևորականությանը. մեծ կաշառքով լեհահայ թեմի առաջնորդ նշանակվեց 23-ամյա նորաթուխ եպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչը: Առաջնորդն ամեն կերպ ջլատեց համայնքը, թուլացրեց և քայքայեց եկեղեցին: Ազգադավ այդ մարդու մահից հետո Լվովի հայ եկեղեցու առաջնորդ ձեռնադրվեց Վարդան Հունանյանը, որը 1689 թ. հոկտեմբերի 10-ին պապական նվիրակի նախագահությամբ հրավիրեց լեհահայ եկեղեցու ժողով, որտեղ Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի հայոց եկեղեցին պաշտոնապես և վերջնականապես անկախ հայտարարվեց Էջմիածնի Մայր աթոռից և Հռոմի կաթոլիկ եկեղեցուն միացված: Արտագաղթից նոսրացած լեհահայությունն սկսեց աստիճանաբար ձուլվել լեհերի հետ: XVIII դարի վերջին վերացվեցին հայկական օրենքները, դատարանները և հայկական ինքնավարությունը: Շուտով երբեմնի խոշոր և հարուստ գաղութն անհետացավ պատմության թատերաբեմից, քանի որ հայերը տարրալուծվեցին լեհերի մեջ⁸: Տեղի ունեցավ ազգային ինքնության փոփո-

⁷ **Հայր Լեոն Զեփեան**, Ինքնութեան խճանկար, Բեյրութ, 2001, էջ 34:

⁸ Հմմտ. **Հովհաննիսյան Մ. Լ.**, Ուկրաինայի և Լեհաստանի գաղթօջախները / Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 374-377:

խություն: Ինչպե՞ս: Այդ ընթացքը կարող ենք ներկայացնել հետևյալ քայլաշարով՝ հայ (առաքելական) – լեհահայ (առաքելական) – լեհահայ (կաթոլիկ) – հայկական ծագումով լեհ – լեհ:

Հայերենում կա՞ն արդյոք «այսինչ ազգի ներկայացուցիչ դառնալ» իմաստն արտահայտող բայեր: Եթե այո, ապա ինչպիսի՞ կառուցվածք ունեն, դրանք ե՞րբ են կազմվել, ի՞նչ իմաստներ ունեն, ո՞ր ազգերի անուններն են բառակազմական հիմք դարձել, այդ բայերն ի՞նչ հարաբերություններ ունեն բառապաշարի այլ միավորների հետ: Պատասխանենք այս հարցերին:

Հայերենի վերածման բայերը

Դասական հայերենում այլ խոսքի մասերից բայերի կերտումը կարող է տեղի ունենալ բայական վերջավորության հավելումով (անորոշ դերբայում՝ **լ** ածանցն իր լծորդ ձայնավորներով) կամ, որ ավելի ցայտուն է դարձնում բայակազմությունը, **անալ** բաղադրյալ բայակերտ ածանցով⁹: Միևնույն անուններից հաճախ բայեր են կազմվում են թե՛ **-ել** և թե՛ **-անալ** մասնիկներով, տարբեր նշանակություններով, ինչպես՝ **անզգայիմ – անզգայանամ, անհաւատեմ – անհաւատանամ, երկբայիմ – երկբայանամ** և այլն:

ԱՆԱԼ (ենալ) ածանցն ունեցող բայերը չեզոք են¹⁰, անանցողական¹¹, բացի մի քանիսից (**գողանալ, ստանալ, իմանալ, ցանկանալ**), և ցույց են տալիս մի բան դառնալ, մի

⁹ **Հովսեփյան Լ. Ս.**, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 300:

¹⁰ Չեզոք համարվում են այն բայերը, որոնք ուղիղ խնդիր չեն առնում, **-վ**-ածանց ստանալ չեն կարող (հմտ. **Հարությունյան Հ. Ա.**, Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 146):

¹¹ **Ան/աց**-ը դիտվում է որպես անանցողականության տարբերիչ, և «անցողականությունը կարելի է մեկնաբանել որպես գործողայնություն (գործողության նիշի առկայություն), անանցողականությունը կամ ներակայությունը՝ որպես վիճակայնություն» (տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 260):

վիճակից մի ուրիշ վիճակի փոխվելը, ինչպես՝ **փայտանալ, քարանալ, դառնանալ, լավանալ**¹²: Մեծաթիվ այդ բայերը¹³ կոչել են տարբեր անուններով, նախ՝ «վերածման կամ փոխարկման բայեր»¹⁴, ապա՝ «վերածության-դառնալիության բայեր»¹⁵, նաև «փոխարկային»¹⁶: Ուշադրություն դարձնենք, որ **վերածություն** բառի իմաստն ակադեմիական բացատրականն այսպես է ձևակերպում՝ «մի բան մի այլ բանի վերածելը՝ փոխարկելը»¹⁷ և համեմատենք հետազոտվող բայերի անվանումների հետ:

Տարբեր խոսքի մասերից **-ան-** ածանցով կազմված և վերածման իմաստ ունեցող բայերը (**ազնվանալ** – ազնիվ դառնալ, **ազահանալ** – ազահ դառնալ, **բարեկամանալ** – բարեկամ դառնալ, մտերմանալ, խնամիական կապով ազգական դառնալ և այլն) չունեն սկզբնատիպ գուգահեռները, ընդ որում «վերածման գաղափարի արտահայտման մեջ **-ան-** ածանցի դերը տվյալ դեպքում շատ ցայտուն է»¹⁸: Նկատվել է, որ «**-ան-** ածանցը մի բանից մի բանի վերածվելու, մի բանից մի բանի փոխվելու, մի բան դառնալու իմաստ է արտահայտում և ըստ այդմ էլ **վերածելիության** կամ

¹² Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 288:

¹³ Ըստ Ն. Բարսեղյանի կազմած բայացանկի՝ **-անալ** ածանցով մոտ 700 է կազմվել (տե՛ս **Ասատրյան Մ. Ե.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Երևան, 1973, էջ 220. հեղինակը մի բանի վերածվելը, մի բան դառնալը ցույց տվող բայերի մեջ հիշատակում է **ռուսանալ-ը, օտարանալ-ը**, որոնք մեզ հետաքրքրող բառաիմաստային խմբի միավորներ են):

¹⁴ **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 100:

¹⁵ **Աղայան Է. Բ.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը (կառուցվածքային վերլուծություն), Երևան, 1967, էջ 331:

¹⁶ **Ջահուկյան Գ. Բ.**, նշվ. աշխ., էջ 466:

¹⁷ **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 4, Երևան, 1980, էջ 392):

¹⁸ **Աբրահամյան Ա. Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, 1962, էջ 216-217:

դառնալիության կերպի ածանց է կոչվում»¹⁹ (ընդգծումը մերը չէ.- Դ.Գ.):

Ածականներից **անա(յ)** ածանցով կազմված բայերն ունեն նախատիպ ածականի հատկանիշով օժտվելու, այդ հատկանիշին վերածելու, փոխարկվելու բառակազմական նշանակություն, իսկ գոյականներից կազմված բայերն ունեն հետևյալ բառակազմական նշանակությունները՝ 1. Նախատիպի ցույց տված առարկան դառնալ, նրան վերածվել, 2. նախատիպի ցույց տված առարկայի հատկանիշը ստանալ (նաև փոխաբերական առումով)²⁰:

Գործառական տեսակետից –**անալ** ածանցն ունի որոշ սահմանափակություն. նրանով կազմվում են միայն չեզոք սեռի բայեր ..., որոնք բնորոշվում են դառնալու, վերածվելու, հատկանիշ ձեռք բերելու իմաստությամբ, իսկ գործողության կերպի առումով մտնում են այսպես կոչված անցումային (ինգրեսիվ, ինխտատիվ) կերպի մեջ²¹:

Ազգային ինքնության փոփոխության նշանակիչ բայերը

Ազգային ինքնության փոփոխության նշանակիչ բայերի իմաստն այժմյան դիտանկյունից ընդհանուր ձևով արտահայտված է **օտարանալ** բայի մեջ: Գրաբարում այն նշանակել է «օտար լինել. հեռանալ, պանդխտանալ», «անծանոթ լինել կամ ձևանալ»²², որն էապես տարբերվում է ժամանակակից ընկալումներից: Հետևենք բառիմաստի փոփոխությանը:

¹⁹ **Մարգարյան Ա.**, Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Երևան, 2004, էջ 366: Մեր կարծիքով այստեղ գործ ունենք ոչ թե կերպի, այլ բառակազմական նշանակության հետ:

²⁰ **Գալստյան Ս. Ա.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 245:

²¹ **Հովսեփյան Լ. Ս.**, նշվ. աշխ., էջ 301:

²² ՆՀԲ, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 1029: Գրաբարում կա նաև **այլանալ** բայը (ՆՀԲ, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 87), որն ուրիշ իմաստ ունի. հետաքրքրական է բառակազմական հիմքի տեսանկյունից:

Եթե Սո. Մալխասյանցի բառարանում **օտարանալ** բայի իմաստը ձևակերպվել է «օտար դառնալ, իւր բնիկ վիճակից ուրիշ վիճակի փոխվել»²³, ապա ակադեմիական բացատրական բառարանում բառն առաջին իմաստով նշանակում է «իր ազգային հատկանիշները՝ զգացումները կորցնել և օտար դառնալ»²⁴: Հատուկ անդրադարձ է կատարվել ազգային հատկանիշները կամ զգացումները կորցնելու հանգամանքին: Օտարանալը սեփական ազգի հատկանիշները կորցնելու ընթացքի մի աստիճանն է, դրա վերջնական արդյունքը՝ այլ ազգի ներկայացուցչի փոխվելը կամ այլազգի դառնալն է:

Հայերենում կան բայեր, որոնք արտահայտում են «այսինչ ազգի ներկայացուցիչ դառնալ», ինչպես նաև երբեմն սրան ներհյուսված (կամ առանձնաբար հանդես եկող) «այսինչ կրոնի՝ դավանանքի հետևորդ դառնալ» իմաստները: Այս իմաստներն արտահայտող բայեր վկայվել են գրաբարյան շրջանից:

1. Բառարաններում գրանցված բայերը

Նոր հայկազյան բառարանում արձանագրված են «ազգի անուն+ան+ալ» կառուցվածք ունեցող երեք բայեր՝ **հրէանալ** «հրէայ լինել, իբրեւ հրէայ վարիլ. դառնալ ի հրէութիւն կամ հրէաբէն վարիլ»²⁵, **պարթևանալ** «իբրու պարթև լինել լեզուաւ»²⁶ և **պարսկանալ** «իբրեւ պարսիկ

²³ Մալխասեանց Սո., Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945, էջ 611:

²⁴ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, էջ 791:

²⁵ Ըստ Սո. Մալխասյանցի բառարանի՝ «հրէայ դառնալ, հրէական դաւանութիւն ընդունել» (Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 152), ակադեմիական բացատրականը՝ «հրէա դառնալ» (հ. 3, Երևան, 1974, էջ 395):

²⁶ Ըստ Սո. Մալխասյանցի բառարանի՝ «պարթև դառնալ, իբրեւ պարթև խօսել, ապրել» (հ. 4, Երևան, 1945, էջ 83): Է. Աղայանի բացատրական բառարանը **պարթևանալ** բառը բացատրում է այսպէս՝ «պարթև դառնալ,

լինել, որպէս պարսիկ բարբառել»՝ բնագրային օրինակներով (ՆՀԲ, հ. Բ, էջք 142, 635, 640): Ակներն է, որ այս բայերն արտահայտում են «տվյալ ազգի հատկանիշների կրող դառնալ», «տվյալ ազգի դավանանքն ընդունել», «տվյալ ազգի լեզվով խոսել» իմաստները: Թվարկված բառերը հետազոտվող բառաիմաստային այս խմբի ամենավաղ կազմություններն են:

Բառախմբի մյուս միավորներն աշխարհաբարյան կազմություններ են: Դրանից **ռուսանալ**-ը, նրանից կազմված **ռուսացնել** պատճառականը և **ռուսացում** բայանուն գոյականը XIX դ. վերջին արդեն բառարանային գրանցում էին ստացել²⁷:

Աշխարհաբարի միալեզվյան և թարգմանական բառաններն արձանագրել են «այսինչ ազգի ներկայացուցիչ դառնալ» իմաստն արտահայտող հայերեն հետևյալ բայերը՝ **գերմանանալ**, **թուրքանալ**, **իտալանալ**, **լեհանալ**, **հայանալ**, **հրեանալ**, **հունանալ**, **պարթևանալ**, **պարսկանալ**, **ռուսանալ**, **վրացանալ**, **տաճկանալ**, **քրդանալ**²⁸, ընդամենը 13 միավոր: Նկատելի է, որ գրաբարյան շրջանի կազմությունները ևս արտացոլվել են ժամանակակից հայերենի այս կամ այն բառարանում, այսինքն՝ այդ բառերը փոխանցվել են հայերենի զարգացման հետագա փուլերին՝ դառնալով նրա բառապաշարի մասը:

«Այսինչ ազգի ներկայացուցիչ դառնալ» իմաստն արտահայտող բառերը բառարաններում գրանցվել են թե՛

պարթևակազմ դառնալ» (էջ 1205), որ նշանակում է, թե բառի հիմքում ընկել է **պարթև** «հաղթանդամ, լայնաթիկունք» համանունը:

²⁷ **Շաղութեան Կ.**, Հայերեն-ռուսերեն բառարան, Թիֆլիս, 1891, էջ 386:

²⁸ Տե՛ս **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 1-4, Երևան, 1969-1980, **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, **Հայոց լեզվի հանգաբառարան**, Պ. Պողոսյանի խմբագրությամբ, Երևան, 1976:

որպես մենիմաստ և թե՛ բազմիմաստ բառեր²⁹, չեզոք սեռի բայեր: Ակադեմիական բացատրական բառարանում, օրինակ, դրանք բացատրվում են այսպես՝ **գերմանա՛նալ** - գերմանացի դառնալ (լեզվով, սովորություններով և այլն) (հ. 1, էջ 396), **լեհա՛նալ** - լեհ դառնալ, լեհացման ենթարկվել (հ. 2, էջ 396), **հրեա՛նալ** - հրեա դառնալ (հ. 3, էջ 395), **քրդա՛նալ** - քուրդ դառնալ (հ. 4, էջ 752):

Երկու բառի դեպքում «այսինչ դառնալ» ձևակերպումից բացի նշվում է տվյալ ազգի լեզուն, կենցաղը, սովորույթները, այլև կրոնն ընդունելը: Այսպես՝ **ռուսա՛նալ** - ռուս դառնալ, լեզվով, բարքերով, կրոնով ձուլվել ռուսների հետ (հ. 4, էջ 256), **վրացա՛նալ** - վրացի դառնալ, վրացական լեզու՝ բարքեր ընդունել (հ. 4, էջ 428): Ի դեպ, այս երկու բայերն էլ ունեն տարբերակներ:

Վրացա՛նալ բայի **վրացիա՛նալ** տարբերակը արձանագրված է ակադեմիական բացատրականում (հ. 4, էջ 428), այսինքն՝ ազգության անունը բառի կազմում անփոփոխ է մնում (հմմտ. **վրացիություն**, մնացած դեպքերում բառակազմական հիմքը **վրաց**-ն է՝ **վրացախոս**, **վրացուհի**, **վրացասեր**, **վրացերեն** և այլն): **Ռուսա՛նալ** բայի տարբերակը հնչյունափոխված հիմքով է՝ **ռսա՛նալ**³⁰, որն այսօր բնորոշ է միայն խոսակցական-բարբառային հայերենին. գրական հայերենում այժմ այդպիսի տարբերակայնություն գոյություն չունի:

²⁹ Հմմտ. «Վերածման բայերը գրաբարում է և ժամանակակից հայերենում հիմնականում բազմիմաստ են, դրանց մի մասն ունի նաև փոխաբերական իմաստ(ներ), մինչդեռ միջին գրական հայերենում հիշյալ բայերի մեջ գերիշխում է առավելապես բուն իմաստը, տվյալ դեպքում՝ վերածման գաղափարը» (տե՛ս **Խաչատրյան Գ., Ազիզբեկյան Տ.**, Վերածման բայերը միջին գրական հայերենում, «Պատմա-բանասիրական հանդես», 2019, թ. 1, էջ 167):

³⁰ **Ղադրաշեան Յ.**, Լիակատար բառարան հայերենից ռուսերեն, Թիֆլիս, 1911, էջ 613: Այստեղ բայը **ռսաբանություն** գլխաբառի ներքո տրված բառափնջի մեջ է:

Միայն երեք բառ է ներկայացվել որպես բազմիմաստ: Բառարանը երկու իմաստով է ներկայացնում **հայանալ**-ը՝ 1. Հայ դառնալ (լեզվով, հոգով և սովորություններով), 2. (կրոն.) Հայոց եկեղեցու դավանությունն ընդունելով մկրտվել հայոց եկեղեցում (հ. 3, էջ 281): Առաջին իմաստի համար բերվում է բնագրային օրինակ Ստեփանոս Նազարյանցից՝ «Կամիմ ավելի քաջ ծանոթանալ քո ճոխ գանձերին, հոգով **հայանալ**», երկրորդ իմաստից առաջ տրվում է ոճական նշում՝ «կրոնական»:

Երկու իմաստով է տրված **պարսկանալ**-ը. 1. պարսիկ դառնալ, պարսկական լեզու՝ կենցաղ ընդունել, 2. Պարսկական կրոն ընդունել (հ. 4, էջ 194): **Պարսկացնել** պատճառականի բացատրության մեջ, սակայն, իմաստային տարանջատում չի կատարվել՝ «պարսիկ դառնալ, պարսկական լեզու՝ կենցաղ՝ կրոն ընդունել տալ»:

Ուշագրավ են **թուրքանալ** բառի իմաստները: Առաջինը բուն նշանակությունն է՝ «մահմեդական կրոն ընդունելով՝ թուրք դառնալ»: Թուրք(եր)ին բնորոշ հատկությունների հիման վրա ձևավորվել են փոխաբերական իմաստները, ընդ որում՝ բոլորը բացասական: Այսպես՝ «կատաղել, բարկանալ», «անկարեկից դառնալ, անողորմ դառնալ», «յուրայիններին, հարազատներին դավաճանել» (հ. 2, էջ 256): Բացասական է ընկալվում նաև վերջին՝ վեցերորդ իմաստը՝ «մտածողությամբ՝ գաղափարներով թուրքի նման մտածել», քանի որ հայության ընկալումներում **թուրք** բառը ամեննինի դրական չէ. նա վայրագ է, ջարդարար, խավարամոլ, ատելի:

Մի բառարանում նշվում է «շատ տանջվել» իմաստը³¹, որը թերևս պիտի հասկանալ այսպես՝ մարդկային դիմագիծը կորցնելու աստիճան տանջվել:

Ինչպիսի՞ն է պատկերը արևմտահայերենի բառարաններում: Արևմտահայերենի բացատրական երկհատոր բառա-

³¹ Է. Աղայանի բառարանն այս իմաստը չունի:

րանը **թուրքանալ**-ը բացատրում է այսպես՝ «քրիստոնեական հաւատքը ուրանալ, մահմէտական ըլլալ, 2. Սաստիկ բարկանալ, դաժանալ»³²: Կոանյան վարդապետի բառարանում տրվում է **թրքանալ** (արմատական բաղադրիչը հնչյունափոխված), «այլազգանալ, իսլամանալ» բացատրությամբ³³:

Արևմտահայերենի բացատրական երկհատոր նոր բառարանի նույն բառահոդվածում տրվում են բառի հնչյունափոխված և չհնչյունափոխված **թրքանալ** և **թուրքանալ**³⁴ տարբերակները և իմաստները՝ 1. թուրք դառնալ, թրքութիւնը ընդունիլ՝ յօժար կամքով կամ բռնի, տաճկանալ, 2. (փխբ.) թրքութիւնը բռնել, զագանանալ, վայրենանալ, 3. մահմեդական դառնալ (նեղ իմաստով)³⁵:

Ուշագրավ է, որ **թուրքանալը** մեկնաբանվում է որպէս հոժարակամ կամ բռնի գործողություն, ընթացք: Հարկ ենք համարում հատուկ նշել, որ ազգային ինքնության փոփոխություն նշանակող ոչ մի բառի պարագայում բռնության պահին որևէ բառարանում անդրադարձ չի կատարվում:

Արևմտահայերեն բառարանում իբրև չորրորդ իմաստ նշվում է մի բան, որ համանունական է («թրիք՝ քաք դառնալ»)³⁶ և այս բառահոդվածում չպիտի լինէր: Թեև մյուս

³² Պետրոս վրդ. Ճիզմէճեան, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 2, Հալէպ, 1957, էջ 415:

³³ Անդրանիկ վրդ. Կոանեան, Բառգիրք հայերէն լեզուի, Բեյրութ, 1970, էջ 148: Բառարանագիրը 1998-ի հրատարակության մեջ սկզբից ավելացրել է «թուրք դառնալ» իմաստը (տե՛ս էջ 145):

³⁴ Այդպէս է նաև նույնարմատ այլ բառերի պարագայում՝ **թրքահպատակ** – **թուրքահպատակ**, **թրքասեր** – **թուրքասեր**, **թրքավայել** – **թուրքահպատակ**, **թրքատեաց** – **թուրքատեաց** և այլն:

³⁵ Ճերէճեան Գնէլ արք., Տօնիկեան Փ. Կ., Հայոց լեզուի նոր բառարան, հատ. 1, Բեյրութ, 1992, էջ 710:

³⁶ Հմմտ. 1. ԹԲՔԱՆԱԼ – թրիք, աղբ դառնալ, 2. ԹԲՔԱՆԱԼ – 1. Թուրքանալ, թրքի կրոն ընդունել, 2. (նման.) կատաղել, սաստիկ զայրանալ (տե՛ս Գևորգյան Ե., Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Երևան, 1978, էջ 118):

կողմից էլ թվում է, թե այս բացատրությունն **թուրքանալ** բառահոդվածում դնելը կարող է արտալեզվական հոգեբանական գործոնի և անհատական ենթակայական ընկալման հետևանք լինել:

Քննարկվող բառերից միայն **թուրքանալ**-ն է տեղ գտել հայերենի հաճախականության բառարանում, այն էլ՝ 2-1 հաճախականություն ունեցող բառերի ցանկում³⁷:

Թուրքանալ-ն ունի նաև բառային տարբերակ՝ **տաճկանալ**: Բառակազմական հիմքը՝ **տաճիկ**-ը, բազմիմաստ է՝ «արաբական մի ցեղի անուն», «մահմեդական», «օսմանցի թուրք»: Վերջին երկու իմաստները հանդես են գալիս միջին հայերենի շրջանում կազմված **տաճկանալ** բայի մեջ՝ «մահմեդականություն ընդունել, հավատափոխ լինել, թուրքանալ»³⁸: Ակադեմիական բացատրական բառարանը ներկայացնում է իմաստային ավելի լայն շրջանակ՝ «1. տաճիկ՝ թուրք դառնալ, հավատափոխ լինելով թուրքանալ», 2. (փխբ.) «խիստ կատաղել, գազան դառնալ» (հ. 4, էջ 441):

Հունանալ-ը ակադեմիական բառարանում տրվել է **հույնանալ** «հույն դառնալ» (հ. 3, էջ 399)³⁹ ձևով: Սա վրիպակ չէ, քանի որ յ-ով են նաև պատճառականը՝ **հույնացնել** «հույն դարձնել», դրա կրավորականը՝ **հույնացվել**, բայանուն գոյականը՝ **հույնացում** «հույն դարձնելը, հույնացնելը»:

Հիշատակված բայերից **-ում** վերջածանցով կազմվել են բայանուն գոյականներ⁴⁰, ինչպես՝ **թուրքացում**, **տաճկացում**, **ռուսացում**, **պարսկացում**, **հունացում**, **գերմանացում** և այլն,

³⁷ **Ղազարյան Բ. Կ.**, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Երևան, 1982, էջ 271:

³⁸ **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, Միջին հայերենի բառարան, հ. Բ, Երևան, 1992, էջ 374:

³⁹ Է. Աղայանի բառարանում **հունանալ** է (էջ 910):

⁴⁰ **-Ում**-ը գործողության անուն՝ բայանուն կերտող ամենաարտադրողական ածանցն է (տե՛ս **Մաքսուդյան Լ. Ս.**, Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում, Երևան, 1984, էջ 23):

ու արձանագրվել բառարաններում: Մրանց իմաստային ընդգրկումը համանման է: Օրինակ՝ **պարսկացում**. գործողության անունը՝ «պարսկանալը», դրա պատճառականը՝ «պարսկացնելը», պատճառականի կրավորականը՝ «պարսկացվելը»: Այդպես էլ՝ **ռուսացում** «ռուսանալը, ռուսացնելը, ռուսացվելը» և այլն:

Միալեզվյան բառարաններում արձանագրված **իտալանալ** բառույթ չկա, սակայն արևմտահայերենի թարգմանական հայտնի մի բառարանում գլխաբառ է դարձել նրա պատճառականի ձևը՝ **իտալացնել** (to italianate)⁴¹, իսկ նույն բառարանագրի մեկ այլ բառարանի հայերեն մասում՝ նաև հարակատարի **իտալացած** ձևը՝ «ածական» նշումով⁴²:

2. Բառարանային գրանցում չունեցող բայերը

Հայերեն բառարաններում չեն արձանագրվել ազգային ինքնության փոփոխության նշանակիչ մի շարք բայեր՝ **աղբբեջանանալ**, **ալիխանալ**, **ամերիկանալ**, **անգլիանալ**, **աստրանալ**, **արաբանալ**, **բուլղարանալ**, **թաթարանալ**, **իսպանացած**, **հնդկանալ**, **հունգարանալ**, **մոնղոլանալ**, **չերքեզանալ**, **ռումինանալ**, **ֆրանսանալ** (15 միավոր), ավելի շատ, քան գրանցվածներն են: Այս բայերի հարացույցի առնվազն մեկ ձևի գործածությունը արևելահայերեն և արևմտահայերեն գրավոր խոսքում փաստված է: Համաբանության օրենքի հիման վրա անշուշտ կարող են կազմվել այս կարգի այլ բայեր ևս:

Ուշագրավ է, որ գործածվել են այդ բայերի առավելաբար հարակատար դերբայի ձևերը: Իսկ ինչո՞ւ հարակատար. որովհետև այս դերբայը «ցույց է տալիս կատարված, ավարտված գործողության կամ եղելության ընդհանուր

⁴¹ **Գույումճեան Մ. Կ.**, Ընդարձակ բառարան հայերեն անգլիերեն, Կահիրե, 1950, էջ 257:

⁴² **Գույումճեան Մ. Կ.**, Ընդարձակ բառարան անգլիերեն հայերեն, Կահիրե, 1961, էջ 730:

գաղափար՝ որոշ հետևանքով, իբրև գործողի կամ եղողի ժամանակավոր հատկանիշ»⁴³: Քանի որ խոսքաշարում հաճախ անդրադարձ է կատարվում ազգային ինքնության փոփոխությանը՝ որպես ավարտված գործողության, այդ իսկ պատճառով ավելի շատ հանդես է գալիս հարակատարի ձևը: Կարևոր է այն հանգամանքը, որ հարակատար դերբայի միջոցով ցույց է տրվում առարկայի (տվյալ դեպքում՝ անձի կամ հանրության) հատկանիշ: Այս առումով դերբայական այս ձևը, որպես վիճակային հատկանիշի արտահայտիչ, հարաբերակցում է ածականին:

Ազգային ինքնության փոփոխություն ցույց տվող բոլոր բայերի խոնարհման հարացույցներն առհասարակ լիակազմ չեն դրսևորվում:

Այսպես, ներկայացնենք բնագրային օրինակներ՝ «Այս հին հայության վերջին երկու-երեք սերունդներու մեծագույն մասը բոլորովին **ռուսիացած են** և մեզ համար կորսված» («Էջմիածին», թ. 7-9, 1948, էջ 68), [Մ. Պոտուրյանը] 1929-59-ին եղել է Տրանսիլվանիայի Ֆրոմոտասա (նախկին Սեպվիզ) ավանի **հունգարացած** հայերի հոգևոր առաջնորդը (Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, Երևան, 1983, էջ 389), «Այսօր, հարկավ, Բուլղարիայում պավլիկյաններ գոյություն չունեն, նրանք վերջնականապես **բուլղարացած են**» («Լրաբեր հասարակական գիտությունների», 1998, թ. 3, էջ 16), «**Արաբացած** եւ **ասորացած** կրօնափոխ եւ քրիստոնեայ հայերը Հ. Մոսկոֆեան» («21-րդ ԴԱՐ», թիվ 2 (42), 2012), «Մի կողմից՝ Օսմանեան թուրքը եւ միւս կողմից՝ Թաթարական հորդայի սրի տակ **թաթարացած** ռուսը գերեվարելով հային, նրա մէջ ներարկել են ամենից սոսկալին՝ վախը («168 ժամ», 14.11.2012), «Օր. Տամատեան **ֆրանսացած** է այլեւս» («Ժամանակ», 6.06.1912), «.... **ամերիկացած** հայերի ձայները

⁴³ **Աբրահամյան Ա. Ա.**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 193:

գողանալու համար խոստանային» («Առավոտ», 24.04.2013), Իսլամացած, քրտացած, թրքացած, արաբացած, **ալեհացած** հայերուն կողքին կաւելնան **չերքեզացած** հայերը (<https://horizonweekly.ca/am/81850-2/>, 3.03.2016), «Հազուագիտ անկարեւորները իսկական կարեւորներ կը դառնան, ըսաւ **հնդկացած** հայ կուրուն («Ազդակ», 15.01.2019):

Ինչպէս ցույց են տալիս վերոբերյալ նախադասութիւնները, հարակատարի ձևերը հիմնականում կապակցվում են **հայ** բառին (առավելաբար՝ նրա հոգնակիին), կամ նրանց գործածութիւնն առնչվում է հայերին: Երբեմն ազգային ինքնության փոփոխության նշանակող միևնույն բայը կարող է վերաբերել ինչպէս հայերին, այնպէս էլ ոչ հայերին: Հմմտ. «Ալ Ռաքքայում, որտեղ մեծ թվող **արաբացած հայեր** են ապրում, ընդամենը մեկ հայկական եկեղեցի կա» («Հայ զինվոր», 24-30.11.2011) և «Արաբական ցեղերի զանգվածային վերաբնակության հետևանքով [Լիբիայի] բնիկներն աստիճանաբար **արաբացան**» (Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երևան, 1978, էջ 608):

Հետաքրքրութիւն է ներկայացնում ազգային ինքնության փոփոխության մի աստիճան նշող «**շուռ տված հայ**» բառակապակցութիւնը, որը ցույց է տալիս հայաստանյան հանրութեան որոշ շրջանակների վերաբերմունքը հատկապէս հայրենիքից դուրս ապրող այն հայերի նկատմամբ, որոնք հաճախ ցուցադրաբար հրաժարվում են հայկական ավանդույթներից, խոսում են (էին) ռուսերեն կամ ռուսերենախառն հայերեն, իրենց հայկական ազգանունների –**յան** վերջածանցը փոխարինում օտար մասնիկներով և այլն: Օրինակ՝ «Եթե նրան ասես, թե մեր մոտավոր ու հեռավոր հարևաններն էլ ունեցել են այդ ամենը կամ այդ ամենից շատ ավելին, չի՛ հավատա կամ քեզ կհամարի, ինչպէս հիմա ասում են «**շուռ տված հայ**»» (Պ. Սևակ, «Ազգային սնապարծութիւն և ազգային արժանապատվութիւն»): Դիտարկենք այս խոսքաշարը, որտեղ «**շուռ տված հայ**» արտահայ-

տությունը հումորով գործածվել է սեփական անձի նկատմամբ. «Երիտասարդը մոտեցավ ինձ ու կոտրտված հայերենով հարցրեց. հայ ես: Պատասխանեցի՝ հայ եմ: Ծիծաղելով ասաց՝ ես ել **շուռ տված հայ** եմ: Այդպես ծանոթացանք: Նա Փարաջանովն էր» (<https://kinoashkharh.am/2015/01/>): Մյուս կողմից էլ այսպիսի գործածություն է ունենք՝ «Կրոնափոխ հայերին թուրքերը **«շուռ տված հայ»** են կոչում» (www.panorama.am/am/news/2009/11/18/armenians/1186096):

Հարակատարի որոշ ձևեր գործածվում են նաև ոչ ազգային ինքնության փոփոխության իմաստով, այլ ուրիշ՝ փոխաբերական նշանակությամբ: Հմտ. **մոնոլուգած** բառաձևը այս նախադասություններում. բուն իմաստով՝ «մոնոլոլ դարձած». «Հայերը իրանց կողքին նստած են տեսնում իրանցից մի քանի անգամ աւելի մեծ թուվ մոնոլոլներ և **մոնոլուգած** հայեր» («Արարատ», 1909, դեկտեմբեր, էջ 951) և դիպվածային իմաստով՝ «աչքերը նեղ բացած, կիսաբացած, շեղաչքի նման». «Բժշկուհին ուռած աչքին սառը թրջոցներ էր դնում: Կարճ բացատրեց՝ մեղու, պատուհանը, բզզոց: Եվ **մոնոլուգած** աչքով նայեց նրան» (Զ. Խալափյան, «Որտե՞ղ էիր, մարդ աստծո»):

Հանդիպում են **ադրբեջանանալ** բայի տարբեր կիրառություններ՝ ա) ենթակայական դերբայ, երբ ազգային ինքնության փոփոխությունն ընթացքի մեջ է. «Բաքվում կարծում են՝ **ադրբեջանացող** Դերբենդի գավթումը զուտ ժամանակի հարց է» («Հայ զինվոր», 7-13.08.2014), բ) հարակատար դերբայ, երբ գործընթացն ավարտված է. «Հայ-ադրբեջանական առաջին իսկ բախման դեպքում Բաքվի հայերը թիրախ կդառնան **ադրբեջանացած** կովկասյան թաթարների ժառանգների համար» (http://hayq.blogspot.com/2008/01/blog-post_16.html):

Ադրբեջանացած-ը գործածվում է նաև հայկական (Հայաստանի Հանրապետության և Արցախի) այն տարածքների առնչությամբ, որոնց հայ բնակչությունը դուրս է մղվել՝ փոխարինվելով ադրբեջանցիներով: Օրինակ՝ «Հոգը չէ, որ

մեր Զանգեզուրը քառասուն տոկոսով **աղբբեջանացած է**»⁴⁴ (Է. Հովհաննիսյան, Հոդվածների ժողովածու, Մյունխեն, 2009, էջ 96):

Երբեմն միևնույն խոսքաշարում գործածված են լինում ազգային ինքնության փոփոխություն, ցույց տվող այլ բայեր ևս, այդ թվում՝ **հայանալ**-ը: Այսպես՝ «Տեսա՝ ինչ է տեղի ունենում, Հայաստանն ու Մփյուռքը կապելով, ինչքան դարձ է տեղի ունենում՝ լրիվ օտարացած՝ **գերմանացած, ռուսացած, անգլիացած** հայ էրեխեքը ոնց են դառնում հայ, ոնց են կապվում էս երկրին... Տարեկան 800-1000 մարդ պարզապես **հայանում է**» («Առավոտ», 06.06.2018): Ակնհայտ է, որ խոսողը **անգլիացած** ձևը կազմել է հայերեն մյուս բայերի, իր մտքում գոյություն ունեցող բառակազմական կաղապարի հիման վրա, համաբանության օրենքով:

Նույն կերպ էլ հայերեն խոսողը կամ գրողը գործածել է գոյություն ունեցող կաղապարի հիման վրա կազմված վերածման որևէ բայ՝ անգամ չենթադրելով, որ հնարավոր է՝ այդ պահին ինքն է այն ստեղծում: Օրինակ՝ **թաթարացած** –ն այս խոսքաշարում. «Միայն թե երկիրն է՝ խեղված, ողորմելի մազապուրծ, **թաթարացած, թուրքացած, պարսկացած, ռուսացած**, բայց չի մեռել, քարշ է եկել...» («Չորրորդ իշխանություն», 26.02.2011):

Որոշակի դեր կարող է ունենալ թարգմանությունը: Օրինակ՝ «Նահանգներն **խապանացած**» բառակապակցությունը (Շառլ դը Կոստեր, «Ուլենշպիգելի և Լամմե Գուդգակի լեգենդը», գիրք երրորդ, մաս V, ֆրանսերենից թարգմանեց Վ. Միքայելյանը):

Վերածման այս բայերից գոյություն ունեցողների նմանակությամբ անհրաժեշտաբար կարող են կազմվել բայանուն

⁴⁴ Հարակատար դերբայը գործածվում է որպես՝ ա) որոշիչ և բ) ստորոգելիական վերադիր (տե՛ս **Աբրահամյան Ս. Գ.**, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1975, էջ 147):

գոյականներ: Ազգային ինքնության փոփոխության կամ վերածման իմաստ արտահայտող բայանուններ կարող են կազմվել՝ անտեսելով բայական բառույթի գոյության կամ չգոյության հանգամանքը: Այսպես, օրինակ՝ «Այդ փաստաթղթում շեշտը դրված էր **«ուկրաինացումը** ճիշտ ուղիով անցկացնելու» հարցերին» («Առավոտ», 25.11.2017): Ելակետային չվկայված **ուկրաինա՛նալ** բայի խոնարհված մի ձև հանդիպել է մեզ, սակայն չակերտները հուշում են, որ բայածերը դիպվածային է. «Բահմանյան անունը հետագայում **«ուկրաինացել է»** և ընդունել տարբեր ձևեր՝ Բահմատյուկ, Բահմետյուկ, Բահմիցկի, Բահմինսկի» («Պատմա-բանասիրական հանդես», 1986, թ. 3, էջ 33):

Անշուշտ կան դիպվածային այլ բառեր ևս, ինչպես՝ «Չէ, **«չինացած-շանհայացած»** Ս.Պ.-ի մասին չէ խոսքը» (www.irates.am/hy/1372720859):

Այսպիսով՝ վերածման այս տեսակի բայերի շրջանը փակ չէ, այն ըստ անհրաժեշտության կարող է ընդարձակվել. բառակազմական կաղապարի միջոցով կարող են ստեղծվել այլ բայեր: Եվ պարտադիր չէ, որ դրանք կապված լինեն հայության և հայ կյանքի հետ:

Հայանալ

Հայերենի զարգացման գրաբարյան փուլում **հայանալ** բայ չի վկայվել, այն չկա գրաբարի որևէ բառարանում: Նոր շրջանի կազմությունն է (ի դեպ, **հայ** բաղադրիչով մեծաթիվ կազմությունների մեջ բայերը հատուկենտ են. հմմտ. **հայաթափ(վ)ել**, հզվդ. **հայագործել**):

Հայանալ բայի առաջին վկայությունները XIX դարի կեսերից են: Գործածել են դասականները: Այսպես.

«Տերտե՛ր... խա՛չ և Ավետարա՛ն... - կրկնում էր իր մտքում զարմանալով: Այդ ի՞նչ բան է, երևի գծվել է մելիքը, կրկին **հայանալ** է ցանկանում...» (Բաֆֆի, «Դավիթ Բեկ»)՝⁴⁵:

- Ես Աբարանու ժամում, իմ տեր Մելիք Մնոյի, յուր կնոջ ու աղջկա առաջին կուգեմ **հայանալ** (Պ. Պոռշյան, «Եզիդի Մկրտիչենց տունը»)՝⁴⁶:

«Որքան էլ ցանկանամ նորից **հայանալ**, հայ լեզու սիրել, հայ կյանքով ապրել, այսուամենայնիվ անկարող եմ» (Մուրացյան, «Ինչ լայել է...»)՝⁴⁷:

«Գուցե դրանով էլ մեր մանուկներին մի բանով օգնած լինենք – **հայանալու** և մարդանալու» (Հովհ. Թումանյանի նամակը Փ. Վարդազարյանին, 19.04.1915)՝⁴⁸:

Բառարանային առաջին գրանցումները եղել են շատ ավելի ուշ՝ տասնամյակներ անց, այն էլ հայերենի թարգմանական բառարաններում: Արևելահայ իրականության մեջ **հայանալ**-ը գլխաբառ է դարձել 1911-ին Հ. Դադբաշյանի հայ-ռուսերեն բառարանում. թարգմանվել է обЪармянитЪся, այստեղ կա նաև բայի պատճառականը՝ **հայացնել** - обЪармянитЪ⁴⁹:

Արևմտահայ իրականության մեջ բառի առաջին արձանագրումը եղել է 1915-ին Գ. Լուսինյանի և Կ. Հ. Բասմաջյանի հայ-ֆրանսերեն բառարանում. թարգմանվել այսպես՝ s'arméniser, devenir arménien⁵⁰:

Միալեզվյան բառարաններից առաջինը **հայանալ**-ն արձանագրվել է Ստ. Մալխասյանցի բառարանում և օրինակ

⁴⁵ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1985, էջ 469:

⁴⁶ Պոռշյան Պ., Երկերի ժողովածու, հ. VI, Երևան, 1964, էջ 393:

⁴⁷ Մուրացյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1961, էջ 95:

⁴⁸ Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. X, Երևան, 1999, էջ 224:

⁴⁹ Դադբաշյան Յ., Լիակատար բառարան հայերենից ռուսերեն, էջ 425:

⁵⁰ Լուսինեան Գ., Բասմաջեան Կ. Յ., Առձեռն բառարան հայերեն աշխարհիկ լեզուէ ֆրանսերեն, Կ. Պոլիս, 1915, էջ 403:

դարձել բացատրական հետազա բառարանների համար: Ըստ Մալխասյանցի բառարանի՝ **հայանալ**-ը բազմիմաստ է:

Առաջին իմաստը՝ «հայ դառնալ, հայ լեզու՝ սովորություններն ընդունել»⁵¹: Բառիմաստի առաջին բաղադրիչը՝ «հայ դառնալ», վերածության նշանակության ցուցիչն է: «Իտալուհի է, բայց Երևանում երկար ժամանակ ապրելով բոլորովին հայացել է» ինքնահնար նախադասությունը վերաբերում է ձևակերպված իմաստի երկրորդ բաղադրիչին, որտեղ խոսքն ազգային ինքնության փոփոխության մասին չէ, այլ հայերեն խոսել կարողանալու և հայկական սովորություններն ընդունելու:

Երկրորդ իմաստը ռճական նշում ունի՝ «կրոն(ական)»՝ «Հայ եկեղեցում մկրտվել, քրիստոնեայ դառնալ»: Ինքնահնար նախադասությունը՝ «Աղջիկն ասաց. Եթէ նա կհայանայ՝ նրան կառնեն», լիարժեք դրսևորում է այդ իմաստը:

Ակադեմիական բացատրական բառարանը բայն այսպես է բացատրել՝ «1. Հայ դառնալ (լեզվով, հոգով և սովորություններով): 2. (կրոն.) Հայոց եկեղեցու դավանությունն ընդունելով մկրտվել հայոց եկեղեցում»⁵²: Ըստ Էդ. Աղայանի բառարանի՝ **հայանալ**-ը երեք իմաստ ունի, որոնցից մեկը փոխաբերական է համարվել: Այսպես. «1. Հայ դառնալ, հայի ազգություն ընդունել: 2. (կրոն.) Հայ եկեղեցում մկրտվել՝ քրիստոնյա դառնալ: 3. Փխբ. Հայի հատկանիշներ ձեռք բերել, բնավորությամբ ու նիստուկացով հայի նմանվել»⁵³:

Արևմտահայերենի գործնական բառարանում **հայանալ**-ը բացատրվում է «հայ դառնալ»⁵⁴, երկհատորյա բացա-

⁵¹ **Մալխասեանց Մտ.**, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. 3, էջ 36:

⁵² **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 3, Երևան, 1974, էջ 281:

⁵³ **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 810:

⁵⁴ **Անդրանիկ վրդ. Կռանեան**, Բառգիրք հայերեն լեզուի, Բեյրութ, 1970, էջ 236:

տրական բառարանը դրան մեկ իմաստ է ավելացնում՝ «Հայ Եկեղեցւոյ մէջ մկրտուիլ՝ քրիստոնեայ դառնալ»⁵⁵: Ուշագրավ է, որ այստեղ, ի տարբերություն հայաստանյան բառարանների, տրվում են նաև բայի հականիշները՝ «օտարանալ, այլասերիլ»:

Հայանալ բայը գրանցվել է հայերենի այլ բառարաններում նա: Հոմանիշների բառարանը տալիս է բառի հոմանիշները՝ **հայկանալ, մերազնանալ** (հնգ.)⁵⁶: Նույն հոմանիշներն են տրվում հոմանիշների բացատրական բառարանում, որտեղ բացատրվում է **մերազնանալ**-ը՝ «հայ դառնալ, հայի ազգությունն ընդունել»⁵⁷: Ուղղագրական ծավալուն բառարանում գրանցվել է **հայանալ**-ը⁵⁸, սակայն նրան հաջորդող ուղղագրական բառարանները այն անտեսել են:

Հայերենի միավեզվյան և թարգմանական բառարաններում **հայանալ** բայի հետ երբեմն գրանցվել են նաև նրա պատճառականը, հաճախ նաև նրանից բաղադրված բայանուն գոյականը: Բայի պատճառականը բնականաբար կազմվում է **-ացն**- մասնիկով՝ **հայացնել** (սա նշանակում է ոչ միայն «հայ դարձնել», այլև «հայկական դարձնել», ինչպես նաև «հայերեն դարձնել՝ հայերեն թարգմանել» հատկապես արևմտահայերենում), բայանուն գոյականը՝ **-ում** ածանցով՝ **հայացում**:

Հայանալ-ը ներառվել է նաև թարգմանական բառարանների բառացանկ: Այսպես. հայ-ռուսերեն ակադեմիական

⁵⁵ **Ճերեճեան Գնէլ արք., Տօնիկեան Փ. Կ.**, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Բեյրութ, 1992, էջ 1137: Պետրոս վրդ. Ճիզմեճեանի բառարանը **հայանալ** չունի:

⁵⁶ **Մուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 361:

⁵⁷ **Մուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009, էջ 581:

⁵⁸ **Բարսեղյան Հ. Խ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տեքմինաբանական բառարան, Երևան, 1973, էջ 538:

բառարան՝ **հայանալ** - 1. Обармяниться. 2. (կրոն.) Принять армяно-григорянское вероисповедание (ընդունել հայ-գրիգորյան դավանությունը), նաև **հայացնել** – арменизировать⁵⁹, հայ-վրացերեն բառարան՝ გასომცედა (գասոմխեფა)⁶⁰, հայ-ֆրանսերեն բառարան՝ **հայանալ** - s'arméniser, devenir Arménien (հայ դառնալ), նաև **հայացնել** – arméniser, **հայացում** – arménisation⁶¹, հայերեն-իսպաներեն բառարան՝ **հայանալ** - hacerse armenio (հայ դառնալ), adoptar las costumbres armenias (ընդունել հայկական սովորությունները), նաև **հայացնել** - armenizar, **հայացում** – armenización⁶²:

Ի տարբերություն վերածման շատ բայերի, որոնք սահմանափակ կիրառություն ունեն և բայական հարացույցի շատ քիչ ձևերով են հանդիպում, **հայանալ**-ը մամուլում, գիտական և գեղարվեստական գրականության ու հրապարակախոսության մեջ գործածվում է դիմավոր և անդեմ տարբեր ձևերով⁶³: Այսպես, դիմավոր ձևերից՝ սահմանական եղանակի անկատար անցյալ. «Տեղական ցեղերը, խոսելով հայերեն, աստիճանաբար ֆիզիկապես էլ ձուլվում էին հայերի հետ, **հայանում էին**, կորցնելով իրենց լեզուն» (Էդ. Աղայան, «Հայ լեզվաբանության պատմություն»), անցյալ կատարյալ. «Երեք սերունդ հետո, ընդունելով քրիստոնեություն և ամուսնանալով միայն հայ իշխանական տների զավակների հետ, ի վերջո **հայացան**» (Ա. Պետրոսյան, «Մոզ քաղաքի կործանումը»), վաղակատար ներկա. «Խեթ քրմերը

⁵⁹ **Հայ-ռուսերեն բառարան**, Երևան, 1987, էջ 387-388:

⁶⁰ **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Հայերեն-վրացերեն բառարան, բառարանը վերամշակեց, լրացրեց և հրատարակության պատրաստեց Մ. Ռոբաքիձեն, Թբիլիսի, 1996, էջ 178:

⁶¹ **Բարլեզիզյան Ա.**, Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երևան, 2009, էջ 518:

⁶² **Հ. Յ. Թեքեան**, Բառարան հայերեն-սպաներեն, Բուենոս Այրես, 1984, էջ 367:

⁶³ Մեզ համար իբրև շտեմարան ծառայել է Արևելահայերենի ազգային կոդուսը (www.eanc.net):

հայացել են և պատրաստ են ծառայելու մեր՝ հայերիս աստվածներին» (Ս. Խանգադյան, «Թագուհին հայոց»), ապակատար ներկա. «Զէի կարծում, որ Հայաստանում **հայանալու են**» («Ազգ», 25.07.2008) և այլն:

Հայանալ բայի անդեմ ձևերից հանդիպում են անկախ դերբայների տարբեր հոլովածներ: Այսպես՝ անորոշ դերբայի ուղղական. «**Հայանալը** էական չէ» («Առավոտ», 05.02.2004), սեռական. «**Հայանալու**, հայ ապրելու գլխավոր բանաձևը հայրենիքը տեսնելն է» («168 ժամ», 01.06.2015), արևմտահայ. «Փրկութիւնն ու բարօրութիւնը եւ բերկրութիւնը հայանալուն մէջ է» (Ն. Պեշիկթաշյան, «Ազդակ» (Բեյրութ), 2.03.1970), գործիական. «Աշակերտները իրենց յաղթանակը իրենց հետ փոխադրեցին իրենց տուները՝ քիչ մը եւս **հայանալով**» (<http://asbarez.com/arm/155103/>), ենթակայական. «Այդ միջցեղային լեզուն խոսակցական լեզու էր, դրանով խոսում էին ոչ միայն հայերը, այլ նաև **հայացող** ցեղերը» (Էդ. Աղայան, «Հայ լեզվաբանության պատմություն»), հարակատար. «**Հայացած** հրեաների թիվը մոտ 50 հազար է» («Հայկական ժամանակ», 26.06.2004) և այլն:

Հարակատարի ձևի մեջ հատկանշային իմաստն այնքան ուժեղ է, որ հանդիպում են նաև համեմատական **ավելի հայացած, է՛լ ավելի հայացած** ձևերը: Օրինակ՝ «Հայաստան այցելութեամբ **աւելի հայացած** փոքրիկները մեր համայնքի ապագայ ղեկավարներն են» («Հայրենիք», 22.10.2004):

Հայանալ բայից **վեր(ա)**- նախածանցով կազմվել է **վերահայանալ** բայը, որ նշանակում է «կրկին հայ դառնալ, վերադառնալ հայության», ինչպես նաև «հայկական՝ հայաբնակ դարձնել», ինքնության գաղափարից տարբեր է: Օրինակներ՝ «Չյաջողեցանք վերանորոգուիլ, վերածնիլ, **վերահայանալ**» (<http://asbarez.com/arm/128455/>. 23.04.2012), «Ազգային զարթոնք է սկսվել, նրանք ուզում են վերանայել իրենց ինքնությունը, **վերահայանալ**» (<http://nyut.am/?p=39840&l=am>).

12.08.2014), «Ազատագրվել է 1993 թ. աշնանը, **վերահայացել** 1995-ին» («Առավոտ», 26.06.2017):

Վերահայանալ-ը բառարանային գրանցում դեռևս չունի: Այս բայից կազմվել է **վերահայացում** բայանուն գոյականը, որը արձանագրվել է նորաբանությունների բառարանում⁶⁴:

Բառիմաստի առումով **վերահայանալ** բառին համեմատելի են **վերստին հայանալ**, **նորեն հայանալ** համարժեք բառակապակցությունները: Օրինակներ՝ «Նրանք հիմնեցին Սյունյաց Օրբելյանների տոհմը, որոնք ընդունեցին հայկական դավանանքը և **վերստին հայացան**» (Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, Երևան, 1981), «Արմիստիսեն վերջը **նորեն հայացավ**» (Ալ. Շիրվանզադե, «Հուշեր»):

Ինքնության փոփոխություն նշանակող վերածման բայերից մի քանիսն արտահայտում են «այս կամ այն կրոնի՝ դավանանքի հետևորդ դառնալ» իմաստը՝ **խալամանալ**, **կաթոլիկանալ**, **հեթանոսանալ**, **մահմեդականանալ**, **քրիստոնեանալ**: Հայության առնչությամբ պիտի ասել, որ կրոնական ինքնության փոփոխությանը որպես կանոն հաջորդում է ազգային ինքնության փոփոխությունը (**խալամանալ**, **մահմեդականանալ**) կամ դրանք հանդես են գալիս միահյուսված: Հավատափոխությունն ու դավանափոխությունը շատ հաճախ դյուրացնում են ազգային ինքնության փոխակերպումը (**կաթոլիկանալ**):

Եզրակացություններ

1. Ազգային ինքնության փոփոխության նշանակիչ բայեր (երեսուն միավոր) կազմվել են հայերենի զարգացման գրաբար շրջանից սկսած մինչև մեր օրերը: Այդ բառերը

⁶⁴ **Էլոյան Ս.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002, էջ 437:

գործածական են թե՛ արևելահայերենում և թե՛ արևմտահայերենում:

2. Վերածության իմաստը վերաբերում է՝

ա) ազգային ինքնությանը,

բ) կրոնական ինքնությանը,

գ) լեզվին,

դ) կենցաղին և սովորույթներին:

3. Ազգային ինքնության փոփոխության նշանակիչ բայերը գերազանցապես առնչվում են հայությանը:

4. Բառակազմական հիմք են դարձել՝

ա) Հայաստանի հարևան և հարակից երկրներում ապրող ազգերի ներկայացուցիչների անունները (**թուրքանալ, պարսկանալ, ռուսանալ, վրացանալ**),

բ) այն ազգերի անունները, որոնց երկրներում հայկական գաղութներ են եղել կամ այժմ էլ կան (**լեհանալ, ռումինանալ, հունգարանալ, ամերիկանալ** և այլն),

գ) **հայ** ինքնանվանումը (**հայանալ**),

դ) կրոնի, դավանանքի և նրանց հետևորդների անուններ (**քրիստոնեանալ, իսլամանալ, կաթոլիկանալ**),

5. Ինքնության փոփոխության նշանակիչ բայերը մենիմաստ են (**լեհանալ, քրդանալ, արաբանալ** և այլն) և բազմիմաստ (**հայանալ, պարսկանալ**՝ երկու իմաստ, **թուրքանալ**՝ հինգ-վեց իմաստ և այլն):

6. Վերածման որոշ բայեր ունեն տարբերակներ՝ **թուրքանալ / թրքանալ** (առավելաբար արևմտահայերեն) / **տաճկանալ, վրացանալ** – **վրացիանալ, ռուսանալ** – բրբ.-ժող. **ռսանալ**:

7. Հայերենի միալեզվյան և թարգմանական բառարաններում իբրև գլխաբառ արձանագրվել են ազգային ինքնության փոփոխության նշանակիչ **գերմանանալ, թ(ու)րքանալ, իտալացնել, լեհանալ, հայանալ, հրեանալ, հունանալ, պարթևանալ, պարսկանալ, ռուսանալ, վրացանալ, տաճկանալ, քրդանալ** բայերը, ամենից շատ՝ **հայանալ**-ը:

8. Բազմաթիվ բառեր տակավին բառարանագրված չեն՝ **անգլիանալ, ասորանալ, արաբանալ, բուլղարանալ, հունգարանալ, չերքեզանալ, ռումինանալ** և այլն: Դրանք ապագայում կարող են տեղ գտնել հայերենի էլեկտրոնային բառաշտեմաբաններում:

9. Ազգային ինքնության փոփոխության նշանակիչ բայերի շրջանակը բաց է. բառակազմական կաղապարի միջոցով կարող են կազմվել նոր (նույնիսկ անսպասելի) բառեր:

10. **Հայանալ** բայը գործածվում է դիմավոր և անդեմ տարբեր ձևերով, այնինչ ինքնության փոփոխության նշանակիչ բայերի նկատելի մասը սահմանափակ կիրառություն ունի կամ գործածվում է միայն հարակատարով:

Տե՛ս նաև **Դ. Գյուրջինյան, Ազգային ինքնության փոփոխություն նշանակող հայերեն բայերը, «Վէմ», 2019, թ. 4, էջ 161-181:**

ՀԱՅԱՍՏԵՐ ԵՎ ՀԱՅԱՏՅԱՅ ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Մուտք

Յուրաքանչյուր լեզու, այդ թվում և հայերենը (մասնավորապես բառապաշարը, նաև դարձվածային կազմն ու առածանին), յուրատեսակ մի շտեմարան է, որն ամբարում է լեզվակիր ժողովրդի աշխարհընկալումն ու իր գոյության ընթացքում կուտակած փորձը, սովորություններն ու ավանդույթները, հավատալիքները, մշակույթը, պատմությունն ու հոգեբանությունը, հարաբերություններն այլ ժողովուրդների հետ և բազմում այլ իրողություններ: Այսպիսով, լեզուն յուրատեսակ կուտակիչ է: Կուտակչականը լեզվի կարևոր գործառույթներից մեկն է (ի շարս մյուս՝ հաղորդակցական, անվանողական, արտահայտչական գործառույթների)¹:

Հայերենի բառապաշարը ցարդ քննվել է տարբեր տեսանկյուններից՝ ըստ ծագման, ժամանակագրության, կազմության, իմաստային դաշտերի, գործածականության, գործառական արժեքի, հուզարտահայտչական երանգավորման և այլն:

Հայերենի բառապաշարի շատ իրողություններ, սակայն, տակավին կարոտ են ուսումնասիրության, հատկապես նորովի լուսաբանմամբ: Մենք ձեռնամուխ ենք եղել հայերեն այն բառերի քննությանը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտացոլում են հայ ժողովրդի պատմության առանցքային իրողություններ և իրադարձություններ (կամ դրանց արձագանքն են), այլ կերպ ասած՝ փորձում ենք բացահայտել հայոց պատմության և հայ ժողովրդի պատմական ճակատագրի արտացոլումը հայերենի բառապաշա-

¹ Հմմտ. Աղայան Էդ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 2009, էջ 6-7:

րուս²: Այդ բառերը միաժամանակ հայոց պատմության տարբեր շրջանների և իրադարձությունների վերաբերյալ յուրատեսակ հաղորդիչներն են³:

Հազարամյակների պատմության ընթացքում հայերն ունեցել են դաշնակիցներ ու բարեկամներ, սակայն ավելի շատ՝ հակառակորդներ ու թշնամիներ: Հայոց լեզվում կազմվել և գործածվել են բառեր, որոնց միջոցով արտահայտվել է օտարների դրական կամ բացասական վերաբերմունքը հայերի նկատմամբ: Այդ բառերը, որպես կանոն, մտնում են **հայ** արմատի բառակազմական փնջի մեջ:

Դրական վերաբերմունք արտահայտող բառերից են՝ **հայամեծար, հայամեռ, հայանպաստ, հայանվեր, հայաշահ, հայապաշտ, հայապաշտպան, հայասեր** և այլն, բացասական վերաբերմունք արտահայտողներից՝ **հակահայ, հայադավ, հայազրկում, հայաթափ** (անել / լինել), **հայակեր, հայակործան, հայակուլ, հայահալած, հայամերժ, հայանախատ, հայանենգ, հայաջինջ** «հայերի բնաջնջմանը ձգտող»⁴, «հայերին՝ հայությանը ջնջող, հայերին ոչնչացնելուն ծառայող»⁵, **հայասպան / հայասպանություն, հայավնաս, հայատյաց**: Վերջիններս ակնհայտորեն գերազանցում են դրական վերաբերմունքի ցուցիչ բառերին: Այս բառերը, ի դեպ, հսկայական տեղեկատվություն են պարունակում ոչ միայն հայոց պատ-

² **Գյուրջինյան Ղ.**, Հայ ժողովրդի պատմական ճակատագիրն արտացոլող մի բառախմբի մասին (հայաքաղաք, հայավան, հայազյուղ, հայաթաղ, հայագաղութ), «Էջմիածին» հանդես, 2015, Բ, էջ 46-66:

³ Հմմտ. «Ժամանակակից հասարակությունների մշակութային մակարդակի վրա մարդիկ, սկզբունքորեն, բառը դիտում են որպես առարկայի մասին ինֆորմացիայի հաղորդիչ» (**Բրուսյան Գ. Ա.**, Փիլիսոփայություն և լեզու, Երևան, 1972, էջ 99):

⁴ **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 3, Երևան, 1974, էջ 281:

⁵ **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 810:

մությունից, այլև հոգեբանական որոշակի ազդակներ են հաղորդում:

Քննության առարկա ենք դարձրել հիշյալ կարգի բառերից ընդամենը երկուսը՝ **հայասեր** և **հայաստաց**: Ընտրությունը պատահական չէ. **հայասեր**-ը դրական վերաբերմունք արտահայտող բառերի խմբի (բառախմաստային խմբի կամ իմաստային դաշտի) միջուկային միավորն է, իսկ **հայաստաց**-ը, որ առաջինի հականիշն է, բացասական վերաբերմունք դրսևորող բառերի խմբի կենտրոնական միավորն է:

Հայասեր

Նախ անդրադառնանք դրական վերաբերմունք դրսևորող **հայասեր** բառին: Թեկուզ այն բանի համար, որ դրական վերաբերմունքի արտահայտիչ է, երկրորդ՝ այսպես կոչված «վերաբերմունքային» բառերի մեջ ժամանակագրորեն առաջինն է կազմվել, երրորդ՝ առավել հաճախական է և այլն:

Հայասեր բառն առաջին անգամ գրանցվել է Նոր հայկազյան բառարանում՝ «Որ սիրէ զհայս կամ զազգս հայոց» բացատրությամբ, որպես ածական և «Մեռաւ քաջն և յոյժ հայասերն» և «Հայասեր լինել» բնագրային վկայակոչումներով Վարդան պատմիչից⁶: Բնականաբար հայտնվել է նաև Առձեռն բառարանում՝ «Հայու ազգին վրայ սէր ունեցող» բացատրությամբ⁷: Այս բառը, սակայն, չի ընդգրկվել գրաբարի նորագույն բառարանում⁸, ամենայն հավանականությամբ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարդան Արևելցին ԺԳ դարի հեղինակ է: Եվ քանի որ այդ դարը միջին հայերենի գործառության շրջանի մեջ է մտնում, **հայասեր**-ը տեղ է գտել

⁶ **Հ. Գաբրիել Աւետիքեան, Խ. Նաչատուր Միսմէլեան, Խ. Մկրտիչ Ազգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Խ. Բ. Վենետիկ, 1837, էջ 30 (այսուհետև՝ ՆՀԲ):

⁷ **Առձեռն բառարան հայկազնեան լեզուի**, Բ տպ. Վենետիկ, 1865, էջ 468:

⁸ **Ղազարյան Ռ.Ս.**, Գրաբարի բառարան, Երևան, 2000:

միջին հայերենի բառարանում⁹: Անգամ այս պարագայում **հայասեր**-ը ժամանակագրական առումով առաջինն է հայերի նկատմամբ վերաբերմունք դրսևորող բառախմբում:

Բառը կազմվել է «արմատ+հոդակապ+արմատ» հիմնակաղապարով, որ սերում է «մաքուր» հիմքերով բարդություններ, ինչպես՝ **ազատախօս, գիշերապահ, տերեւաթափ, վնասաբեր**: Գործառական բեռնվածության տեսակետից V դարի հայերենում բառաբարդման կաղապարների մեջ սա բացարձակ գերակշռություն ունի¹⁰: «Գոյական+հոդակապ+բայարմատ» կաղապարով, մասնավորապես **սեր** վերջնաբաղադրիչով են կազմվել գրաբարյան հետևյալ բառերը՝ **աստուածասեր, աղքատասեր, ազգասեր, օտարասեր, յունասեր, տարբեր ենթակաղապարներով՝ առաքինասեր, կենսասեր, ընտանասեր, քրիստոսասեր** և այլն¹¹: Այսինքն՝ բառակազմորեն **հայասեր**-ը սերտորեն աղերսվում է ոսկեդարյան բառակազմական կաղապարին. նրա կազմության ժամանակ անշուշտ որոշակի դեր է խաղացել նաև նմանակության օրենքը:

Հայասեր-ը հանդիպում է XIX դարի հայերեն թարգմանական տարբեր բառարաններում: Այսպես (ներկայացնում

⁹ **Ղազարյան Ռ.Ս., Ավետիսյան Հ.Մ.**, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009, էջ 402: Ուշագրավ է, որ Վարդան Արևելցու «Պատմություն տիեզերական» աշխատության արևելահայերեն թարգմանիչ Գ. Բ. Թոսունյանը գրքի ներածության մեջ գրում է. «Նա իր գործերի մի մասը շարադրել է գուտ դասական գրաբարով, ինչպես՝ «Հաւաքումն պատմութեան»-ը («Տիեզերական պատմությունը»), մեկնությունները, ներբողները, ճառերը, շարականները, իսկ որոշ գործեր էլ («Ժղլանքը», գրույցները և այլն)՝ միջին հայերենով» (տե՛ս **Վարդան Արևելցի**, Պատմություն տիեզերական, Երևան, 2001, էջ 15): Ի դեպ, գրքի խմբագիրը վերոհիշյալ բառարանների հեղինակ և **հայասեր**-ը միջինհայերենյան կազմություն համարող Ռ.Ս.Ղազարյանն է:

¹⁰ **Հովսեփյան Լ. Ս.**, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 95:

¹¹ Առհասարակ բայարմատ վերջնաբաղադրիչով այսպիսի բարդությունները մեկնաբանվում են խնդրային հարաբերության միջոցով, ինչպես՝ **քրիստոսասեր** – «Քրիստոսին սիրող. աստվածասեր», ապա նոր «բարեպաշտ քրիստոնյա»:

ենք ժամանակագրական կարգով). **հայասեր** «որ սիրե զՀայս կամ զազգս Հայոց» - Armeno'filo; amatore della nazio'ne armena¹², **հայասեր** – αρμενόφιλος¹³, **հայասեր** – fond of Armenians, philarmene, **հայասիրութիւն** – philarmenia¹⁴, **հայասեր** – qui aime les Arméniens, philarméne, **հայասիրութիւն** – philarménie¹⁵, **հայասեր** – армянофилъ, **հայասիրական** – армянофильский, **հայասիրութիւն** – армянофильство¹⁶, **հայասեր** – philarméne, **հայասիրութիւն** – philarménie¹⁷: Ուստի զարմանալի է այն փաստը, որ **հայասեր**-ը, նրանից կազմված **հայասիրութիւն** և **հայասիրական** բառերը բացակայում են հայերենի կարևոր որոշ բառարանների բառացանկերից¹⁸:

Հայերենի նոր շրջանի բացատրական բառարանները **հայասեր** բառը¹⁹ բացատրում են այսպես. «Հայերին սիրող»²⁰,

¹² **Հ. Մանուկ վրդ. Ջախջախեան**, Բաղդիրք հայ եւ իտալական, Վենետիկ, 1837, էջ 829:

¹³ **Զօլագեան Տ. Ի. Խ.**, Նոր բառարան հայերենէ յունարէն, Կ. Պոլիս, 1868, էջ 142:

¹⁴ **Հ. Մատաթիա վրդ. Պետրոսեան**, Նոր բաղդիրք հայ-անգլիարէն, Վենետիկ, 1875, էջ 377:

¹⁵ **Լուսինեան Գ. Ա. Նար Պէյ**, Բաղդիրք հայ-գաղղիարէն, Փարիզ, 1881, էջ 516:

¹⁶ **Եաղուբեան Կ.**, Հայերեն-ռուսերէն բառարան, Թիֆլիս, 1891, էջ 221: Այստեղ **հայասեր**-ը նշվում է միայն իբրև գոյական:

¹⁷ **Կոմիտաս Ա Ոսկեան**, Առձեռն բառագիրք հայերեն-գաղղիերէն, Կ. Պոլիս, 1893, էջ 408:

¹⁸ Տես, օրինակ, **Գաբամաճեան Ս.**, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910: Այս բառարանում **հայ** սկզբնաբաղադրիչով արձանագրված միայն երկու բառ կա՝ **հայաբարբառ** և **հայադատան**: Մի թե սա քաղաքական ենթատեքստ ունի (միաժամանակ, սակայն, նկատենք, որ վերոհիշյալ թարգմանական բառարաններից երկուսը պոլսական, իհարկե ավելի վաղ, հրատարակություններ են):

¹⁹ Բառարանային գրանցում ունի նաև համանուն **հայասեր**-ը, որ բացատրվում է այսպես՝ «հայից սերված, հայածին, հայ» (**Գևորգյան Ե.**, Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Երևան, 1978, էջ 202-203): Սրանք երկրորդ բաղադրիչները տարբեր ծագում ունեն՝ **սիրել** և **սերել**:

«Հայերին սիրող, հայերին լավ վերաբերվող»²¹ «1. Հայերին սիրող, 2. Հայերի նկատմամբ սիրուց կատարված՝ տեղի ունեցած»²², «հայերը սիրող՝ գնահատող»²³, միայն որպես ածական: Նկատելի է, որ բառի իմաստային կառուցվածքում «հայերին սիրող» իմույթը պարտադիր բաղադրիչ է, որ բխում է անմիջական կազմիչների շարահյուսական հարաբերությունից:

Հետաքրքրական է, որ ներկայացված ոչ մի բացատրության մեջ չկա այն, ինչ սպասելի էր, և որը տեսնում ենք բառարաններից մեկում. «հայերը յարգող **օտարական**»²⁴ (ընդգծումը մերն է – Դ. Գ.)²⁵: Հարկ ենք համարում ասել, որ թեպետ այսպիսի բացատրությունը համապատասխանում է գոյականի արժեքին, այնուամենայնիվ բառարանում կրկին նշված է ածականի (միայն ածականի) արժեքը:

Առաջին կիրառությունների դեպքում բառը գործածվել է հենց օտարների կապակցությամբ: Ահա հայկազյան բառարանի երկու վկայակոչումների փոքր-ինչ ընդարձակ հատվածները Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» («Տիեզերական պատմութիւն») երկից. «Ի տոյն թուականի փոխի առ Քրիստոս պսակաւորն մեր Լեւոն, եւ առնու զթագն դուստր նորա միամօր, Եղիսաբեթ անուն, որ ըստ

²⁰ **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հ.3, Երևան, 1944, էջ 37: Նույնը՝ «հայերը սիրող» ձևակերպմամբ այստեղ՝ **Ճերէճեան Գնէլ աբբ.**, **Տօնիկեան Փ.Կ.**, Հայոց լեզուի նոր բառարան, հ.1, Բեյրութ, 1992, էջ 1137:

²¹ **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ.3, էջ 281:

²² **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 810:

²³ **Անդրանիկ վրդ. Կոսնյան**, Բառգիրք հայերէն լեզուի, Բեյրութ, 1998, էջ 236:

²⁴ **Տէր Խաչատուրեան Արտ., Գանգրունի Հ., Տօնիկեան Փ.Կ.**, Հայոց լեզուի նոր բառարան, Բեյրութ, 1968, էջ 407: Հեղինակներից երկուսը 1992-ի բառարանը կազմողներից են, սակայն այս բառի դեպքում բացատրությունը, ինչպես տեսանք, հետագայում փոխվել է:

²⁵ Այսուհետև բոլոր ընդգծումները մերն են:

Ֆռանգաց լեզուին Ջապիլ կոչի, ածեալ նմա այր գՖիլիպն գորդի տեառն Անտաքու, զամս երկու. եւ զի ատելի էր նմա ազգս Հայոց, եւ զիւրսն մանաւանդ պատուէր գՖռանգսն, երդմնագանց եղեալ ի յեղեալ ուխտէն հայադաւան եւ **հայասէր** լինել, վասն որոյ եւ զպատուական թագն եւ զպաղատն առաքէր ի տուն հօր իւրոյ» (գլուխ ԶԴ): «Ի հինգհարիւր իննսուն եւ չորս թուին Ջանգի ամիրայն էառ զՈւռհա. եւ զկնի երկուց ամաց էառ զնա Ջօսլինն, որ էր տէր նորա. եւ զկնի եօթանասուն աւուր սպանաւ ի Թուրքաց, որք եկին վերստին առին զքաղաքն, եւ մեռաւ քաջն եւ յոյժ **հայասէրն**. որում արար ողբս Գէորգ վարդապետն, որ հայրն էր խոստովանութեան նորա» (գլուխ ԶԳ):

Այժմ պարզենք, թե **հայասէր** բառն աշխարհաբարում ի՛նչ բառերի հետ է կապակցվում: Ըստ ԱՐԵՎԱԿ-ի²⁶ տվյալների (այստեղ **հայասէր** բառույթը հանդիպում է 188 համատեքստում)՝ **հայասէր**-ին կապակցվող բառերը հետաքրքրական պատկեր են ներկայացնում: Ուշագրավ է նաև խոսքային այն միջավայրը, որտեղ հանդես է գալիս հետազոտվող բառը:

Հայասէր բառն իբրև ածական գործածվում է անձ նշանակող գոյականների հետ (հասարակ և հատուկ), ինչպես՝ «ԱՄՆ-ի **հայասէր նախագահ** Ու. Ուիլսոնը հայկական վիճելի տարածքների նկատմամբ ԱՄՆ-ի մանդատային վերահսկողություն հաստատելու առաջարկով 1920 թ. հանդես էր եկել երկրի Կոնգրեսի առջև» («Ազգ», 04.07.2003): «Ոմանք օրվա թերթերն են կարդում ու վիճում միացյալ անկախ Հայաստանի մասին, որ հայերին տալիս է մեծ **հայասէր Վ. Վիլսոնը**» (Հ. Մկրտչյան, «Մի հայի պատմություն»):

²⁶ Տե՛ս **Արևելահայերենի ազգային կորպուս** (www.eanc.net) լեզվաբանական որոնողական համակարգը, որից մեծապես օգտվել ենք բնագրային համապատասխան օրինակներ քաղելիս:

Հայասեր բառի զարմանալի և բացառիկ գործածության ենք հանդիպում դասական արձակագիր Պ. Պռոշյանի «Կովածաղիկ» վեպում: Այստեղ հայասեր է դարձել Հիսուս Քրիստոսը. «... իսկ Արագածի գլխին է մեր սուրբ Լուսավորչի աղոթատեղին, որտեղ, ասում են, մինչև այսօր մի կանթեղն անպարան կախված է մշտավառ և անտեսանելի և հիշեցնում է **հայասեր Միածնին** յուր սիրելի Գրիգորի ձեռնամած այս կանթեղի տակից հայոց աշխարհի համար օրերով թափած արտասուքները»:

Հայասեր-ը գործածվում է նաև բացասական՝ «կեղծ հայասեր», նույնիսկ հակառակ՝ «հայատյաց» նշանակությամբ, սակայն միայն չակերտներում: Այսպես. «Միջոցը միննույն էր. հրավիրում էին մի քանի **«հայասեր»** հոետորներ – Ժոռես, Պրեսանես, Պելլտան, Պիեր Քիար...» (Շիրվանզադե, «Կյանքի բովից»), «.... ազգային օջախի ֆորպոստի կարգավիճակը աստիճանաբար ուղղվում է ինչ-որ տերիտորիայի (ինչպես **«հայասեր»** Զատուլինի նման տականքներն են արտահայտվում) վերածելուն...» («Հայկական ժամանակ», 18.11.2008):

Ոճական ուշագրավ կիրառություն է Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» վեպում վանեցի խանութպանի այս բնութագիրը. «**Կատաղի հայասեր** է Հաջի Մանուկոֆ էֆենդին, ինչպես իրեն սիրում է հորջորջել հենց ինքը՝ այդ **հայտնի հայասերը**»: **Կատաղի** բառի գործածությունը **հայասեր**-ի հետ անսովոր է և ծառայում է վերնում հիշված «կեղծ հայասեր» նշանակությունը դրսևորելու համար, սակայն հեզնական, անարգական երանգավորմամբ:

Փաստերը ցույց են տալիս, որ հայասեր են կոչվել սովորաբար օտարները: Սակայն բառի մի շարք գործածություններ, ինչպես վերը տեսանք, վկայում են, որ այն կարող է վերաբերել նաև հայերի: Իսկ ովքե՞ր են նրանք: Հայեր, որոնք ապրում են հայրենիքում և հայրենիքից դուրս, նշանավոր են կամ ոչ: Այսպես. «Ո՞չ ապաքեն այսչափ

անհավատներին ուղղության վերածողը **հայասեր** պատվելի Կիրակոսն էր» (Պ. Պոռշյան, «Սկիզբն երկանց»): «Եթե Արա Աբրահամյանի նման **հայասեր** գործիչներ շատ լինեին Ռուսաստանում, պատկերը կփոխվեր տեղի ազգային միջավայրում» («Ազգ», 27.07.2005): «....գեղարվեստական ղեկավարն էր **հայասեր** և ազգանվեր կինոգործիչ, մեծանուն ռեժիսոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հ. Մալյանը» («Ազգ», 19.09.2006): Մեր կարծիքով այս բառի նման գործածությունն արդարացված չէ²⁷:

Հայասեր բառով կարող են բնութագրվել ոչ միայն մարդիկ, այլև հասարակական շրջանակներ, պետություններ, նրանց քաղաքականությունը, այսինքն՝ ոչ անձինք, իրանիշ գոյականներ: Օրինակներ՝ «Սփյուռքի երբեմնի «մայրաքաղաք» Բեյրութում ապրիլի 24-ը համընդհանուր սուգ էր հայության և Լիբանանի **հայասեր** արաբ **շրջանակների** համար» («Ազգ», 27.04.2006), «...հայանպաստ ու **հայասեր քաղաքականությունը** ջերմ արձագանք ու հավանություն էր գտել փխրուն տիկնոջ հոգում» («Ազգ», 24.06.2003): «Ֆլորենցիայում կազմակերպում է իտալական **հայասեր** մի **կոմիտե**» («Ազգ», 05.02.2005), «Կար ժամանակ, երբ հայերը, աչքը Ֆրանսիայի բերանին, նրանից էին սպա-

²⁷ Այս առիթով արժե հիշել հետևյալ դեպքը: 1928-ին Բերիո թեմի առաջնորդարանը Քարեն Եփփեի հայանպաստ գործունեության 25-ամյակն է նշում Ազգային Հայկազյան մանկապարտեզի սրահում: Ճառախոսները դրվատում են դանիացի օրիորդի հայասիրությունը և հայությանը մատուցած ծառայությունները: Մեծ բարերարուհուն նվիրված գրքում կարդում ենք. «Քարեն Եփփե շնորհակալությեան իր խօսքին մեջ կը բողոքէ իրեն ուղղուած «հայասեր» որակումին դեմ, կ'արտահայտէ վիրավորանքը ստոր համար ու կ'ըսէ.

- **Հայը հայասեր չի կրնար ըլլա, այլ՝ ազգասեր:** Ես ազգասեր հայ մըն եմ եւ ինչ որ կատարած եմ ու կը կատարեմ ազգասիրական մղումով կ'ընեմ ու ոչ արժանի, ուրեմն, արտայայտուած երախտագիտական զգացումներուն» (**Չոլաքեան Յ.**, Քարեն Եփփե: Հայ գողգոթային եւ վերածնունդին հետ, Հալեպ, 2001, էջ 137-138):

սում իրենց ազատությունը և «միակ **հայասեր» պետություն** էին համարում» (Լեո Կամսար, «Կարմիր օրեր»): Գործածվում է նաև պետության անվան հետ: Օրինակ՝ «Նույնիսկ **հայասեր Ֆրանսիայի** իշխանության մարմիններում 2000-01 թթ. ոմանք զգուշացրել էին, որ ցեղասպանության ճանաչմանը Թուրքիան կարող է պատասխանել առևտրական պատժամիջոցներով» («Ազգ», 08.06.2003):

Իսկ ահա բառի չակերտավոր կիրառությունը բացասական երանգավորում ունի՝ «... **«հայասեր»**, «քրիստոնեասեր» Եվրոպան, միսիոներական կազմակերպություններ ստեղծելով Արևմտյան Հայաստանում, խարխլում էր հայ ժողովրդի հոգևոր միասնությունը» (www.akunq.net/am/?p=30509):

Հեզնական երանգավորում ունի նաև **հույժ հայասեր** անսովոր բառակապակցությունը (հմմտ. չարենցյան **կատաղի հայրենասեր**-ի հետ). «...այդ **հույժ հայասեր** երկրի ներկայացուցիչները զգուշացրել են գաղտնի պահել իրենց անունը» (www.armtimes.com/hy/read/58710):

Հայասեր բառի կապակցելիական առանձնահատկություններից է այն, որ հաճախ **մեծ** լրացումն է ստանում: Մենք այնքան քիչ բարեկամներ ենք ունեցել, որ հայության խնդիրներով հետաքրքրված (ու հետաքրքրվող) պետական, քաղաքական գործիչներին, հոգևորականներին, գիտնականներին և մտավորականներին առհասարակ, հայերի նկատմամբ ջերմ, մարդկային վերաբերմունք, հոգածություն դրսևորած մարդկանց **հայասեր** բառով բնութագրելիս առանց երկմտելու նրանից առաջ դնում ենք **մեծ** ածականը: Եվ **մեծ հայասեր** բառակապակցությունը հաճախադեպ է, հիմնականում արդարացված: Այսպես՝ «**մեծ հայասեր** Լորդ Բրայս» («Հայրենիքի ձայն», 11.11.1987), «**մեծ հայասեր** Յոհաննես Լեփսիուս» («Ազգ», 12.12.2003), «**մեծ հայասեր** Ֆրանց Վերֆել» («Առավոտ», 11.11.2004), «...ի դեպ, այս **մեծ հայասերի** մասին այս տարի պատրաստվեց ևս մեկ ուշագրավ աշխատանք՝ «Արմին Վեզներ. Ցեղասպանության լուսա-

նկարիչ» վավերագրական ֆիլմը» («Ազգ», 16.12.2005), «**մեծ հայասեր** Ֆրիտյոֆ Նանսեն» («Առավոտ», 16.08.2007), «Էստոնացի **մեծ հայասեր** Հեդվիգ Բյուլ» («Ազգ», 28.05.2005)²⁸ և այլն:

Այս մեծարումն անշուշտ միայն սակավաթիվ բարեկամներ ունենալու հանգամանքով չի բացատրվում, այլև հայերի կողմից դրսևորվող երախտագիտության զգացումի²⁹:

²⁸ Զարմանալի է, սակայն, որ «մեծ» ածականով մեծարված որոշ գործիչների անուններ քաջածանոթ չեն հայ հանրությանը, ումանց անունները չկան «Հայկական սովետական հանրագիտարանում»:

Օտնոթանանք հետևյալ լուրին. «Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին Նորվեգիայի հայ համայնքից, Օս քաղաքի բնագիտական համալսարանում կկայանա **մեծ հայասեր** և մարդասեր, նորվեգացի միսիոներ Բուդիլ Բյորնի մասին «Ինձ կոչում են մայրիկ» փաստավավերագրական ֆիլմի ցուցադրությունը» (<http://armenpress.am/arm/news/716415/>): Կամ՝ «Անցած տարվա մայիսին նորվեգական Քրագերո քաղաքի կենտրոնական հրապարակում կանգնեցվեց նորվեգացի միսիոներ և **մեծ հայասեր** Քաթարինա Բուդիլի դիմաքանդակ-հուշարձանը» (Ազգ, 18.08.2005):

Հիշյալ մոտեցումը մասամբ հաղթահարվել է Հեդվիգ Բյուլի պարագայում. նրա մասին հոդված է գետեղվել «Հայկական համառոտ հանրագիտարանում» (տե՛ս հ. 1, Երևան, 1990, էջ 542): Պարզ է, որ **մեծ** պատվանունը տեղին է: Ահա Բյուլի գործունեության համառոտ ուրվագիծը. Ադանայի 1909-ի ջարդերից հետո Բյուլը մեկնել է Կիլիկիա և նվիրվել հայ որբերի կրթությանն ու դաստիարակությանը: Բարեգործական եռանդուն գործունեություն է ծավալել հատկապես Մեծ եղեռնի տարիներին և նրանից հետո. 1922-ին Հալեպում հայ գաղթականների համար բացել է հիվանդանոց, երեխաների համար՝ հայկական դպրոցներ, հիմնել ջուլիականոց, որտեղ աշխատել են 500 հայ կանայք և աղջիկներ: Հայերը նրան պարգևատրեցին **միսս Բյուլ մայրիկ** էին անվանում:

²⁹ Մեկ օրինակ միայն: Երախտագետ հայերը 1947-ին Հալեպում հիմնված ազգային ճեմարանը կոչել են դանիացի հայասեր բարերարուհու՝ Քարեն Եփփեի (1876, Յուսուֆնդիա, Դանիա-1935, Հալեպ) անունով (արևելահայերեն գրավոր խոսքում հանդիպում է նաև Կարեն Եպպե ձևով): Կանգնեցվել է հայերին իր կյանքը նվիրած օրիորդի հիշատակը հավերժացնող հուշաքար՝ «Հայերի մայրը» մակագրությամբ: Քարեն Եփփեի գերեզմանի հողով սափոր է փոխադրվել Երևան և գետեղվել Հայոց ցեղասպանության հուշահամալիրի Հիշատակի պատի մեջ (Օիժեռնակաբերդում):

Հմտ. «Մենք ազգովին հարգանքի երկրպագություն ունինք մատուցանելու Ալֆրեդ Տերմենին՝ նախ իբրև հայասերի և հետո իբրև մարդասերի» (Վ. Թոթովենց, «Ալֆրեդ Տերմեն»):

Որոշ դեպքերում **մեծ հայասեր**-ը, իբրև լեզվական կառույց, մամուլի լեզվին բնորոշ կադապարայնության դրսևորում կարելի է համարել³⁰: Հմտ. «....պարոն Խորենի գլխավերևում Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի մեծադիր նկարն է, որ **հաճախ տպում են մեր թերթերը «Մեծ հայասերը» մակագրությամբ** » (Հ. Մկրտչյան, «Մի հայի պատմություն»):

Մամուլի լեզվին բնորոշ այս բառակապակցությունը գործածվում է նաև հրապարակագրության մեջ, ինչպես և գեղարվեստական ու գիտական գրականության մեջ: Այսպես՝ **«Մեծ հայասեր** Ֆրանսի այս խոսքերը վերաբերում էին դեռևս քսանհինգամյա երիտասարդի այդ օրվա դասախոսությանը միայն» (Ս. Կապուտիկյան, «Հրապարակագրություն»): «Նոր փոխարքա Վորոնցով-Դաշկովը **«մեծ հայասերի»** անուն էր վաստակել հայերի շրջանում» (Ա. Սահինյան, «Ծարավ»): «Յոհաննես Լեփսիուսով սկիզբ առավ այն **մեծ հայասերների** շարքը, որոնք ցեղասպանությանը

Քարեն Եփփեն արժանի էր այդ ամենին, քանի որ մինչև մահը նվիրված է եղել ցեղասպանությունից փրկված հայ գաղթականների օգնության գործին: Առաջին աշխարհամարտից հետո մեկնելով Հալեպ՝ զբաղվել է առևանգված հայ կանանց և երեխաներին վերադարձնելու գործով: Նրան հաջողվել է մահմեդական գերությունից ազատել մոտ 2 հազար հայուհիների:

Հիրավի մեծ հայասեր, որին նվիրված առանձին բառահոդվածներ, ցավոք, կրկին չկան հայկական հանրագիտարաններում:

³⁰ Ահա լրագրային տեղեկատվության վերնագիր՝ «Վախճանվեց **մեծ հայասերը**՝ Յիրմի Նոսեկը» («Ազգ», 15.03.2005): Չէի նկարիչ Յիրմի Նոսեկը, 1965-ից սկսած՝ հայկական թեմատիկայով հարյուրավոր կտավներ է ստեղծել, զբաղվել հայկական մշակույթի քարոզչությամբ: Հարց է ծագում. ո՞րն է հայերի և Հայաստանի բարեկամ գործչին, արվեստագետին կամ գիտնականին **մեծ հայասեր** կոչելու չափանիշը:

հաջորդած տարիներին հայ ժողովրդին ցուցաբերած անմնացորդ և անշահախնդիր օգնության համար արժանացան հայ ժողովրդի անկեղծ սիրուն և համակրանքին» (Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը գերմանահայկական ընկերության 100-ամյակին նվիրված ակադեմիական սիմպոզիումի առիթով), «Սուրբերին հրաժարվեց ընդունել բրիտանական **հայասերների** ներկայացուցիչներին Վեստմինստերի դուքսի գլխավորությամբ» (Ա. Կիրակոսյան, «Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը») և այլն:

Մեծ հայասեր–ի նման հաճախադեպ չէ **ջերմ հայասեր** բառակապակցությունը: Օրինակներ՝ «Պոլ Դեշանելը՝ ֆրանսիական պատգամավորների պալատի նախագահը, **ջերմ հայասեր** է և ամեն մի միտինգում ճառեր է արտասանում, թե հայերը Թուրքիայում անպատճառ ազատություն պիտի ստանան» (Լեո, «Անցյալից»): «Խստապահանջ եւ վերապահ իբրեւ գիտնական, եղած է սակայն **ջերմ հայասեր** եւ մասնակցած ամեն տեսակ հայանպաստ կազմակերպութիւններու» (<http://dictionnaires-machtotz.org>. խոսքն Անտուան Մեյեի մասին է – Դ. Գ.): Այս բառակապակցությունը կարող է **մեծ հայասեր**–ի «բեռը թեթևացնել»՝ նպաստելով **հայասեր**–ի կապակցելիության հնարավորությունների ընդլայնմանը: Անշուշտ նաև օգտակար կլինի հայանպաստ գործունեության գնահատման, ինչպես և տարբերակման հարցում:

Նկատելի է, որ խոսքում **հայասեր** բառի հետ **և /ու** համադասական շաղկապներով կապվում է **մարդասեր**–ը կամ նրա օտար համարժեք **հումանիստ**–ը³¹: Ընդ որում

³¹ Հայկական հանրագիտարանները օտարագրի հայասեր գործիչներին ներկայացնելիս որպես կանոն գործածում են միայն **հումանիստ (մարդասեր)** բառը. **հայասեր**–ը չի հանդիպում: Այսպես, անկախության շրջանում հրատարակված «Հայկական հարց» հանրագիտարան (Երևան, 1996). «Վերջիլ Ֆրանց Վիկտոր (1890-1945), ավստրիացի գրող, հումանիստ» (Էջ 435), «Նանսեն Ֆրիտյոֆ (1861-1930), նորվեգացի գիտնական, բնեռախույզ,

էական չէ, թե դրանցից ո՛րն է առաջինը դրվում: Հմմտ. «1915 թ. Հայոց ցեղասպանության ժամանակ մեծ **մարդասեր և հայասեր** Ալմա Յուհանսոնը շվեդական եկեղեցու միսիոներ էր Արևմտյան Հայաստանում» («Նոյան տապան», 12.07.2006), «Վերջինիս հարևանությամբ են ամփոփված Շուբերտի, Բեթհովենի, Շոքրատուի, Բրամսի, մեծ **հայասեր և հումանիստ** Ֆրանց Վերֆելի, Ավստրիայի 7 նախագահների աճյունները» («Առավոտ», 25.11.2006), «.... գիտական քննության է ենթարկված և լուսաբանված մեծ **հումանիստի և հայասերի**, նրա կողմից ստեղծված «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության հայանվեր գործունեությունը» («Հայկական ժամանակ», 29.01.2003):

Հայասեր-ի և մարդասեր-ի սերտ առնչակցությունն առանձին բացատրության կարիք չունի, քանի որ հայասիրությունը հաճախ ուղղակի մարդասիրության ծնունդ է, նրա բնական և օրինաչափ մի դրսևորումը: Ահա խոստուն մի օրինակ՝ «Անիկա **մարդասեր** էր և չէր կարող **հայասեր** չլլալ....» (Վ. Թոթովենց, «Ալֆրեդ Տերմեն»): Այս պարագայում տրամաբանական է **կամ** շաղկապի գործածությունը ևս. «Երբե՞ն ի վեր **հայասեր կամ մարդասեր** դարձած եք» («Երևան», 12.05.1947): Այս երկու բառերին առնչակից է **այլասեր-ը**. չէ՞ որ օտարազգի հայասերն ի վերջո այլասեր է:

Ակներև է, որ ինչպես **մեծ հայասեր**, այնպես էլ **մարդասեր և հայասեր** կոչվող մարդիկ բացառապես օտարներ են: Բոլորովին պատահական չէ, որ **հայասեր-ի** հետ

օվկիանոսագետ, հումանիստ, հասարակական գործիչ» (էջ 353): Հայասերներից ոմանք ներկայացվում են իբրև միսիոներ. «Լեփսիուս Յոհաննես (1858-1926), գերմանացի հասարակական գործիչ, միսիոներ» (էջ 159), «Յակոբսեն Մարիա (1882-1960), դանիացի միսիոներուհի» (էջ 347): Այս մոտեցումը թերևս որդեգրվել է ավելի վաղ հրատարակված «Հայկական սովետական հանրագիտարանի» ազդեցությամբ: Ուստի կարելի է եզրակացնել, որ **հայասեր-ը** հանրագիտարանային բառ չի դիտվել:

շարահյուսական կապի մեջ է մտնում «որևէ տեղացի», «այս կամ այն ազգի ներկայացուցիչ» նշանակությամբ որևէ բառ:

Նախադաս գործածության դեպքում **հայասեր**-ը ածական է, ինչպես՝ «- Քանի ես կամ,- ասել էր **հայասեր** ու քաջ հայախոս, մեծահոգի **քուրդը**, - մոկացի ոչ մի հայի քիթը չի արյունի...» (Մ. Խերանյան, «Ձայն տուր, ով ծովակ»), «Այդքան **հայասեր վրացու** դեռ չէի հանդիպել» («Ազգ», 22.12.2007): Հետագայ գործածության դեպքում **հայասեր**-ը գոյական է, ինչպես՝ «Գիրքը ամենայն մանրամասնությամբ անդրադառնում է **գերմանացի** մեծ **հայասերի** գործունեությանը» («Ազգ», 03.04.2006), «Այսպիսին էր **շվեյցարացի հայասերների** պատմությունը» («Ազգ», 01.09.2007):

Կամ էլ որևէ տեղացի կամ որևէ ազգի ներկայացուցիչ նշանակող բառը դրվում է **հայասեր**-ի վրա, և երկուսը միասին լրացնում են մեկ այլ բառի. «...ներկայությամբ և հավանութեամբ **ամերիկացի հայասեր ծերակուտականներու և բարեկամներու**» («Երևան», 06.06.1947):

Ինչպես տեսանք, **հայասեր** բառը ժամանակի ընթացքում ձեռք է բերել նաև գոյականի նշանակություն՝ դառնալով երկարժեք (թեպետ հայերենի բացատրական բառարանները դա չեն արձանագրել): Վերոբերյալ, ինչպես և այս խոսքաշարերում բառն աներկբա գոյականի արժեք ունի. «Հայ մեծ բարերար և ազգային գործիչ Պողոս Նուպար փաշան հատուկ շնորհակալություն հայտնեց մեծ **հայասերին**» («Ազգ», 05.05.2006), «... մեծ **հայասերներ** Յ. Լեփսիուսի, Հ. Մորգենթաուի, Ֆ. Վերֆելի, Ֆ. Նանսենի և մյուսների հուշաքարերի բացումը թանգարանում» («Ազգ», 17.05.2005):

Որոշ դեպքերում խոսքիմասային արժեքի շուրջ կարող է տարակարծություն լինել: Այսպես, օրինակ. «Շիրակի ջրանցքի բացմանը հյուր եկած մեծ գիտնական ու **հայասեր** Ֆրիտյոֆ Նանսենն ասել է, թե այն ժողովուրդը, որը կանգնած էր անհետանալու և ՊԱՏՄԱԿԱՆ ժողովուրդ դառնալու

վտանգի առջև, ԱՅԺՄ ՋՐՈՒՄ Է ԻՐ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉ ԾԱՌԸ » (Գ. Էմին, «Յոթ երգ Հայաստանի մասին»):

Հայասեր-ը շատ հաճախ գործածվում է նաև օտար հայազետների պարագայում. հաճախադեպ է մասնավորապես **հայազետ և հայասեր** կապակցությունը, ինչպես՝ ««Նախահավերժի ծնունդը» հրապարակումը պատմում է լեհ **հայազետ ու հայասեր** Բոգդան Գեմբարսկու և առ Հայաստանն ու Հայկական լեռնաշխարհը նրա սիրո մասին» («Ազգ», 16.05.2007): «Հաճախ էր հիշում հատկապես Մարկվարտին, որին անվանում էր **և՛ հայազետ, և՛ հայասեր**» (Ռ. Զարյան, «Հուշապատում»):

Թվում է, թե ներկայումս հաղթահարվում է հայերիս մեջ արմատացած այն միամիտ պատկերացումը, որ եթե մի օտարազգի հայազետ է, ապա անպայման հայասեր պետք է լինի: Նույնիսկ պարզունակ մտայնություն կա, թե հայազետները լինում են երկու տեսակ՝ հայասեր և թրքասեր:

Իսկ այն դեպքում, երբ **հայասեր** բառով բնութագրվող մարդիկ հայեր են, հաճախ նրան նույն ձևով կապվում է **հայրենասեր**-ը, երկու շարադասությամբ էլ: Հանդես է գալիս գերազանցապես **ու** շաղկապը: Օրինակներ՝ «Այդ օտարամուկները, նկատի ունեմ խանութպանները, պակաս **հայասեր ու հայրենասեր** չեն» («Երեկոյան Երևան», 30.01.1996), «....որը պատից չի բերում **հայասեր ու հայրենասեր** ոչ մի հայ մարդու» («Իրավունք», 15.01.2003), «....նրա ինքնահաստատումը պահանջում է ակտիվ, լայնախոհ **հայրենասեր ու հայասեր** մարդկանց» («Իրավունք», 10.09.2003): Պատկերը գրեթե նույնն է այստեղ. «.... ինչ լավն են իրենք, ինչքան հոգատար են մեր հանդեպ, **հայրենասեր** են անմնացորդ, իսկ **հայասեր**՝ ամբողջ էությամբ» («Ազգ», 30.03.2007):

Ուշագրավ է **հայասեր-ազգասեր** զուգադրումը (մերձիմաստ բառերի զուգադրումը սովորական է հայերենի բառակազմության մեջ): 1881-ին Երևանում գաղտնի հիմնվել է «**Հայասեր-ազգասեր**» անունով հայրենասիրական խմբակ-

ցություն, որի անդամների նկատմամբ դատ է հարուցվել 1883-ին³²:

Կարելի է ասել, որ այդ շրջանից սկսած՝ **հայասեր**-ը քաղաքական խոսույթին բնորոշ միավոր է դարձել: Իսկ լիովին այդպիսին է դարձել հատկապես հայկական հարցի միջազգայնացումից և XIX դ. վերջի հայկական զանգվածային կոտորածներից ու հատկապես 1915-1923 թթ. հայոց ցեղասպանությունից հետո:

Վերոհիշյալ բառերը խոսքում հանդիպում են նաև ազատ կապակցությամբ. «Եթե մենք իսկական **ազգասերներ, հայասերներ** կփնտրենք, ահա սոքա են» (Ռ. Պատկանյան, «Հուշեր»), «Հայաստանի քաղաքական ուժերի հետ նման հանդիպումներ են ունենում իրանական դեսպանատան աշխատակիցները՝ համոզելով մեր քաղաքական գործիչներին լինել **ազգասեր** և **հայասեր**» (www.armtimes.com/hy/read/58710):

Հայասիրության հատկանիշը «չափելի է», և **հայասեր**-ին լրացնում են չափ ցույց տվող բառեր՝ **չափազանց, շատ, այդքան**: Այսպես՝ «Այդ ինչպե՞ս է, որ պարոն Ռուբենյանը, **այդքան հայասեր** մարդ, համաձայնվել է օտար հարս բերել» (Ս. Կապուտիկյան, «Գույներ նույն խճանկարից»), «Նորընտիր պապը **շատ հայասեր** է, լավ գիտի մեր եկեղեցու պատմությունը և մեծ հարգանք ունի Հայ եկեղեցու, Սուրբ Էջմիածնի նկատմամբ» («Ազգ», 22.04.2005), «Նա ապրել է տարբեր քաղաքներում և **չափազանց հայասեր**³³ էր» («Իրավունք», 12.02.2003):

³² Սա առաջին քաղաքական դատն է Երևանում. անդամները մեղադրվել են պետական հանցագործության մեջ (**Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 3, Երևան, 1977, էջ 306 («Դատական գործ 1883» բառահոդվածը), հ. 6, Երևան, 1980, էջ 134 («Հայասեր-ազգասեր» բառահոդվածը):

³³ «Չափազանց հայասեր» իմաստը դրսևորելու համար հայերենում ստեղծվել է **հայապաշտ** բառը, որ հոմանիշ է **հայասեր**-ին (տե՛ս Մուքիսայան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009, էջ

Ուշադրության արժանի է այն իրողությունը, որ տարբեր խոսքաշարերում հայասեր բնութագրված մարդը, հայ լինի թե օտար, սովորաբար դրական հատկանիշներով է օժտված: Հմմտ. «**ազնիվ և հայասեր** երիտասարդ» (Ռ. Պատկանյան, «Հուշեր»), «**առաքինի և հայասեր** Շանշյանց» (Պ. Պոռոշյան, «Սկիզբն երկանց»), «**խիզախ մտավորականը, մարդասերն ու հայասերը**» («Ազգ», 22.07.2005):

XX դարում **հայասեր**-ը դարձել է տղամարդու անձնանուն³⁴, այսինքն՝ բառի ներկարգային տարարժեքություն է ձևավորվել՝ հասարակ և հատուկ հակադրությամբ:

Հայասեր-ը XIX դարի 60-ականների հայկական մամուլում կիրառվել է նաև որպես կեղծանուն՝ **Հայասեր** (Խոբեն Ստեփաննե) – «Հայկական աշխարհ» (Թիֆլիս), **Հայասեր գաղղիացի** – «Խնդիր միութեան Հայոց» (Փարիզ)³⁵:

Հայատյաց

Հայասեր բառի հականիշը **հայատյաց**-ն է³⁶, և նրանց հանդիպադրված գործածությունը նույն խոսքաշարում բնական է, թեպետ ոչ հաճախադեպ: Այսպես. «Հոլովում էին եվրոպական այս կամ այն պետական գործչի անունը իբրև **«հայասերի»** կամ **«հայատյացի»**» (Ա. Սահինյան, «Ծարավ»):

582). նրան զիջում է հաճախականությամբ: Իմաստային այլ նրբերանգ ունի մյուս հոմանիշը՝ **հայամեծար**-ը:

³⁴ **Հայասեր** անունն ունեցողներից մեկը Արցախյան պատերազմի մասնակից Հայասեր Շահենի Հայրապետյանն է, որը գոհվել է 1992-ի սեպտեմբերի 7-ին Սոս գյուղի պաշտպանության ժամանակ (www.arlis.am): Արցախյան պատերազմում գոհվել են Հայասեր Հակոբյանի Արամ և Համլետ որդիները, Հայասեր Սուրենի Ղալայանը, Հայասեր Սարոյի Ասրյանը (<http://hy.wikipedia.org>): Սա ուշադրության արժանի մի իրողություն է:

³⁵ **Հովակիմյան Բ. Մ.**, Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 238:

³⁶ Ի դեպ, Մալխասյանցի բառարանը **հայասեր**-ի հականիշը տալիս է միևնույն բառահոդվածում. ՀԱՅԱՍԵՐ, ած. Հայերին սիրող: Հկո. **հայատեաց** (հ. 3, էջ 37):

Համանման երևույթ կարելի է նկատել նաև այստեղ. «Ի հակադրություն այդ **հայատյաց** վերաբերմունքի, ազգությամբ շոտլանդացի Փիթըր Քաուն խիստ **հայասիրական** գործունեություն է ծավալել Միացյալ նահանգների հայկական գաղթօջախներում» («Առավոտ», 09.12.2002):

Հայատյաց բառը, ի տարբերություն **հայասեր**-ի, անհամեմատ ուշ է կազմվել. վկայված չէ գրաբարի և միջին հայերենի, ինչպես նաև աշխարհաբարի առաջին բառարաններում: Ըստ մեր ունեցած տվյալների՝ **հայատեսաց**-ի բառարանային առաջին գրանցումը վերաբերում է XIX դարի վերջին³⁷, ընդ որում երկու արժեքով՝ ածականի (армянофобскій) և գոյականի (армянофобъ³⁸): Այնուհետև բառը տեսնում ենք նաև այլ բառարաններում³⁹:

Բնական է, որ թարգմանական վերոհիշյալ բառարանում գրանցվելուց առաջ բառը գործածվելիս է եղել: Մեզ հանդիպած ամենավաղ վկայությունը 1863-ից է. «Աղասի՛, Աղասի՛, գլխովդ պտուտ գնամ, քանի քանի անգամ քո քաջ ընկերներովդ կամենում էիր հանկարծ գալ հարձակվել Երևանու բերդի վերա, արենկեր Հասան խանին, **հայատյաց** Սարդարին քո քաջ բազկին, քո անսխալելի սրին զոհ անել...»: Սա Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի պոմոլոգ գրված «Աղասի» դրամատիկական երկից է, հեղինակը՝ Պ. Պոռշյան: 1863-ին բեմադրվել է Թիֆլիսում, հրատարակվել «Կռունկ

³⁷ Տե՛ս **Շադուբեան Կ.**, Հայերեն-ռուսերեն բառարան, Թիֆլիս, 1891, էջ 221: Այստեղ գրանցված է նաև **հայատեցություն**-ը: Այս վերջինն այժմ հանդես է գալիս նաև անհնչյունափոխ տարբերակով՝ **հայատյացություն** (տե՛ս **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 3, էջ 282):

³⁸ Այժմ ընդունված են **հայասեր** և **հայատյաց** բառերի ռուսերեն **арменofil, арменofоб** համարժեքները (տե՛ս **Հայ-ռուսերեն բառարան**, Երևան, 1987, էջ 387, 388):

³⁹ Տե՛ս, օրինակ, **Ղադրաշեան Յ.**, Լիակատար բառարան հայերենից ռուսերեն, Թիֆլիս, 1911, էջ 425 (այստեղ ևս բառը երկարժեք է) և այլն:

Հայոց աշխարհին» ամսագրում, ապա՝ առանձին գրքով⁴⁰: Անշուշտ, հնարավոր է, որ հետագայում հայ մամուլի էջերում ավելի վաղ գործածությունն գտնվի:

Բառակազմորեն **հայատյաց**-ն առնչվում է V դարի հայերենին: Կազմվել է «արմատ+հոդակապ+քերականորեն ձևավորված բայական բաղադրիչ» կաղապարով, որի իրացումներից են հետևյալ բառերը՝ **ամենիմաց, աստուածասաց, աստուածուրաց, արագընթաց, թոնընկեց, իղեփեաց, կիսայրեաց**⁴¹: Սրանց երկրորդ բաղադրիչները համընկնում է անցյալ կատարյալի ցոյական հիմքին: Մեզ հետաքրքրող **-ատեաց** բաղադրիչով ունենք գրաբարյան **աղքատատեաց, աստուածատեաց, քրիստոսատեաց, օտարատեաց** և այլ բառեր:

Թեև **հայատյաց** բառի առաջացումը վերաբերում է նոր ժամանակներին, հայատյացության երևույթը, ինչպես վկայում է հայոց պատմությունը, եղել է շատ վաղուց⁴²:

Ստ. Մալխասյանցից սկսած՝ հայերենի ընդարձակ բառարանները **հայատյաց**-ը բացատրում են միայն հատկանշային նշանակությամբ՝ «հայերին ստող»:

Հայասեր-ի նման՝ **հայատյաց** բառը կապակցվում է ինչպես անձնանիշ (հատուկ և հասարակ), այնպես էլ իրանիշ գոյականների՝ **հայատյաց գործիչ, պատգամավոր, դեսպան, տականք, թափոփուկ** և այլն, **հայատյաց քաղաքակա նություն, քարոզություն, թերթ, հայտարարություն, հրապա-**

⁴⁰ Պոռշյան Պ., Երկերի ժողովածու 7 հատորով, հ. 1, Երևան, 1962, էջ 453-454:

⁴¹ Հմմտ. Հովսեփյան Լ. Ս., նշվ. աշխ., էջ 121:

⁴² Հմմտ. «Ականավոր շատ պատմաբաններ սելջուկյան ավերիչ արշավանքների ու առաջխաղացման նախօրյակին Բյուզանդիայի կառավարող շրջանների և կայսրության պաշտոնական եկեղեցու այդ **հայատյաց** քաղաքականությունը իրավացիորեն համարում են անհեռատես ու վնասակար» (Թ. Հակոբյան, «Անի մայրաքաղաքը»): Փաստորեն կար երևույթը, որը բառային ձևավորում շատ ավելի ուշ՝ դարեր անց, ստացավ:

քակում, գրառում և այլն: Բնագրային օրինակներ՝ «Տղայիս կմկմոցիցը ես հասկացա, որ **հայատյաց** պառավը խիստ կծու պատասխաններ է տվել և, ինչպես երևում էր, Մովսեսիս ազգությունին է դիպել» (Պ. Պոռշյան, «Շահեն»), «Եվ ո՞վ, այդ վաղեմի **հայատյաց** Ստալի՞նը պիտի հոգար Հայաստանի համար» (Կ. Սուրենյանց, «Ճիշտը կյանքն է»), «Ադրբեջանում ամենաբարձր մակարդակով ռազմատենչ և **հայատյաց** հայտարարություններ են արվում» («Հայկական ժամանակ», 18.08.2005):

Բառի գործածությունները վկայում են, որ հայատյաց կոչվածների զգալի մասը թուրք է⁴³ կամ ադրբեջանցի, հանդիպում են նաև ռուս, վրացի և այլք: Այսպես՝ «Բայց իրեն յաջորդեց ա՛լ աւելի **հայատեաց** մէկը, ընդհանուր դատախազի օգնական **Ճէմալ բէկը**» («Մշակ», 10.03.1884), «.... կցած են այդ յուշերուն Ճէմալ փաշայի յուշերու մէջէն **հայատեաց ռուս** գնդապետի մը՝ Թվերտէխլէպոֆի ձաբոտութիւնները...» («Յառաջ», 10.10.1967), «Բաքվում ջարդարարները մեծ վնասներ հասցրին հայությանը, որովհետև իրենց կողմն էր **հայատյաց** գեներալ-նահանգապետ **Նակաշիձեն**» («Ազգ», 22.04.2006), «Հոգեվարք ապրող Խորհրդային Միությունը Ղարաբաղում և հարակից տարածքներում «երաշխավորի» պարտավորությունները հանձնեց **հայատյաց Պոլյանիչկոյի** գլխարտությանը» («Ազգ», 25.08.2006):

Ուշագրավ է այն հանգամանքը, որ թուրքերի հայատյացության մասին ազատորեն գրում էին արևելահայ մամուլում, ռուսների հայատյացության մասին՝ սփյուռքում (երբ Հայաստանում խորհրդային իշխանություն էր)... Հստակ

⁴³ Հատկանշական է, որ խոսքի մեջ թուրքը հայատյացության առումով համեմատության եզր է դառնում: Այսպես՝ «Թուրք պաշտոնյաների ներկայությամբ Մեհմեդ էֆենդին իրեն ձևացնում էր մոլեռանդ մահմեդական և **շատ ավելի հայատյաց, քան թուրքը**» (Խ. Դաշտենց, «Ռանչպարների կանչը»):

է, որ բառի գործածությունն առնչվում է քաղաքականությանը և կապված է քաղաքական իրադրությանը, հանգամանքներին: Հայաստանի անկախության շրջանում բառի գործածության նման վերապահումներ, սահմանափակում և զգուշավորություն այլևս չկան: Սփյուռքում պատկերն այլ է, նայած թե որ երկրի հայ համայնքին է առնչվում:

Զարմանալի է, սակայն հայատյացների մեջ հանդիպում են նաև հայեր: Դրանք ազգային ինքնությունից հեռացած կամ ազգային շահերը անձնականին ստորադասած մարդիկ են: Բնագրային օրինակներ՝ «Ի՞նչ եղան ազնվահոգի Կատյան, թեթևամիտ Սոֆիան, **հայատյաց Ասատուր աղան** և անբարոյական Դոդոգովը» (Ռ. Պատկանյան, «Տիկին և նաժիշտ»), «Անմիջապես հիշեց այս անուն-ազգանունը**ազգությամբ հայ հայատյաց** մի հրեշ, դավաճան....» (Ալ. Թովփյան, «Եվ անգամ մահից հետո»):

Հայատյաց կարող է անվանվել նաև պետությունը, ինչպես որ **հայասեր**-ի պարագայում տեսանք: Ըստ բնագրային վկայությունների (այդպես է նաև իրականում)՝ հայատյաց են կոչվում երկու պետություն՝ Թուրքիան և Ադրբեջանը. «Թուրքիա պետությունը **հայատյաց պետություն է**» (www.newsinfo.am), «.... Ուկրաինայի դրոշի տակ կարողացել է թափանցել **հայատյաց տերություն** ու բարձրացել Արարատի գագաթը» («Ազգ», 09.04.2005), «Արցախի ժողովուրդը երբեք չի կարող ապրել **հայատյաց Ադրբեջանի** կազմում» (www.panarmenian.net/arm/news/122087):

Նման եզրակացության կարող ենք հանգել նաև այն դեպքերում, երբ **հայատյաց քաղաքականություն** բառակապակցությունը գործածվում է որևէ երկրի կամ վարչակազմի առնչությամբ, ինչպես օրինակ՝ «Հրանտ Դինքին սպանող հանցագործը Թուրքիայի ղեկավարությունն է՝ իր վարած բացահայտ **հայատյաց քաղաքականության** համար» («Ազգ», 26.01.2007), «Ընդդեմ Ադրբեջանի **հայատյաց քաղաքականության**» (գրքի վերնագիր է. Երևան, 2007):

«Նիկոլայ Երկրորդի **հայատյաց քաղաքականությունը** և հայերի դատը Ս. Պետերբուրգում» (www.hayagitaran.info/2014/11): «Վրաստանի իշխանությունների **հայատյաց քաղաքականությունը** դրսևորվում է բացառապես բոլոր ոլորտներում» (www.lragir.am/index/arm/0/politics/home/42364):

Որոշ դեպքերում բառակապակցության գործածությունը կարող է սուբյեկտիվ լինել: Հարկ է նաև հաշվի առնել, որ հայատյացության դրսևորումներ կարող են եղած լինել որևէ երկրի պատմության տարբեր ժամանակաշրջաններում, այս կամ այն իշխանության օրոք:

Հայատյաց բառը հաճախ ունենում է լրացումներ, որոնք ցույց են տալիս այդ հատկանիշի աստիճանը: Այսպես՝ «Պոլսից նոր ժամանած **մոլի հայատյաց** և արյունոտ ռասիկանապետը...», «Այդ մականվանը արժանացել էր նա իր **հույժ հայատյաց** և դժնաբարո գործունեության ընթացում» (Մ. Խերանյան, «Ձայն տուր, ով ծովակ»), «Նա հայտնի է իր թրքասիրությամբ, իսկ Սարիղամիշի պարտությունից հետո դարձել է **կատաղի հայատյաց**» և «Ես լավ գիտեմ դրան, իմ ուսանողն է եղել, իսկ հիմա «Իթթիհաթի» եռանդուն գործիչներից մեկն է, **սոսկալի հայատյաց**» (Ալ. Թովչյան, «Եվ անգամ մահից հետո»), «1915-ի սկզբներին Վանի **մոլեռանդ հայատյաց** կառավարիչ Ջնդեթ փաշան՝ Էնվերի ազգականը, սարսափի իշխանություն էր հաստատել շրջանում» («Ազգ», 12.06.2004):

Կապակցվող բառը միաժամանակ կարող է մատնանշել հայատյաց լինելու հաստատականությունը. «Այո՛, թուրքերի և ազեր-թուրքերի, այդ **երդվյալ հայատյացների...**» (Մ. Սարգսյան, «Դարավերջի հայը»): Կամ՝

Եվ արդ՝ չուզելով և ակամայից՝
Ուխտյալ հայատյաց այդ Գոլիցինը
Մինչև իսկ արդեն ռուսացած հայից
Մոլի հայ սարքեց: (Պ. Սևակ, «Անլռելի զանգակատուն»)

Հայատյաց բառին երբեմն գուգադրվում են հոմանիշ **հակահայ** և **հակահայկական** բառերը. «Գրքում ներկայացվում են նաև Բաքվում տիրող **հակահայկական՝ հայատյաց** տրամադրությունները» («Ազգ», 22.07.2006): «Հեղինակը իրավացիորեն անդրադառնում է այժմյան թուրք պատմագրության **հայատյաց-հակահայկական** դերին» (Կ. Մուսայելյան, «Տասներկու ճանապարհորդություն դարերի խորքը»):

Միևնույն խոսքաշարում **հայատյաց** կամ **հայատյացություն** բառերի հետ երբեմն գործածվում են **թուրքասեր**, **թուրքամետ** կամ **թուրքասիրություն** բառերը, այսինքն՝ եթե հայատյաց է, ուրեմն թուրքասեր է: Հմմտ. «....**թուրքամետ** և **հայատյաց** Ստալինը իր հայրական ծանր ձեռքերով դամոկլյան սուրը մեր գլխին չպահեր....» (Մ. Սարգսյան, «Դարավերջի հայը»), «....անհեթեթ են այն ձևակերպումները, թե աշխարհը միավորվել է մեր դեմ, բաժանվել է **թուրքասերների, հայատյացների**» («Առավոտ», 18.02.2005):

Բնական պիտի համարել այն, որ խոսքում **հայատյաց** բառով բնութագրվողները՝ մարդիկ և հանրույթներ, ներկայանում են բացասական այլ հատկանիշներով ևս: Օրինակ՝ «Հայտնի պրովոկատոր և կատաղի հայատյաց Գլեբովն էր: Վաղուց էի ճանաչում այդ գազրելի տիպին, որի ճակնդեղի պես կարմիր երեսը և լկտի աչքերը միայն բավական էին գուշակելու համար, թե ինչ գարշելի հոգի է նստած նրա մեջ» (Շիրվանզադե, «Կյանքի բովից»): Այդպես էլ՝ «Ճիշտ է, Ջնդեթը չար է, հայատյաց» (Գ. Մահարի, «Այրվող այգեստաններ»), «Կառավարությունը հրահրում էր նրանց ավագակաբարո բնագոյները, հայատյաց կրքերը» (Ծ. Թորգոմյան, «Ալեծուփ սրտեր») և այլն:

Հայատյաց-ին խոսքում կարող է գուգադրվել այլատյացություն նշանակող մեկ այլ բառ, ինչպես՝ «.... մյուսը կարող է **հայատյաց** կամ **աղբբեջանատյաց** լինել, որովհետև գրկվել է սեփական տնից» («Ազգ», 17.06.2006), «Ռոգոզինին իրոք

կարելի է համարել **կովկասառայաց**⁴⁴... Սակայն տեղին չի լինի նրան անվանել **հայառայաց**» («Ազգ», 17.06.2006):

Հայառայաց բառի գործածության ոլորտներն են, ինչպես վերոհիշյալ օրինակներն են հուշում, մամուլ, հրապարակախոսություն, գեղարվեստական և գիտական գրականություն: Լայնորեն կիրառվում է քաղաքական խոսույթում:

Հայառայաց-ին հակադրվում է ժխտական **ոչ** բառ-մասնիկով կազմված **ոչ հայառայաց** բաղադրությունը՝ «Վրացիները **ոչ հայառայաց** քաղաքականություն են վարում» (<http://hetq.am/arm/print/19007>): Ոչ հայառայացին անշուշտ հայասեր չի կարելի համարել, սա առերևույթ չեզոք վերաբերմունք ունեցողն է. հայերի նկատմամբ ջերմ չէ, բայց նրան թշնամի համարելն էլ ճիշտ չէ: Թեպետ բառի կազմում առկա **-առայաց** բաղադրիչն ակամա հակում է բացասական վերաբերմունքի կողմը:

Եվ, վերջապես, **հայասեր - մարդասեր**-ի նման գուցա հեռներ կարելի է անցկացնել՝ **հայառայաց – մարդառայաց**: Եթե առաջին բառազույգն առնչվում է հումանիզմի՝ մարդասիրության հետ, ապա երկրորդը՝ ֆաշիզմի:

Ի տարբերություն **հայասեր**-ի՝ **հայառայաց**-ը «հանրագիտարանային» բառամիավոր է: Օրինակներ «Հայկական սովետական հանրագիտարանից». «Նրանց **հայառայաց** մոլուցքն ավելի է սաստկանում, երբ ստանում են առաջին հարվածները ռուսական բանակից» (հ. 7), «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Վանի **հայառայաց** Ջուդեթն առաջին հարվածն ուղղեց շատախցիների դեմ» (հ. 8), «1922-ին հրատարակված «Ճիշ Արարատից» գրքույկում, ներկայացնելով Ջուլուռնիայի կոտորածները, Ա. Վեգները դարձյալ մերկացրել է Թուրքիայի կառավարող շրջանների **հայառայաց** քաղաքականությունը և արևմտյան տերությունների անտարբերությունը» (հ. 11) և այլն:

⁴⁴ **Ադրբեջանառայաց** և **կովկասառայաց** բառերը համեմատաբար նոր են:

Դժբախտաբար, հայոց պատմության ընթացքն այնպիսին եղավ, որ **հայաստյաց**-ի կողքին ավելացան սահմոկեցուցիչ իրականության թելադրանքով ստեղծված բառեր՝ **հայակեր, հայակործան, հայասպան** և այլն: Այդ բառերը ծնունդ առան հայաստյացության զարհուրելի դրսևորումներն անվանելու համար:

Եզրակացություններ

1. Հայերի նկատմամբ դրական վերաբերմունք արտահայտող բառերի իմաստային դաշտում միջուկային միավոր է **հայասեր**-ը, բացասական վերաբերմունք արտահայտողների մեջ՝ **հայաստյաց**-ը:

2. **Հայասեր** և **հայաստյաց** բառերով հայերը բնութագրում են իրենց բարեկամներին և թշնամիներին՝ անհատներից սկսած մինչև պետություններ:

3. **Հայասեր** բառն առաջին անգամ վկայվել է XIII դարում՝ Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» («Տիեզերական պատմութիւն») երկում, **հայաստյաց**-ը՝ ամենայն հավանականությամբ՝ XIX դարի կեսերին:

4. Բառակազմորեն **հայասեր** և **հայատեաց** բառերը դասական հայերենի բառակազմական հիմնական դասարների իրացումներ են, որոնց առաջացման ժամանակ որոշակի դեր է խաղացել նմանակության (համաբանության) օրենքը:

5. **Հայասեր**-ը ածական է («հայերին սիրող, հայերի նկատմամբ լավ վերաբերմունք ունեցող» նշանակությամբ), որը ժամանակի ընթացքում ձեռք է բերել գոյականի արժեք՝ «հայերին սիրող, հայերի նկատմամբ լավ վերաբերմունք ունեցող մարդ» նշանակությամբ: **Հայաստյաց**-ը գերազանցապես ածականի արժեք ունի:

6. **Հայասեր**-ը և **հայաստյաց**-ը գործածում են առավելաբար օտարազգի մարդկանց կապակցությամբ, **հայասեր**-ը՝ շատ հաճախ եվրոպացիների և ամերիկացիների, **հայաստյաց**-

ը՝ առավելաբար թուրքերի և ադրբեջանցիների: Ռուսների և վրացիների կապակցությամբ գործածվում են երկուսն էլ:

7. **Հայասեր**-ը դրսևորում է կապակցելիության առանձնահատկություններ. նրա հետ հաճախ գործածվում է **մեծ** ածականը (չափ նշանակող այլ բառեր), ինչպես նաև որևէ տեղացի կամ ազգություն նշանակող բառեր, զուգադրվում են **մարդասեր / հումանիստ** և **հայրենասեր / ազգասեր** բառերը:

8. Չակերտներում, ինչպես և **կատաղի** կամ **հույժ** բառերի հետ գործածված **հայասեր**-ն արտահայտում է «կեղծ», նաև «հայատյաց» իմաստները, հեզմական կամ անարգական երանգներ: Իսկ **հայատյաց**-ը սովորաբար կապակցվում է այդ հատկանիշը ցույց տվող (որպես կանոն՝ ուժգնացնող) բառերի հետ, ինչպես՝ **կատաղի, հույժ, մոլեռանդ, սոսկալի** և այլն:

9. **Հայասեր**-ը հանդես է գալիս ինչպես հասարակ, այնպես էլ հատուկ անվան արժեքներով:

10. **Հայասեր**-ը և **հայատյաց**-ը հրապարակախոսական և գեղարվեստական ոճերին բնորոշ բառեր լինելուց զատ հայերեն քաղաքական խոսույթի միավորներ են, հանդիպում են գիտական ոճում ևս:

Տե՛ս նաև **Դ. Գյուրջինյան, Հայասեր և հայատյաց բառերի քննություն**, «Էջմիածին», 2015, Ը, էջ 82-101:

ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԿԱՍ ՆՐԱՆՑ ՄԱՍԵՐՆ ԱՆՎԱՆՈՂ ԲԱՌԵՐԸ

Ներածություն

Հայոց լեզուն, ինչպես աշխարհի այլ լեզուներ, յուրահատուկ մի կուտակիչ է: Այն հազարամյակների ընթացքում ամբարել է հայ ժողովրդի աշխարհընկալումն ու կենսափորձը: Հայերենի բառապաշարում (նաև դարձվածաբանության մեջ և պատկերավորման համակարգում) արտացոլված են հայոց պատմության բազում իրողություններ, հայ ժողովրդի կենցաղը, սովորություններն ու ավանդույթները, հավատալիքները, հարաբերություններն այլ ժողովուրդների հետ (հատկապես նրանց, որոնցից բառային փոխառություններ են կատարվել):

Հայերեն բառերն արդյոք արտացոլո՞ւմ են պատմական այնպիսի իրողություններ, որոնք բնութագրական են հայոց պատմության համար, բառային միավորներում ինչպե՞ս է արտահայտվում հայ ժողովրդի պատմական ճակատագիրը: Այս հարցերի պատասխանները կփորձենք տալ բառաիմաստային-բառակազմական մի բառախմբի միջոցով:

Առանձնացրել ենք ոչ բազմանդամ (բաղկացած է ընդամենը վեց միավորից), սակայն խիստ հետաքրքրական մի բառախումբ: Այդ խմբում ընդգրկել ենք այն բառերը, որոնք կազմվել են «հայ+բնականուն (բնակավայրի անուն)» կաղապարով: Դրանք են՝ **հայաքաղաք**, **հայավան**, **հայազյուղ**, **հայաթաղ**, **հայագաղութ**: Սրանց գումարվում է նաև **հայնոց** բառը: Կքննենք այդ բառերը՝ նշելով իմաստային ընդհանրություններն ու յուրահատկությունները, ըստ անհրաժեշտության անդրադառնալով դրանց ստեղծման ժամանակին և ցույց տալով բառիմաստի (բառի արտահայտած հասկացության) և իրականության (նշանակիչ-նշանակյալի) հարաբերակցությունը, այդ բառերի գործառական արժեքը:

Հետագոտվող բառերն առնչվում են հայոց պատմության նշանակալի իրողությունների՝ հայոց արտագաղթին¹ (նաև բռնագաղթին) և հայկական գաղթավայրերին, մի շարք դեպքերում՝ նաև ցեղասպանությանը: Հայերն օտար հողի վրա համախմբված են ապրել. դարերի ընթացքում հիմնել են բազմաթիվ գաղթավայրեր, անգամ զուտ հայ բնակչությամբ քաղաքներ, ավաններ, գյուղեր, թաղամասեր: Եվ դա իր արտացոլումն է գտել բառապաշարում:

Անդրադառնանք մեզ հետաքրքրող բառերին:

Հայաքաղաք

Ուսումնասիրվող բառախմբում ժամանակագրական առումով առաջինը **հայաքաղաք** բառն է (XVIII դարի սկզբներ): Ստ. Մալխասյանցի բառարանը բառը բացատրում է որպես «հայի քաղաք, զուտ հայ բնակչությամբ քաղաք»²: Բառիմաստն առաջին հայացքից պատմական տեղեկություն, պատմականության ինչ-ինչ ազդակներ, թվում է, չի հաղորդում:

Իրականում ի՞նչ են ցույց տալիս պատմական և լեզվական փաստերը:

Հայաքաղաք կոչվել են օտար երկրներում հայերի հիմնադրած և բացառապես հայ բնակչություն ունեցող քաղաքները: «Հայաքաղաք» հասկացության առաջացումն անմիջա-

¹ Երկիրը ջլատող երևույթը՝ արտագաղթը, որ պայմանավորված էր տնտեսական, կրոնական, ազգային և քաղաքական մի շարք գործոններով, կարծեք դարձել է հայոց պատմության կարևոր բնութագրիչներից մեկը:

² **Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 37: Մեր կարծիքով բառն առաջին անգամ այստեղ է արձանագրվել: Հետագայում գրանցվել է նաև հայերենի թարգմանական բառարաններից մեկում. **հայաքաղաք** – армянский город, город, населенный армянами (**Հայ-ռուսերեն բառարան**, Ե. Հ. Գալստյանի խմբագրությամբ, Երևան, 1987, էջ 387):

կանորեն առնչվում է Տրանսիլվանիայի³ հայ գաղթօջախի պատմությանը:

XVIII դ. սկզբներին Տրանսիլվանիայի հայության կյանքի նշանակալից երևույթը երկրով մեկ ցրված հայ գաղթականների (հայերի ընդհանուր թիվն այդ ժամանակ հասնում էր շուրջ 15-20 հազարի) կենտրոնացումն էր նորաստեղծ քաղաքներում: Հայաքաղաքները զուտ հայկական կենտրոններ էին, ինքնավար համայնքներ⁴, որտեղ օտարների բնակությունն արգելված էր կայսերական հրովարտակներով. միայն օտարազգի առևտրականները կարող էին ժամանակավորապես մուտք գործել, այն էլ քաղաքային վարչության արտոնագրով:

Պատմականորեն առաջինը Հայաքաղաք է կոչվել 1700 թ. Տրանսիլվանիայի հիմնադրված Գեռլա քաղաքը (այժմյան Ռումինիայի տարածքում՝ երկրի հյուսիսում, Մոմեշ գետի ափին): Ահա նորակազմ տեղանվան առայժմ հայտնի ամենավաղ բնագրային գործածությունները՝ «Իբրև զամս երիս յամեցեալ վասն ընդունելոյ զբրիվիլէկոս ի կայսրէն հաստատելոյ զազատութիւն նորաշէն քաղաքին Շումուշուվարի (Գեռլա), որ այժմ Հայաքաղաք կոչի: Կարլոս կայսրն Շնորհեաց զբրիվիլէկոս և զիշխանութիւն, որ էր Շումուշուվար, փոխեալ կոչեաց Հայաքաղաք Armenopolis»⁵ (Ստեփա-

³ Տրանսիլվանիան անցյալում տարբեր պետությունների սահմանների մեջ է եղել: Հունգարական Ստեփանոս թագավորի ժամանակից (1001-1038) մինչև 1526-ը Հունգարիայի մասի է կազմել, 1526-1848 թթ. ինքնավար պետություն է եղել, 1848-1921-ը նորից կցվել է Հունգարիային, 1921-ին Տրիանոնի խաղաղության դաշինքով հանձնվել է Ռումինիային (**Աբրահամյան Ա. Գ.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Ա, Երևան, 1964, էջ 350):

⁴ **Քոլանջյան Մ. Է.**, Հունգարիայի և Տրանսիլվանիայի գաղթօջախները / Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 389:

⁵ **Պողոսյան Ն.**, Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում (16-18-րդ դդ.), Երևան, 2014, էջ 115-116:

նոս վրդ. Ռոշքա, 1670-1739): Ակնհայտ է, որ Հայաքաղաք-ն այստեղ հատուկ անվան արժեք ունի:

Քաղաքանվան այլալեզու համարժեքները՝ հուն. (լատ.) Armenopolis, որը պաշտոնական անունն էր, գերմ. Armenierstadt, հունգ. Szamosújvár / Սամոշույվար կամ Örményváros / Էորմենիվարոշ, հիմք են տալիս վստահաբար խոսելու պատճենման մասին (հմմտ. քաղաք վերջնաբաղադրիչով հայ. **մայրաքաղաք** - հին հուն. μητρόπολις):

Նորակազմությունը հարազատ է հայերենի բառակազմական օրինաչափություններին: Ուշագրավ է բնագրային այս օրինակը, որտեղ նույն խոսքաշարում հանդես են գալիս **հայ քաղաք** բառակապակցությունը և **հայաքաղաք** բառը. «Էլեոնորա կայսրուհին նուիրեց իրեն եպիսկոպոսական փառաւոր զգեստներ, տուաւ **հայ քաղաքին** հիմնարկութեան հրամանը: Սաքսոններու նեղութեան պատճառաւ՝ Վրզաբեան արդէն իր արօռը Պիստրիցէն Կեօրկէն գիւղ փոխադրէր էր, երբ **հայաքաղաքին** հիմնարկութեան հրամանն ստացաւ»⁶:

Նորակառույց քաղաքում հոծ հայություն է հաստատվել 1672-ին, երբ Մուղովայից բազմաթիվ հայ գաղթականներ են եկել Տրանսիլվանիա (տեղի իշխան Միքայել II Ապաֆիի հրավերով): Քաղաք է դարձել XVIII դարում: Քաղաքի կառուցման նախագիծը կազմել է հայ Ալեքսա ճարտարապետը, առաջին քարը դրել է Վրզաբյան եպիսկոպոսը: Քաղաքի պատմությունից հետաքրքրական է այս փաստը. 1726-ին Ավստրիայի Կառլոս IV կայսեր հրովարտակով հայերն իրավունք են ստացել Գեոլայում բնակվելու (այլազգիների բնակությունը, ինչպես վերևում ասվեց, արգելվում էր), առանց մաքսի առևտուր անելու, դատավոր (նա քաղաքապետն էր) ունենալու և խորհրդականներ («ծերեր»)

⁶ Աճառյան Հր., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 179:

ընտրելու⁷: Հենց այս ժամանակ էլ քաղաքի անվանափոխվել է և մոտ մեկուկես դար կոչվել **Արմենոպոլիս / Հայաքաղաք**⁸:

XIX դ. սկզբին Հայաքաղաքում հայերի թիվը 6000 էր (այժմ Գեռլայում մնացել են սակավաթիվ հունգարախոս հայեր): Ասենք, որ քաղաքի անունը արտասանական և տառադարձման տարբերությունների պատճառով հայերենի գրական երկու տարբերակներում գրության զուգաձևություն ունի՝ արևել. **Գեռլա**, արևմտ. **Կերլա**:

Քաղաքի անունը (բառը) տևաբար գործածական է եղել: Ահա, օրինակ, Գրիգոր վրդ. Գովրիկյանի «Դրանսիլուանիոյ Հայոց մետրապոլիսը կամ նկարագիր Կերլա Հայաքաղաքի ի գիր եւ ի պատկերս» գրքի մասերի վերնագրեր և ենթավերնագրեր՝ «**Հայաքաղաքին** անցեալը», «Հռոմեական գաղթականութիւն **Հայաքաղաքին** շրջակայքը», «**Հայաքաղաքին** հիմնարկութիւնը», «Հապսպուրկեան-լոթարինկեան տան կայսրներն եւ **Հայաքաղաքի** ազգայինք», «**Հայաքաղաքին** առաջին ընտրեալ խորհրդարանը», «**Հայաքաղաքի** մաշկագործաց եղբայրութիւնը», «**Հայաքաղաքին** (**քաղաք** բաղադրիչի ա-ն երբեմն սղվում է, հմմտ. **քաղքենի**) երեւելիները»⁹ և այլն:

Գրքում այս անունը հանդիպում է նաև փոքրատառով՝ «Շատ մեծ մարդիկ ընծայեց տէրութեան Կերլա **հայաքաղաքը**»¹⁰: Նստակ է, որ քաղաքի նախկին անվան զուգադրությամբ գործածվելիս **հայաքաղաք**-ը դառնում է մասնավորող բաղադրիչ: Այսպես սկիզբ է առնում հատուկ անունից

⁷ **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 3, Երևան, 1977, էջ 17:

⁸ Բառի «կենսագրության» համար կարևոր են այս գրքի վերնագիրն ու թվականը՝ «Քրիստոնեական վարդապետութիւն կարճառօտ՝ վասն շահապետութեանց մանկանց Դրանսիլուանիոյ հայաքաղաքի» (Թրիեստ, 1798):

⁹ **Հ. Գրիգոր վ. Գովրիկեան**, Դրանսիլուանիոյ Հայոց մետրապոլիսը կամ նկարագիր Կերլա Հայաքաղաքի ի գիր եւ ի պատկերս, Վիեննա, 1896, էջք 5, 10, 16, 19, 21, 116: Ահավասիկ նույն հեղինակի մեկ այլ աշխատությունը՝ «Հայ արձանք կամ յիշատակարաններ հին և նոր Եղիսաբեթուպոլսոյ հայաքաղքեն» (Վիեննա, 1904):

¹⁰ **Հ. Գրիգոր վ. Գովրիկեան**, նշվ. աշխ., էջ 15:

բացի նաև հասարակ անվան արժեք ձեռք բերելու գործընթացը:

Հայաքաղաքը դադարել է իբրև իրողություն գոյություն ունենալուց, այլ մնացել է որպես պատմական իրողություն: Սակայն «հայաքաղաք» հասկացությունը և բառը շարունակեցին իրենց ընթացքը:

«Հայաքաղաք» հասկացության ձևավորմանը զուգընթաց «ծնվեց» հաջորդ հայաքաղաքը: Հիմնական անվանը զուգահեռ՝ **Հայաքաղաք / հայաքաղաք** է կոչվել նաև Եղիսաբեթուպոլիս քաղաքը¹¹ (այժմ՝ Դուսեբրվեն, կրկին Ռուսիանիայում):

XVIII դ. Տրանսիլվանիայում կենտրոնացած մեծաթիվ հայերի մի մասը Եղիսաբեթուպոլիսում հաստատվել է 1658 թվականից՝ գաղթելով Մոլդովայից, զանգվածաբար՝ 1672-ից: Հայերը դիմում են Կառլոս IV կայսրին և խնդրում թույլատրել Եղիսաբեթուպոլիսը դարձնել հայկական ազատ քաղաք¹²: Կայսեր հրովարտակով 1733 թ. օգոստոսի 11-ի հայերին թույլատրվում է ստեղծել հայկական երկրորդ խոշոր կենտրոնը Տրանսիլվանիայում: Ըստ այդ հրովարտակի՝ հայերին են տրվել Եղիսաբեթուպոլիսը¹³ և շրջակա դաշտավայրը, քաղաքին շնորհվել է ինքնավարություն: Քաղաքի ողջ իշխանությունը հանձնվել է հայերին, որոնք իրավունք ունեին ընտրելու իրենց քաղաքի դատավորին, 12 խորհրդա-

¹¹ Հմմտ. **Հ. Գրիգոր վ. Գովրիկեան**, Հայ արձանք կամ յիշատակարաններ հին և նոր Եղիսաբեթուպոլսոյ հայաքաղաքէն, Վիեննա, 1904:

¹² **Աբրահամյան Ա. Գ.**, նշվ. աշխ., էջ 355:

¹³ Նորաշեն քաղաքում, ինչպես ընդունված էր հայաքաղաքների պարագայում, ըստ կայսեր հրովարտակի՝ ապրելու իրավունք են ստացել միայն հայերը, իսկ օտարազգիները պետք է դուրս հանվեին այնտեղից: Հայերն ազատվել են բոլոր տեսակի տուրքերից և պետական ծառայություններ կատարելու պարտականություններից: 1787 թ. քաղաքն ունեցել է 2100, 1808 թվականին՝ 2300 բնակիչ, ապա հայերի թիվն աստիճանաբար նվազել է: Այժմ նրանք քաղաքում ներկայություն չունեն, որ նշանակում է, թե երկրորդ հայաքաղաքն արժանացել է նախորդի բախտին:

կաններին և դատարանի քարտուղարին: Եղիսաբեթուպոլիսի սկզբնավորումից մինչև 1916 թ. ընտրված 61 քաղաքապետները հայեր են եղել¹⁴: Այս հայաքաղաքում պաշտոնական գրագրությունը թեպետ հայերեն չէր, սակայն խոսակցական լեզուն հայերենն էր (Առտիալի բարբառ), այլ լեզուների հետ դպրոցում նաև հայոց լեզու է ուսուցանվել¹⁵:

Ժամանակի ընթացքում բառիմաստի ընդլայնման հետևանքով տեղի է ունենում ներկարգային անցում, և **հայաքաղաք**-ը հստակորեն ընկալվում է իբրև հասարակ անուն: Այսպես: Պատմությունից հայտնի է, որ 1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Թուրքիայից, Բուլղարիայից և Ռումինիայից բազմաթիվ հայեր 1790-ին գաղթել են Մոլդովա և հաստատվել Հնչեշտ, Լահովիշդովա, Ստելնիչ և ուրիշ գյուղ-կավածքներում, որոնք 1816-ին գնել է Մանուկ-Բեյ Միրզայանը: Նա ծրագրում էր Հնչեշտում կառուցել «Ալեքսանդրապոլ» **հայաքաղաք**¹⁶ (ընդգծումը մերն է.- Դ.Գ.): Հայտնի է, որ դարի կեսերին Հնչեշտը քաղաք է դարձել և Բեսարաբիայի նշանակալից հայկական կենտրոն, սակայն հայաքաղաքի ծրագիրն իրականություն չի դառնում (1867-ին այստեղ ապրում էր ընդամենը 430 հայ):

«Հայաքաղաք» հասկացության առաջացումը և բառային միավորի (թե՛ հատուկ և թե՛ հասարակ անվան արժեքներով) ցարդ դիտարկված բոլոր դեպքերը վերաբերում էին առավելաբար XVIII դարին, ավելի քիչ՝ նաև XIX դարի սկզբներին և նույն տարածաշրջանին: Եթե այսքանով սահմանափակվեր, ապա կարող էինք խոսել նրանց միայն պատմական արժեքի և տարածական ու ժամանակային սահմանափակվածության մասին: Այնինչ բառի կիրառության և

¹⁴ Աբրահամյան Ա. Գ., նշվ. աշխ., էջ 356:

¹⁵ Հ. Գրիգոր վրդ. Գովրիկեան, Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ, Վիեննա 1893, էջ 57, նաև Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, էջ 507-508:

¹⁶ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 640:

բառիմաստի փոփոխության հետագա ընթացքը նոր իրողություններ է ի հայտ բերում:

Բառակազմական իմաստաբանության տեսանկյունից ուշագրավ է քննարկվող բառի հետևյալ գործածությունը:

Լվովի տարածաշրջանի Յազլովեց քաղաքում (այժմ Ուկրաինայի Տեռնոպոլի մարզի Յաբլունովկա գյուղն է) հայերը հաստատվել են ամենայն հավանականությամբ Կաֆայի (Ղրիմի այժմյան Թեոդոսիա քաղաքն է) անկումից՝ 1475 թվականից հետո, ըստ այլ տեսակետի՝ XVI դ. 40-ականներին¹⁷: Հայերն ունեցել են ինքնավարություն, սեփական օրենքներով ղեկավարվելու արտոնություն: Նրանք ունեին իրենց վոյթը՝ ավագը, 1615-ից՝ դատարան, 40 հոգանոց կոլեգիա, 3 եղբայրություն, դպրոց: Հայերի թաղամասն ունեցել է քաղաքապետարանի շենք, շուկա, եկեղեցի: Հայկական թաղամասը կոչվել է Հայաքաղաք¹⁸: Այս բնակավայրում հայերի մասին վերջին վկայությունը 1807-ին է եղել: Այսինքն՝ Յազլովեցի դեպքում բառի **քաղաք** բաղադրիչը նշանակել է ոչ թե ամբողջը, այլ նրա մի մասը՝ «թաղամաս», «քաղաքամաս»: Սա բառի իմաստային կառուցվածքում տեղի ունեցած ուշագրավ մի փոփոխություն է:

Նոր ժամանակներում, ինչպես և մեր օրերում, **հայաքաղաք**-ը գործածվում է արդեն հասարակ անվան արժեքով, եթե չհաշվենք Գեոլային, մասամբ նաև Եղիսաբեթուպոլիսին կամ Յազլովեցին վերաբերող համատեքստերը: Բնականաբար, **հայաքաղաք** բառի պատմության նոր շրջանում ևս այն շարունակում է գործածվել ամբողջովին հայ բնակչություն ունեցող և օտար երկրներում գտնվող քաղաքային բնակավայրերի առնչությամբ:

¹⁷ Գրիգորյան Վ. Ռ., Յազլովեց քաղաքի հայկական գաղութի «Կտրիճավորաց եղբայրության» կանոնադրությունը / «Լրաբեր հասարակական գիտություններ», 1973, հ. 9, էջ 42:

¹⁸ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, Երևան, 1982, էջ 104 («Յաբլունովկա» բառահոդվածը):

Հայաքաղաք բառով հաճախ բնորոշվում է Իրանի Նոր Ջուղան: Օրինակներ՝ «Անցնող տարիների ընթացքում, որտեղ էլ որ գտնվել եմ, առհասարակ իրանահայությունը եւ ի մասնաւորի երբեմնի շէն **հայաքաղաք** Ջուղան մաս եւն կազմել իմ էութեան» (Կորյուն արք. Պապյան. «Ալիք» օրաթերթ, 15.12.2013. Թեհրան), «Լ. Գ. Մինասեան նշանաւոր բանասերի, հասարակական, կրթական եւ ազգային գործչի նկարագիրը կոփուել ու ամրացել է Նոր Ջուղա **հայաքաղաքի** Կենտրոնական դպրոցի դասարաններում» (Գ. Դավթյան, «Ասպարեզ» (Լոս Անջելես), 10.01.2013):

1604-1605-ին՝ պարսից շահ Աբաս I-ի կազմակերպած մեծ բռնագաղթի ժամանակ, Արևելյան Հայաստանից, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից տեղահանվեց և Իրան տեղափոխվեց 300 հազարից ավելի հայ, տեղ հասավ 150-200 հազարը: Բռնագաղթված հայերը հաստատվեցին մայրաքաղաք Սպահանում և շրջակա գյուղերում, ուրիշ քաղաքներում: Հայաստանի շեն և հարուստ Ջուղա քաղաքի բնակիչները Սպահանի մերձակայքում հիմնադրեցին Նոր Ջուղան¹⁹, որն ուներ ինքնավարություն, հայ քաղաքապետ (քալանթար) և ոստիկանապետ. Ջուղայեցիները մի տեսակ հանրապետություն էին վայելում²⁰: Հայերն օգտվում էին շահի շնորհած արտոնություններից: Հայկական ծաղկուն քաղաքն ապրել է ազգային լիարժեք կյանքով, ժամանակին նույնիսկ ազդել հայաստանյան քաղաքական-

¹⁹ **Տէր Թովհանէան Յ. Թ.**, Պատմութիւն Նոր Ջուղայի (Սպահան), Նոր Ջուղա [2004]: Այսօր գոյտ հայ բնակչութեամբ քաղաքը ձուլվել է Սպահանին, անընդհատ արտագաղթի պատճառով հայ բնակչությունը խիստ նվազել է, սակայն Նոր Ջուղան իր դպրոցների, եկեղեցիների և բացառապես հայախոս բնակչության շնորհիվ տակավին պահպանում է հայկական դիմագիծը:

²⁰ **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 222:

գաղափարական, հոգևոր-մշակութային և գիտական կյանքի վրա²¹:

Ակնհայտ է, որ իբրև հայկական քաղաք՝ հայաքաղաք, Նոր Ջուղան ավելի վաղ է առաջացել, քան Գեղա-Արմենոպոլիս-Հայաքաղաքը, սակայն **հայաքաղաք** բառը նրա կապակցությամբ գործածվել է շատ ավելի ուշ՝ նոր և նորագույն ժամանակներում: Ինչո՞ւ: Քանի որ հայաքաղաքն իբրև հասկացություն տակավին չէր ձևավորվել, իսկ համապատասխան բառը, բնականաբար, չէր ստեղծվել:

Հայաքաղաք բառը գործածված ենք տեսնում հայաբնակ ևս մեկ քաղաքային բնակավայրի առնչությամբ:

XX դարում՝ 1915 թ. Մեծ եղեռնից հետո, Արևմտյան Հայաստանից գաղթած հազարավոր հայ գաղթականներ հանգրվանեցին հյուրընկալ Լիբանանում: Շուտով որպես բնակավայր ձևավորվեց Բուրջ Համուդը (արևմտ.՝ Պուրճ Համուտ), որն սկզբնապես մայրաքաղաք Բեյրութի արևելյան արվարձաններից էր: Ամբողջությամբ հայաբնակ լինելով՝ հայկական լիարժեք կյանքով է ապրել (և ապրում է): Մայրաքաղաքի ընդարձակման հետևանքով հայաբնակ բնակավայրն այժմ մտել է Մեծ Բեյրութի շրջագծի մեջ: Բուրջ Համուդն ունի տեղական ինքնակառավարման մարմիններ, հայ քաղաքապետ, 16 թաղապետներ: Քաղաքամասը մամուլի լեզվում, հրապարակախոսության մեջ երբեմն բնութագրվում է **հայաքաղաք** բառով: Օրինակ՝ «10 եւ 11 յուլիս 1961-ի թիւերով և «Պուրճ Համուտ տիպար **հայաքաղաքը**» խորագիրով թղթակցութիւններով «Ազդակ» կը գրէր...» («Ազդակ» օրաթերթ, 27.11.2013. Բեյրութ):

Հայաքաղաք բառի նման կիրառություններն անշուշտ տարբեր են XVIII դարում ծնունդ առած **հայաքաղաք**-ի

²¹ Կար ժամանակ, երբ այս քաղաքում էր որոշվում, թե ով պետք է նստեր Լուսավորչի գահին: Նորջուղայեցի են, օրինակ, Հակոբ Դ Ջուղայեցին (1655-1680) և Աղեքսանդր Ա Ջուղայեցին (1706-1714) (տե՛ս «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Ս. Էջմիածին, 2008):

նշանակությունից և գործածությունից: Քանի որ էապես տարբեր են հայաքաղաքի XVIII դարի և այժմյան ընկալումները: Ակներն է, որ այս դեպքում մեզ հետաքրքրող բառն ուղղակի նշանակում է «հայաբնակ»: Միաժամանակ քաղաքի ընկալումն է տարբեր (Բուրջ Համուդն այժմ ավելի շուտ պարզապես թաղամաս է ընկալվում):

Արևմտահայերենում առկա բազմաթիվ գործածությունների պարագայում զարմանալի է, որ **հայաքաղաք**-ն առ այսօր արձանագրված չէ արևմտահայերենի բացատրական հին և նոր բառարաններում: Առհասարակ «հայ+բնականուն (բնակավայրի անուն)» կաղապարով կազմված բառերը դրանցում արձանագրված չեն, մի իրողություն, որ բառարանագրական ակնհայտ բացի վկայություն է: Հատկապես որ քննարկվող բառախումբը մեծապես առնչվում է արևմտահայոց պատմական ընթացքին, անցյալ և ներկա կյանքին:

Անդրադառնանք այն դեպքերին, երբ հայկական քաղաք իրականության, «հայաքաղաք» հասկացության և նրա հաղորդիչ **հայաքաղաք** բառի միջև խզում կամ բացակայություն է նկատվում: Այսինքն՝ բառի ակնկալվող գործածություն չունենք կամ գրեթե չունենք:

«Հայաքաղաք» հասկացությունը լիովին համապատասխանում է XVIII դ. վերջին քառորդում Ռուսաստանի հարավում հիմնադրված հայկական քաղաքներին՝ Նոր Նախիջևանին և Գրիգորիոպոլիսին:

Նոր Նախիջևանը Ռուսաստանի առաջին հայկական քաղաքն է, ընդ որում ի սկզբանե կոչվել է հայկական անվանումով (սկզբնապես ուղղակի Նախիջևան): Այն 1779 թվականին Դոն գետի ափին հիմնադրել են Ղրիմից գաղթած հայերը (կարծիք կա, որ որոշ դեպքերում մարդիկ հարկադրաբար են գաղթել): Այդ ժամանակ Ղրիմից գաղթել է 12600 հայ, որոնցից տեղ է հասել մոտավորապես 8500-ը: Եկատերինա II կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով հայերին մեծ արտոնություններ են տրվել. քաղաքի բնակ-

չությունը 10 տարով ազատվել է հարկերից, իրավունք է ստացել ազատ առևտուր անելու Ռուսաստանում (և նրա սահմաններից դուրս), վերապահվել է դավանանքի ազատություն, մայրենի լեզվով դատավարության իրավունք (իրագործվել է Աստրախանի կամ «Հայոց դատաստանագրքով»): Ի դեմս հայկական մագիստրատի (կառավարման բարձրագույն մարմինն է)՝ գաղութն ստացել է ինքնավարություն: Նոր Նախիջևանը հայերի ձեռքով կառուցված և լիարժեք հայկական կյանքով ապրող բարեկարգ քաղաք էր: XVIII դ. վերջին կառուցվել են Ս. Խաչ վանքը, մի քանի եկեղեցիներ, հիմնվել են դպրոցներ, սկսել է գործել հայկական տպարանը: Քաղաքը 1812-ին ուներ 8500, 1904-ին՝ 32 հազար հայ բնակիչ²²: XX դարում հայկական Նոր Նախիջևանը միացել է Դոնի Ռոստով քաղաքին՝ դառնալով նրա շրջաններից մեկը:

Թվարկված մի շարք հատկանիշներով Նոր Նախիջևանը բավական նման է Տրանսիլվանիայի Գեռլա և Եդիսաբեթուպոլիս հայաքաղաքներին: Ուշագրավ է, որ Նոր Նախիջևանի վերաբերմամբ **հայաքաղաք** բառը գրեթե չի գործածվել²³: Անգամ այն ժամանակ, երբ քաղաքը զուտ հայ բնակչություն ուներ և հայկական կյանքով էր ապրում: Իհարկե, վերջին տարիներին նկատվում են եզակի գործածություններ: Օրինակ՝ «Հիմնադրվեց նշանավոր Նոր

²² **Բարխուդարյան Վ. Բ.**, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.), Երևան, 1967, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), Երևան, 1985:

²³ Տե՛ս, օրինակ, Վ. Բ. Բարխուդարյանի վերոհիշյալ աշխատությունները: Դրանցից առաջինում կարդում ենք. «Տասնութերորդ դարի վերջին քառորդում ազատագրական ակնկալությունների աշխուժացման մթնոլորտում, Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետականությունը վերականգնելու «դաշնադրության» նախագծերի մշակման շրջանում Կովկասի նախադրներում **զուտ հայաբնակ քաղաքի** (ընդգծումը մերն է - Դ.Գ.) և հինգ գյուղերի հիմնադրումը մեծ տպավորություն է գործում ժամանակի հայության վրա» (էջ 76): Ակնբախ է, որ ճիշտ **հայաքաղաք**-ի բառիմաստին է համապատասխանում, սակայն բառը չի գործածվում:

Նախիջևան **հայաքաղաքը**՝ իր շրջակա գյուղերով²⁴։ Փաստորեն մինչև վերջերս «հայաքաղաք» հասկացությունը միայն XVIII դ. սկզբներին ձևավորված հայաքաղաքներին է վերաբերել։ Արդյո՞ք դա ռուսական միջավայրի և ազգայնական (հետագայում նաև խորհրդային) մտածողության ճնշիչ ազդեցության հետևանք է²⁵։

Հայաքաղաքների մեջ հիշատակվում է նաև Գրիգորիոպոլիսը։ Պատմագիտական հիշարժան մի աշխատության մեջ կարդում ենք. «Ռուսաստանի հայկական նոր գաղթօջախներից է հանդիսացել Գրիգորիոպոլիս **հայաքաղաքը**»²⁶։ Ընդհանրապես նկատելի է, որ ռուսաստանյան հայկական (հայաբնակ) քաղաքների առնչությամբ **հայաքաղաք** բառը սովորաբար չի գործածվել, և սա արևելահայերեն գիտական խոսքում բառի նման կիրառության սակավաթիվ օրինակներից է։ Հատկապես խորհրդային տարիների համար սա եզակի դեպքերից է։

²⁴ **Սահակ վրդ. Շաքարյան**, Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմը, Ս. Էջմիածին, 2014, էջ 5։

²⁵ Գաբրիել Պատկանյանը, օրինակ, 1879 թ. գրել է մի աշխատություն, որ վերնագրել է այսպես՝ «Հարյուրամյակ Նոր Նախիջևան հայաբնակ քաղաքի» (անտիպ է)։ Հստակ է, որ **հայաբնակ քաղաք** բառակապակցությունը գործածվել է «հայաքաղաք» իմաստով։ Մյուս նշանավոր նորնախիջևանցին՝ Ռափայել Պատկանյանը, գործածել է **հայ քաղաք** բառակապակցությունը (իհարկե, ոչ իր ծննդավայրի կապակցությամբ)։ «Առաջները ես կարծում էի թե՛ անհնար է միայն հայ ազգի քահանա և վարժապետ լինելը. այժմ տեսնում եմ, որ հայ բժշկին հայ քաղաքի մեջ պաշտոն վարելն ևս դժվար է, եթե չասեմ անհնար է։ Այդ ևս բավական չէ՝ մի հայ աշխատավորի հայ քաղաքի մեջ յուր գիտությունը մշակելն ևս դժվար է» (**Պատկանյան Ռ.**, «Տիկին և նաժիշտ» / Երկեր, Երևան, 1980, էջ 282)։ Իսկ հաջորդ պարբերության մեջ՝ «Երբ որ ես բժշկապետության հարցաքննությունս ավարտեցի, քանի քանի հայաբնակ քաղաքների գրեցի չէի՞ն կամենալ արդյոք ինձ քաղաքական բժշկի պաշտոն տալ...» (նույն տեղում, էջ 283)։ Ակներև է, որ **հայ** բաղադրիչն այստեղ նշանակում է «հայաբնակ» կամ «հայաշատ»։

²⁶ **Աբրահամյան Ա. Գ.**, նշվ. աշխ., էջ 378։

Գրիգորիոպոլիսը նավահանգստային քաղաք է այժմ-
յան Մոլդովայում՝ Դնեստր գետի ձախ ափին, Տիրասպոլից
45 կմ հյուսիս-արևմուտք: 1787-1791 թթ. ռուս-թուրքական
երկրորդ պատերազմից հետո Թուրքիայի տիրապետության
տակ գտնվող Մոլդովայից ու Բեսարաբիայից շուրջ 4000
հայեր գաղթեցին և ժամանակավոր հաստատվեցին Դուբո-
սարի քաղաքում. նրանց տեղ հատկացվեց նոր քաղաք
կառուցելու համար²⁷ (արդեն կային հայաշեն Գեռլայի,
Եղիսաբեթուպոլիսի և Նոր Նախիջևանի նախօրինակները):
Հայերը հիմնադրեցին Գրիգորիոպոլիս քաղաքը (հիմնադ-
րվելը կատարվել է 1792 թ. հուլիսի 15-ին): 1794 թ. հոկտեմ-
բերի 12-ին Եկատերինա կայսրուհու հրամանագրով
Գրիգորիոպոլիսը ստացավ իր զինանշանը, կնիքը և քաղա-
քային մագիստրատի ներկայացուցչական հաստիքներ:
Ընտրված առաջին քաղաքագլուխը հայ էր: Նորակառույց
քաղաքը շուտով տնտեսապես հզորացավ, կառուցվեցին
եկեղեցիներ և այլն²⁸:

Ռուսաստանյան այլ օրինակ էլ կա: 1799-ին Դաղստա-
նի Դերբենդից, Ղարաբաղից և այլ վայրերից եկած հայերը
Նովոռուսիայում հիմնադրել են նաև Սուրբ Խաչ քաղաքը

²⁷ Հմմտ. **Ананян Ж. А.**, Основание города Григориополя / «Պատմա-
բանասիրական հանդես», 1964, հ. 1, էջ 161-162:

²⁸ 1800-ականներին, երբ քաղաքի դերը նվազեց, հայերն սկսեցին հեռանալ
Գրիգորիոպոլիսից՝ մեկնելով Օդեսա և Ռուսաստանի այլ քաղաքներ, մի
մասը վերադարձավ Բեսարաբիա: Հիմնադրումից մեկ դար հետո հայերը
քաղաքի ազգային կազմի մեջ չորրորդ տեղն էին զբաղեցնում (ընդամենը
406 մարդ), իսկ այժմ քաղաքի շուրջ 10 հազար բնակիչների մեջ հայեր
գրեթե չկան:

Քաղաքը հիմնադրվել է XIII դարում, և հենց այդ ժամանակից էլ հայերը
բնակություն են հաստատել այնտեղ: Քաղաքի անունը հայերեն Սուրբ Խաչ
անվան աղավաղված ջենովական ձևն է: (հանգամանալից տե՛ս **Ք. Վրդ.
Քուշներեան**, Պատմութիւն գաղթականութեան Խրիմու հայոց, ս. Ղազար,
1895, էջ 106-111): Քաղաքը հայտնի է նաև հայ. Հին Ղրիմ, թաթար. Էսկի
Կրիմ, այժմ՝ ռուս. Старый Крым անուններով:

(այժմ Բուդյոնովսկ, Ստավրոպոլի երկրամասում, Ռուսաստան): Սրա համար էլ պարզապես ասում են «հայկական քաղաք», բայց ոչ երբեք «հայաքաղաք»: Մնում է ենթադրել, որ ռուսահայ ավանդույթի մեջ **հայաքաղաք**-ը գոյություն չունի:

Հայկական քաղաք է եղել Ղրիմի Սուրխաթը: Ղրիմը Ռուսաստանին անցնելուց հետո Պավել I կայսեր 1799 թ. հոկտեմբերի 28-ի հրովարտակով լքված Սուրխաթը տրվել է հայերին՝ հավերժական օգտագործման: XIX դ. սկզբին հայերը լքված վայրում քաղաք են հիմնել: Նրանք 10 տարի ազատվել են բոլոր հարկերից և տուրքերից, նրանց տրվել է առևտրով և արհեստներով զբաղվելու ազատություն, թույլատրվել է շինարարություն իրականացնել, հիմնել գործարաններ և այլն²⁹: Կայսերական հրամանագրի հիման վրա հայերը կազմակերպել են դատարան (կոչվել Հին Ղրիմի քաղաքային ռատուշա): Դատարանն ունեցել է դատական և ոստիկանական իրավունքներ, գործերը վարել հայոց լեզվով, հայկական օրենքներին և սովորույթներին համապատասխան³⁰: Քաղաքային ռատուշան ստանձնել է նաև գործադիր իշխանության իրավասություններ: Հայ համայնքն ընտրել է քաղաքագլուխ և ավագ: Մինչև 1870 թ. հայերը կազմել են քաղաքի բնակչության մեծամասնությունը: XIX դ. վերջերին Սուրխաթի դերն ընկել է, XX դ. սկզբին այնտեղ ընդամենը 400 հայ էր բնակվում: Այսպիսով ևս մեկ հայաքաղաք դադարում է գոյություն ունենալուց:

Փաստորեն հայաքաղաքներ ստեղծելու Տրանսիլվանիայի փորձը հաջողությամբ իր շարունակությունն է ունենում Ռուսական կայսրությունում:

Պատմագիտական ուշագրավ աշխատության մեջ այս քաղաքի վերաբերմամբ գործածվել է **հայաքաղաք** բառը. «**Հայաքաղաքի** ստեղծումն է, որ ազգային շունչ ու բնավո-

²⁹ Միքայելյան Վ. Ա., Ղրիմահայոց պատմություն, Երևան, 1989, էջ 248-249:

³⁰ Միքայելյան Վ. Ա., նշվ. աշխ., էջ 227-229:

րություն պիտի հաղորդեր հետագա մյուս գաղթօջախներին թերակղզու վրա»³¹: Սա Սուրխաթի առնչությամբ բառի գործածության եզակի օրինակներից մեկն է: Ուշադրություն պիտի դարձնել, որ մենագրությունը լույս է տեսել խորհրդային հասարակարգի փլուզումից անմիջապես առաջ՝ Արցախյան շարժման ժամանակ, երբ խորհրդային գաղափարախոսական մամլիչը զգալիորեն թուլացել էր: **Հայաքաղաք** բառի գործածությունն արդարացված է, քանի որ Սուրխաթը համապատասխանում է «հայաքաղաք» հասկացությանը:

Բառի գործածության վերոհիշյալ և այլ դեպքեր հուշում են, որ կարող են հաղթահարվել ռուսաստանահաճ մտայնության կաշկանդումները: Դիտարկենք հետևյալ կիրառությունները, որոնք նոր (ավելի ճիշտ՝ ազատ և ազգային) մտածողության արգասիք են: Այսպես. «Դրիմը Ռուսաստանին անցնելուց հետո անմարդաբնակ դարձած Սուրխաթը Պավել I-ի 1799 թ. հոկտեմբերի 28-ի հրամանագրով տրվել է հայերին՝ հավերժական օգտագործման: XIX դ. սկզբին նրանք այստեղ հիմնել են **հայաքաղաք**»³², «...հայաթափեց Դրիմը, տեղի հայությունը, որ հիմնականում Անիից էր գաղթել, տեղափոխվեց Հյուսիսային Կովկաս և այնտեղ հիմնադրեց հինգ **հայաքաղաք**»³³ (Վ. Լոռենց, www.blognews.am/arm/news/136687):

³¹ Միքայելյան Վ. Ա., նշվ. աշխ., էջ 229:

³² «**Հայ սփյուռք**» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 606

³³ Հետաքրքիր է նաև այս գործածությունը. «Իսկ ի՞նչ է սպասում Հայաստանին: Երկիրը կդառնա հայաքաղաք՝ արմենոպոլիս: Պատմության ընթացքում ունեցել ենք չորս այդպիսի արմենոպոլիս. Գերլան ու Գրիգորիոպոլիսը վերածվել են երբեմնի հայության անտես ստվերների, Նոր Նախիջևանը՝ Դոնի Ռոստովի մի վարչական շրջանի, Նոր Զուղան՝ Սպահանի թաղամասի: Հայաստանը կհայաթափվի ու կդառնա **հայաքաղաք**...» (Խ. Դադայան. www.irates.am): Սա միևնույն ժամանակ հուշում է, որ հայագիտության խնդիրներից է «հայաքաղաք» հասկացության հստակ սահմանումը և հայաքաղաքների ճիշտ որոշումը:

Հայաքաղաք բառը երբեմն գործածվում է հայաշատ այլ քաղաքների առնչությամբ: Օրինակ՝ «Հետագա դարերում հայկական տարրը ավելի ուժեղացավ Տրապիզոնում և նույնիսկ օտարները նրան **«հայաքաղաք»** կոչեցին»³⁴: Կամ՝ **հայաքաղաք** Թիֆլիս: Սա բառի գործածությունն է ոչ իր բուն իմաստով («հայերի քաղաք. զուտ հայ բնակչությամբ քաղաք»), այլ երկրորդական՝ նշանակելով «հայաբնակ կամ հայաշատ քաղաք»: Հնարավոր է նաև փոխաբերական նշանակությամբ մեկնաբանել՝ «հայաշունչ»: Այս դեպքում փոխվում է բառի ոճական բնութագիրը:

Արմենոպոլիսի (Գեռլա), Եղիսաբեթուպոլիսի և այլ՝ ամբողջովին հայ բնակչություն ունեցող քաղաքների կապակցությամբ գործածվելիս բառը գիտական ոճին է պատկանում, որոշ համատեքստերում այն անգամ տեքմինային արժեք է ձեռք բերում, իսկ Թիֆլիսի պարագայում գործածվելիս, օրինակ, նրա ոճական արժեքը փոխվում է՝ դառնալով գեղարվեստական կամ (գիտա)հրապարակախոսական ոճերին բնորոշ միավոր:

Նկատելի է նոր ժամանակներին, նաև մեր օրերին բնորոշ մի իրողություն, որին անհրաժեշտ է հատուկ անդրադառնալ: **Հայաքաղաք** բառը և՛ արևմտահայերենում և՛ արևելահայերենում երբեմն գործածում են նաև բուն Հայաստանի՝ հայրենի քաղաքների կապակցությամբ՝ «հայկական՝ հայաստանյան քաղաք» նշանակությամբ: Մինչ այդ նշված նշանակությամբ կիրառություն կարծեք թե չի եղել: Օրինակներ՝ «Բայց ահա հայ գրագետ մը, որ գիրք կը գրէ, Վանի պատմութիւն մը կուտայ, ու զուարճացնելու համար իր ընթերցողները՝ զոգաւոր կամ կորնթարդ հայելի մը կը բռնէ պատմական **հայաքաղաքին** դիմաց» («Յառաջ», Փարիզ, 01.12.1967), «Հուսանք, որ երբեւէ Վանը դարձյալ կդառնա

³⁴ **Ղազարյան Հ. Մ.**, Կոստանդնուպոլիսի և Զմյուռնիայի գաղթօջախները /Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 312:

հայաքաղաք» (Վ. Անթանեսյան. <http://archive. ankakh.com>), «Եղել է աշխարհում Կարին **հայաքաղաքը**, ու այդ քաղաքում ծնվել է Արամը» (Գր. Ջանիկյան. www.blog.mediamaill.am):

Սա փաստորեն իմաստային նոր (մեր կարծիքով ոչ խրախուսելի) դրսևորում է, քանի որ, կրկնում ենք, **հայաքաղաք** կոչվել են օտար երկրներում գտնվող հայկական քաղաքները: Բոլորովին կապ չունի այն հանգամանքը, որ հայոց այդ քաղաքներն այժմ օտար պետության սահմաններում են:

Մեր համոզմամբ **հայաքաղաք** բառը հայագիտական տերմինի արժեք ունի: Հայկական բազմահատորյա («սովետական») հանրագիտարանում այն հանդիպում է տարբեր բառահոդվածներում. «Առանձնապես արժեքավոր էին Խ. Սոնկոտյանի՝ Գեղա **հայաքաղաքի** պատմությանը և Տրանսիլվանիայի հայերի ազգագրությանն ու տոհմանուններին նվիրված ուսումնասիրությունները»³⁵, «Համալսարանի գրադարանում պահվում են Եղիսաբեթուպոլիս **հայաքաղաքից** 1911-ին տեղափոխված հայերեն ձեռագրերի ժողովածուն»³⁶, «Նովելը պատմում է 3 հազար հայ ընտանիքի Մոլդավիայից Տրանսիլվանիա գաղթելու (1672), այնտեղ **հայաքաղաքներ** և այլ կենտրոններ հիմնելու մասին»³⁷, «Հիմնվեցին Գեղա, Եղիսաբեթուպոլիս (այժմ՝ Դումբըրվեն) **հայաքաղաքները**»³⁸, «Գրել է Գեղային նվիրված «**Հայաքաղաքի տեղագրությունը**» (1871) մենագրությունը»³⁹:

³⁵ **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 2, Երևան, 1976, էջ 94 («Արմենիա» բառահոդվածը):

³⁶ **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 5, էջ 485 («Կլուժ-Նապոկա» բառահոդվածը):

³⁷ **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 6 Երևան, 1980, էջ 46 («Հաժդեու» բառահոդվածը):

³⁸ **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 6, էջ 677 («Հայերը Հունգարիայում» ենթաբաժինը):

³⁹ **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 7 Երևան, 1981, էջ 691 («Մոլնար» բառահոդվածը):

Բերված օրինակներին կարող ենք ավելացնել գիտական աշխատություններում հանդիպող մի շարք գործածություններ: Այսպես՝ «**Հայաքաղաքները** ինքնավար համայնքներ էին, որ կառավարվում էին քաղաքային վարչություններով», «1757 թ. **հայաքաղաքներն** ունեցան նաև իրենց Հարյուրոց ժողովը կամ Սուտան»⁴⁰:

Գործ ունենք հայոց պատմությանն առնչվող խիստ ուշագրավ մի իրողության հետ, սակայն հայաքաղաք առանձին բառահոդված չկա ո՛չ վերոհիշյալ, ո՛չ էլ «Հայկական համառոտ հանրագիտարանում»: Անհրաժեշտ է, որ **հայաքաղաք**-ը հստակորեն սահմանվելուց հետո առանձին բառահոդվածով ներկայացվի հայկական հանրագիտարաններում:

Հավելենք, որ **Հայաքաղաք** / **հայաքաղաք** բառն Արևելահայերենի կորպուսում հանդիպում է 22 համատեքստում⁴¹: Սա բարձր ցուցանիշ չէ, բայց և բացատրելի է, թե ինչո՞ւ է այդպես. նեղ մասնագիտական գիտաբառ է:

ՀԱՅԱՎԱՆ

Հայավան «հայկական՝ հայերի՝ հայաբնակ ավան՝ գյուղաքաղաք» նշանակությամբ բառը ամենայն հավանականությամբ կազմվել է **հայաքաղաք** բառի համաբանությամբ: Բառակազմության տեսանկյունից համեմատելի է **հայ ավան** բառակապակցության հետ, ուստի չի բացառվում բաղադրիչների սոսկական կցումը: Հմմտ. «Ախր սա առաջին **հայ ավանն** է մեր ճանապարհին»⁴²:

Բառն ստեղծվել է արևմտահայերենում, ամենայն հավանականությամբ հետեղեռնյան շրջանում, երբ մասնավորապես Սիրիայի տարբեր շրջաններում հայկական ավաններ և գյուղեր ձևավորվեցին: Բառի գործածության օրինակ-

⁴⁰ Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 389:

⁴¹ Տե՛ս www.eanc.net:

⁴² Դարյան Զ., «Քառուղիներ», գիրք 1, Երևան, 1981 (ըստ ԱՐԵՎԱԿ-ի):

ներ՝ «**Հայասան** մըն էր շուրջ 5000 բնակչութեամբ»⁴³, «Այստեղ, Շրորայումն էր, որ Ադրբալեանը յղացաւ **հայասան** հիմնելու գաղափարը»⁴⁴: Ենթադրում ենք, որ կլինեն բառի գործածության ավելի վաղ վկայություններ:

Հայավան-ն այժմ համահայերենյան գործածություն ունի, թեպետ հաճախական չէ: **Հայավան** բառը հատկապես գործածում են Մերձավոր Արևելքի հայկական երկու հայտնի գյուղաքաղաքների (ավանների) առնչությամբ:

Այնճարը բարեշեն բնակավայր է Լիբանանում՝ Բեքաա դաշտում, մայրաքաղաք Բեյրութից 50 կմ հեռու: Գյուղաքաղաքն ունի 2400 բնակչություն, բոլորը հայեր են: 1939-ի վերջին՝ Ալեքսանդրետի սանջակը Թուրքիային կցվելուց հետո, Մուսա լեռան շրջանի 6 հազարից ավելի հայությունը ֆրանսիական մանդատային իշխանության հովանավորությամբ տեղափոխվել է Լիբանան և հիմնել Այնճար գյուղը⁴⁵:

Հայավանն ունի 3 դպրոց և 3 եկեղեցի (ըստ հարանվանությունների՝ առաքելական, կաթոլիկ և ավետարանական): Բնական և միանգամայն ճիշտ է Այնճարի համար **հայավան** բառի գործածությունը: Այսպես՝ «Դպրեվանքի Ընծայարանի բաժինէն տասը սաներ այցելեցին Այնճար **հայասան**» (www.nt.am):

Քեսաբ (արևմտ. **սլ-ով**՝ Քեսապ) գյուղաքաղաքը Սիրիայի Լաթաքիայի նահանգում է, թուրք-սիրիական սահմանի մոտ: Հայերն այստեղ հաստատվել են XVI դարում, համայնքը վերջնականապես ձևավորվել է XVIII դարում: 1911 թ. ունեցել է 6100, 1915-ին՝ շուրջ 8000 հայ բնակիչ: Նրանք մեծապես տուժել են 1909 թ. Կիլիկիայի կոտորածների ժամանակ, Մեծ եղեռնի տարիներին քեսաբահայությունը

⁴³ **Վահե Հայկ**, Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը: Յուշամատենան ազգային, պատմական, մշակութային եւ ազգագրական, Նյու Յորք, 1959, էջ 44:

⁴⁴ **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, Բեյրութ, 1965, էջ 245:

⁴⁵ «**Հայ սփյուռք**» հանրագիտարան, էջ 295:

տեղահանվել է՝ տալով շուրջ 5000 զոհ: Վերապրած հայերը 1918 թ. բարենորոգել են իրենց ավանը. 1923 թ. Քեսաբում ապրում էր շուրջ 3500, 2003-ին՝ 1500 հայ, 1947 թվականին Հայաստան են գաղթել մեծաթիվ քեսաբահայեր⁴⁶:

Հայավան բառը հայաշունչ Քեսաբի կապակցությամբ գործածվում է անկախ այն հանգամանքից, որ բնակավայրն արդեն ամբողջությամբ հայ բնակչությունն չունի: Այսպես. «Երեք տարի է ի վեր Սուրիոյ ապրած պատերազմական կացութիւնը՝ 21 Մարտ 2014-ին, ընդգրկեց երկրի ծովեզերեայ շրջանին մասին կազմող ՔԵՍԱԴ **հայաւանը**» (www.supportsyrianarmenians.ca), «Բանակը վերահաստատել է հսկողությունը Թուրքիայի հետ սահմանի Քեսաբ-**Հայավան** հայկական բնակավայրում» (www.m.mediamax.am):

Ի դեպ, **հայաւան** / **հայավան** բառը տակավին չի արձանագրվել ո՛չ արևմտահայերենի, ո՛չ էլ արևելահայերենի բառարաններում:

Հետաքրքրական է, որ Քեսաբի համար գործածված ենք տեսնում նաև **հայաքաղաք** բառը: Այսպես՝ «**Հայաքաղաք** Քեսապի դէմ գործուած նախադարձական ուղղակի եւ անուղղակի պատասխանատուութիւնները պէտք է որ ճշդուին» (Հ. Պալյան. www.horizonweekly.ca): Այս երևույթի մասին արդեն խոսել ենք. սա «հայաբնակ, հայաշատ բնակավայր՝ նշանակության իրացումն է: Բառի **քաղաք** բաղադրիչը ճշգրիտ չի համապատասխանում «քաղաք» հասկացությանը, այլ ուղղակի նշանակում է «բնակավայր, գյուղաքաղաք կամ ավան»:

Կան **հայավան** բառի նաև «անկանոն» (սխալ) գործածություններ: Այսպես. «Վանայ լիճի Աղթամար կղզիով ու Ս. Խաչ եկեղեցիով սկսած սահիկները շարունակուեցան՝ ներկաները հոգեպէս փոխադրելով դէպի Խարբերդ, Բալու, Տիգրանակերտ, Անի, Մեղիբէ, Սասուն եւ այլ **հայաւաններ**,

⁴⁶ Նույն տեղում, էջ 517:

որոնց փլատակներն անգամ հայութիւն կը բուրեն» (www.aztagdaily.com): Նման ձևակերպումից ենթադրվում է, թե Տիգրանակերտը կամ Անին հայավան են: Պարզ է, որ գործ ունենք բառագործածության սխալի հետ:

Հայաւան բառը գործածվել է նաև հատուկ անվան արժեքով: Այսպես՝ «Իսկ ներկայիս ծանօթ են **Էրմենովո** (**Հայաւան**), **Էրմենսքո** (Հայկական)՝ Լիբիւնայի մէջ»⁴⁷: Օտար հատուկ անվան հայերեն թարգմանություն-համարժեքն է:

Պատմականորեն «հայավան» հասկացությանը լիովին համապատասխանում է Ղրիմի Սուրբ Խաչ վանքից ոչ հեռու գտնվող Կազարաթ զուտ հայկական բերդապահ ավանը (հիմնադրվել է XIV դ.): Հայ իշխանների միջոցներով և հայ հրամանատարի գլխավորությամբ այստեղ զինական մեծ ուժ ունեցող հայկական զորք է պահվել՝ Սուրխաթ և Կաֆա տանող ուղիները թաթարական ասպատակություններից պաշտպանելու համար⁴⁸: Ավանում գործել են հայկական եկեղեցիներ, ստեղծվել են հայերեն ձեռագրեր: Ավերվել է թուրք-թաթարական ուժերի անընդհատ հարձակումների պատճառով (ամենայն հավանականությամբ՝ 1475 թվականին): Նրա մասին հետագայում հիշատակություն չկա:

Հետաքրքրական է, որ Կազարաթ ավանի մասին խոսելիս, սակայն, **հայավան** բառը չեն գործածում: Բնական է, բառն ավելի ուշ է ստեղծվել, բայց անգամ հետնաբար Կազարաթի առնչությամբ **հայավան**-ը չի կիրառվում: Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ **հայավան** բառը փաստորեն վերաբերում է բացառապես մերձավորարևելյան հայկական (հայաբնակ) ավանների և գյուղաքաղաքներին, ճիշտ ինչպես որ **հայաքաղաք**-ը՝ առավելաբար Տրանսիլվանիայի հայկական քաղաքներին:

⁴⁷ «Հայրենիք», հ. 14, Բոստոն, 1935, էջ 93: Էրմենովոն հայանուն գյուղ է Բուլղարիայում. Հիմնադրել են հայերը, պահպանվել է մինչև XIX դարը (տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19.12.2014, էջ 5)

⁴⁸ Միքայելյան Վ. Ա., նշվ. աշխ., էջք 31, 33, 39:

ՀԱՅԱԳՅՈՒՂ

Քննարկվող բառախմաստային խմբի այս միավորը ոչ քաղաքային և երկրագործությամբ ու անասնապահությամբ զբաղվող հայ բնակչություն ունեցող բնակավայր է նշանակում:

Տարօրինակ է, նույնիսկ անսպասելի, որ հայրենի բնաշխարհից, հայության բնօրրանից, հայրենիքից դուրս՝ օտար հողում, եղել են (տակավին նաև կան) զուտ հայաբնակ գյուղեր: Բայց դա հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետևանքներից մեկն է: Այդ գյուղերը գոյացել են Հայաստանից տարբեր դարաշրջաններում ծայր առած գաղթի, 1604-1605 թթ. պարսից շահ Աբաս I-ի կազմակերպած մեծ բռնագաղթի, ինչպես նաև 1894-1923 թթ. Օսմանյան Թուրքիայի իրականացրած ցեղասպանության հետևանքով: Ամբողջովին հայաբնակ գյուղեր կարելի է հիշել Պարսկաստանում, Սիրիայում, Ռուսաստանում, այլուր:

Սպասելի է **հայագյուղ** բառը՝ իբրև բառակազմական կաղապարի տրամաբանական իրացում: Համեմատենք, օրինակ, հետևյալ խոսքաշարը, որտեղ երկու անգամ գործածված է **հայ գյուղ** բառակապակցությունը. «Ամենէն հայաշատ գաւառը Փերիան է, որ առաջ 36 **հայ գիւղ** ուներ, բայց, քանի մը անգամ աւերուելով, հիմայ միայն զուտ 16 հայ գիւղ ունի, մնացեալը պարսից հետ խառն: Անտիոքի թեմն ուներ 13 եկեղեցի, մի քաղաքական և կրօնական ժողով. թեմի **հայ գիւղերն** էին՝ Պերիաս, Հաճի Հապիպլի, Եօդուն Օլուք, Խտրբէյ, Վազրֆ, Քէպուսիէ, Քեսապ...»⁴⁹: Բառաստեղծման **հայ գյուղ – հայագյուղ** ուղին բնական է և օրինաչափ⁵⁰:

⁴⁹ Աճառյան Հր., նշվ. աշխ., էջք 261, 415:

⁵⁰ Հմմտ. նաև՝ **Էրմենի քոյ – Հայ գյուղ** (հայաբնակ գյուղ Թուրքիայում, Մարմարա ծովի ափին. հիմնադրել են հայերը XVI դարում: XX դ. սկզբին ուներ 200 տուն թրքախոս բնակիչ) (**Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 4, Երևան, 1978, էջ 96):

Հայագյուղ-ը բառարանային գրանցում չունի, Արևելահայերենի ազգային կորպուսում՝ ԱՐԵՎԱԿ-ում, վկայություն չկա, գործածված չէ գաղթավայրերի մասին մեզ ծանոթ գիտական աշխատություններում, որևէ արդյունք չենք ստանում նաև համացանցային որոնողական համակարգերում: Սակայն բառը գոյություն ունի, մասնավորապես արևմտահայերենում, և հազվադեպ գործածվել է Սիրիայի հայաբնակ գյուղերի առնչությամբ: Այսպես. «Գաղթականները նախ կը տեղաւորուին հիւղաւաններու մէջ, ապա նոր բնակավայրերու մէջ: Դիւանական թուղթերն ու տպագիր նիւթերը զանոնք կը կոչեն նորաշէն գիւղեր, հայ գիւղեր, **հայագիւղեր** եւ հայաւաններ»⁵¹:

Հայագյուղերը ձևավորվել են հետեղեռնյան շրջանում՝ 20-ական թվականներին, երբ Ալեքսանդրետի սանջակը հանձնվել էր Սիրիային: Հիմնականում հայանուն այդ գյուղերը (Նորաշեն, Հայաշեն, Հայկաշեն, Մեսրոպաշեն և այլն) մարել են. 1939 թ. սանջակը Թուրքիային միացվելուց հետո բնակչության մի մասը տեղափոխվեց Հալեպ և այլ վայրեր, իսկ 1947 թ. շատերը հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան: Այդ գյուղերից մնացել է միայն հայաբնակ Վազրֆը՝ այժմյան Թուրքիայի տարածքում:

ՀԱՅԱԹԱՂ

Իմաստային-բառակազմական ուսումնասիրվող շարքի միավորներից է **հայաթաղ** «հայերի թաղ, հայաբնակ թաղ, հայկական թաղ» հասարակ գոյականը: Օրինակ՝ «**Հայաթաղում** բնակարան վարձեցի»⁵²: Բառը գործածվել է այն բնակավայրերի կապակցությամբ, որոնք խառը (հայ և այլազ-

⁵¹ **Չոլաքեան Յ.**, Սուրիահայ դպրոցներու պատմութիւն, Երևան, 2021 (ձեռագիր, անձնական):

⁵² **Մայիսասեանց Մու.**, Հայերէն բացատրական բառարան, հ. 3, էջ 36:

զի) բնակչություն ունեին: Հայաստանյան բնակավայրերի առնչությամբ բառի գործածությունը բնորոշ չէ:

Բառը կազմվել է **հայկական` հայի թաղ** բառակապակցությունից` «հայկական / հայի (փոքրիկ) գյուղ» հասկացությունն արտահայտելու համար:

Հայաթաղ-ը Հր. Աճառյանի «Գավառական բառարանում» արձանագրվել է որպես Վանի բարբառի միավոր, որը Պոլսի բարբառում ունեցել է **հայնոց** ձևը⁵³ (սրան առանձին կանդրադառնանք):

Քննվող բառամիավորը գրանցվել է Է. Աղայանի, ակադեմիական և արևմտահայերենի բացատրական բառարաններում⁵⁴: Այն տեսնում ենք նաև հայերենի թարգմանական որոշ բառարաններում: Այսպես` **հայաթաղ** – армянский квартал⁵⁵: Այս արձանագրումները հիմք են տալիս ասելու, որ բարբառային ծագում ունեցող **հայաթաղ**-ը գրական լեզվի միավոր է դարձել:

Նույնակառուցվածք է **թ(ու)րքաթաղ** «քաղաքի այն թաղամասը, որտեղ թուրքերն են բնակվում» բառը⁵⁶:

Հասարակ անունից բացի ունենք նաև **Հայթաղ** և **Հայաթաղ** գյուղանուններ (բառակազմական տեսանկյունից տարբերությունը ընդամենը **ա** հոդակապի առկայությունը / բացակայությունն է): Իմաստային առումով հիմնավորված կազմություն է, քանի որ **թաղ**-ը հին հայերենում նշանակել է

⁵³ **Աճառեան Հր.**, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 635:

⁵⁴ **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 810, **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 3, Երևան, 1974, էջ 281, **Ճերեհեան Գնէլ արք.**, **Տօնիկեան Փ. Կ.**, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Բեյրութ, 1992, էջ 1136:

⁵⁵ **Հայ-ռուսերեն բառարան**, Երևան, 1987, էջ 387:

⁵⁶ **Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 132, **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 2, Երևան, 1972, էջ 243, 255:

ոչ միայն «քաղաքի մի մասը», այլև «փոքրիկ գյուղ»⁵⁷: Աշխարհաբարում բառի այս իմաստը կորսվել է, և **թաղ**-ը նշանակում է պարզապես «քաղաքի կամ գյուղի մի մասը՝ թաղամաս»:

Հայթաղ հայաբնակ գյուղը Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգում էր, Մոսկանի գավառակում⁵⁸: Հոդակապավոր **Հայաթաղ** անունով երկու գյուղ է հայտնի Հայոց աշխարհում. մեկը՝ Այրարատ աշխարհի Արագածոտն գավառում, մյուսը՝ Երևանի նահանգի Էջմիածնի գավառում⁵⁹ (այժմ ՀՀ Արմավիրի մարզում):

ՀԱՅՆՈՑ

Բառաիմաստային այս խմբի մմիավոր է **հայնոց** բառը: Ի տարբերություն մինչ այժմ քննված բառերի, որոնք կազմությամբ բարդ են, սա ածանցավոր կազմություն է (**հայ** արմատ+**նոց** ածանց): Այս-**նոց**-ը –**անոց** գործուն վերջածանցի

⁵⁷ **Հ. Գաբրիել Աւետիքեան, Կ. Խաչատուր Միւրմէլեան, Կ. Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Կ. Ա., Վենետիկ, 1836, էջ 793:

⁵⁸ Ավերվել է 1915-ին, ինչպես հայկական հարյուրավոր այլ գյուղեր: Մոսկանի գավառակում XIX դ. վերջին և XX-ի սկզբին շուրջ 22500 բնակչությունից հայեր էին 8000-ը (**Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Կ. Յ, Երևան, 1991, էջք 333 (Հայթաղ), 868 (Մոսկան)): Գյուղանվան առաջացումը պատճառաբանված է. շեշտվում է հայկականությունը՝ ի տարբերություն խառը բնակչություն ունեցող կամ այլազգիներով բնակեցված գյուղերի:

⁵⁹ Այս գյուղանվան տարբերակներից են Այթախտ, Այթաղ, Հայաթաղթ: Սա նշանակում է, որ **թաղ** բաղադրիչը կարող է այլ կերպ ստուգաբանվել, հատկապես որ գյուղի բնակիչները հայեր են եղել, և գյուղն այլազգիներով բնակեցված թաղամաս չուներ: Չի բացառվում, որ այն **Հայաթաղ** կոչվեր (այսինքն՝ **թաղ**-ը գործածված լիներ բնականվան արժեքով) ի տարբերություն հարևան թրքաբնակ գյուղերի, որոնք ժամանակին եղել են Արարատյան դաշտում (վերոհիշյալ Հայթաղի նման): Այժմ կոչվում է **Հայթաղ** (**Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, նշվ. բառարանը, էջ 328-329):

տարբերակն է, որով կազմված բաղադրությունները ժողովրդախոսակցական, հաճախ նաև բարբառային ծագում ունեն, ինչպես՝ **խոտնոց, երդնոց, բնկնոց, ծնկնոց, գոգնոց, ճոնոց, քննոց** և այլն⁶⁰:

Հայնոց նշանակում է «որտեղ հայեր են բնակվում. հայաթաղ»⁶¹: Հնացած բառի պայմանական նշանով օժտված այս բառամիավորի համար Ստ. Մալխասյանցը նշում է նաև «հայերի մասը» իմաստային բաղադրիչը՝ տարածական իմաստով, նկատի ունենալով բնակավայրի՝ իբրև ամբողջության և մասի հարաբերությունը, և ներկայացնում ինքնաշեն հետևյալ նախադասությունը՝ «Կամուրջից այս կողմը հայնոց է, այն կողմը թուրքընոց»: Այսինքն՝ **հայնոց**՝ հայերի թաղ և **թուրք(ը)նոց**՝ թուրքերի թաղ:

Բառարանային առաջին գրանցումը եղել է Հր. Աճառյանի «Գավառական բառարանում», որտեղ **հայնոց**-ից հղում է արվում **հայաթաղ**-ին⁶²: Այս բառերը գտնվում են հոմանշային հարաբերության մեջ:

Մյուս կողմից էլ **հայնոց**-ը հակադրական հարաբերության մեջ է Պոլսի բարբառի **այլազգնոց** «այլազգիների, տվյալ դեպքում՝ թուրքերի («տաճիկներու») թաղամաս» բառի հետ. «Ան կողմը **այլազգնոց** է, աս կողմը **հայնոց** է»⁶³: Նկատենք, որ **հայնոց** և **այլազգնոց** բառերը նույնակառուցվածք են. հմմտ. նաև վերը հիշատակված **թուրք(ը)նոց**-ը: Սա նշանակում է, որ **-նոց** ածանցի ընդհանուր նկարագրության մեջ հարկավոր է ավելացնել «որևէ ազգի ներկայացուցիչների

⁶⁰ **Գալստյան Ս. Ա.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 89, 91:

⁶¹ **Մալխասյանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, էջ 39: Ժամանակակից հայերենի հետազայում հրատարակված ընդարձակ բառարաններն այս բառը դուրս են թողել իրենց բառացանկերից:

⁶² **Աճառեան Հր.**, նշվ. աշխ., էջ 635:

⁶³ **Աճառեան Հր.**, նշվ. աշխ., էջ 90:

բնակության տեղ՝ թաղ՝ թաղամաս» իմաստով բառեր կազմելու գործառնությունը նա:

Հասարակ անվան արժեք ունեցող **հայնոց**-ն առհասարակ հազվադեպ է գրավոր խոսքում:

Հայաթաղ-ի պես **Հայնոց**-ն ունի նաև հատուկ անվան արժեք: Այսպես՝ «Աթենքի հայաշատ արվարձան Հին Քոքինիայում, որ հայերը կոչում էին նաև **Հայնոց**, իսկ հույները՝ Արմենիկոն, մեր լուսավորչական եկեղեցին ու կողքին Ազգային վարժարանը...» (Կ. Սուրենյան, «Ճիշտը կյանքն է». ըստ ԱՐԵՎԱԿ-ի):

Ուշագրավ է բնագրային այս օրինակը՝ «Այցելած էր ան նաև քաղաքին ներքին մասը, Գոռոսնէն **Ֆրանկաց թաղը**, անկէ՝ **Հայնոց**, որին սալարկուած, մաքուր փողոցներէն յետոյ անցեր էր **Թրքաց թաղին** ծուռ, կիսաքանդ, նեղ և դարձդարձիկ փողոցներէն...» («Արաքս», 25.12.1926): Ինչպես տեսնում ենք, այլազգիների թաղերն անվանվել են բառակապակցությամբ, հայերինը՝ բառով:

Հայնոցներ կային տարբեր քաղաքներում: Հայտնի է Զմյուռնիա-Իզմիրի Հայնոցը. «Իզմիրցի հայուն Հայաստանն էր երբեմն **Հայնոցը**՝ հոծ իր զուտ հայատարր զանգուածով» («Դաշինք», 23.6.1911): Ի դեպ, քաղաքական և գրական այս օրաթերթի «Հայնոց թէ՛ Հրէաստան» վերնագրված հոդվածում գործածվել է **հայնոցություն** դիպվածային բառը. «Իսկ հիմա Հայնոցը **հայնոցությունն** էլեր է և դարձեր է պարզապես Հրէաստան»:

Ե՞րբ է կազմվել այս բառը: Պատմական փաստերը վկայում են, որ XVII դ. սկզբին՝ պարսից շահ Աբբաս I-ի կազմակերպած բռնագաղթից հետո, 1000 հայ ընտանիք Երևանից, Նախիջևանից, Ղարաբաղից, իսկ XVIII դ. վերջին՝ Աղա Մահմեդ խանի 1795-ի արշավանքից հետո, մոտ 300 հայ ընտանիք Աշտարակից, Կարբիից, Օշականից, մասամբ՝ Անկարայից

գաղթել ու հաստատվել են Իզմիրում⁶⁴։ Հայերը համախմբված բնակվում էին տարբեր թաղամասերում, որոնցից մեկի անունը Հայնոց էր։ Բառի (անվան) ստեղծման ու գործածության սկիզբ կարող ենք համարել մոտավորապես այդ ժամանակաշրջանը, այսինքն՝ աշխարհաբարյան կազմությունն է։

ՀԱՅԱԳԱՂՈՒԹ

Նոր ժամանակներում է ստեղծվել և բառարանային գրանցում ստացել **հայագաղութ** «հայկական գաղութ» բառը՝ գոյականի արժեքով։ Բառի ստեղծման հիմքը **հայ / հայկական գաղութ** բառակապակցությունն է։ Դիտարկենք «Նոր Դար» պարբերականից քաղված այս օրինակները. «Տեղական **հայ գաղութների** միջոցով Պետերբուրգում անկելանոց է բացում զառամեալ հայերի համար» (19.09.1901), «Լեհական հանրապետութեան բոլոր **հայ գաղութները** հպատակուեցան Իլվովի արքեպիսկոպոսին» (05.09.1901), «Մեր փոքրաթիւ **հայ գաղութն** իւր ազգային-հասարակական գործերում այս աստիճան եռանդուն ու անշահասէր է....» (04.10.1901)։

Հայագաղութ-ն ուրիշ երկրներում հայկական բնակավայրերի վերնում քննարկված անվանումներից որոշակիորեն տարբեր է։ Հարկ է ուշադրություն դարձնել, որ **գաղութ** բառի իմաստներից մեկը սա է՝ «որն է երկրի այն վայրը, որտեղ հաստատվել և բնակվում են գաղթականները, գաղթավայր»⁶⁵։ Ուստի **հայագաղութ** բառը հայկական գաղթականություն ունեցող բնակավայրերն անվանում է ընդհանուր՝ չտարորոշված ձևով, իսկ ցարդ քննարկված բառերը՝ **հայաքաղաք, հայավան, հայաթաղ**, մասնավորում-հստակեցնում են նշված ընդհանուր իմաստը։

⁶⁴ «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 179։

⁶⁵ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969, էջ 366։

Հայագաղութ բառը գործածական է առավելաբար արևմտահայերենում, մեր օրերում ևս: Գործածվում է հիմնականում հրապարակախոսության մեջ, համացանցային կայքերում: Օրինակներ՝ «Իրաքանչիւր **հայագաղութ** պիտի իրագործէ 100-ամեակի նախաճրագրեալ իր հանդիսութիւնները» (www.keghart.com), «Տեղ մը նոր **հայագաղութ** կազմելու ու կազմակերպելու գործին նուիրուելով, ուրիշ տեղ գաղութային կեանքը աշխուժացնելու հետամուտ ըլլալով» («Ազատ օր», Աթենք), «.... ապաստանեցաւ Լիբանանի Զահլէ քաղաքը, ուր գտաւ փոքրաթիւ **հայագաղութ** մը...» («Գանձասար», Հալեպ), «Պոլիսը սփիւոք չէ, ոչ ալ **հայագաղութ**» (www.hetq.am):

Չնայած բազմաթիվ գործածություններին՝ **հայագաղութ** բառն արձանագրված չէ արևմտահայերենի բացատրական բառարաններում, այլ միայն արևելահայերենի⁶⁶, թեպետ արևելահայերենին բնորոշ չէ: Որպես ասվածի հավաստում նշենք, որ Արևելահայերենի ազգային կորպուսում (ընդգրկում է 110 միլիոն բառագործածություն) այս բառը վկայվել է միայն մեկ անգամ. «Տրանսիայում և աշխարհի մյուս **հայագաղութ** երկրներում ստեղծվել են «Նոր Խարբերդ» կամ «Նոր Այնթափ» կոչվող միություններ» (Զ. Բալայան, «Օջախ»): Սա իմաստային այլ՝ նախորդներից տարբերվող դրսևորում է: **Հայագաղութ երկրներում** կապակցության մեջ **հայագաղութ**-ը ունի հատկանշային իմաստ և նշանակում է «հայկական գաղութ ունեցող»:

«Հայ+բնականուն (բնակավայրի անուն)» կաղապարի իրացումները՝ **հայաքաղաք**, **հայավան**, **հայագյուղ**, **հայաթաղ**, **հայագաղութ**, պատմական բնույթ ունեն: Ներկայիս համաշխարհային, նաև համահայկական և հայաստանյան զարգացումները կարող են ազդել դրանց նշանակյալ իրողու-

⁶⁶ Տե՛ս **Աղայան Էդ. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 810:

թյունների վրա: Այդ փոփոխություններն իրենց հերթին հակադարձ ուժով կազդեն նշված բառերի, նրանց իմաստների, կիրառության և արժեքի վրա:

Եզրակացություններ

1. Տարբեր դարաշրջաններում հայրենիքից դուրս՝ տարբեր երկրներում (Ռուսիին, Ռուսաստան, Իրան, Լիբանան, Սիրիա և այլն), գաղթական հայերը զուտ հայ բնակչությամբ բնակավայրեր են ստեղծել: **Հայաքաղաք, հայավան, հայազյուղ, հայաթաղ, հայազաղուրթ** բառերն առնչվում են հայոց պատմության նշանակալի երկու իրողությունների՝ հայոց արտագաղթին (նաև բռնագաղթին) և հայկական գաղթավայրերին:

2. **Հայաքաղաք, հայավան, հայազյուղ, հայաթաղ, հայազաղուրթ** բառերը և դրանցով արտահայտվող իրողությունները մի կողմից հայ ժողովրդի պատմական դժվարին ճակատագրի վկայություններն են, մյուս կողմից՝ հայության կազմակերպվածության, նախաձեռնողականության, կարողունակության, միասնականության և դիմադրողականության հստակ ցուցիչները:

3. Քննարկվող բոլոր բառերը կազմությամբ բարդ են. ստեղծվել են «**հայ**+բնականուն (բնակավայրի անուն)» կաղապարով, միայն **հայնոց**-ն է ածանցավոր:

4. Մի շարք դեպքերում հայաքաղաքները, հայավանները և հայազյուղերը հայանուն են, ինչպես՝ Հայաքաղաք, Նոր Նախիջևան, Նոր Զուղա, Հայաշեն, Հայկաշեն, Նորաշեն: Առաջին հայաքաղաքի պարագայում «հայկական հետք» առկա է տեղանվան օտար համարժեքում ևս՝ Armenopolis:

5. Ժամանակագրորեն առաջինը **հայաքաղաք**-ն է (XVIII դ.), որը պատճենման արգասիք է: Հաջորդը թերևս

հայնոց / Հայնոց-ն է (հավանաբար XVIII –XIX դդ.): Մնացածը XIX-XX դարերի կազմություններ են, որ ստեղծվել են գերազանցապես համաբանության հետևանքով:

6. **Հայաքաղաք, հայավան, հայագյուղ, հայաթաղ, հայնոց** և **հայազաղուրթ** բառերը, անկախ այն հանգամանքից, թե հայերենի ո՛ր տարբերակում են ստեղծվել կամ գործածության ի՛նչ հաճախականություն ունեն տարբերակներից մեկում, համահայերեն բնույթ ունեն: **Հայաքաղաք**-ը նորագույն ժամանակներում ակտիվացել է արևելահայերենում, մասնավորապես գիտական գրականության մեջ:

7. **Հայաքաղաք** բառի իմաստային կառուցվածքում նկատվում են փոփոխություններ, որոնք «հայաքաղաք» ըմբռնման մեջ կատարվող փոփոխությունների հետևանք են, երբ այն նշանակում է ոչ միայն «զուտ հայ բնակչությամբ քաղաք օտար երկրում», այլև «հայաբնակ քաղաք», «հայաշունչ քաղաք». «հայ բնակչություն ունեցող ավան, գյուղաքաղաք կամ թաղամաս», նույնիսկ «հայկական քաղաք (հայրենիքում)»:

8. Բառարաններում գրանցվել են **հայաքաղաք, հայաթաղ, հայնոց** և **հայազաղուրթ** բառերը, **հայավան**-ը և **հայագյուղ**-ը՝ տակավին ոչ: **Հայաքաղաք**-ը որպես հայագիտական տերմին պետք է ընդգրկվի հայկական հանրագիտարաններում:

9. **Հայաքաղաք** և **հայաթաղ** բառերը, մասամբ նաև **հայավան**-ը հանդես են գալիս հասարակ և հատուկ անուն հակադրություններով:

10. Աշխարհում ընթացող փոփոխությունների թելադրանքով հայությունը դարերի ընթացքում անդադար տեղաշարժվել է, փոխվել են նաև գաղթավայրերը:

Այժմ հայաքաղաքն իբրև իրակություն գոյություն չունի, բայց այդ հասկացությունն արտահայտող բառը հատկապես

գիտական խոսքում այսօր էլ կիրառվում է: Խիստ սահմանափակ գործածություն ունեն **հայավան**-ը, **հայագյուղ**-ը և **հայաթաղ**-ը, այն էլ գրավոր խոսքում: **Հայնոց**-ը գրեթե մոռացվել է:

Տե՛ս նաև **Դ. Գյուրջինյան**, *Հայ ժողովրդի պատմական ճակատագիրն արտացոլող մի բառախմբի քննություն (հայաքաղաք, հայավան, հայագյուղ, հայաթաղ, հայազաղուրթ)*, «Էջմիածին», 2015, Բ, էջ 46-66:

Դ. Գյուրջինյան, *Հայաքաղաքը՝ հայ ժողովրդի պատմական ճակատագրի արտահայտիչ*, «Կամուրջ» տարեգիրք, «Մերանի»/«Կամուրջ» հրատ., Թբիլիսի, 2015, էջ 277-284:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ՊԱՏՄԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Մուտք

Կան բառեր, որոնք դարաշրջան կամ պատմության որևէ շրջափուլ են բնութագրում: Բառեր էլ կան, որոնք պատմական այս կամ այն կարևոր իրադարձության ցուցիչ-հաղորդիչներն են: Այս կարգի բառերը հսկայական տեղեկատվություն են պարունակում: Կան նաև բառ-խորհրդանիշներ, որոնք զանազան գաղափարներ են արտահայտում՝ հայրենի եզերքի, կորսված հայրենիքի, ազգի հատկությունների և այլն: Բառերի թվարկված տեսակները հաճախ հայելու պես անդրադարձնում են ժողովրդի և երկրի պատմությունը, մշակույթը, կենցաղը, հոգեբանությունը, նրանք լեզվի բառապաշարում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում և կարևոր դեր ունեն, արժանի՝ հատուկ ուսումնասիրության:

Հայերենի բառապաշարի վրա որոշակի հետք է թողել հայոց պատմության ամենից սահմուկեցուցիչ իրադարձությունը՝ ցեղասպանությունը, որն աննախադեպ էր մարդկության պատմության մեջ: Այն արմատապես բեկեց հայ ժողովրդի բնականոն զարգացման ընթացքը. ծրագրված զանգվածային սպանդի հետևանքով հայության զգալի հատվածը բնաջնջվեց, փրկվածները զրկվեցին բնօրրանից, որպես անդարմանելի ցավ՝ ցեղասպանությունը խոր հետք թողեց վերապրողների և նրանց սերունդների հոգեբանության վրա, հաճախ նաև խաթարեց նրանց կյանքի խաղաղ ընթացքն ու անկաշկանդ առաջընթացը:

Հայերեն մի շարք բառեր և բառակապակցություններ կան, որոնք առնչվում են հայոց ցեղասպանությանը (կամ այդ են նշանակում), ինչպես՝ **Աղետ, ջարդ, նախաճիր, Մեծ**

Ոճիր, Մեծ Եղեռն, հայասպանություն, հայասպանոթ, արևմտ. **Հայկական Տասնհինգը** և այլն: Կառուցվածքային ակնհայտ տարբերությունից բացի (բառ և բառակապակցություն), անվանական արժեք ունեցող այս միավորները ստեղծման տարբեր պատմություն և ժամանակագրություն ունեն, տարբերակվում են ըստ իմաստի և ոճական արժեքի, գործածության հաճախականությամբ, տերմինային և ոչ տերմինային արժեքներով, տարբեր են իրենց արտահայտչականությամբ, զգայական ազդեցությամբ, առաջացրած մտային զուգորդումներով:

ՀԱՅԱՍՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ / ԱՐՄԵՆՈՅԻՂ

Մենք քննության առարկա ենք դարձրել վերոհիշյալ միավորներից մեկը՝ **հայասպանություն** բառը, որն այսօր ցեղասպանագիտական տերմինի արժեք ունի:

Հասկացությունն ահա թե ինչպես է մեկնաբանված հայկական ամենահեղինակավոր հանրագիտարանում. «**Հայասպանություն**, արմենոցիդ, պատմության մեջ ցեղասպանության (գենոցիդի¹) դրսևորումներից: Գործադրել են տարբեր ժամանակներում օսմանյան Թուրքիայի կառավարող շրջանները՝ Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի զանազան վայրերում, խաղաղ հայ բնակչության նկատմամբ²: Այնուհետև անդրադարձ է կատարվում ցեղասպանագիտական

¹ Այս տերմինի հեղինակը լեհական հրեա, իրավագետ Ռ. Լեմկինն է (1944-ին): Կա նաև **էթնոցիդ** (ethnocide), որն ավելի շատ գործածվում է «մշակութային ցեղասպանություն» կամ «ազգային ինքնությունը վերացնելու քաղաքականություն» նշանակություններով: Համեմատենք ցեղասպանությունն անվանող հիմնական տերմինը և հայերի ցեղասպանությունն անվանող օտար տերմինը. **գենոցիդ** (հուն. γένος «տոհմ, ցեղ», լատ. caedere բոց. «ցեղի, տեսակի ոչնչացում» (Словарь иностранных слов, Москва, 1986, էջ 118) և **արմենոցիդ** (օտարները հայերին հաճախ անվանում են armen-, իսկ երկրորդ բաղադրիչը նույնն է): Ակնհայտ է, որ **արմենոցիդ**-ը համաբանության արդյունք է:

² **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 6, Երևան, 1980, էջ 134:

այդ տերմինի ստեղծման ժամանակին և հեղինակին: Ասվում է. «**Հայասպանություն** տերմինն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել 1967 թ. հուլիսին, Փարիզում կայացած՝ ոճրի կանխարգելման միջազգային 2-րդ համագումարում, ուր քննվեց նաև հայկական Մեծ եղեռնը: Լիբանանցի (արաբ) իրավագետ Մետր Մուսա Պրենսը համագումարին ներկայացրած զեկուցման մեջ հայերի կոտորածը կոչեց **հայասպանություն** («արմենոցիդ») և այն որակեց «ցեղասպանությունների հայր»³:

Հայկական այլ հանրագիտարաններ այս գիտաբառը հիշատակում են հիմնականում վերնում ասվածին առնչվող խոսքաշարերում:

«Հայ Սփյուռք» հանրագիտարանը, ներկայացնելով հայագիտությունը Լիբանանում, վերոհիշյալին ավելացնում է, որ Մուսա Պրենսը նույն տեսակետը հիմնավորել է իր կնոջ՝ Մարի-Անժ Պրենսի գործակցությամբ գրված «Անպատիժ մի ցեղասպանություն. Հայասպանությունը մարդկության դեմ գործված ոճիրների ոլորտում» ֆրանսերեն գրքում (1967 թ., ընդարձակ տարբերակը՝ 1975 և 1988 թվականներին. այն Պրենսի «Ցեղասպանությունը կամ կանխամտածված, հավաքական ջարդերի արդի ծավալները» հինգհատորյակի երկրորդ հատորն է. համառոտ տարբերակը (1967-ի) հայերեն հրատարակվել է 1969 և 1987 թվականներին)⁴:

³ Նույն տեղում:

⁴ «**Հայ սփյուռք**» **հանրագիտարան**, Երևան, 2003, էջ 312-313 (բառահոդվածի հեղինակ՝ **Ս. Սանջյան**): Հմմտ. **Moussa Prince** avec la collaboration de **Marie-Ange**. Un génocide impuni: L'Armenocide. (Dans le cadre des crimes contre l'humanité). Introduction, Heidelberg Press-Lebanon, 1967, **Բրենս Ս.**, Անպատիժ ցեղասպանություն մը: Հայասպանությունը: Թարգմ.՝ Տիգրան Ոսկունի, Բեյրութ, 1969: Ի դեպ, իրավագետի ազգանունը հայերեն հանդիպում է երեք տարբերակով. արևելահայերենում հիմնականում՝ Պրենս, արևմտահայերենում՝ Բրենս, Փրենս:

«Հայկական հարց» հանրագիտարանում «Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը պատմագրության մեջ» բառահոդվածում արաբական պատմագրությանն անդրադառնալիս հիշատակվում է Մ. Պրենսի «Հայասպանություն» գիրքը և նշվում, որ «Մուսա Պրենսը 1894-96-ի իրադարձությունները համարում է հայասպանության քաղաքականության սկիզբ», որ Պրենսը «գիտական շրջանառության մեջ դրեց «հայասպանություն», «ամենացեղասպան ցեղասպանություն» արտահայտությունները և ավստում է, որ մինչև օրս «հայասպանությունը չունի իր Նյուրնբերգը»⁵:

Մեկ գործածություն էլ տեսնում ենք մեծ հայասեր Ֆ. Նանսենին նվիրված բառահոդվածում. «1927-ին նորվեգ. Հրատարակվել է նրա «Հայաստանում» ծավալուն գիրքը գերմ. «Խաբված ժողովուրդը» վերտառությամբ, որտեղ հեղինակը մեղադրել է **հայասպանության** հանցավորներին»⁶: Սա վկայությունն է այն բանի, որ բառն արդեն ընդունված է եղել: **Հայասպանություն**-ն ըստ էության **հայոց / հայերի / հայկական ցեղասպանություն** բաղադրյալ անվանման իմաստի արտահայտիչն է:

Հանրագիտարանային վերոշարադրյալ տեղեկություններից կարող ենք եզրակացնել, որ **հայասպանություն** բառը հայոց լեզվի բառապաշարում հայտնվել է XX դարի 60-ական թվականներից, որպես Armenocide / **արմենոցիդ**-ի համարժեք⁷:

⁵ «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 274-275 (բառահոդվածի հեղինակ՝ Ն. Հովհաննիսյան): Այստեղ **հայասպանություն** կամ armenocide/**արմենոցիդ** բառահոդված չկա, թեպետ, մեր կարծիքով, կարող էր լինել, քանի որ անմիջականորեն առնչվում է հանրագիտարանի թեմատիկային:

⁶ «Հայկական հարց» հանրագիտարան, էջ 353:

⁷ Հմմտ. «1960-ական թվականներից պատմագիտական գրականության մեջ «Հայոց ցեղասպանություն» դեֆինիցիային զուգահեռ սկսեց կիրառվել նաև «Արմենոցիդ» եզրը, որի համար պարտական ենք լիբանանցի արաբ

Այժմ անդրադառնանք **հայաստանություն** բառի ստեղծման ժամանակին, հեղինակին և հանգամանքներին (փորձելով ճշգրտումներ մտցնել), տերմինային արժեքին, իմաստային կառուցվածքին, գործածության առանձնահատկություններին և բառարանային մշակմանը, ինչպես նաև բառի կազմության հիմքերին, այլ բառերի հետ ունեցած կապերին:

Սկսենք նրանից, որ **հայաստանություն** բառի բառակազմական հիմքը՝ **հայաստան** ածականը, հայերեն խոսքում տասնամյակների «կենսագրություն» ուներ, երբ ստեղծվեց քննարկման առարկա ցեղասպանագիտական տերմինը:

Մեր պրպտումներից պարզվեց, որ **հայաստան** բառը գործածվել է տակավին հետեղեռնյան շրջանից՝ XX դարի տասական թվականներից սկսած, մասնավորապես գրական արևմտահայերենում: Այսպես. «Իթթիհատականներու համախալամական քաղաքականութիւնը եւ 1915ի **հայաստան** եղեռնին գաղտնիքը»⁸: Այդպես էլ հետագա տարիներին, ինչպես՝ «Մասնաւոր պաշտօնեաներ Հալէպ կը դրկուէին այն **հայաստան** ծրագրին իրականացման համար»⁹: Քսանական թվականներին բառը գոյականաբար գործածված ենք տես-

պատմաբան Մուսա Պրենսին» (**Հովհաննիսյան Ն.**, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010, էջ 34-34):

⁸ «**Հայ աշխարհ**», գրականագիտական եւ հասարակագիտական շաբաթաթերթ, Կ. Պոլիս, Ա տարի [1919], թիւ 1, 14/27 Յնվր, էջ 3 (վերնագիր): Պոլսական թերթում նման բառակապակցության գործածությունն այնքան էլ զարմանալի չէ. 1918 թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիայում ստեղծվեցին հարցաքննիչ հանձնաժողովներ, նշանակվեցին պետական մեղադրողներ՝ երիտթուրքական կառավարության ղեկավարների և «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների նկատմամբ դատավարություն սկսելու համար. գլխավոր խնդիրը հայկական ջարդերի վերաբերող հանցանշաններ, ապացույցներ և վկայություններ հավաքելն էր:

⁹ **Անտոնեան Ա.**, Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները եւ Թալէադ փաշա, Բոստոն, 1921, էջ 29 (լուսապատճենմամբ 1990-ին հրատարակվել է Երևանում):

նում նաև արևելահայերենում. «.... նրանց դնելով Արդիւ-
Համիդների, Թալեթ-Էնվերների, Լորանով-Ռոստովսկի-
ների, Նիկոլայ Երկրորդների, Չեմբերլենների et tutti quanti,
ուրիշ **հայասպանների** հետ միասին....»¹⁰:

Այսպիսով՝ **հայասպանություն** բառի ածական հիմքը՝
հայասպան-ը, ունեինք¹¹, նրան ավելացվել է **–ություն** գոյա-
կանակերտ վերջածանցը, բառակազմական մի քայլ, որ
սովորական է հայերենի բառակազմության մեջ:

Հայասպանություն բառի ստեղծման հիմքեր հայոց
լեզվում կային այլ առումով ևս: Դիտարկենք դրանք:

Մեզ թվում է, որ բառի ստեղծման գործում կարևոր դեր
է խաղացել համաբանության (կամ նմանակության) օրենքը:
Չպիտի անտեսենք այն փաստը, որ տակավին XIX դարի
կեսերից հայերենում գործածվել է քննարկվող բառի հետ
ձևաիմաստային ակնհայտ ընդհանրություններ ունեցող

¹⁰ **Լեօ**, Թիրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Ա,
Փարիզ, 1934, էջ 4 (լուսապատճենմամբ վերահրատարակությունը՝
Երևան, 1994): Արձանագրել ենք նաև ավելի ուշ շրջանի գոյականաբար
գործածություններ՝ արևմտ. «Գերմանիոյ տխրահոշակ դեսպանը, Վան-
կենհայմ, որ բացորոշ կերպով քաջալերեց իթթիհատական **հայասպան-
ները**» (տե՛ս Յուշամատեան Մեծ Եղեռնի, Բեյրութ, 1965, էջ 278) և արևել.
«.... համարելով դրանք ողբերգություն, իսկ նրա ոգեշնչողներին՝ արկա-
ծախնդիրներ, **հայասպաններ**» (տե՛ս **Հարությունյան Շ. Ռ.**, Սովետահայ
պատմագրությունը 1920-ական թվականներին / Հայկ. ՍՍՌ գիտ. ակա-
դեմիայի տեղեկագիր, Հասարակական գիտություններ, հ. 3, 1963, էջ 11):

¹¹ Մի բառարանում **հայասպան**-ը շիրագյան մեկ գործածության հիման
վրա թյուրիմացաբար նոր է համարվել (տե՛ս **Մեյքիխանյան Փ. Գ.**, Նոր
բառերի բացատրական բառարան, Երևան, 1996, էջ 107): Բառարանագիրը
չի ստուգել և պարզել, որ **հայասպան**-ը ոչ միայն գործածության մեջ է եղել,
ինչպես ցույց տվեցինք բնագրային օրինակներով, այլև վաղուց ի վեր
քանիցս արձանագրվել է հայերեն մի շարք կարևոր բառարաններում:
Այսպես՝ **Պետրոս վրդ. Ճիզմեճեան**, Հայերեն աշխարհաբար լեզուի
լիակատար բառարան, հ. 2, Հալեպ, 1957, էջ 794, **Տեր խաչատուրեան Արտ.**,
Գանգրունի Հ., Տոնիկեան Փ. Կ., Հայոց լեզուի նոր բառարան, Բեյրութ, 1968,
էջ 407, **Ճեթեճեան Գնել արք.**, **Տոնիկեան Փ. Կ.**, Հայոց լեզուի նոր բառարան,
հ. 1, Բեյրութ, 1992, էջ 1137:

ազգասպանություն-ը: Այսպես. «...հանցավոր են լինում ազգի առջև, և այս հանցանքի գաղափարը միմիայն կարող է բացատրել այս զարհուրելի բառը՝ **ազգասպանություն**» (Մ. Նալբանդյան, «Հիշատակարան», 1860 թ.)¹²: Ավելի ուշ՝ «Մի թե սա պատերազմ չէ, պատերազմ հոգեհավաճման, լեզվակալության, **ազգասպանության...**» (Ղ. Աղայան, «Թեմական տեսուչ», 1881 թ.)¹³:

Ազգասպանություն – **հայասպանություն** գուցահեռը կարևոր է թե՛ կառուցվածքային և թե՛ իմաստային տեսանկյուններից: Իրենց կազմում **հայ** բաղադրիչն ունեցող բառերում նման այլ գուցահեռներ ևս կարող ենք մատնանշել: Այսպես՝ **ազգապատում** – **հայապատում**, **ազգահավաք** – **հայահավաք**¹⁴ և այլն:

Հայասպանություն բառի ստեղծման անմիջական նախօրինակ կարող է դիտվել **ցեղասպանություն** տերմինը, որը ժամանակագրական առումով **ազգասպանություն**-ից շուրջ հարյուր տարի անց է կազմվել: Ճիշտ այդպես էլ **գենոցիդ**-ի համաբանությամբ ստեղծվել է **արմենոցիդ**-ը: Այստեղ գործ ունենք մի կողմից համաբանության, մյուս կողմից՝ բառապատճենման հետ. օտար բառի հայերեն համարժեքը լիովին համապատասխանում է հայոց լեզվի բառակազմական օրինաչափություններին:

Եվ, իհարկե, կարող ենք համեմատել նման կառուցվածք ունեցող գրաբարյան բառերի հետ, ինչպես՝ **անձնասպանություն**, **եղբայրասպանություն**, **հայրասպանություն**,

¹² Նալբանդյան Մ., Երկեր, Երևան, 1985, էջ 393: Ընդգծումը Նալբանդյանինն է:

¹³ Աղայան Ղ., Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 1, Երևան, 1962, էջ 244: Ընդգծումը մերն է:

¹⁴ Այս բառի մասին տե՛ս Գյուրջիյան Ղ., «**Հայահավաք(ում)**. Հասկացությունը և բառային դրսևորումները» / «Էջմիածին» հանդես, 2016, Բ, էջ 38-56:

մանկասպանություն, մարդասպանություն¹⁵: Սա հստակ ցույց է տալիս, որ գրաբարում լավ յուրացված էր «այսինչասպանություն» կամ «անձնանիշ գոյական+սպանություն» բառակազմական մասնակադապարը: Կազմությունների առաջին բաղադրիչները մարդ, անհատ նշանակող բառեր են (**մարդ** և **անձ**), որոնք այդ իմաստն արտահայտում են ընդհանուր ձևով, ինչպես նաև ազգակցական կապ կամ տարիք նշանակող բառեր (**հայր**, **եղբայր** և **մանուկ**): Նկատենք նաև, որ այս բառերից և ոչ մեկի առաջին բաղադրիչը որևէ ազգ, ժողովուրդ նշանակող բառ չէ:

Ամբողջ հայերենի ընդգրկմամբ **հայասպանություն**-ն իր տեսակի մեջ (երբ բաղադրության առաջին բաղադրիչն ազգ, ժողովուրդ նշանակող բառ է) միակը չէ: Տակավին XX դարի սկզբին լույս է տեսել Շահրիարի (Համբարձում Առաքելյան) «Զհուդ-Քուշան (**Հրեասպանություն**) (պարսկերեն բառի պատճենումն է – Դ.Գ.), վեպ Պարսկաստանի կեանքից» գիրքը (արտատպված «Մուրճ» ամսագրից, Թիֆլիս, 1902): Այս գրքի մասին «Լումայի» գրախոսականում գրված է. «Պ. Շահրիարի գրքույր կրում է Զհուդ-Քուշան, այսինքն **հրեասպանություն** վերնագիրը, բայց հրեաների դրուրեանը Պարսկաստանում նրա մեջ շատ քիչ տեղ է տրուած: **Հրեասպանությունը** կատարում է գրքույկի վերջում»¹⁶: Նշանակում է՝ հայերենի բառակազմությունը տվել էր մեզ հետաքրքրող բառի՝ **հայասպանության** անմիջական նախօրինակը: Ի դեպ, **հրեասպանություն** բառը հայերենի բառարաններում արձանագրված չէ, թեպետ հետագայում եղել են այլ գործածություններ ևս:

Հասկանալի է, թե ինչու են ազգություն նշանակող առաջին բաղադրիչով հայերենում հենց այս բառերը կազմվել

¹⁵ **Հ. Գաբրիել Աւետիքեան, Կ. Խաչատուր Միրսէլեան, Կ. Մկրտիչ Ազգերեան**, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837, Կ. Ա, էջք 194, 653, Կ. Բ, էջք 34, 205, 222:

¹⁶ «Լումայ» գրական հանդես, Տիֆլիս, 1903, գ. 1 (յուն.-փետր.), էջ 237:

(**հայասպանություն** և **հրեասպանություն**, հմմտ. Armenocide և Judocide): Աշխարհի հնագույն ժողովուրդներից այս երկուսն իրենց ողջ պատմության ընթացքում հաճախ են հալածանքների, ջարդերի և կոտորածների ենթարկվել: Այս բառերը նշված իրադարձությունների նշանակիչներ են դարձել: XX դարում հենց հայերի և հրեաների նկատմամբ են իրականացվել մարդկությանը հայտնի ահավոր և ամենից ընդգրկուն ցեղասպանությունները: Բոլորովին պատահական չէ, որ այս երկու բառերը երբեմն հանդես են գալիս նույն համատեքստում, ինչպես՝ «.... պիտի փորձենք զուգահեռ մը կազմել մեր դարուն երկու մեծ ցեղասպանութեանց՝ **Հայասպանութեան** եւ **Հրեասպանութեան** միջեւ¹⁷»:

Ձևաիմաստային տեսանկյունից **հայասպանություն**-ը որոշակիորեն աղերսվում է **ազգասպանություն**, **ցեղասպանություն** և **ժողովրդասպանություն**¹⁸ բառերին, որոնք այդ նույն հասկացության (ազգի, ցեղի, ժողովրդի) ընդհանուր՝ չտարորոշված գաղափարն են արտահայտում:

Հայասպանություն բառի կազմության և գործածության պատմությունը հստակեցնելու համար անդրադառնանք ամենաուշագրավ իրողություններից մեկին:

Հայասպանություն բառի ստեղծման ժամանակը (թերևս նաև հեղինակի հարցը) ճշգրտելու համար խիստ կարևոր է հետևյալ փաստը, որ ցայսօր անուշադրության է մատնվել: 1964 թվականին Նյու Յորքում լույս է տեսել ամերիկահայ պրոֆեսոր Մանասե Կ. Սևակի «Հայկական մեծ եղեռնը եւ

¹⁷ **Բրենս Մ.**, Անպատիժ ցեղասպանութիւն մը: Հայասպանութիւնը, էջ 82:

¹⁸ Հմմտ. «Տակաւին տասնեւինգ յօդուած ունի ՄԱԿի այս ուլխը չորս յօդուածները կը բաւեն՝ ճշդելու ու բնորոշելու համար ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԺՈՂՈՎՐԴԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՑԱՆՔԸ ԵՒ ՊԱՏԻԺԸ» («Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 1100) (գլխագրերով զատումը մերը չէ – Դ. Գ.):

մենք (թրքական **հայասպանություն**) (Turkish Armenocide¹⁹)» գրքույկը: Այստեղ կարդում ենք. «Թուրքերը երկրորդ ոճիր մը եւս կը գործեն, այսինքն՝ **հայասպանությունը** ֆիզիքապէս իրականացնելէ յետոյ Թրքահայաստանի սահմաններուն մէջ...», «...Իթթիհատականները կամ Երիտասարդ Թուրքերը ժողով մը գումարած են եւ հոն Տոքթ. Այսինչը ճառ մը խօսելով՝ ուրուագծած է **Հայասպանութեան** ծրագիրը», «**Հայասպանության** մեծ ողբերգությունը տեղի ունեցաւ ասկէ 49 տարիներ առաջ», «Գերմանիա հանդիսացաւ Թուրքիոյ պաշտպանը եւ մեղսակից եղաւ Թուրքիոյ կողմէ ծրագրուած **հայասպանութեան**», «... պատրաստել եւ մեծաքանակ թիւով լոյս ընծայել՝ Թուրք եւ Գերման կառավարություններու մեղսակցութեան արդիւնքն եղող **Հայասպանութեան** վաւերագրական պատմությունը»²⁰:

Նոյն հեղինակը՝ Մանասէ Կ. Սևակը, «Գերման-թուրք եղբայրակցութեան դաւադրությունը եւ **հայասպանութեան** ներքին ծալքերը» վերնագրով մի նյութ էլ հրապարակել է 1965-ի բեյրության հայտնի «Յուշամատեն»-ում²¹:

Այսպիսով **հայասպանություն** բառի պատմության մեջ կարող ենք կարևոր ճշգրտում անել. որպէս բառային միա-

¹⁹ Armenocide բառի մէկ այլ գործածություն էլ կարող ենք հիշատակել: Ա. Անտոնյանի «Մեծ Ոճիր» գրքի անգլերէն թարգմանության երկրորդ հրատարակությունը նոյն 1964-ին լոյս է տեսել այսպիսի վերնագրով՝ The Genocide of the Armenians by Turks (The Turkish Armenocide) (հրատարակվել է հավանաբար Ֆիլադելֆիայում. տե՛ս «Յուշամատեն Մեծ Եղեռնի», Բեյրութ, 1965, էջ 222):

²⁰ **Սեւակ Մ. Կ.**, Հայկական մեծ եղեռնը եւ մենք (թրքական **հայասպանություն**) (Turkish Armenocide), Նյու Յորք, 1964, էջ 4, 5, 6, 14, 19: Ի դէպ, այստեղ քանիցս հանդիպում են նաև **ազգասպան** և **ցեղասպան** բառերը. «Երէկի **ազգասպան** եւ ոճրագործ թուրքը այսօր անցած է «քաղաքակրթուած» ազգերու շարքին...», «Գերման կրօնականները մոռցան Քրիստոսի սիրոյ վարդապետութիւնը եւ քարօզեցին **ցեղասպան** Թուրքիան...» (էջ 10):

²¹ Տե՛ս «Յուշամատեն Մեծ Եղեռնի», էջ 265:

վոր՝ բառույթ, հայերենում (գրական արևմտահայերենում) այն գործածության մեջ է եղել առնվազն 1964-ից, և գործածությունները կապվում են Մանասէ Կ. Սևակի անվանը: Առայժմ սրանք են մեզ հայտնի առաջին վկայությունները: Իսկ տերմինի արժեքով գործածության սկիզբը պետք է համարել թերևս 1967-1969 թվականները, երբ Մ. Պրենսը Armenocide-ը սահմանեց իբրև իրավական-ցեղասպանագիտական բովանդակություն ունեցող գիտաբառ ու միջազգային գիտական շրջանառության մեջ դրեց, և այն «հայերենացվեց» (կամ, ավելի ճիշտ, գտնվեց նրա համարժեքը):

Հարկ է հատուկ նշել, որ Մ. Պրենսն ինքը որոշակի վերապահում ունի Armenocide-ի ստեղծման հեղինակի հարցում: Նա նշում է. «Պիտի քննենք այս ցեղասպանությունը, զոր կոչեցինք «**Հայասպանություն**», առանց տեղեակ ըլլալու, թե այս բացատրությունը մեզմէ առաջ գործածուա՞ծ է թէ ոչ»²²: Ակնհայտ է, որ լիբանանցի իրավագետը Armenocide-ի ստեղծումը վստահաբար իրեն չի վերագրում: Բառի գործածության ավելի վաղ օրինակներ մենք մատնանշեցինք. լեզվական ակնհայտ փաստերը հնարավոր չէ շրջանցել:

Այստեղ խնդիրն այլ կերպ պիտի լուծել: Հնարավոր է, որ բառն արդեն գոյություն ուներ. Մ. Պրենսն ուղղակի բառին տերմինային արժեք հաղորդեց և ցեղասպանագիտական-իրավական տերմինի արժեքով միջազգային գիտական շրջանառության մեջ դրեց: Դրանից հետո Armenocide-ի հայերեն համարժեքը՝ **հայասպանություն**-ը, սկսեց կիրառվել նաև ցեղասպանագիտական տերմինի արժեքով: Հավելենք, որ որպես Armenocide-ի համարժեք հազվադեպ կիրառվում է (հատկապես թվային տիրույթում) նաև **հայասպանդ** բառը:

Այժմ պարզենք, թե **հայասպանություն**-ն ինչպե՞ս է ներկայացվել հայոց լեզվի բառարաններում:

²² Մ. Քրենս, Անպատիժ ցեղասպանություն մը: Հայասպանությունը, էջ 18:

Հայաստանություն բառի նկատմամբ հայ բառարանագիրները զարմանալի անուշադրություն են ցուցաբերել. այս բառը, կարելի է ասել, ուղղակի անտեսվել է: **Հայաստանություն** բառահոդված չունեն արևելահայերենի ընդարձակ բացատրական բառարանները, այն չի արձանագրվել նաև ամենաընդգրկուն ուղղագրական բառարանում²³:

Հոմանիշների հայտնի բառարանները ևս չունեն **հայաստանություն** գլխաբառ, այն չենք գտնում նաև **եղեռն** և **ցեղասպանություն** բառերի հոմանիշների մեջ²⁴, երբ հոմանշությունն ակնհայտ է. **ցեղասպանություն** և **հայաստանություն** բառերի մեջ գործում է ընդհանուրի և մասնավորի հարաբերություն²⁵: Հմմտ. «**Հայաստանությունը՝** մշակութային ցեղասպանության համատեքստում»²⁶, ինչպես նաև «... նա ներկայացրեց իր «Ցեղասպանություն, **հայաստանություն, ողջակիզում**» խորագրով սկավառակը»²⁷: Ուստի հոմանիշների բառարանները հետագայում պետք է լրացնեն այս բացը:

²³ **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 3, Երևան, 1974, **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, **Բաբսեղյան Հ. Խ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երևան, 1973: Հավելենք, որ այս բառարանները չունեն նաև **հայաստան** ածականը:

²⁴ **Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2003: Կան **հայաստան / հայասպառ**-ը՝ իբրև **հայաջինջ**-ի հոմանիշ (էջ 252):

²⁵ Ուշագրավ է (և միանգամայն ճիշտ), որ «Հայկական սովետական հանրագիտարանում» **ցեղասպանություն** բառահոդվածից հղում է արվում **հայաստանություն** հոդվածին (հ. 12, Երևան, 1986, էջ 149):

²⁶ «Վեմ», 2010, թիվ 2 (30), էջ 102 (**Ա. Հովհաննիսյանի** հոդվածի վերնագիրն է):

²⁷ www.ysu.am/news/hy/rGj6fVkyN3T8PpLTDyIaoVd3G:

Հայասպանութիւն բառը չունեն գրական արևմտահայերենի բառարանները²⁸ ևս: Այն դեպքում, երբ արևմտահայերեն գրքեր են լույս տեսել **հայասպանութիւն** բաղադրիչն ունեցող վերնագրերով: Մանասէ Կ. Սևակի «Հայկական մեծ եղեռնը եւ մենք (թրքական **հայասպանութիւն**)» (Turkish Armenocide)» և Մուսա Պրենսի «Անպատիժ ցեղասպանութիւն մը: **Հայասպանութիւնը**» արդէն հիշատակված գրքույկներից բացի հրատարակվել են սովար (և կարևոր) հատորներ՝ «**Հայասպանութիւնը** եւ Ամերիկեան Քոնկրետը» (Բեյրութ, 1978) և «Եոզղատի **Հայասպանութեան** Վաւերագրական Պատմութիւնը» (պատրաստեց՝ Գրիկեր, Նյու Յորք, 1980): Էլ չենք խոսում դրանցում և այլուր հանդիպող բազում գործածությունների մասին, ինչպես՝ «1878ի Պերլինի հռչակաւոր դաշնագիրը, իր ոգիով, արդէն իսկ կը նախատեսէր **Հայասպանութիւնը**», «**Հայասպանութեան** կապակցութեամբ Նիւրենպերկ պիտի չըլլար...»²⁹ կամ «Եոզղատ գաւառի **հայասպանութեան** պատասխանատուները դատող Թուրք Պատերազմական Ատեանը ունեցաւ 18 նիստեր...», «... եղելութիւններ **հայասպանութեան** վերաբերեալ դիւանական վաւերագրերու մասին»³⁰:

Բառարանագիրները պետք է հաշվի առնելին (այսուհետև թերևս հաշվի կառնեն) լեզվական ակնհայտ փաստերը:

Հայասպանություն-ն իբրև գլխաբառ տեքմին փաստորեն առկա է միայն հայկական սովետական հանրագիտարանում³¹:

²⁸ **Ճերեճեան Գնէլ արք., Տօնիկեան Փ. Կ.**, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1 (ունի միայն **հայասպան**, որից հղում է արվում **հայակեր**-ին. էջ 1137), **Անդրանիկ վրդ. Կռանեան**, Բառգիրք հայերեն լեզուի, Բեյրութ, 1998:

²⁹ **Բրենս Մ.**, Անպատիժ ցեղասպանութիւն մը: Հայասպանութիւնը, էջ 64, 65:

³⁰ «Եոզղատի **հայասպանութեան** վաւերագրական պատմութիւնը», էջ 66, 71:

³¹ «Հայկական համառոտ հանրագիտարանում» **հայասպանություն** բառահոդված չկա, թերևս այն պատճառով, որ համառոտ է:

Բանասիրական բառարաններից **հայասպանություն**-ը հանդիպում է միայն նորաբանությունների բառարանում՝ «հայերին սպանելը, նրանց հանդեպ սպանդ՝ կոտորած անելը» բացատրությամբ և բնագրային օրինակով. «Ադրբեջանական ժողճակատի պարագլուխները Բաքվում կազմակերպած դաժան **հայասպանությամբ** համահավասարվեցին քեմալականներին, իթթիհատականներին և մուսավաթականներին» («Հայրենիքի ձայն», 7.02.1990)³²: Սա անշուշտ դրական փաստ է, միայն թե պիտի արձանագրենք, որ բառը վաղուց արդեն նորաբանություն չէ³³:

Հայերեն բառարաններից **հայասպանություն** բառի բացակայությունը առնվազն տարօրինակ է: Հայերս պահանջում ենք ցեղասպանության միջազգային ճանաչում և հատուցում, սակայն ցայսօր թարգմանական բառարաններում չենք գտնել *Armenocide* գիտաբառը և նրա համարժեքը՝ **հայասպանություն**-ը: Սրանք բացակայում են հայաստանյան և սփյուռքյան ֆրանսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն, անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն, հայ-ռուսերեն, ռուս-հայերեն և երկլեզվյան մյուս ընդարձակ տպագիր բառարաններից: Սա գրեթե նույնն է, որ այլալեզու բառարանները անտեսեն *Genocide* /**գենոցիդ** կամ *Holocaust* /**Հոլոքոստ** «Ողջակիզում» բառերը:

Բառարանային թերացումը պետք է վերացնել, հատկապես որ վերջին շրջանում աշխուժացել է **հայասպանություն** բառի գործածությունը նաև գրական արևելահայերենում,

³² **Էլոյան Ս.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002, էջ 274:

³³ Միաժամանակ, սակայն, պիտի փաստենք, որ ո՛չ **հայասպան**-ը, ո՛չ էլ **հայասպանություն**-ը արևելահայերենում այդ շրջանում դեռ լայն գործածություն չունենին. Արևելահայերենի ազգային կորպուսում (www.eanc.net) այն չի հանդիպում: Սա չի նշանակում, թե բառը չի գործածվել, այլ որ կորպուսը տարատեսակ բնագրերով հարստացվելու կարիք ունի:

մասնավորապես գրավոր (գիտական և հրապարակախոսական) խոսքում: Օրինակներ՝ «Թուրքիայի հիմնադիր Մուստաֆա Քեմալը ևս օգտվում էր **հայասպանության** մեջ ակտիվորեն ներգրավված գործիչների ծառայություններից», «... ռուսական մամուլը միշտ նշում է, թե այդ սպանությունները ողբերգական պատահականություն էին, սակայն պետք է հաշվի առնել այն փաստը, որ Ադրբեջանը տարիներ շարունակ պետական մակարդակով **հայասպանություն** է քարոզում: Ադրբեջան պետության համար հայ սպանելը հերոսություն է»³⁴: Անկախ նրանից, թե ի՞նչ արժեքով է այն կիրառվում՝ տերմինային, թե ոչ:

Հարկավոր է նկատի ունենալ, որ **հայասպանություն** բառը գործածվում է ինչպես տերմինային, այնպես էլ ոչ տերմինային արժեքով: Դիտարկենք բնագրային հետևյալ օրինակները, որոնցում բառը գործածվել է ոչ տերմինային նշանակությամբ. «Ռուսաստանն ու Վրաստանը կարծես թե «մրցակցում» են **հայասպանության** գործում: Հայկական մամուլը չի հասցնում գրել այս երկրներում հայերի սպանությունների բոթը», «Ադրբեջանում **հայասպանությունը** դե ֆակտո հանցանք չէ» (խոսքը Բուդապեշտում հայ սպա Գ. Մարգարյանին սպանած Ռ. Մաֆարովի մասին է)³⁵: Այստեղ խոսվում է առանձին հայի կամ հայ անհատների, բայց ոչ հավաքականության ծրագրված սպանության / սպանդի մասին, որը համապատասխանում է ցեղասպանության հատկանիշներին: Ըստ էության գործ ունենք բառիմաստի նեղացման հետ:

Այս իմաստի պարզաբանման համար ուշագրավ է **հայասպան** բառի հետևյալ բացատրությունը՝ «հայ մը կամ հայութիւնը սպաննելու ծրագիր ունեցող. հայաջինջ», որ

³⁴ **Անանյան Ա.**, Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում / Հայոց ցեղասպանություն. արդի խնդիրներ, թ. 9, Երևան, 2004, էջ 18: www.panorama.am/am/news/2010/10/26/golos/1038396

³⁵ Տե՛ս www.hayary.org/wph/?p=228, <http://civilnet.am/2012/09/03/>:

գտնում ենք սփյուռքյան հայտնի բառարաններից մեկում³⁶: Իմաստային հիշյալ դրսևորման հարցում փաստորեն զգալի դեր ունի բառակազմական հիմքի՝ **հայասպան** -ի ազդեցությունը, հմմտ. **«Հայասպանություն»** մոլուցքը³⁷:

Թերևս այս իմաստից խուսափելու միտումով ևս կարելի է բացատրել այն, որ մասնագետները երբեմն նախընտրում են միջազգայնորեն ընդունված օտար տերմինը՝ **արմենոցիդ**-ը³⁸, կամ **հայասպանություն**-ը դնում են նրա կողքին՝ որպես պարզաբանում: Այսպես, օրինակ, պրոֆ. Ն. Հովհաննիսյանը, որ հեղինակն է «Հայոց ցեղասպանություն. հայասպանություն՝ ամենացեղասպան ցեղասպանություն» աշխատության (Երևան, 2009), հրատարակել է **«Արմենոցիդը** ճանաչված ցեղասպանություն է» վերնագրով գիրքը, որտեղ **հայասպանություն** տերմինը գործածված է մոտ տասն անգամ: Բոլոր դեպքերում հայերեն բառը միջազգային տերմինի բացահայտիչն է, ինչպես՝ «.... Հայերի նկատմամբ օսմանցիների կիրառած ոճրագործությունը կարելի է և պետք է կոչել **«Արմենոցիդ»**՝ **«Հայասպանություն»**, **«Արմենոցիդի՝ Հայասպանության** դեպքում երկուսի հասցեն էլ շատ հստակ է», կամ զուգադիրը՝ **«Հիտլերը սխալվեց ոչ միայն պատերազմի հարցում, այլև Արմենոցիդ-**

³⁶ Տե՛ր Խաչատուրեան Արտ., Գանգրունի Հ., Տոնիկեան Փ. Կ., Հայոց լեզուի նոր բառարան, էջ 407:

³⁷ Խրլոպեան Գ. Տ., Ցեղասպանագիտություն, Բեյրութ, 2006, էջ 312: Սովաբաժավալ այս գրքում սա խնդրո առարկա բառի եզակի կիրառություն է:

³⁸ Մի բառացանկում իբրև օտարաբանություն գետեղվել է **արմենոցիդ** բառը, որի փոխարեն առաջարկվում են **հայասպանություն** և **հայաջնջում** հայերեն կազմությունները (Փալանդույան Հ., Գործածական բառացանկ: Օտարամուտ բառերի հայերեն համարժեքներ, Երևան, 2013, էջ 15) (հմմտ. Պետրոս վրդ. Ճիզմեճեան, Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 2, էջ 794), որտեղ **հայասպան**-ը բացատրվում է **հայաջինջ** բառով): Մեր կարծիքով արդեն ընդունված տերմինի (**հայասպանություն**) կողքին **հայաջնջում**-ը նշելն ավելորդ է և տերմինային շփոթ կարող է առաջացնել:

Հայաստանությունը հիշելու հարցում»³⁹ և այլն: Կամ էլ այսպես է պատահում՝ իբրև պարզաբանում. «Մուսա Բրենսը առաջինն էր, որ հայերի ցեղասպանությունն անվանեց արմենոցիդ (**հայասպանություն**), որը մնացել է անպատիժ»⁴⁰:

Հայտնի է, որ հայասպանություն գիտաբանն ստեղծվել է Թուրքիայի իրականացրած ոճրագործությունն անվանելու նպատակով: Ուշագրավ է, որ ներկայումս այն գործածվում է նաև Ադրբեջանի ինչպես անցյալի, այնպես էլ այժմյան հակահայ և հայասպան քաղաքականության առնչությամբ: Դիտարկենք բնագրային օրինակները. «1918-1920 թթ. Ադրբեջանում **հայասպանության** և էթնիկական զտումների մասին գործը», «Ադրբեջանական պետական ֆաշիզմի ցեղասպանական ծրագրերին այսօր էլ կարելի է համարժեքորեն պատասխանել նրա դեմ իրավական հետապնդում սկսելով՝ դատարանի դահլիճում նրան մերկացնելով **հայասպանության** մեջ, սկսած հայերի կոտորածներից Բաքվում (1918 թ.) և Շուշիում (1920 թ.), մինչև էթնիկական զտումները Նախիջևանում (1918-1988 թթ.), Սումգայիթում, Կիրովաբադում, դարձյալ Բաքվում, դաշտային և լեռնային Ղարաբաղում (1988-1994 թթ.)»⁴¹:

Սա նշանակում է, որ տեղի է ունենում տերմինի ընդգրկման շրջանակի ընդլայնում, և **հայասպանություն** ասելով այսօր հասկանում ենք ոչ միայն 1894-ից Թուրքիայի սկսած և 1915-1923 իրականացրած ցեղասպանությունը, այլ նաև Ադրբեջանի (1918-1920 և 1988-1994): Պիտի արձանագրել նաև, որ մասնագիտական խոսույթից այս մոտեցումն անցել է

³⁹ **Հովհաննիսյան Ն.**, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, էջ 39, 125, 173:

⁴⁰ **Ստեփանյան Ս. Ս.**, Հայոց ցեղասպանության ճանաչումից մինչև Հայկական հարցի արդարացի լուծում / «Լրաբեր հասարակական գիտությունների», 2012, հ. 1, էջ 31:

⁴¹ **Այվազյան Ա.**, «Հայկական հարցն այսօր» (www.ardarutyun.org/?p=3771 (ընդգծումները հրապարակման հեղինակին են):

զանգվածային լրատվական միջոցների լեզվին: Ահա մեկ վերնագիր՝ «Հայաստանությունն Ադրբեջանի պետական քաղաքականությունն է»⁴²:

Հայաստանություն–ը չի գործածվում պետական-պաշտոնական փաստաթղթերում: Այդ բանը հատկապես նկատվեց 2015 թ. Հայաստանի Հանրապետությունում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը նշելու ընթացքում: Դա կարելի է բացատրել թերևս այն հանգամանքով, որ **Հայոց (հայերի) ցեղասպանություն** տերմինային բառակապակցությանը զուգահեռ **հայասպանություն** բառի գործածությունը կարող է շփոթ առաջացնել նույն երևույթի անվանման հարցում:

Եզրակացություններ

1. **Հայասպանություն** բառն ստեղծվել է XX դարի 60-ական թվականներին գրական արևմտահայերենում, այն Armenocide իրավական տերմինի համարժեքն է: Այժմ ընկալվում է իբրև համահայերենյան բառային միավոր:

2. **Հայասպանություն** բառի ստեղծման և տերմինային արժեքի ձևավորման գործին առնչվում են պրոֆ. Մանասե Կ. Սևակի և իրավագետ Մ. Պրենսի անունները:

3. **Հայասպանություն** բառը կազմվել է 1915 թ. Հայոց Մեծ եղեռնից հետո գործածության մեջ մտած **հայասպան** ածականից՝ **-ություն** գոյականակերտ ածանցով, **ցեղասպանություն**, **ազգասպանություն**, ինչպես նաև **հրեասպանություն** բառերի համարանությամբ, գրաբարյան համանման կազմությունների փորձի հաշվառմամբ:

4. **Հայասպանություն** տերմինը կիրառվել (և կիրառվում) է Թուրքիայի իրականացրած հայոց ցեղասպանության կապակցությամբ, ներկայումս գիտական խոսքում և մամու-

⁴² www.panorama.am/am/news/2010/10/26/golos/1038396:

լում գործածվում է նաև Ադրբեջանի վարած հակահայ քաղաքականության առնչությամբ:

5. **Հայաստանություն** բառը բազմիմաստ է. տերմինի նշանակությունից (հայերի կամ հայության ծրագրված բնաջնջում. արմենոցիդ) բացի ունի նաև ոչ տերմինային նշանակություն (հայի կամ հայերի սպանություն):

6. Թեպետ բազում գործածություններին, ընդունված լինելուն՝ **հայաստանություն**-ը գրանցված չէ հայերենի հայաստանյան և սփյուռքյան բացատրական, հոմանիշների, թարգմանական և այլ բառարաններում (իբրև գլխաբառ կա Հայկական սովետական հանրագիտարանում և նորարանությունների մի բառարանում): Հարկավոր է լրացնել այդ բացը:

7. **Հայաստանություն** բառը հանդիպում է գիտական գրականության մեջ, ինչպես նաև մամուլի և հրապարակախոսության լեզվում, բայց ոչ պետական-պաշտոնական փաստաթղթերում:

Տե՛ս նաև **Դ. Գյուրջինյան**, *Հայաստանություն բառի պատմալեզվաբանական քննությունը*, «Էջմիածին», 2016, Դ, էջ 99-113:

ՀԱՅ ԲԱՌԻ ՀԱԿԱԲԵՎԵՈՐ

Մուտք

Դարեր շարունակ Հայոց աշխարհը բառացիորեն քամվել է. անդադար պատերազմների, անապահովության, զարհուրելի հարստահարության, դժվարին կյանքի և այլ պատճառներով երկրից շարունակաբար հեռացել են տասնյակ հազարավոր հայ մարդիկ՝ օտար ավերում խաղաղ հանգրվան փնտրելով: Այլ երկրներում նոր պայմաններին հարմարվելուն և աստիճանաբար ոտքի կանգնելուն զուգահեռ հայ տարագիրների առջև ծառացել են մի շարք կարևոր հարցեր՝ քրիստոնեական հավատքին և ազգային սովորույթներին հավատարիմ մնալը, մայրենի լեզուն պահպանելը և հաջորդ սերունդներին փոխանցելը, ազգային կառույցներ ստեղծելը, ուժացմանը դիմակայելը: Այս ամենը միավորվում են մեկ գերխնդրի շրջանակում, որ կարճ կարելի է այսպես ձևակերպել՝ հայ ինքնության¹ պահպանություն:

Հայերը, որպես կանոն, այլոց համեմատ կարողացել են որոշակի կազմակերպվածություն դրսևորել, ստեղծել գաղութներ, համայնքային կյանք, եկեղեցի կառուցել և դպրոց բացել, գրքեր ու մամուլ տպագրել, սերնդեսերունդ փոխանցել ավանդույթներ և այդպես դիմագրավել իրենց առջև մշտապես ծագած ազգապահպան խնդիրներին: Հայտնի է, որ հայկական որոշ գաղութների պատմությունը հարյուրամյակներով է չափվում:

XVIII դարի վերջերին սկիզբ առավ հայ պարբերական մամուլը, երբ 1794 թ. հոկտեմբերի 16-ին Հնդկաստանի Մադրաս քաղաքում լույս տեսավ տեր Հարություն քահանա

¹ Ինքնությանը վերաբերող զանազան հարցերի մասին տե՛ս «Ինքնություն», Երևան, 1995, «Ինքնության հարցեր»: Տարեգիրք, Երևան, 2002:

Շմավոնյանի «Ագդարարը»: Հայերեն պարբերականները կարևոր դեր կատարեցին հայ կյանքի կազմակերպման, հայոց լեզվի և առհասարակ հայ ինքնության պահպանման գործում: Շատ դեպքերում հենց պարբերականների էջերում էր մշակվում-կանոնարկվում աշխարհաբարը՝ նոր հայերենը, ստեղծվում էին նոր բառեր և բառակապակցություններ:

Մի շարք պարբերականների անուններ մշտապես գրանցվել են հայ մշակույթի պատմության մեջ: Դրանցից մեկը «Հյուսիսսփայլ» ամսագիրն է, որը 1858 թվականից² սկսեց լույս տեսնել Մոսկվայում (մինչև 1864-ը): Խմբագիրը Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ, առաջադեմ մտավորական Ստեփանոս Նազարյանն էր: Ամսագրի կենտրոնական մյուս դեմքը Միքայել Նալբանդյանն էր. այստեղ է լույս տեսել նրա գրական ստեղծագործությունների (արձակ և չափածո), հրապարակախոսական հոդվածների զգալի մասը:

«Հյուսիսսփայլը» մեծաթիվ նոր բառեր է դնում շրջանառության մեջ և զգալապես նպաստում արևելահայ գրական աշխարհաբարի մշակմանն ու բառապաշարի հարստացմանը, գրապայքարում նրա վերջնական հաղթանակին:

Մեզ հետաքրքրող և հայ ինքնությանն առնչվող բառի ծնունդը կապված է «Հյուսիսսփայլ» ամսագրի և նրա վերոհիշյալ երկու գլխավոր դեմքերի հետ: Խոսքը վերաբերում է **չհայ** բառին: Ուշագրավ է, որ այդ բառի գույգ գործածությունները հանդիպում են «Հյուսիսսփայլի» 1860 թվականի երկու տարբեր համարներում:

² Սա հիշարժան տարեթիվ է հայ պարբերական մամուլի պատմության մեջ. 1858-ին Մոսկվայում սկսեց լույս տեսնել նաև «Ճռաքաղ» ամսագիրը, Թիֆլիսում՝ «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը: Նույն թվականին լույս տեսավ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը (իմմտ. **Իշխանյան Ռ.**, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978, էջ 150):

Չհայ բառի ծնունդը

Չհայ բառն առաջին անգամ հանդիպում է 1860-ի առաջին համարում՝ Ստ. Նազարյանի «Պատմություն Հայոց ազգի» հրապարակման մեջ. «....Արշակունիքը, որ թէև օտար, **չհայ** արմատից թագաւորում են Հայաստանի վերայ...»³:

Երկրորդ անգամ բառը տեսնում ենք ամսագրի նույն տարվա հինգերորդ համարում՝ Մ. Նալբանդյանի «Հիշատակարանում»: Այսպես. «Եթէ դպրոցի խորհուրդը և նպատակը համաձայն չէ ազգի էական օգուտներին, եթէ նա մի մեքենայ է, Հայի զաւակի մէջ օտարութիւն պատուաստելու, լաւ է մանուկներին տգէտ Հայ մնալ, քան թէ դառնալ թերակիրթ **չհայ**»⁴:

Ընդամենը երկու գործածություն, որոնք հանդես են բերում տարբեր բառիմաստներ: Ստ. Նազարյանը **չհայ**-ը գործածել է «ոչ հայ / հայկական, օտար» իմաստով: Մ. Նալբանդյանի գործածած **չհայ**-ն այլ իմաստ է հանդես բերում՝ «ոչ լիարժեք հայ, օտարացող / օտարացած հայ»: Իմաստային տարբերությունը հստակ է. առաջին դեպքում չհայը հայ չէ, երկրորդ դեպքում հայ է, որը, սակայն, լիարժեք տեր չէ ազգային արժեքներին, լեզվին և օտարացման ուղին է բռնել:

«Հիշատակարանի» այս հատվածում Նալբանդյանը գործածել է նաև **չհայություն** բառը. «Ձեր ցանկութենից և աշխատութենից կախվում է ծաղկեցնել և փառաւորել այն, որ հազարների արիւնով և բիւրերի արտասուքով պահվել է մինչև այժմ. նոյնպէս ձեր ծուլութենից, անհոգութենից և **չհայութենից** է կախվում, որ ունայնանան մեր հօրերի և

³ «Հիւսիսափայլ» (Մոսկվա), 1860, հ. 1, էջ 27: Այլև «Մտեփաննոս Նազարեանի Երկերը», հ. 1, Թիֆլիս, 1913, էջ 158:

⁴ «Հիւսիսափայլ», 1860, հ. 5, էջ 381: Այլև **Նալբանդյան Մ.**, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 3, Երևան, 1982, էջ 184, **Նալբանդյան Մ.**, Երկեր, Երևան, 1985, էջ 393 և այլն:

մօրերի քաշածներ և մեք բոլորեքեան անյայտանանք»⁵: **Չհայություն** բառը⁶ կարող էր բաղադրված լինել **չհայ**-ից, ինչպես և **չ** ժխտական նախածանցով կարող էր կազմվել **հայություն** բառից, որն «իսկական հայ լինելը» իմաստով հանդիպում է նույն հատվածում: Երկուսն էլ տիպական բառակազմական քայլեր են և հավանական:

Իսկ ինչպե՞ս կազմվեց **չհայ** բառը: Հարցին պատասխանելու համար հպանցիկ անդրադառնանք **չ-** ժխտական նախածանցի բառակազմական արժեքին:

Չ- նախածանցն առաջացել է **ոչ** բառից⁷, **ո-**ի անկումով: Բառակազմական գործուն մասնիկ է **V** դարից սկսած: Միանգամայն ճիշտ է նկատվել՝ «**ան, ապ, չ, տ, դժ** կամ **տժ** որ բացասական կամ եղծական են՝ բառին հակառակ նշանակությւն տալով կամ չունենալ ցուցնելով»⁸: Այսինքն՝ այս նախածանցի միջոցով բացասվում է բառի հիմնական նշանակությունը կամ ցույց է տրվում մի հատկություն, մի բան չունենալը: Գրաբարում **չ-ն** դրվել է բայարմատի, գոյականի և ածականի վրա և կազմել ածականներ (**չտես** – չտեսնող, **չուղղափառ** – ոչ ուղղափառ, մոլորյալ, **չահագին** – ոչ երկյուղալի) և գոյականներ (**չաստուած** – ոչ աստված,

⁵ «Հիսսափայլ», 1860, հ. 5, էջ 384:

⁶ 1860-ին գործածված այս բառը **XXI** դարում հանկարծ հայտնվում է նոր բառերի բառարանում (տե՛ս «**Նոր բառեր**», Ա. պրակ, կազմողներ՝ **Գալստյան Ա. Մ.** և ուրիշներ, Երևան, 2015, էջ 155): Այստեղ տեսնում ենք նաև **հայասպան** բառը, որը **XX** դարի 10-ական թվականներին արդեն գործածվում էր և բառարանային գրանցում ունի (այս մասին հանգամանորեն տե՛ս **Գյուրջիյան Դ., Հայասպանություն** բառի պատմալեզվաբանական քննությունը / «Էջմիածին» հանդես, 2015, Դ, էջ 99-113):

⁷ **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 223:

⁸ **Հ. Արսեն Վ. Այտընեան**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866 / Քերականություն արդի հայերեն լեզուի, էջ 295, պ. 818:

սուտ աստված⁹, **քահանայ** – սուտ քահանա, քահանայի կոչմանն անարժան): Դրանք կազմվել են առավելաբար «նախաձանց+արմատ» (մի շարք դեպքերում՝ ածանցավոր կամ բարդ բառ) կաղապարով: Որպես կանոն՝ նախաձանցը հաջորդող բաղադրիչին միանում է առանց հոդակապի:

2 նախաձանցն առանց հոդակապի միացել է **հայ** արմատին, որը ձևաբանորեն երկարժեք է՝ գոյական / ածական: Ինչպես ցույց են տալիս բառի առաջին և հետագա կիրառությունները, **չհայ**-ը ևս, ինչպես իր բառակազմական հիմքը՝ **հայ**-ը, ունի ածականի և գոյականի խոսքիմասային արժեքներ: Այս ամենը համապատասխանում է հայոց լեզվի բառակազմական օրինաչափություններին:

Բաց է մնում միայն մեկ հարց. արդյոք կա՞ն այլ օրինակներ, երբ չ-ն միանում է որևէ ազգ, ժողովուրդ նշանակող բառի: Նախաշխարհաբարյան շրջաններում հայերեն նման կազմություններ չունենք:

Գրաբարում ունենք **չազգ** գոյականը՝ «ոչ ազգ, անպիտան ազգ, ազգ անվանվելու անպիտան» իմաստով¹⁰: Աստվածաշնչյան բառ է. «Նոքա նախանձեցուցին զիս չաստուածովք եւ բարկացուցին զիս կռովք իւրեանց. եւ ես նախանձեցուցից զնոսա **չազգաւ**¹¹, եւ անմիտ ժողովրդեամբ

⁹ Այս բառի ստեղծումը կապվում է նախագրային շրջանին: Քրիստոնեության ընդունումից հետո **դիք** բառն ստանում է բացառապես հեթանոսական աստծու իմաստ՝ ի հակադրություն **աստուած** բառի: Խիստ հակադրության հիման վրա հեթանոսական աստծու համար ստեղծվում է **չաստուած** բառը (**Ջահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 385):

¹⁰ Տե՛ս **Հ. Գաբրիել Աւետիքեան, հ. Խաչատուր Միւրմէլեան, հ. Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 562:

¹¹ Աստվածաշնչի արևելահայերեն առաջին ամբողջական թարգմանության մեջ **չազգ**-ի փոխարեն գործածվել է **չժողովուրդ** բառը. «Եւ ես էլ կ'զրգոեմ նորանց նախանձը մի **չժողովուրդով**»: Թարգմանությունն արել է վերապատվելի Աբրահամ Ամիրխանյանը (հրատարակվել է 1883 թ. Կոստանդնուպոլսում, այնուհետև բազմիցս վերահրատարակվել տարբեր վայ-

բարկացուցից գնոսա» (Բ. Օր. 32.21): Ակնհայտ է, որ **չազգ**-ը կազմվել է հունարենի ազդեցությամբ (հին հուն. οὐκ ἐθνεῖ «ոչ ազգ»):

Այդպես էլ **ջժողովուրդ** «ոչ ժողովուրդ» գոյականը, որ կրկին սուրբգրային է. «Որք երբեմն **ջժողովուրդ**, բայց արդ ժողովուրդ Աստուծոյ» (Ա. Պտ. 2.10):

Չազգ և **ջժողովուրդ** բառերը մասամբ են առնչվում մեզ հետաքրքրող միավորին, քանի որ սրանց բառակազմական հիմքերը «ազգ», «ժողովուրդ» հասկացություններն արտահայտում են ընդհանրական եղանակով, չմասնավորելով:

Չհայ-ը, այնուամենայնիվ, առանձնյակ չէ: Նրան սերտորեն առնչվող բառը ևս հյուսիսափայլյան է: Ստ. Նազարյանը 1860 թ. առաջին համարի մեկ այլ նյութի մեջ («Հայկական լեզուի խորհուրդը») գործածել է մի նորակազմություն, որն ստեղծվել է բառակազմական միևնույն սկզբունքով, ինչ **չհայ**-ը: Բառակազմական հիմքը կրկին ազգությունն նշանակող բառ է՝ **չհույն**. «Բայց և այսպիսի աշխարհների **չոյն** բնակիչքը սկսեցին խօսել յունարեն...»¹²: Սա թերևս եզակի կիրառություն է:

Եթե **չազգ**-ի դեպքում նշվում է հունարենի, ապա **չհույն**-ի և **չհայ**-ի բառակազմության հարցում, մեր կարծիքով, առկա է ռուսերենի ազդեցությունը. հմմտ. русский «ռուս, ռուսական» և нерусский «ոչ ռուս, ոչ ռուսական»: Ռուսերենի **ռուս** և **ոչ ռուս** հակադրությունը կարող էր ուղղակիորեն ազդակ դառնալ հայերենում **հայ** և **չհայ** բառային հակադրություն ստեղծելու (սրան հետագայում ավելացավ, շատ դեպքերում նաև փոխարինեց **հայ** - **ոչ հայ** հակադրությունը):

Չհայ և **չհույն** բառերն ստեղծվել են հայոց հայրենիքից հեռու՝ Մոսկվայում, ռուսահայ իրականության մեջ: Անշուշտ

րեում. հայտնի է Շուշիի Աստվածաշունչ կամ «Արարատ» թարգմանություն անունով):

¹² «Հիւսիսափայլ», 1860, հ. 1, էջ 17:

գրքային են, արհեստականության որոշակի կնիք ունեն, ինչպես հյուսիսափայլյան շատ կազմություններ (նաև այդ պատճառով է, որ բազմաթիվ կազմություններ մոռացության են մատնվել):

Չհայ բառի հաջորդ գործածությունը, որ արձանագրել ենք, խիստ ուշագրավ է: 1862 թ. սեպտեմբերին Կ. Պոլսի «Մեղու» հանդեսում (հ. 172) Մ. Նալբանդյանի ձեռքակալության և բանտարկության առիթով խմբագիր Հարություն Սվաճյանը հրապարակել է մի հոդված, որն ազատության երգչի արևմտահայ բարեկամների հոգեխոռով առաջին պոռթկումն էր¹³: Ահա խոսքաշարը. «Պարոն Նալպանտեանց հայ երկնակամարին վրայ փայլելու սկսած օրէն՝ ամէնուն ուշադրութիւնը գրաւեց Անխոնջ աշխատող՝ անոր ի նպաստ, թշնամի՝ ազգատեաց **չհայերու**, վեհանձն՝ սխալմամբ ազգին թշնամութիւն ընողներուն դէմ...»¹⁴: Նալբանդյանի գաղափարակից ընկերն իր խոսքի մեջ գործածում է հյուսիսափայլյան **չհայ**-ը (ավելի ճիշտ՝ նալբանդյանական, քանի որ նրա իսկ գործածած արժեքով և իմաստով է):

Այստեղ **չհայ** բառը հետաքրքրական լրացում է ստացել՝ **ազգասոյաց**, Նալբանդյանի **թերակիրթ չհայ**-ից ավելի ուժեղ և տպավորիչ մակդիր¹⁵:

Այսպիսով աշխարհաբարի գրական մի դրսևորումից բառը հայտնվում է մյուսում: Սակայն գրական արևմտահա-

¹³ **Սըվաճյան Հ.**, Հրապարակախոսություն, կազմեց, խմբագրեց և առաջաբանը գրեց՝ Ս. Բազյան, Երևան, 1960, էջ 533:

¹⁴ Հմմտ. **Սըվաճյան Հ.**, նշվ. գիրքը («Պ. Միքայել Նալբանդյանց» հոդվածում), էջ 254, «Մեղու», 1862, հ. 172:

¹⁵ Պատահական չէ, որ այն նկատվել է: Սվաճյանի **ազգասոյաց չհայեր** բառակապակցությունը հանդիպում է նաև այստեղ. «.... առանց այլևայլի, ցույց տալով իր պատրաստակամությունը՝ հրապարակորեն երդվելու հանուն Նալբանդյանի և ընդդէմ այդ «ազգասոյաց չհայերուն»» (**Գասպարյան Գ. Ն.**, Ո՛վ է «Կտոր մը այվագովսկիաբանություն» պամֆլետի հեղինակը / Հայկ. ՍՍՌ. ԳԱ տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1956, հ. 10, էջ 62):

յերենում **չհայ**-ը կյանք չունեցավ, և հիշատակված օրինակը թերևս եզակի է:

Սպասելի էր **չհայ** բառի գործածությունը Մ. Նալբանդյանին նվիրված «Ազատութեան ասպետն ու նահատակը» ստեղծագործության մեջ (հեղինակը՝ Կարեն Սիմոնյանը, այն «վարքագրություն» է կոչում): Հետաքրքրական է գրքում հանդիպող **չհայ**-երի «ծագումնաբանությունը»: Դրանցից մեկը հենց ազատության երգչից մեջբերված խոսքի մեջ է. «Եթե դպրոցը հայ զաւակի մեջ պէտք է օտարութիւն պատուաստի, ապա աւելի լաւ է, որ «մանուկները տգէտ հայ մնան, քան թէ դառնան թերակիրթ **չհայ**»»¹⁶: Մյուսը մեջբերում է Հ. Սվաճյանի խոսքից (դրան ևս անդրադարձել ենք). «Պարոն Նալբանդեանը հայ երկնականարին վրայ փայլելու օրէն սկսեալ՝ ամէնուն ուշադրութիւնը գրաւեց անխոնջ աշխատող՝ անոր ի նպաստ, թշնամի՝ ազգատեաց **չհայերու...**»¹⁷: Մեջբերումները քերականական աննշան փոփոխությունների են ենթարկվել՝ պահպանելով հեղինակային «դրոշմը»:

Բառի պատմության շրջանաբաժանումը

Չհայ բառի պատմությունը պայմանականորեն երեք շրջանի կարելի է բաժանել: Առաջին շրջանը բառի ծննդյան և առաջին գործածությունների ժամանակահատվածն է, որն ընդգրկում է 1860-1862 թվականները:

Առաջինին հաջորդում է տևական մի շրջան, որը կարելի է պայմանականորեն անվանել «մոռացության շրջան»: Բառը կարծես չէր էլ եղել, և նրա արտահայտած հասկացությունն այլևս հետաքրքրության առարկա չէր (խոսքը վերաբերում է ոչ լիարժեք, հայոց լեզվով չխոսող, ազգային

¹⁶ Միմոնեան Կ. Ա., Ազատութեան ասպետն ու նահատակը կամ Միքայել Նալբանդեան, Երևան, 2011, էջ 240-241:

¹⁷ Նույն տեղում, էջ 537:

ավանդույթները չպահող, հայկականությունից հեռացած հային):

Չհայ բառի պատմության երրորդ շրջանը համընկնում է XX դարի 80-ական թվականների ազգային զարթոնքի, արցախյան ազատագրական շարժման և անկախության հաստատման ժամանակաշրջանին: Այս շրջանի հայաստանյան իրականության մեջ հատկապես կարևորվում էին հայոց լեզվի իրավունքների վերահաստատումը և հայալեզու կրթությունը՝ որպես հայ մարդու ձևավորման կարևոր գործոն: Գաղափարախոսներից մեկը լեզվաբան, մատենագետ Ռ. Իշխանյանն էր, որն իր մի գրքի բաժիններից մեկը վերնագրել էր Մ. Նալբանդյանի խոսքի այս հատվածով (ուղղակի մեջբերմամբ)՝ «Լավ է մանուկներին տգետ հայ մնալ, քան թե դառնալ թերակիրթ չհայ»¹⁸: Այստեղ մեկ-երկու անգամ գործածված ենք տեսնում **չհայ** բառը: Խոսուն է հատկապես այս նախադասությունը, որը հստակորեն ուրվագծում է **չհայ** բառի ընկալումը. «Հայաստանից դուրս, ցավոք, նաև Հայաստանում մենք շատ ենք հանդիպում թերակիրթ **չհայերի** և մտածում՝ ավելի լավ չէր լինի, եթե այս հայազգի համարվածը տգետ մնար, բայց լինե՞ր սովորական հայ՝ հայալեզու, քան օտար կրթություն ստանալու դառնար այսպիսի **չհայ**, այսինքն՝ ոչ հայալեզու, սոսկ անունով հայ»¹⁹:

Չհայ-ի դիրքերն ամրապնդում է **չհայություն** բառի գործածությունը. «Հայաստանը **չհայությունից** փրկելու ուրիշ ուղի չկա»²⁰: Սա եզակի դեպք չէ: Ինչպես Նալբանդյանի խոսքում են **չհայ**-ը և **չհայություն**-ը միասին հանդես գալիս նույն տեքստում, այդպես պատահում է նաև լրագրային միևնույն հոդվածում. «Կա՛մ դրանք **չհայ** են, կա՛մ Արեւմուտքից ստացած գիտական գրանտների դիմաց

¹⁸ **Իշխանյան Ռ. Ա.**, Մեր ինքնության գլխավոր նշանը, Երևան, 1991, էջ 52:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ **Իշխանյան Ռ. Ա.**, նշվ. աշխ., էջ 59:

կատարում են ամենագազրելի պատվերները, որը ոչ պակաս **չհայություն** է («Իրավունք», 05. 12. 2014):

Բառը հանդիպում է Ռ. Իշխանյանի մի գրքում ևս. «Ո՞վ է իրավունք տվել հայ համարվող, բայց վերասերված, լիովին քաղքենիացած ծնողներին Հայաստանի մեջ իրենց սերունդն էլ այլասերելու, **չհայ** դարձնելու», «Նախ այդպիսի մի դեպք գտեք, յետոյ գովաբանեք Հայաստանի վզին փաթաթուած այդ **չհային**»²¹ (խոսքը Հայաստանի Նախարարների խորհրդի նախագահ Վլ. Մարգարյանցի մասին է, որը հայերեն չգիտեր – Դ. Գ.): Այդպես **չհայ** բառը կարծես դարձել է գիտնական-հրապարակախոսի բառապաշարի բնորոշ միավորներից:

Այդպես **չհայ**-ը կրկին մտավ գործածության մեջ: Մեր օրերում այն հանդիպում է մամուլում, հրապարակախոսության մեջ, սոցցանցերում: Մի քանի օրինակ՝ «Դուք ձեզ եք վերագրել հայ, պետություն կամ մարդ լինելը, իսկ ով ձեզ հետ չէ, **չհայ** է ու չքաղաքացի» («Չորրորդ իշխանություն», 05.08.2008), «Նա պետք է կամ հայացվի, կամ մշակութային «**չհայ**» համարվի» («Հայկական ժամանակ», 13.04.2010), «Զարմանալիորեն ավելացել են **չհայ** թափափուկները» («Իրավունք», 28.05.2014), «Հայերի և **չհայերի** ջրբաժանը» («Իրավունք», 22.01.2019):

Վերջին շրջանում **չհայ**-ի աշխուժացումն առնչվում է չ-ժխտական նախածանցի ընդհանուր ակտիվացմանը. մամուլի լեզվում և բանավոր խոսքում հանդիպում են այսպիսի կազմություններ՝ **չհերոս, չարվեստ, չիշխանություն, չնախարար, չաշխատավարձ** և այլն (սա գրաբարյան ավանդույթի շարունակությունն է):

Նկատելի է, որ **չհայ**-ը, որպես խիստ բացասական բովանդակություն ունեցող բառ, երբեմն թափանցում է նաև քաղաքական խոսույթ (մի շարժում, օրինակ, կազմել էր «չհայերի» ցուցակ, կամ մեկին վիրավորելու նպատակով, իբր

²¹ **Իշխանյան Ռ.**, Երրորդ ուժի բացառման օրենքը, Երևան, 1991, էջ 172, 105:

հայկականությանը դավաճանելու, ազգային շահերը ստորադասելու համար, հայտարարում են «չհայ»):

Երբեմն էլ **չհայ**-ը դառնում է նույնիսկ **չմարդ** բառի համարժեք: Ուշագրավ է հետևյալ խոսքաշարը Հ. Սվաճյանին Մ. Նալբանդյանի գրած նամակից (30 դեկտեմբերի 1860 թ.). «Մնաս բարյավ, ողջունիր իմ կողմից, որոնց կուրծքի մեջ զարկում է ստուգապես հայկական սիրտ. **կեղևով հայ չմարդերից** «հրաժարելով հրաժարիմ»»²²:

Չհայ-ն այժմ ընդգծված անարգական իմաստ է ձեռք բերել, այն ատելության խոսքի միավոր է: Բառի «կենսագրության» առաջին շրջանում վերաբերմունքային այդ երանգը ցայտուն չէր:

Չհայ բառը երբեմն կիրառվում է հակադրություն ստեղծելու նպատակով: Այսպես՝ «Այսօր տեսա ... ՉՀԱՅԻՆ: Նա, ով կարծում է, թե ինքը ՀԱՅ է...» (Լ. Դոնոյան)²³: Գլխատառերով գրությունը հակադրվող եզրերն ավելի ցայտուն է դարձնում:

Չհայ բառի անտեսումը

Ցավալի է, որ **չհայ** բառն Արևելահայերենի ազգային կորպուս լեզվաբանական որոնողական համակարգում Մտ. Նազարյանով կամ Մ. Նալբանդյանով չի ներկայացված²⁴: Սա նշանակում է, որ համակարգը լրացման կարիք ունի:

Չնայած հետազոտվող բառի գործածության փաստական նյութի առկայությանը՝ **չհայ**-ն անտեսված է եղել: Իսկ ովքե՞ր են անտեսել նազարյանական-նալբանդյանական նորակազմությունը՝ **չհայ**-ը (**չհույն**-ն իսպառ մոռացված է):

²² **Նալբանդյան Մ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1984, էջ 116):

²³ www.levondrnoyan.com/?p=323:

²⁴ ԱՐԵՎԱԿ-ում (www.eanc.net) **չհայ**-ի 5 գործածություն կա, բոլորն էլ Վ. Ավետյանից:

Բառն անտեսել են նախ հայերենագետ-տեսաբանները, համալսարանական դասագրքերի հեղինակները: **Չ** նախաձանցի բառակազմական արժեքին մի շարք լեզվաբաններ են անդրադարձել, սակայն քննարկված բառերի մեջ երբևէ չի հիշատակվել **չհայ**-ը: Այն դեպքում, երբ ի թիվս այլոց մեջտեղ էին բերվում նաև այսպիսի բառեր՝ **չգետ** «չգիտցող», **չեփուն** «շատ չեփող», **չկեր** «քիչ ուտող», **չլուր** «չլսված», **չմնալի** «անցավոր»²⁵, **չհավան**, **չհավատ**, **չփակ** (զգեստ)²⁶, **չհասություն**²⁷ և այլն: Սրանք գերազանցապես անգործածական կամ խիստ հազվադեպ բառեր են:

Բառն անտեսել են նաև բառարանագիրները: Հայերենի բացատրական ընդարձակ բառարանների բառացանկերում **չհայ**-ը չի ընդգրկվել, այն արտացոլված չէ նաև բառակազմական, հոմանիշների և այլ տեսակի բառարաններում: Մ. Նալբանդյանի նշանավոր «Հիշատակարան» ստեղծագործության մեջ գործածված բառը, որը հասարակական հետաքրքրություն է ներկայացնում՝ առնչվելով ազգային խնդրի (հայկականությունը պահպանելու, հայ մնալու), պարզապես անուշադրության է մատնվել:

Անձնական գործոնից զատ կարելի է մեկ հանգամանք էլ նշել: Ենթադրում ենք, որ խորհրդային ժամանակաշրջանում, երբ ազգային համահարթման և «խորհրդային ժողովրդի» ձևավորման կեղծ գործընթաց էր իրականացվում, հայ ինքնությանն առնչվող այս բառը թերևս հատուկ է մոռացության մատնվել²⁸: Խորհրդային տարիներին, երբ մաս-

²⁵ **Մուրվայան Ա. Ա.**, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 259 (իմաստները տրվում են ըստ այդ գրքի):

²⁶ **Մուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1982, էջ 332:

²⁷ **Մարգարյան Ա. Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, էջ 200:

²⁸ Այս շրջանում էր, որ ռուսական ազգայնական մտածողությամբ Խորհրդային Միությունում ապրում էին երկու ազգեր ռուսներ և ոչ ռուսներ, իսկ ըստ հայկական հայտնի զվարճախոսության՝ կրկին երկու ազգեր՝ հայեր և ոչ հայեր «այլազգիներ»:

նավորապես Ռուսաստանի հայկական դպրոցները համատարած փակվեցին, իսկ Երևանն աստիճանաբար դառնում էր ռուսախոսության կենտրոն, հայալեզու կրթության, չհայի և չհայության մասին հիշատակելը «ավելորդ» էր:

Չհայ-ը միայն վերջերս է հայտնվել ուշագրավ մի բառարանում, որտեղ նշված են բառի կազմության տարեթիվը, խոսքիմասային արժեքը, բացատրված է որպես «օտար, հային չպատկանող», բերված է բնագրային օրինակ Սո. Նազարյանից²⁹: Ասենք, որ բառարանում տրված «հային չպատկանող» իմաստային բաղադրիչը մեզ ավելորդ է թվում, համոզիչ էլ չէ: Կարևորը, սակայն, բառի այսքան ուշացած բառարանային արձանագրումն է, որը (այս ուսումնասիրությունը նույնպես) կարող է խթան դառնալ բառն անտեսումից դուրս բերելու գործում:

Չհայ բառն իր արտահայտած իմաստով հայ կյանքում այսօր էլ արդիական է, քանի որ Հայաստանից շարունակվող արտագաղթը, հայկական սփյուռքի ընդլայնումը, ավանդաբար կայուն և հայախոս գաղթօջախների մաշումը և քայքայումը, հայոց լեզվի նահանջն ու հայության շրջանում օտարախոսության ծավալումը, ազգային արժեքներից՝ հայկականությունից հեռացումն ինքնության խնդիրներ են առաջ բերում: Այդ պարագայում հիմնախնդրին առնչվողները երբեմն հիշում են հյուսիսափայլյան **չհայ** բառը (նաև **չհայություն**-ը) ու գործածում (տեղին կամ անտեղի): Բառը մեր օրերում կենսունակության նշաններ է ցույց տալիս, քանի որ հայ մնալու խնդիրները հայության համար օրակարգային են դարձել:

²⁹ **Նավոյան Ռ. Բ.**, Ակնարկներ 19-րդ դարի 50-80-ական թթ. աշխարհաբարյան նորակազմությունների ուսումնասիրության բառարանում, Երևան, 2011, էջ 227 (օրինակն ըստ «Ստեփաննոս Նազարեանի Երկերը» գրքի, որտեղ նշված է յուրաքանչյուր երկի առաջին հրատարակության տեղը և թվականը):

Եզրակացություններ

1. **Հայ** բառին հակադրվող **չհայ**-ը Մոսկվայի «Հյուսիսափայլ» ամսագրի 1860 թ. երկու համարներում առաջին անգամ գործածել են Ստ. Նազարյանը և Մ. Նալբանդյանը:

2. 1862 թ. Կ. Պոլսի «Մեղու» հանդեսում **չհայ**-ը արևմտահայերեն խոսքում գործածել է Հ. Սվաճյանը (Մ. Նալբանդյանին նվիրված հոդվածում): Բառը, սակայն, արևմտահայերենի բառապաշարի միավոր չի դարձել:

3. **Չհայ** բառն ունի երկու իմաստ «օտար, ոչ հայ», «հայկականությունից հեռացած, օտարացած հայ» (այժմ գործածվում է գերազանցապես երկրորդ իմաստով), խոսքիմասային երկու արժեք՝ ածական / գոյական (տարածված է երկրորդը):

4. Գրական արևելահայերենում **չհայ** բառի գործածության ակտիվություն նկատվեց 1980-ական թվականների վերջերին սկիզբ առած ազգային զարթոնքի շրջանում և շարունակվում է առ այսօր:

5. **Չհայ** բառը բնորոշ է հրապարակախոսական ոճին, գրավոր խոսքին:

6. Լեզվաբան հետազոտողները և բառարանագիրները բոլորովին անտեսել են **չհայ** բառը, այն միայն վերջերս է գրանցվել բառարանագրական մի աշխատանքում:

7. **Չհայ** բառն արդիական կլինի թերևս այնքան ժամանակ, որքան ժամանակ հայկականությունը պահպանելու խնդիրները կհուզեն հայությանը:

Տե՛ս նաև **Դ. Գյուրջինյան, Հայ բառի հակաբևեռը, «Էջմիածին», 2017, Ա, էջ 86-96:**

ԴԱՎԻԹ ՍԵՎԱՆԻ ԳՅՈՒՐՁԻՆՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ
ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ.
ՀԱՅ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՌԵՐԸ

Տպաքանակը՝ 200

«Լինգվա» հրատարակչություն
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»
հիմնադրամ
Հասցե՝ 0002, Երևան, Թումանյան փող. 42
Հեռ.՝ (+374) 10 52 20 20
<http://www.brusov.am>